

Գ. ԳԻՒԶՈՒԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ  
ՀԱՅՈՑ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ  
ՔԱՂԱՔՈՎԱՆ ՇԱՀԺՈՒՄՆԵՐԸ



1947. Պիլցուր  
Տպ. ՀՀ Օ. Յ ՀԵՄՈՒՐՈՒՆԻԱՆ



423

Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ

g(47.99.5)14

գ. 67

լրաց.

281.6(09)


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀՖՈՒՄՆԵՐԸ

A 33/02



Պետութ 1947  
Տպ. «ՀԱՅ ՃԵՄԱԲԱՆԻ»



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս զիրքը նուիրուած է հինգերորդ դարի Հայոց կրօնական եւ քաղաքական շարժումներին: Գրքի առաջին երկու գլուխները՝ նուիրուած իրանի եւ Հայաստանի քաղաքական հոլովոյթին մինչեւ չորրորդ դարի վերջերը, մէկ շատ համառօտ ներածութիւն է հինգերորդ դարի գործն ու իմաստը հասկնալու համար: Հեղինակը իր շնորհակալութիւնն է յայտնում Տօքթ. Օննիկ Եազմաննեանին, որ յօժարութեամբ յանձն առաւ այս զրքի տպագրութեան բոլոր ծախսերը: Առանց նրա օժանդակութեան այս զիրքը ո՛չ կը գրուէր եւ ո՛չ էլ կը տպագրուէր:

Դ. Դ.



ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ

Հինգերորդ զարի հայութեան ընկերային և քաղաքական հոլովոյթը կատարուամ է Իրանական լայնածաւալ կայսրութեան մէջ։ Հայաստանը մէկ մասն էր այն ընզարձակ պետութեան, որ յաջորդաբար անցել էր քաղաքական կենաքի մի քանի ձևեր և նուաճումներով իր իշխանութեան տակ էր հաւաքել բազում ազգեր ու ցեղեր, ստեղծել էր բազմազգեան և բազմակրօն մէկ քաղաքական կառոյց։ Տիրողի ընկերային կազմը, վարչութիւնը, զարաւոր մշակոյթը, լեզուն խորապէս պիտի ազգեին հայութեան բախտի վերայ, ձեւափոխէին նրա հասարակական ուժերը, կերպարանաւորէին նրա քաղաքակըրթութիւնը, նոր չէր, որ հայոց հաւաքականութիւնը հանդիպում էր Իրանական աշխարհին։ Երկու աշխարհների հանդիպումը տեղի էր ունեցել գեր ևս հայութեան կազմաւորման, ստեղծման արշալոյսին, երբ նա մտաւ Իրանի ընկերային ու վարչութեան շրջանակի մէջ։ Հայութեան համար Աքէմինեանների ստեղծած խաղաղութիւնը մէկ շատ կարեւոր գործոն էր։ Այդ խաղաղութեան մէջ տեղի ունեցաւ Հայաստանում տեղաւորուած ցեղերի միութիւնը։ Համաձայնութումը։ Համահաւաքման այս գործի կենտրոնում կանգնած էր հայը, որ անշուշտ ամենից ուժեղն էր որակով և ունակութեամբ, օժառուած ուզմի բը-նազով և կազմակերպչական կարողութեամբ։

Իրանի իրաւա-քաղաքական միջավայրը շատ որոշիչ ազդեցութիւն գործեց հայութեան պատմութեան վերայ։ «Փոքր Ասիան անձանօր չեր Իրանական քաղաքակրութեան, Ամենենեան աշխարհականների օրից նա ենթակայ է եղել Իրանի ոչ միայն Տաղաքական իշխանութեան, այլեւ կրել է սատրապական Տեսեսութեան ազդեցութիւնը»\*): Եթէ այդպէս է Փոքր Ասիայում, ապա ևս առաւել այդ բանը կարելի է ասել Հայաստանի նկատմամբ, որ սահմանակից էր Իրանին և որի քաղա-

\* Աղոթց. 2] 6 Հայոց ըլնականութիւնը. Հայունը. 1947 դեկտ. 19 օց։

քակրթութեան ամբողջ տարրերքը այնքան խոր ու հաստատուն արշատ է ձգել մեր հայրենիքում՝ սկսած լեզուական փոխառութեան կրօնական պաշտամունքից, պիտական կառոյցից և անտեսական ձեւերից:

Իր քաղաքական հոլովոյթի մէջ իրանն անցաւ մի քանի փուլեալով։ Սելեւկեանները փորձեցին պետականութեան սկզբունքը կիրառել։ այդ գործի մէջ նրանք շարունակողն էին Աքէմէնեանների, որոնց մշակած սատրապական սիստեմը առաջին և յաջող վարչական փորձն էր արեւելքում։ Սատրապութիւնը տեղական տոհմային և աւատական կառոյցները փոխարինեց մէկ և ընդհանուր վարչութեամբ։ Սելեւկեանները ընդօրինակեցին այս կարգը և ընդհանրացրին։ Սակայն նրանց աիրապետութիւնը երկար չտեսեց։ Իրանցին չհաշտուեց նրա իշխանութեան հետ։ բայց նա չէր, որ տապալեց Սելեւկեանների իշխանութիւնը, այլ արիական ծագումով մէկ ժողովուրդ՝ պազակեց և լեզուակից իրանցուն, շատ պարզունակ ընկերային կազմով՝ պարթեւները։ Նրանք իրանի ճակատագիրը պահեցին իրենց ձեռքին՝ շուրջ հինգ դար։

Պարթեւների պետութիւնը աւատական էր, տոհմերի քայլայումից է, որ սահղուել էր այդ աւատական կարգը։ Խօմն ուժեղ ընտանիքներ երկրի զեկավարութիւնը պահել էին իրենց ձեռքին։ Արշակունիները գրանցից մէկն էին և այն էլ գրսեկ, հաւասարների մէջ առաջինը։ Նրանց ճիգերը սահղելու ուժեղ և կենարոնաձիգ պիտութիւն իզուր անցաւ։ Մրցակից աւատական տոհմերը խանզարեցին։ Աքէմէնեանների և Սելեւկեանների միավետութիւնը քեկուեց պարթեւ ընկերային-պետական միջավայրում և սահղուեց մէկ կարգ, ուր Արշակունիների հետ համազօր և նոյնիրաւ իրենց գոյութիւնը պահեցին մի շարք իշխանական աներ՝ լայն քաղաքական իրաւունքներով և ընկերային արտօնութիւններով։ Այս և ուրիշ պատճառներով Արշակունիները խոր արժատ չձգեցին իրանում, իրանական ազգային նըսպատակները չզրեցին, զօրավիգը չեղան նրա մշակոյթի և կրօնի, թեթևորէն հասեւեցին և զարգարուեցին հէլլէնիզմի ֆեուդալներով առանց իւրացնելու նրա մշակոյթը, անտեսական ձեւերը և քաղաքների կենցաղը։ Արշակունիները մէկից հրաժարուեցին, միւսին հարազատ չզգացին, ամեն ինչի մէջ մնացին կէս ճանապարհին։ Իրանում նրանք զինուած և իշխանութեան տէր փոքրամասնութիւն էին՝ ուղմի և վարիչ դաս։ Միայն ծանր, արտաքին պարտութիւննը ճիգ արեց իրանանալ, իր ուժերը վերակառուցել և յենուիլ իրանի ազգային կրօնի՝ զրագաշտականութեան վերայ։ Բայց արդէն ուշ էր, նա սպասել էր իր ուժերը արտաքին և ներքին ճակատներում, իսկ բուն իրանի մէջ հասակ էին նե-

տեղ ուժեր, որոնք կարող էին ժառանգել նրա իշխանութիւնը: Այդպիսի մեծ գործօն ուժ էր հարաւում մեծացող Սասանեան տնիմը, որ Արտաշիրի առաջնորդութեամբ 226 թ. մահացու հարուած տուեց Արշակունիներին և հիմնաւորեց նոր Սասանեան հարսառութիւնը:

Նրանց յաղթանակը մէկ նոր գարազլուխ էր բաց անում արեւելքի պատմութեան մէջ: 226 թ. դէպքը զինաստիական յեղաշրջում չէր, այլ ազգային-կրօնական յեղափոխութիւն, որ նոր հեռանկարներ էր բաց անում իրանի և նրա տիրոգները առաջ: Սասանեանները գահին տիրել էին ներքին յեղափոխութեամբ և լաւ գիտէին իրենց յաջողութեան գաղտնիքը: Պէտք էր վերացնել հին ժառանգութիւնը՝ աւտական կարգը, բոլորովին նոր հիմքերով պետութիւն պէտք էր կառուցել:

Նրանք ընթացան քաղաքական կենտրոնացման ճանապարհով, միացնելով դրա հետ պետական կրօնի սկզբունքը: Ներքին քաղաքականութեան մէջ նրանց ձիգն ուղղուած էր աւտատական կարգը թուլացնելուն, կալուածատիրութեան սահմանափակումին: Պէտք էր անվտանգ դարձնել Արշակունիների հովանու տակ մեծացած աւտատականութիւնը: Բայց անկարելի էր մէկ անգամից վերացնել մէկ կարգ, որ գարաւոր անցեալ ուներ և ուղմունակ կազմակերպութիւն: Եթէ չէր կարելի նրան վերացնել, ապա պէտք էր առնել պետական կարգի մէջ, հոկել նրա վերայ, օգտուել նրա առողջ ուժերից և ծառայեցնել հանրային նպատակների: Սասանեան հարստութեան ամրող տեւողութեան ընթացքին մենք նկատում ենք տեւական մէկ պայքար կենտրոնաձիգ և կենտրոնախոյս ուժերի մէջ: Սասանեան բոլոր թագաւորների ձիգն ուղղուած էր խոշոր-կալուածատէրերի, ազնուական աւտատէրերի քաղաքական և ուղմի ուժի թուլացման:

226 թ. յեղափոխութիւնից յետոյ այդ ազնուականների մէկ մասը չհաշտուեց կատարուած յեղաշրջման հետ, շարունակեց պայքարի Արշակունիների համար, զրկուեց իր արտօնութիւններից և հողերից, որոնք բանագրաւման ենթարկեցին Սասանեանները: Պարտուած արքայական հարստութեան ներկայացուցիչները փորձեցին կոիւները շարունակել Մարասաանում, Հայոստանում և արեւելքում, ուր կացին Արշակունի անկախ և կիսանկախ թագաւորութիւնները: Շատերն անցան Հոռմէտական կայսրութեան սահմանները և ջանում էին ապահովել Հոռմի զօրավարների միջամտութիւնը Իրանի զօրձերի մէջ: Շատերն էլ Արշակունիներից և պարթեւ ազնուականներից՝ հաշտուացին կատարուածի հետ և իրենց ուժերը ի սպաս բերեցին նոր գինաստիային: Նրանք պահեցին իրենց արտօնութիւններն ու կալուածները: Ոմանք էլ գարձան նոր տէրերի զորձակալներ, ահարեկիչներ: Այդպիսիներից մէկն է ըստ աւանդութեան պարթեւ ծագումով Անաւ-

կը, որ ապաստանեց Հայաստան և գաւազրօրէն սպանեց Առորովին։ Հինաւուրց աւատական կարգը իրանում չոչնչացաւ։ Սասանեանների հասարակութիւնն էլ աւատական էր։ Քաղաքական կեանքում առաջին տեղը բռնում էին արքայական ընտանիքից սիրած մեծ իշխանները, Արշակունիներից սերած աւատատէրերը։ Երանք կալուածներ ունէին իրանի բոլոր մասերում, որի վերայ բնակուած շինականը նոյնպէս իրենցն էր, կապուած հողին և նրա տիրոջ անձին։ Առաջին կարգի կամ աւագ նախարարները գործակալական իրաւունքներ ունէին, բարձր պաշտօնները՝ պալատական, վարչական և քաղաքական նրանց ձեռքն էր. նրանք Սասանեանների հետ մասնակցում էին երկրի կառավարութեան մէջ։ Այս բարձր պաշտօնները միեւնոյն տօնմի մէջ ժառանգաբար էին անցնում։ Ստեղծուում էր վարիչ մէկ խաւ, որ մենատէր էր վարչութեան, զեկավարութեան և մեծ սպասնալիք պետութեան։ Երանք թագադիր սապեաններ էին, զօրքի սպարապետներ, հարկերի և շինարարական աշխատանքների վերասանուուչ, քաղաքացիական գործերի վարիչ։ Սասանեանները այս կարգը ստացան Արշակունիներից, վերացնել չկարողացան, հաշտուեցին նրա զոյութեան հետ, բայց փորձեցին նրանց խիստ հսկողութեան ենթարկել, կրծատել նրանց իրաւունքները, պահել եղածը, բայց նոր բավանդակութիւն տալ։ Այս բանը չէր կատարուում խաղաղ մթնոլորտում, այլ յաճախ քաղաքացիական կոիւներով։ Իրանի Սասանեան մեծ թագաւորները չընդմիջուող մէկ պայքար են մղել ազատազրուելու բարձր աւտատականութիւնից։ Այս է եղել Շապուհ Բ.ի., Վահրամ Ե.ի., Յաղիկը Բ.ի., Կաւատի և Խոսրով Անուշիրուանի քաղաքականութիւնը։

Իրանի ազնուականութիւնը խոչոր կալուածների տէր էր, որ հիմքըն էր կազմում նրա քաղաքական և ուզմի առաջնութեան։ Բայց հողի մեծագոյն մասը կալուածատիրական չէր, այլ արքայական, աւելի ճիշտ պետական, որի հասոյթը գնում էր արքունիքը, համապետական կարիքների համար։

Սասանեանները պայքարելով ազնուականութեան դէմ երբեմն կալուածազորք էին անում նրանց. բայց այս բանը բացառութիւն էր։ Էնդհանրապէս կալուածատիրութեան սկզբունքը յարգւում էր. և ուրիշ կերպ էլ ինեւ չէր կարող մէկ հասարակութեան մէջ, ուր հարստութեան մեծագոյն ազբիւրը հողն էր և նրա արտազրած բարիքները։ Սասանեաններին յաջողուեց կալուածատէրի հողերը ցրել, բաժանել երկրի զանագան մասերում։ Այս յաջողուեց մասամբ այն բանի հետեւանքով, որ կալուածները ձեռք էին բերուել զանազան ժամանակներում, տարբեր միջոցներով և այլեւայլ վայրերում։ Սակայն սրա մէջ գեր ունէր նաև Սասանեանների քաղաքականութիւնը, որ թոյլ չէր տալիս, որ միեւնոյն աւատատէրը միեւնոյն աեղում տա-

րածուն, մեծազանգուած կալուածներ ունենայ: Նա խրախուսում էր խոչոր հողերի մասնատումը, բաժանումը ժառանգների մէջ: Սրա հետեւանքով միեւնոյն կալուածաթիրոջ այս կամ այն հողաշերար միշտ վտանգի տակ էր: Հողի ցըրուածութեան հետեւանքով, ցրուած և պառակտուած էր նաև ոսպմի ուժը: «Այս և հաւանաբար զիխաւոր պատճառներից մեկը այն փաստի, որ այդ դարաշրջանի մեծ սկզբաները աւելի եւ աւելի զգեստի ու պալատական ազնուականութեան բնոյր են սանում, կորցնելով աւատական ազնուականութեան իրական նկարագիրը»\*):

Սրա պատճառով չկար, կամ չառ հազուազիւտ էր այն հսկայ, մեծազանգուած կալուածները, որոնք Թրանսիայում, Գերմանիայում հիմքն էին կազմում մեծ աւատատէրերի քաղաքական հզօրութեան: Ցրուած հողերի տէր և ոսպմապէս թուլացած աւատատէրերը ընդառջ էին գնում Սասանեան թագաւորներին՝ հաւաքւում էին պալատում, սահանում պաշտօններ, պատիւ, զրամ, զուարձանում էին խըրախսմանքներով և որորդութեամբ և կորցնում իրենց հասարակական քաղաքական արժէքը: Սասանեանները ստեղծեցին պալատական ազնը և սկսականների մէկ մեծ բանակ, որոնց մէջ մասել էին երեկուայ Արշակունյերի նշանաւոր տները: Այս ձեւով նրանք իրենց հսկողութեան տակ պահեցին անիշխանութիւն սերմանող հասարակական խաւերին:

Սասցինք որ երկրի քաղաքական զեկավարութեան մէջ մեծ, ազնը և սկսական տները գործակալական պաշտօններով էին մասնակցում: Սասանեանները ջանացին սահմանափակել նրանց իրաւունքները, կամ զրկել գործակալութիւնները իրական բովանդակութիւնից: Գործակալութիւնը մնաց որպէս պատուոյ պաշտօն, հասոյթ արեր ազրիւր: «Գործակալները» հաւաքւում էին պալատում, բայց իշխանութիւնը անցնում էր նոր մարդկանց, որոնք վայելում էին միասեաի վստահութիւնը և հաւատարիմ էին նրան: Շատ անդամ գործակալական պաշտօնները, մանաւանդ զինուորական բնոյթ կրոզները թագաւորը իրեն և իր ազգականներին էր վերապահում: Այս ձեւով աստիճանաբար կազմում էր Սասանեանների նոր վարչակարգը՝ բիւրոկրատիան: Վերից վար ստեղծուեց պաշտօննեանների մէկ մեծ բանակ, մէկը միւսից կախուած, որոնք և կառավարում էին երկիրը: Մէկ մասը սըրանցից գուրս էին գալիս աւատատէրի շրջաններից, բայց արգէն կորցրած իրենց գասային համերաշխութեան զիտակցութիւնը և ամբողջովին նուիրուած միապետին, մի զգալի մասը գուրս էր գալիս մասը և միջակ կալուածատէրերից, որոնց բարձրացումը և յառաջա-

\*<sup>o</sup>) Art. Christensen: L'Iran sous les Sassanides. էջ 100:

ցումը ամբողջութեամբ կախուած էր արքայից արքայի կամքից։ Սաւսանիանների ննրքին քաղաքականութիւնը հետապնդում էր մէկ նըսպատակ՝ պահել և վասպուհրներին, բարձր ազնուականութիւնը ընկերային արաօնութիւնները, որոց վարչական, պատճական իրաւունքներ, բայց մեկուսացնել նրանց պետական զեկավառութիւնից։ Ի հարկէ այս պայքարի մէջ իրանի ազնուականութիւնը կրաւորական զիրք չէր բանում։ Նա էլ ջանում էր հականարուած տալ իշխանութեան, ապատամբում էր, գահազուրկ անում թագաւորին, գահի նոր թեկնածուներ որոնում, զան կապում հոգեւորականների հետ, ապահովում նրա համաձայնութիւնը։ Այսպէս օր, Շապուհ Բ. ի յաջորդները Արտաշէր Բ. և Շապուհ երկու որդիները՝ Շապուհ Գ. և Վահրամ Դ. թոյլ թագաւորներ էին։ Նրանց օրով իրանի ազնուականութիւնը վերստանում է այն բոլորը, ինչ որ կորցրել էր Շապուհ Բ. ի օրով։ Ո՞չ միայն այսքան, նրանք են, որ որոշում են թագաւորների բախտը։ Արտաշէրին գահընկեց են անում, միւս երկուսին մահացնում։ Հակադինասարական և հակապետական այս շարժումներին մասնակից էր նաև մոգերի զասը, որ պիտի օրինականացնէր եղածը։ Սակայն ամենամեծ շարժումը՝ աւատական բնոյթ կրող կատարում է եօթներւորդ գարում։

Իրանի բարձր ազնուականութիւնը երկրի և պետութեան մեծ փլումից առաջ գալիս է այն եղրակացութեան, որ անհրաժեշտութիւն է Սասանիանների տապարումը և հին Արշակունեաց կարգի վերահաստատումը։ Նրանց համար Սասանեանները աշխեղեական պատուհաս» են։ Շարժման զլուխը կանգնած է Վահրամ Զուրին, Փահլաւ ծագումով, նա ուզում է վերականգնել Արշակունեաց հարստութիւնը։ Այս բանը կը յաջողուէր, եթէ Բիւլանդիան միջամուխ չլինէր իրանի գործերին։ Ասենք ի միջի այլոց, որ Վահրամ Զուրինը գաշնակիցների կարիք ունէր։ Նա կոչ է անում և հայերին միանալու իրեն և խոստանում է վերականգնել Հայաստանի անկախութիւնը իր ամենալու զարձակ սահմաններով։ «Երե ես յադրեցից, երդուեալ, երկ ձեզ սրեալ լիցի իմ զնայոց քագաւորութիւնն զոր գոլք կամիք՝ արասչիք ձեզ քագաւոր։ Եւ բողում ձեզ զամենայն երկիրն հայոց մինչեւ ցեապկոն եւ ցդուռն Աղուանից եւ յԱսորոց կողմանն զԱրուասան, զՄրծուին եւ զնոր-Շիրական մինչեւ ցահմանս Տանկաց, զի առ նախնեաւին իսկ ձեզ լեալ ե. եւ ընդ արեւմուս մինչեւ ցեսարիա Կապադովկացոց։ Եւ ես մի իշխեցից քան Զարասպ անցանել յանկոյս»։

Եւ հակառակը, Կաւատը, իրանի նշանաւոր թագաւորներից մէկը

\*) Սեբէոս. Պատմութիւն ի Հերակլի. էջ 37, Պետերբուրգ. 1879:

աւագական կարգը տապալելու համար նոյնիսկ զործակցում է կրօնական-կոմունիստական շարժման զեկավարների հետ։ «Ենչպէս ամենուրեք, այնպէս ել իրանում գոյուրիս ուներ միապետական եւ ազնուափրական սկզբունքների պայքարի շրջան։ Այսպիսի պարագաներում բազաւորները նոյնիսկ երշեմն ամենածայրահեղ շարժումներին յենարան են դառնում, որոնք ուղղուած են լինում գերիշխող դասի դեմ։ Այսպէս՝ Կաւասր՝ 488—531, իրեն կողմնակից յայտարարեց Մանթիկեանների շրջանակից դուրս եկած մազդակեանների կոմունիստական հերձուածին»\*)։

Քաղաքական այս երկու հոսունքների բախումի մէջ յաղթանակողը եղան Սասանեանները, որոնք ընկճելով ազնուական աւատական դասը, կարողանում են ստեղծել բիւրոկրատիկ պետութիւն։ Զեղոքացնում են բարձր դասը և յենարան են գարձնում միծ ու փոքր պաշտօնեանների մէկ խոչոր բանակ։ Նրանք առաջացնում են պետական մէկ կառոյց, ուր քաղաքական զեկավարութիւնը կենարոնացած է արքունիքում, իսկ ազնուական դասն էլ պահել է իր կալուածները։ Աւատական այս միապետութիւնը տեսեց չորս հարիւր տարի և յաջողութեամբ վարեց իրանի ճակատագիրը։

Ուժերի այս կենարոնացման և երկիրը վարելու համար՝ Սասանեանները որոնում էին ընկերային յենարաններ։ Բիւրոկրատին — պաշտօնէութիւնը շատ հաւատարիմ յենարան էր, բայց նա լոկ մէկ փոքրիկ խաւն էր հասարակութեան։ Ստեղծուող աւատական միապետութեան աւելի լայն ընկերային յենարաններ էին անհրաժեշտ։ Մեծ նախարարական աներն էլ փոքրաթիւ էին, թէև նրանք կազմակերպուած էին, զիտակից և հարուստ նրանցից վար գոյութիւն ունէր ռազմակից մէկ ստուար զանգուած, որ ըստ ոմանց նախնի արիական նուաճողների ժառանգներն էին։ Ինչ էլ որ լինէր նրանց ծագումը՝ այդ ազանները կազմում էին իրանի բնակչութեան շատ կարեւոր մասը եւ աւատական միենատուններից յետոյ բարքական ամենեն հասուն եւ գիտակից դասն էին։ Իրանը իրօք ազնուականների երկիր էր, ոչ թէ մի քանի բարձր աւատական աներով, այլ այն բազմահազար միջակ ու մանր ազնուական ընտանիքներով, որոնք ցրուած էին երկրի բոլոր կողմերում և քաղաքական կեանքի մէկ մէկ օջախներ էին։ Նրանց մէկ մասը, փոքրաթիւ մէկ խումբ, վեր բարձրացաւ ընկերային հողովոյթի աստիճանով, մօտեցաւ, համաձուլուեց՝ աւագ, առաջնակարգ աւատական իշխաններին, բայց մեծազանգուած ազատանին մնաց որպէս մանր հողատէր եւ ամենէն կարեւորը և հասարակական

\*) Բ. Բարսովդ. Մանթեական աշխարհը. ուսուերեն. էջ 11-12:

արժէք ունեցողը այն է, որ նրանք մեծ աւատատէրերից անկախ էին, նրանց հոգերի վրայ չեին նստած, հատեւապէս և նրանց վասալները չէին: Նրանք ապրում էին արքայական, պետական հոգերի վերայ և անմիջապէս հնթարկում էին արքայից՝ արքային: Այդ հոգերը կամ իրենք կամ իրենց նախահայրերը ստացել էին կենտրոնական իշխանութիւնից: Սրանք պայքարում էին նարեւան մեծակարութած ազնւաւականների դէմ: Վերջիններս աշխատում էին բռնազրաւել նրանց հոգերը, հնթարկել իրենց, վասալական կապի մէջ դնել: Սրբայից արքան կուռում էր «մեծերի» այս ուղղնձգութեանց գէջ ընդգէմ «փոքրերի»: Նա պաշապանն էր խոնարհ, մանր ազնուականութեան: Այս երկուուր՝ թագաւորը և մանր ազատ հողաէրերը բնական գաշնակիցներ էին խոչոր կալուածատէրերի դէմ: Մանր այս կալուածատէրերը՝ իշխանութեան արամագրում էին իրենց ուժերը, ուզմի կորովը, վարչական փորձը: Կառւի ժամանակ նրանք զալիս էին հեծեալ և ըսպառագէն, կազմում էին իրանական ասպետների զասը, այրուծին, որոնք կազմում էին իրանի բանակի լաւագոյն մասը և ապահովում նրա յաղթանակը: Նրանք թագաւորի անմիջական հպատակներն էին և ընդհանրապէս յենարանը իշխանութեան: Խազագութեան ժամանակ նրանք ապրում էին իրենց կալուածներում և զեկավարն էին իրենց շրջանի՝ զիւղերի և աւանների վարչութեան: Սրանք Սասանեան շրջանի «գեհիկաններն» էին, մեծ ու փոքր զիւղապետները կամ զիւղախմբի պետերը: Կենտրոնից հեռու ինկած վայրերում նրանք էին ներկայացնում իշխանութիւնը, նրանք էին հարկերը հաւաքում և արքայից արքայի հրամանները զործագրում: «Սասանեանների ժամանակ գեհիկանը զիւղական փոքր կալուածատէր ազնուական էր, ասում է Ն. Ադոնցը. Եւ երբեմն այնքան անեւան նողատէր էր, որ չեր սարբերում սովորական զիւղացուց: Յանախ կառավարութեան ներկայացուցիչներ էին գեհիկանները իրենց տեղերում, որոնց յանձնեւում էր առաւելապէս հարկերի զանձումը»\*): Մինչ Սասանեանները ճիգ էին անում մեծ աւատատէրերին հաւաքել, կենտրոնացնել արքունիքում, սաեզծել նրանցից պալատական ազնուածականութիւն՝ պահելով նրանց շքեզութեան և շառայութեան մէջ, բայց հեռու քաղաքական զեկավարութիւնից, ընդհակառակն նրանք խրախուսում էին մանր ազնուածականներին, զեհկաններին, ասպետներին՝ մնալու իրենց վայրերում, հարստանալու և զիրքի աիրանալու: Խոկ սրանք նպաստեցին իրենց շրջանների արքայական հոգերի մշակման, ոռոգման ցանցի կանոնաւորման և ընդհանրապէս երկրի անտեսական բարզաւածման:

\*) Ն. Ադոնց. Հին հայ շինականութիւնը. Հայրենիք. 1927, դեկտ. էջ 98:

Աւատական անտեսութիւնը տիրական մնաց իրանում շատ աւելի երկար ժամանակ քան արեւելքի որեւէ վայրում։ Այդպէս էր Աքէմենեանների օրով, այդպէս մնաց պարթեւների։ Սասանեանների ժամանակ։ Հելինիսատական քաղաքների այն բարգաւաճումը որ մենք տեսնում ենք Միջերկրականի արեւելեան ափերին, տեղի չունեցաւ իրաւնի մէջ։ Համբէզով կառուցուած քաղաքներն էլ՝ համատարած բնատընտեսութեան մէջ կորցրին իրենց արժէքը և գարձան վարչական կենտրոններ միայն։ Շատ պատմագիրներ իրանի տնաեսութիւնը՝ իր բովանդակ տիւզութեան ընթացքում, զնում են փակ, անային արնատեսութեան շրջանի մէջ, մի բան, որ իր մէջ պարունակում է միայն մասնակի ճշմարտութիւն։ Խնդիրն այն է, որ իրանի մէջ եղած քաղաքների ընկերային և անտեսական արժէքը մեծ չէր համեմատած կալուածատէր զասի և հոգեւորականութեան արժէքի հետ։ Իրանի տնաեսութեան մէջ առեւտուրը, արդիւնաբերութիւնը շատ քիչ զեր էր խաղում։ Կար եւ այն, որ իրանի քաղաքների բնակչութիւնը օտարածին էր, որի պատճառով էլ հանրային ու քաղաքական կեանքում մեծարժէք գործոն չէր։ Իրանցին գերիշխող էր երկրագործութեան և անասնապահութեան մէջ։ Քաղաքների բնակչութեան օտարինելը գոլիս էր զեռ Աքէմենեանների շրջանից։ Նրանց ստեղծած իրանական խաղաղութիւնից օգտուցին սեմական ժողովուրդները, յատկապէս արամէցացիք, որոնց լեզուն գարձաւ ամբողջ կայսրութեան մէջ ծաւալուն, առեւտրական զասի լիզու։ Պարթեւների օրով նրանց տեղը բոնհեցին յոյները, որոնք մինչ այդ կրթնած Սելեւկեանների պետական ուժի վերայ ծաւարուել էին մինչեւ Միջին Ասիա, Հնդկաստան։ Սասանեանների օրով իրանի առեւտուրը նորից ընկաւ սեմախոսների ձեռքը՝ յատկապէս ասորիների և հրէանների։ «Հրեանների հետ միասին երիտասեանները իրանի մէջ զիսաւոր ներկայացուցիչներն եին առեւտուրի եւ արդիւնաբերութեան եւ ընդհանրապէս հաղաքային կեանքի, որի զարգացման հետ, ինչպէս ամենուրեկ կապւած է նոգեւորականուրեան եւ հողատէր ազնուականուրեան դասային կարգի բայխումը»\*)։

Իրանի ազնուական և ազատ զասը իր արժանապատուութիւնից վար գործ էր համարում առեւտուրով և արհեստներով զբաղուիլը։ Այդ ասպարէզը մնաց օտարներին, Վերջինս հենց իր օտարածագում լինելու հետեւանքով՝ քաղաքական ազգակ չդարձաւ։ Իշխողները հանգուրժում էին նրան, երբեմն հոգանուորում, բայց զասի և իշխանութեան յենարան չէին զարձնում։ Իրանի քաղաքներն ապաքաղաքա-

\*) Բ. Բարտոլդ. Մահմեդական աշխարհը. էջ 11:

կան տարր մնաց, ջանաց սիրաշահիլ հղած իշխանութեան՝ իր վտանգութեած գոյութիւնը պահելու համար։ Նրան բաժին ընկաւ հարստանաւ և խաղաղութեան համար ազօթելը։

Սասանեանները մեծ ճիգ էին թափում ստեղծելու քաղաքաբնակդաս, թէկուզ և օտարներից կազմած, որովհետեւ նրանք էին բարձրացնում իրանի տնտեսութիւնը, մտաշկարարում արքունիքին անհրաժեշտ բարիքներ, արժեցնում, զրամ դարձնում իրանի բնական հարստութիւնները, հարստացնում գանձարանը, անտեսապէս իրանը կապում զրսի աշխարհի հետ Երկրի տնտեսական կայունացման, հովիւների և պարզունակ երկրագործութեան աշխարհը առեւտուրի և արդիւնաբերութեան երկիր դարձնելու համար իրանի արքաները հսկայ զանգուածներով քաղաքաբնակ զաղթականներ էին բերում Հայաստանից, Սիրիայից, Փոքր Ասիայից։ Այս միջոցին զիմել էին նըրանցից առաջ արեւելքի բոլոր իշխանները, որոնց մէջ էլ մեր Տիգրան Մհեր, Մեր պատմագիրները՝ Փ. Տիւզանդացին, Մ. Խորենացին յիշում են հայ քաղաքների աւերումների և քաղաքացինների զերութեան մասին։ Շապուհ Բ.ի ձեռքով, Երրորդ և չորրորդ դարերում իրանական քաղաքներում երեւում են քրիստոնեայ համայնքներ։ Խոկեր Բիւզանդիայում նեստորականների զէմ մեծ հալածանք է սկսւում նրանք մեծ զանգուածներով ապաստանում են իրան և ծաւալուում մեծ ու փոքր քաղաքների մէջ։ Իրենց աշխատանքի բերումով սեմախոսները թափանցում են արեւմուտաքից արեւելք՝ զառնում են ոչ միայն տնաեսական բարձր ձեւերի ներկայացուցիչներ։ այլեւ նոր գաղափարների, նոր կրօնի քարոզիչների նրանց միջոցով է որ քրիստոնէութիւնը երեւում է Միջին Ասիայում։ Հնդկաստանում, մուտքէ գործում բնիկ իրանցինների մէջ և քաղաքներից թափանցում կալուածատէրերի զղեակները։ Բայց իրանցինների մէջ քրիստոնէութիւնը մեծ ծաւալում չունեցաւ, ուստի և նա մնաց միշտ օտար, ոչ իրանցի ժողովուրդների կրօն։ Այս քրիստոնեանները, հրեանները և ասորիններն էին կազմում իրանական բուրժուազիան, քաղքենի զասը, նրանց միջավայրումն է որ տեղի է ունենում կրօնական և գաղափարական շարժուածներ, անտեսութեան նոր ձեւերի հոլովոյթ և ոչ թէ իրանցի կալուածատէրերի և ազնուականների մէջ։ Իրանում շյառաջադիմութեան սատարողները՝ մինչեւ Սասանեան հարսութեան վախճանը առաւելապէս օսարականներն էին եւ օսարածինները։ Եւ այս յառաջադիմութիւնը համեմատաբար ժիշ էր անդրադառնում բուն իրանական ժողովրդի վերայա\*)։

\*) Բ. Բարտոլդ. Մահմեդական աշխարհը. Էջ 12:

Բայց Սաստնեանների ամենամեծ ուժը և յենարանը գրադաշաւկան կրօնն եր եւ կղերը: Այդ կրօնը նոր զարթօնքի և հզօրութեան հասաւ նրանց օրով, թէպէտ հիմնովին կերպարափոխուելով: Զբագաշատի վարգապետութիւնը սազմնաւորուեց իրանի արեւելքում, ուր երկու տարբեր աշխարհազրական միջավայր, երկու աշխատանքի ձևեր, երկու ազգագրական տարբեր հանդիպում էին իրար և սրանց մէջ եղած տեւական կոփւը իրանի պատմութեան զիմաւոր փաստերից մէկն է կազմում: Զբագաշատը իր կրօնական ուսմունքի մէջ համադրել է և աւելի բարձր ասամբանի հասցրել արեւելքի կրօնաբարոյական վարգապետութիւնները: Եւ այդ համագրութիւնը ամենէն կատարեալին է, որին հասել էր արեւելքը: Աքէմնեանները արգէն ունէին ազգային և պետական կրօնի տեսութիւնը: ԱհրուՄազգան իրանի և զինաստիայի հովանաւորն է: Սմբն ինչ աեզի է ունենում նրա անունով և նրա համար: Նա երկու արարիչն է: Զբագաշատի մտածողութեան մէջ իրանի կրօնը մաքրուեց, ազնուացաւ ու զարձաւ բարոյական կառուցման և տեւական վերելքի կրօն: Աշխարհը մէկ անգամ կառուցուած չէ, նա անաւարտ է, թերի, նա միշտ լինելիութեան, վերելքի մէջ է, տեւական շինումի և կառուցման մէջ: Նրա մէջ՝ ապրով, զործող մարզիկ՝ իրենց մասնակցութիւնն ունեն: Մենք է, որ իրացնում ենք արարչազգործութեան նպատակները, մենք է, որ զործակցում ենք ԱհրուՄազգայի հետ: Նա մեղ կոչ է անում իշրեն հետ լինելու և վերամշակելու կեանքը, բնութիւնը, հասարակութիւնը: Զբագաշատի վարգապետութիւնը մշակոյթի կրօն է: Նա ուսմունքն է շինարար, կառուցազ հասարակութեան ընդգէմ քանդիչ, անստեղծ վաշկատուների: Այս կրօնի երկուութիւնը՝ զուալիզմը՝ հասարակական երկու աշխատանքների հակագրութիւնն է՝ անցած զիտաղ և զատող մարզու ընդհանրացնող մաքով և ստացած կրօնաբարոյական հիմնաւորում:

Որպէս ուսմունք զբագաշտականութիւնը վեր է ազգութիւններից և ցեղերից: Նա կոչ է անում մարզուն և մարզկութեան: Աքէմնեանները՝ այս կրօնը զարձին զինաստիական և ԱհրուՄազգան գարձաւ նրանց հովանաւոր աստուածը: Սակայն իրանի աէրերը իշրենց կրօնը չյայտարարեցին պարտազիր ամբողջ կայսրութեան համար: Նրանց կրօնական քաղաքականութիւնը հանդուրժող էր: Նրանք թոյլ տուին ազատորէն ապրելու, և մեծանալու նաև ուրիշ կրօններին: Սրա հետեւանքով արեւելքի մէջ ոչ միայն ժողովուրդները մօտեցան, ճանաչեցին ու կապուեցին իրար, այլև կրօնները ազգեցին իրար գրայ: Համագրութեան և միացումի ուղին բռնիցին: «Ինչպէս նրական մարգարեները՝ Զբագաշտ հասաւ միակ՝ հոգեւոր ասծու իմացուրեան, որի մէջ խացել է բարութեան սկզբունքը՝ ԱհրուՄազգան,

մինչ երկրում իշխող չարուրեան սկզբունքը դիմաւորուել է Անրիմանի մէջ: Կեանիք եւ բնուրեան մէջ չարն ու բարին յաւերծօրէն պայքարում են: Այդ կոռուին մասնակից են նաև մարդիկ: Մարդը պատասխանատու է իր բարի եւ չար գործերի համար: Նա տէրն է իր բաղդի եւ նրա կամքը որուամ է իր վարքագիծը<sup>\*)</sup>:

Պարթեւնիրն անտարբեր էին կրօնի, մանաւանդ զրագաշատականութեան հանգէպ, որին նրանցից առաջ հարուածել էին սելիւկիանները և հելլենիզմը՝ մուծելով արեւելք նոր կրօնական պատկերացումներ: Իրանի քաղաքական անկժման հետ մազգէականութիւնն էլ ընկըրկեց, ապրեց իշխանազուրկ Իրանի աղնուականութեան, և մոզերի շրջանակում: Այս ընկրկումի ժամանակ է, որ նա ընդունեց իր մէջ ժողովրդական հաւատքից շատ բաներ, յաճախ անյարիր նրա ոգուն և ուսումունքին, նիւթականացաւ, յարմարուեց ուսմէի զիսաակցութեան, կորցրեց շատ բան իր ուժունքի մաքրութիւնից, բայց աւելի ըմբռոնելի գարձաւ ու մատչելի Արշակունիները տէր չկանգնեցին Զրադաշտի կրօնին, զնացին աւելի բարձր հելենիզմի յնաեւից, որի ընդորինակողներն եղան միայն և ոչ թէ ստեղծողները: Նրանք տիրեցին Իրանին, բայց խորթ մնացին նրա մշակոյթին: Սաեղծուեց մէկ լայն ձեղք նրանց և իրանցիների մէջ: Վերջիններս քաշուած քաղաքական սապարէզից, հաւաքուած իրենց կրօնի, աարուաշնի շուրջը, պահում էին հին աւանդութիւնները և ուժեր անահուամ վերելքի և իշխանութեան համար: Պարթեւնիրը նրանց համար իրենց ազգակիցները և լեզուակիցները չէին, միայն աւելի յնաամեաց, այլ բոլորովին օտար, արեւելքից և կած Անրիմանի զաւակները: Ժամանակի ընթացքում կրքերը մեզ քացան, բայց նրանց մէջ զործակցութիւն և համերաշխութիւն չստեղծուեց: Իրանական ազնուականների և մոզերի միջավայրում զրագաշատականութիւնն ազգայնացաւ, իրանացաւ: Այդ ազգայնութեան կերտողը և պահողը մոզութիւնն էր և երէկուայ իշխոզ, իսկ այսօր իշխանազուրկ ազնուականը՝ նրանք փարեցին իրենց կրօնին և զարձրին այն պայքարի զրօշ ազտառութեան և պետականութեան համար մզուող կոռու: Նրանք կրօնի հետ կապեցին իրենց ազգային վերածնութիւնը: Իսկ պարթեւնիրի հելենասիրութիւնը ծանր հարուած սատացաւ Սելիւկեաններից, ապա Հոսոմից: Արտաքին պարտութիւնը սթափեցրեց նրանց: Փորձեցին ամուր հիմքեր տալ իրենց իշխանութեան, հովանաւորել Իրանի կրօնին, պաշտօնի կանչել իրանցիներին: Փորձեցին հաւաքել և զրի անցնել Զրադաշտի ուսումունքը և պատումները, բայց ուշ էր: Նրանց թիկունքում բարձրացել էր ար-


\*) Բոստովցեւ — Հին աշխարհի պատմութիւնը — ռուսերէն. էջ 65:

գէն իրանցին և մէկ օր էլ ապստամբուեց և իշխանութիւնն առաւ յը ձեռքը:

Սասանեանները իշխանութեանը տիրացան այն համոզմունքով, որ նոր պետութիւնը պիտի հիմնուի միայն ազգայնացած գրադաւականութեան վերայ: Բնական է, որ նոր գունաւորումով այդ կրօնը կորցնելու էր իր գաղափարաբանութիւնից շատ բան, սակայն դառնալու էր գործոն ուժ պետական և հասարակական կիանքում: Նրա սպասաւորները բազմացան, կազմակերպուեցին, ստեղծեցին մոզերի նսկրապետութիւնը և տեղ գրաւեցին քաղաքական կիանքում: Մոզպետը թագաւորից յետոյ ամենէն հեղինակուոր և իրաւունակ դէմքն էր: Նա գործոն մասնակցութիւն ունէր արտաքին և ներքին քաղաքականութեան մէջ. նա էր որոշում գահաժառանգութեան և ընդհանրապէս արքայական թեկնածութեան հարցը, օրինականացնում նրա ընտրութիւնը և իրաւունքը: Մոզերի նույիրապետութիւնը ամենից ազգեցիկն էր հանրային կիանքում, որովհետեւ մոզովուրգը նրա մէջ ահսնում էր աւելի բարձր ոգիների, անտեսանելի ուժերի ներկայացուցչին, որ, մրայն կարող է յարաբերել և խօսել նրանց համար Մոզերը մոզովրգի առաջնորդներն էին. նրա ուսուցիչն, կրօնի մեկնաբանովները, դատաստան անողը, օրէնքների մեկնիչը, մատարականն ու բժիշկը: Թագաւորները նրանց համարում էին գահի յենարանը. նրանց միծ հեղինակութիւնն օգտագործում էին դինաստիական և պետական նըպատակների համար: Մոզերի զասը կապւում էր գահին, որովհետեւ աշխարհիկ իշխանութիւնն անհրաժեշտ էր պայքարելու օաար կրօնների դէմ, որոնք թափանցում էին իրան և նոյնիսկ իրանցիներից հաւատացողներ որում: «Մովեռանդ նույրապետական կազմակերպութիւն ունեցող մոգութիւնը մեծ ուժ էր պետութեան մէջ եւ սրբացնում էր այն քաղաւորներին, որոնք ենթարկում էին իրեն: Դրա փոխարեն արքայից արքաներն ել մեծ ծառայութիւն եին մատուցանում Մազդեղական կրօնին. Երանք կառուցում էին անհարեն... Երանք խմբագրել ըրուին Աւեստան եւ միւս սրբազն տէսները»\*):

Սասանեանների ժամանակ տեղի ունեցաւ գահի և տարուշանի սերտ միութիւնը, այսինքն երկու իշխանութեանց գործակցութիւնը գինաստիայի, պետութեան և կրօնին համար: Դինաստիայի հիմնադիրը Արտաշիրը յայտարարեց իրէն կրօնի պաշտպան և յենուեց մոզերի վերայ: Շապուհը ըստ Ֆիրզուսիի այսպէս է բանաձեւում պետութեան և կրօնի յարաբերութիւնը՝ պահից գահի եւ ատրուեանի միութիւնը, Երանք պէս է որ մէկը միւսին յենարան լինեն. Իշխանն ա-

\*) Եր. Տեր Մինասեան, Եղիշեկի Վարդանաց պատերազմը, 281-292:



ուանց կրօնի բռնակալ է։ Եթէ առաջին մասը այս նախագասութեան շհշտում է աշխարհիկ և հոգեւոր իշխանութեան մէջ անհրաժեշտ կապը՝ կառավարելու և հանրային կարգը պահելու համար, ապա երկրորդ մասը՝ կառավարելը, օրէնքներ գնելը սերտօրէն կապում է կըրոնի հետ։ Պետութիւնը պիտի ներշնչուի կրօնի թելազրանքներով։ Եթէ այդ ներշնչումը չկայ՝ թագաւորը կը գտնակալ։

Արքայից արքան զրագաշտական կրօնական համայնքի պետն է։ Նա հովանատութիւն ունի Անրու. Մազգայի առջևու Յաճախ նրան կոռչում են մոգպենու։ Իսկ իսկական մոգերն ու մոգպենաները նրա օգնականներն են ու վարիչները կրօնական գործերի մէջ։ Միւս կողմից նըրա իշխանութիւնը աստուածային ծագում ունի. նա գրւում է Աստծու հովանու տակ։ Լաւագոյն արքան՝ Անրումազգայի կրօնաքարոյական պատուէրների կատարողն է, գործագրողը։ Նա պիտի լինի շինարար թագաւոր։ Նա այս աշխարհում Աստծու օգնականն է վերաշնուրեան, մշակութային աշխատանքի մէջ։ Աստուած միշտ այդպիսի արքային հետ է։ Բատ այսմ Սասանեան թագաւորի կամքը և իրաւունքները սահմանափակող ուժ չկայ, բացի աստուածային կամքից և նրա պատուէրներից։ Հասարակականութիւնը օրինական միջոցներ չունի սահման գնելու նրա գործին, կամքին։ Այսպիսի պայմաններում շատ բան կախուած է արքայից արքայի անձի, նկարագրի հետ։ Զկայ գրաւոր սահմանագրութիւն, ամեն ինչ որոշում է Աստուածային պատուէրը և հասարակութեան ուժերի փոխ յարաբերութիւնը։ Բանակալութիւնից ազատուելու համար յաճախ գործոնները դիմում են բանութեան, ահարիկումի, սպանութեան։ Յաճախ էլ մոշգերը և մոգպենաները մշակում էին արքայից արքայի պաշտօնանկութեան տեսութիւնը, որ մէկ շատ ուժեղ զենք էր ազնուականների և կղերի ձեռքին։ Նրան յայտարարում էին շնորհած աստուածային պատուէրներից, մեղանչած նրա օրէնքների առաջ։ Այսպիսի պարագաներում որոշիչ գերը կատարում էր մոգպեաը։

Մոգերը և մոգպենաները՝ ամբողջ նորիբապետութիւնը յենուում է ոչ միայն կրօնից բզիսած հեղինակութեան վերայ, այլև այն մնա հարստութեան, որ նա ունէր։ Կրօնը, ինչպէս ամենուրիեք, իրանումն էլ զարձաւ եկեղեցի, ատրուշան, կրակը զարձաւ խորհրդանիշը յաւէտ կենդանի աստուածութեան։ Եկեղեցին զարձաւ կալուածատէր։ այդ հողերը ցրուած էին երկրի բոլոր մասերում, բայց մանաւանդ հիւսիսում, Մարտասանում, որ մոգերի գասի հնապօյն հայրենիքն էր։ Իշխանութիւնն ու ժողովուրդը յաճախ նուրիսում էին հոգեր, անասուններ, պատուղ, զարգարանքներ։ Երբեմն էլ աշխարհիկ իշխանները հաշտ աշխով չէին նայում ատրուշանի սպասաւորների կալուածներին,

որ ի վերջոյ ծառայում էր նրանց զիրքի հզօրացման՝ ժողովրդի մէջ և պալատում։ Երկու իշխանութիւնները յաճախ կանգնում էին զէմ զիմաց որպէս մրցող, պայքարող կողմեր։ Երբեմն քրիստոնեաների հանգէպ տարբեր վերաբերմունք էին մշակում աշխարհիկ ու հոգեւոր իշխանութիւնները։ Աշխարհիկ զեկավարութեան համար քրիստոնեաների և օտարածին ու օտարազաւանների հարցը քաղաքական խնդիր էր։ պէտք էր նրանց անվտանգ զարձնել պետութեան համար, մողերի համար՝ այդ կրօնական հարց էր։ պէտք էր իրանի մէջ միայն մէկ կրօն լինի՝ զրադաշտականութիւնը։

Զրադաշտական կրօնը անհանգուրժով էր, բայց միսիոնարական կրօն չէր։ Նա նպատակ չուներ ամրող աշխարհում կամ արհեւլքում բոլոր ազգերին իր մէջ առնելու Պուցէ այդ կրօնի ոչ միսիոնարա։ Կան ոգուց է, որ առաջ էր եկել Աքէմէնեանների կրօնական հանդուրժութիւնը։ Այս կրօնի համար, Սասանեանների օրով, բաւական էր, որ իրանի մէջ բոլորը լինին իրեն հետեւողները։ Առաջին հերթին նա հետապնդում էր, որ ոչ մէկ իրանցի պարսիկ օտար կրօնի չհետեւի։ Այս ինդրում աշխարհիկ և հոգեւոր իշխանութիւնները միասին էին։ Եւս առաւել նրանք հետապնդում էին որ քրիստոնէութիւնը չթափանցի իրանի զեկավար շրջանների, բարձր ազնուականների մէջ։ Կար «անզիր երաման մը, որ մահուան պատով կ'արգիլեր պարսիկներու դեմկարոյս ըլլալը, այսինքն ուրանալ մոզական դեմը»։ Հատ Հ. Ն. Ակինեանի, մեզ հետաքրքրող ժամանակից մի քիչ յիտոյ հրատարակուել էր մէկ օրէնք, որի «նպատակն էր նեռու պահել քրիստոնեարի նախարարական, ազնուական տուներէ, որպէսզի անոնց ազդեցութեամբ հաղաքական կեանքի մէջ գործօն դեր չկարենայ ունենալ քրիստոնեութիւնը»\*)։ Այս բանը, եթէ ոչ որպէս օրէնք, գէթ որպէս ընդհանուր տրամադրութիւն եղել է նաև չորրորդ զարում։ Հեռու պահել իրանի զեկավարութիւնը քրիստոնէութեան ազդեցութիւնից։ Այս աեսակէտի գործազրողը մոզերն էին և աշխարհիկ իշխանութիւնը հալածանքի գործերի մէջ նրան զօրավիզ էր։ Այս հետեւզական և չեցուած քաղաքականութիւնը, թէ իրանցի պարսիկը քրիստոնեայ չպիտի զառնայ՝ ունեցաւ իր հետեւանքները։ Իրանցի քրիստոնեան չնչին փոքրամասնութիւն մնաց, իրանական լեզուն քրիստոնէութեան լեզու չգարձաւ, իրանցին հազորգակից չեղաւ արեւմուտքի քաղաքական միծ զաղափարներին, որոնք ստեղծուեցին և հիմնաւորուեցին քրիստոնէութեան մտածումի և բարոյական սկզբունքների վերայ։ Այս բոլորը ունեցաւ և մէկ հետեւանք՝ իրանը աւելի շատ են։

\*) Հ. Ն. Ակինեան Եղիչե, Բ. մաս. 533-535:

թարկուեց հետագայում մահմետական գաղափարների և մէկ անգամից կորցրեց և իր կրօնը, և իր պետութիւնը և դինաստին:

Մոգերը շատ անհանգույքով էին մահաւանդ այն քրիստոնեաների նկատմամբ, որոնք գործում էին իրանցիների մէջ: Իսկ քրիստոնեաներն էլ շատ յաճախ ի չարն էին գործազրում իրենց՝ չնորհած կրօնական ազատութիւնը՝ արքայից արքաների կողմից: Փորձում էին մտնել բարձր խաւի մէջ, քարոզել իրենց կրօնը, վէճի մանել և ապացուցել իրենց ուսմունքի առաջնութիւնը մազգեղականութեան հանդէպ: Երբեմն նրանք այնքան յանդզնութիւնն էին ունենում, որ կործանում էին ատրուշանները, այսինքն պայքարում իրանական պիտական կրօնի դէմ: Սրա հետեւանքով իրանի ամենահանգույքով արքաներն անգամ հալածանք էին հանում քրիստոնէութեան դէմ, աւելի շուտ նրա զեկավարութեան դէմ, որ գործոն միսիոնարական նպատակ էր զնում քրիստոնէութիւնը իրանցիների մէջ քարոզելու: Այս աշխատանքը ի հարկէ պետականօրէն անհանգույքելի է և քայլայիչ իշխանութեան համար: Քրիստոնեաների այս գործոն, միսիոնարական ոգու հանդէպ, իրանի հոգեւոր և աշխարհիկ զեկավարութիւնն էլ դիմում էր յարձակման: Երբեմն աշխարհիկ իշխանութիւնը իւրացնում էր մոգերի տեսակէտը և սկսում մէկ ընդհանուր հալածանք քրիստոնեաների դէմ: Մոգերը ջանք էին թափում զրագաշատ կանութիւնը պարտազիր զարձնել իրանի բոլոր բնակիչների համար: Թագաւորներն էլ այն տեսակէտին էին, որ կրօնական միութիւնը ամուր պատուանդանն է պետական միութեան: Միհր-Ներսէնը՝ հինգերորդ դարի իրանի ամենամեծ պետական զործիչներից մէկը, յայտարարում էր հայերին՝ «ինչ կրօն ձեր Տերն ունի, դուք ել նոյնը ունեցեք, մանաւանդ որ Ասուծոյ առաջ ձեզ համար ել հաշիւ պիտի տանք»: Կը-րօնի այս օգակող, զօղող գերը աւելի մեծ պիտի լինէր իրանում, եթէ ի նկատի ունենանք նրա ազգային-կրօնական կառոյցը: Նա իր մէջ ունէր բազմաթիւ ազգեր, ժողովուրդներ ու ցեղեր, մշակոյթի տարրեր աստիճաններ, կրօնների ամենէն պարզունակից սկսուծ մինչեւ ամենէն բարզն ու զարգացածը, աշխատանքի պարզունակ ձեւերից, մինչեւ քաղաքների բարդ աշխատանքը: Պիտի ի նկատի ունենալ, որ բուն իրանական տարրն էլ, որ պետականութեան ներկայացուցիչն էր, իր քանակով գերաշխու չէր հպատակներից և միայն կրթնած էր վարչութեան և ուղմի ուժի վերայ: Այդ միջոցով է, որ ազգերն ու ցեղերը պահում էր իր իշխանութեան տակ: Մշակոյթի տեսակէտից էլ նա կայունացած էր, զրագաշտականութեան մէջ չէր կատարում գաղափարների շարժում, յառաջդիմութիւն: մէկ երկու փորձը վերջացան զանգուածային կոտորածներով, որից յետոյ ամեն շարժում կանգ առաւ: Իր ընկերային կազմն էլ աւատական մեկուսացած

և ինքնամփոփ, այդ բանին չեր նպաստում։ Շարժումն ու որոնումները կատարւում էին օտարածին և օտարադաւան համայնքների մէջ, որոնք տնտեսապէս էլ աւելի բարգաւաճ էին, աշխատանքով էլ, ընկերային շերտաւորման տեսակետից էլ աւելի բարզ։

Միջագետքում, Պարսից ծոցի ափերին, բալոր մեծ ու փոքր քաղաքներում հոծ բազմութեամբ սեմախօս ժողովուրդներ էին ապրում, ասորիներ, բարելացիք, հրեաներ, երբեմնի հզօր ժողովուրդների թոյլ բեկորները։ Միջագետքը նրանց հայրենիքն էր։ Նրանք ամեն բանով հակապատկերն էին իրանցիների։ Հիւսիսում ամբողջ Այսրկովկասը՝ ընդարձակ Հայաստանի գլխաւորութեամբ քրիստոնեայ էր։ Երեք ազգերը՝ հայ, վրացի և աղուան միացած էին պատմական անցեալով և կրօնով։ ստեղծուել էր Այսրկովկասի մշակութային-կրօնական միութիւնը։ Ակիզբները նրանք անկախ պետական կեանք ունեին և երբ աւելի ուշ մասն Իրանի կայսրութեան մէջ պիտի պահէին իրենց կրօնական և պետական ինքնավարութիւնը։ Կայսրութեան արեւմուտքում սեմախօս ժողովուրդները սահմանակից էին Բիւզանդիային, որի ամբողջ հարաւային մասերում նոյնպէս սեմախօսներն էին ապրում մեծ մասամբ սուրբիացիք, ասորիներ։ Քրիստոնէութիւնը այստեղ համատրած էր։ ասորական լեզուն զարձաւ զրի և գրականութեան լեզու։ սեմական աշխարհից նա զուրս արեց յունարէնի գործածութիւնը։ սաեղծեց քրիստոնէական մաքի մեծ կենարոններ՝ Եղեսիան, Մրձրինը, ուր բեղուն մտաւոր շարժում սկսուեց։ ասորական շրջանակից զուրս եկան եկեղեցու նշանաւոր հայրեր։ Կրօնական հոգի վերայ աճեց ասորական ազգայնութիւնը, որն իրեն ներշնչեց միսիոնարական գաղափար՝ քարոզել քրիստոնէութիւնը հարեւան երկիրներում։ Հայաստանում, Իրանում։

Կայսրութեան արեւելքում Իրանցիները հանդիպում էին հնդիկներին, սկիւթներին, քուշաներին, հնիթաղներին, որոնք մասամբ նստակեաց էին, մասամբ վաչկատուն։ Նրանց մէկ մասը հաստառուած էին Իրանի հոգերի վերայ, միւս մասը սահմանազուխների վերայ էին կենարոնացած և շարունակ արշաւում էին Իրան։ աւարի, աւերի և գերիների համար։ Այս սահմաններում է, որ սկիզբ առաւ Իրանի և Թուրանի գարաւոր կոփւը, այս կողմերումն է, որ թէպէտ ուշ, Թուրանը յաղթեց Իրանին և ողոգեց բարձր մշակոյթի և պետականութեան այս երկիրը և թուրանացրեց նրա հիւսիսարեւմը տեսականորէն զրազուած էին արեւելեան սահմաններում։ այս բանը իր անդրազարձումներն ունեցաւ նուև Իրանի հիւսիսային և արեւմտեան ճականների վերայ։ Հիւսիսում ապրում էին լեզուակից մարերը, որոնք զեռ բոլորովին չեին ձուլուել իրանցիների մէջ և համախումբ ապրում էին

կասպից ծովից մինչեւ Զագրոշ ընկած երկրամասում։ Յուն Իրանի մէջ, լեռնային մասերում, ապրում էին ժողովուրդներ, ցեղախմբեր՝ մեկուսացած իրանի ընդհանուր քաղաքական և մշակոյթային կեանքից։ Աւելացնենք և այն, որ ամբողջ իրանում ցրուած էին հրեայ գաղթականութիւններ, որոնք հաւաքուած իրենց սինազողի շուրջը։ մեկուսացած կեանք էին վարում և հարստանեալու մասին խորհում։ Ահա՝ ազգերի, կրօնների, մշակոյթների, ցեղերի այս համախմբումն էր, որ կազմում էր իրանական կայսրութիւնը։ Սրանք շատ քիչ բաներով էին միացած իրար հնատ։ ոչ ընդհանուր վարչութիւնը կար, ոչ հանրապարտագիր լեզուն, ոչ կրօնը, ամեն ազգ, ցեղ, համայնք կ'ապրէր ինքն իրեն համար՝ զարերով մշակուած լեզուային մշակոյթային և առեղական ինքնավար միջավայրում։ Այստեղ էր, որ կառուցւում էր, սնւում էր նրա հոգին և ոչ թէ համակայսերական բարիքների մէջ։

Բայց այս չէր Սասանեանների պետական իտէալը, հետապնդած նպատակը։ Նրանք լաւատեղեակ էին իրականութեան և փորձում էին վերափոխել, յեղաշրջիլ հղածը։ Նրանք պետական կենտրոնացման, կրօնական միութեան, իրանական լեզուի առաջնութեան քաղաքականութիւնն է, որ վարում էին։ Արքայից արքան պիտի տնօրինողը լինի բոլոր հպատակների ոչ միայն նիւթեականի, այլև խղճի։ Պարթեւններից ժառանգութիւն ստացած կիսանկախ շրջանների, աւատական միաւորների, տոհմական կարգի փոխարէն պէտք էր հաւաքել, համախմբել բոլորին վարչականօրէն և օրէնսդրութեամբ կենտրոնացած պետութեան մէջ՝ միացած հոգեւոր՝ կրօնական կապերով։ Այս բոլորը, աւելի հետագայում, պիտի ստեղծէր իրանական ազգը, որ իր մէջ համաձուլէր բոլոր ժողովուրդներին։

Այս նպատակի հետապնդումը ձեւաւորուեց որպէս քաղաքական նոր ուսմունք՝ ում երկիրը, նրա ել կրօնը։ Սրանով Սասանիանները շեզուեցին Աքէմէնեանների հանդուրժողութիւնից։ Սրանց մեզմ և հանդուրժող վերաբերումը շատ նպաստեց արեւելեան ազգերի մշակոյթին։ Հրեանների, եղիպատացինների, յոյնների հոգեւոր կեանքը և գրականութիւնը մեծապէս նպաստաւորուեցին Աքէմէնեանների այս վերաբերումից։ Պարթեւններն անտարբեր էին կրօնի հանդէպ, Սասանեանները գարձան մոլեանդ։ Աքէմէնեանները ազատամիտ էին, լայնախոն, Սասանեանները հետապնդեցին ամեն տեսակ քաղաքական ու կրօնական միութիւններին։ Այս վերաբերումից ամենից շատ տուժելու էին քրիստոնեանները, որոնք զգալի թիւ էին կազմում կայսրութեան մէջ, մանաւանդ արեւմուտքում։ Հրեաններն ընդհանրապէս հալածանքի չենթարկուեցին, ապաքաղաքական տարրն էին։ հետեւապէս անվտանգ։

Գ. գարից սկսած քրիստոնէութիւնը թափանցեց Իրանի սահմանն ներից ներս . նա տարածուեց զլիաւորապէս սեմախօսների մէջ : Դարի կէսին Սելեւկիս քաղաքում քրիստոնեայ մեծ համայնք կար ու լաւ կազմակերպուած էր ու հարուստ : Իրանական քրիստոնէութիւնը իրոք պիտի կոչել ասորական քրիստոնէութիւն , քանի որ նրա հետեւողները զլիաւորապէս ասորիներն էին , սիրիացիք և զեկավարութիւնն էլ նրանց միջավայրից է , որ զուրս էր զալիս : Նրանք տաշրածուած էին երկու կայսրութեանց մէջ , աւելի ճիշդ նրանց հայրենիքն բաժանուել էր երկու պետութիւնների՝ Յիւզանդիայի և Իրանի մէջ : Քաղաքական վերականգնման և ազատազրութեան փորձեր չէին անուժ , ցրուած էին շատ ընդարձակ տարածութիւնների վերայ , բանիմաց , առեւտրական խաւը թողել էր իր երկիրը և կեզրոնացել Իրանի մեծ քաղաքներում : Ապաքաղաքական տարր լինելով նրանք վերակառուցին իրենց լիզուն , գարձրին այն արեւելքի երկրորդ՝ քըրիստոնէական գրականութեան լեզու : Նրա մշակոյթի և կրօնական զորիչները ջանացին հարեւան ժողովուրդներին ենթարկել իրենց՝ քըրիստոնէութեան միջոցով : Այս միասումի մէկ արտայայտութիւնն է ասորի քարոզիչների մուտքը Հայաստան և նրանց գերակշիռ ազգեցութիւնը մեր լիզուի , գրականութեան , եկեղեցական վարչութեան և նուիրապեսութեան մէջ : Եթէ իրանցիները քաղաքականապէս է , որ փորձում էին նուածել Հայաստանը , ապա ասորիները նուածում էին այն հոգեւոր քրիստոնէութեան միջոցով : Հետազայում հայութիւնը պայցքար պիտի մզէր այս երկուսի զէմ էլ միաժամանակ : Իրանի վարիչները քրիստոնեայ այս համայնքներին չէին հալածում , մանաւոնդ , որ նրանք նպաստում էին երկրի անտեսական վերելքին : Ընդհակառակը նրանք Հայաստանից , Սիրիայից և Փոքր Ասիայից կատարած զանգուածային գաղթումների միջոցով նպաստեցին , որ նրանք շատանան իրանի մէջ , նրանց արտօնութիւններ տուեցին , հովանաւորեցին նրանց անդական , իրանցիների հալածանքների հանգէպ : Բայց զրութիւնը փոխուեց չորրորդ դարի սկզբներից : Երբ Կոստանդիին Մեծը 313 թուին կայսրութեան մէջ՝ քրիստոնէութիւնը յայտարարեց հանգուրժուող կրօն : Իրականի մէջ նա շուտով եղաւ միակը և ինքը սկսեց հալածել միւսներին : Իրանի քրիստոնեանների մտայնութիւնը յեղաշրջուեց . նրանց ամբողջ համակրանքն այժմ Հոռմի կողմն էր , որ հովանաւորում էր քրիստոնէութեան : Փոխուեմ էր յարաբերութիւնը երկու կայսրութեանց մէջ : Միաժամանակ կոստանդիին Մեծը միջամտեց իրանի արքունիքում յօգուտ քրիստոնեանների : Իր զրած նամակներում Շապուհին՝ նա յորդորում էր մեզմ վարուել նրանց հետ , չալածել , ապահովել նրանց կեանքը և զոյքը : Շապուհը հասկանում էր , որ քրիստոնեանների ապահովութիւնը լոկ պատրուակ է

իրանի ներքին գործերի մէջ միջամտելու: Եւ փոխանակ բաւարարեց կայսեր՝ պատրաստուեց պատերազմի: Դրա հետ մէկտեղ նա որոշեց թուլացնել Իրանի քրիստոնեաների ուժը, Նրա հալածանքը իրոք քաղաքական բնոյթ էր կրում և մէկ տեսակ ինքնապաշտպանութիւն էր: «Քաղաքական նկատառումներն են եւ ոչ քե կրօնական մոլեւանդաւթիւնը, որ մղեցին Շապուհին Խրանի քրիստոնեաների դեմ առաջին մեծ հալածանեները սկսելու... Խրանի քրիստոնեաների զայտնի բնամուրիւնը պետութեան դեմ մեկ մեծ վտանգ էր այն ժամանակից, երբ նումնական կայսրները խաչը ընդունեցին ութես խորհրդանշիւր. Եւ այս ներքին թօնամու դեմ է, որ Շապուհը զործում էր անխնայ ձեւով: Հալածանեները տեւեցին մինչեւ իր երկարատեւ բագաւորւրեան վերջը<sup>\*\*</sup>): Իրանական քրիստոնեաները կանգնում են Հոոմէական կողմութոշման վերայ: Նրանց այս տրամադրութիւնը երեւում է ասորի նըշանաւոր եպիսկոպոսի՝ Յ. Ա. Գրատիսի նամակներում: 337 թուին գըրած իր հինգերորդ նամակում նա խորհուրդ է տալիս Խրանին «զուռոգուրիւնը մի կողմ բողնել, չափը նանաչել. չգրգռել նզօր կենդանուն (Հոոմին), որովհետեւ նա անպարտելի է եւ կը տրուի ու կ'ոչնչացնէ նրան: Խոկ նա անպարտելի է, որովհետեւ Քրիստոն է տուել նրան այդ իշխանուրիւնը մինչեւ իր երկրորդ զարուսր եւ օգնում է նրան պատերազմների մէջ, Նրէ հոոմնական պետութիւնը երեմն պարտուրիւներ կրել է, այդ եղել է այն ժամանակ, երբ նա Քրիստոնի իր հետ չէ ուղղեցի պատերազմ տանիլ. այսինքն դեռ քրիստոնեայ չէ եղել»<sup>\*\*</sup>):

Առաջին մեծ և ընդհանուր հալածանքը քրիստոնեաների գէմ ըսկըսում է չորրորդ զարի 30ական թուերի վերջերից, Շապուհ Բ. Ի. Ժամանակ և կրում էր զուտ քաղաքական բնոյթ: Մի կողմէց նա ընդգարձակ սազմական գործողութիւն է սկսում Հոոմի գէմ, միւս կողմէց մաքրում է թիկունքը հակապետական, կտսկածելի տարրերից: Այս ընդհանուր փաստերի լոյսի տակ է, որ հասկանալի է զառնում նաև Հայաստանի գէպքերը: Շապուհը հայ քաղաքներն աւերում է և բազմահազար գերիներ է փոխազրում Խրան, հայ նախարարների մէջ սաեղծում է իրանասէր ուժեղ հոսանք, նրանցից շատերը լքում են քրիստոնէութիւնը, ընդունում զրագաշտական կրօնը, հալածում է հայ կղերը, եկեղեցիները կործանուում են, յունարէն գրքերը այրուում: Հայաստանը իր հետ ունենալու համար Շապուհը Արշակունիների գէմ է հանում հարաւի հայ նախարարներին, որոնց գլուխը կանգնում է

\* ) Art. Christensen: *L'Iran sous les Sassanides.* էջ 245:

\*\*) Ե. Տէր Մինասեան — Ըսկեդարի հայ գրականուրիւնը. 1946, Երեւան, էջ 5:

Մեհրուման Արքունիքն, և որին Շապուհը կ'ուզէր թաղաւորութեան հասցնել Արշակունիների անկումով։ Այս հալածանքը մասնաւորապէս եղել է եկեղեցու և նույիրապեառութեան դէմ, որովհետեւ նա հաստատուն և ամուր ու հարուստ կազմակերպութիւնն էր։ Իրանի արքաները «ձգտում եին ոչնչացնել ոչ քէ քրիստոնեական հաւատը, այլ ինչպէս մի ժամանակ Դիոկղիտիանոս կայսրը, Երանէ աշխատում եին վերացնել քրիստոնեական եկեղեցու կազմակերպութիւնը, որ դարձել էր ավետութիւն պետքբան մէջ»\*): 340 թուին Շապուհը հրատարակեց արտակարգ օրէնքներ քրիստոնեաների դէմ, ապա մէկ հրովարտակ, որով հրահանգում էր քանդել եկեղեցիները և յարքունիս զրաւել նրանց կալուածները և շարժական հարստութիւնը, ձերբակալել քրիստոնեայ հոգեւորականներին։ Հրովարտակը գործազրում է ամրողջ պիտութեան մէջ, մանաւանդ հոօմէական կայսրութեան կից մասերում, ուր կենտրոնացած էին քրիստոնեաները։ Հարիւրաւոր եպիսկոպոսներ, վանականներ ուղարկուում էին Սուսփան, որ զարձաւ կենտրոնացման կայան։ Քիչ յետոյ նրանց մեծ մասին կոտորեցին։ Կղերից յետոյ ձերբակալման և կոտորածի հերթը հասաւ աշխարհականներին և նրանց ջարդը այնքան մեծ ծաւալ ստացաւ, որ հաւանաբար Տիգրիսի հովտում բնակիչ չմնար, եթէ ի վերջոյ Շապուհն ինքը չմիջամտէր և մողերի մոլեսանդութեան սահման չդնէր։ Ահարեկումի և զանգուածային սպանութեան այս գործը որոշ ընդհատումներով շարունակուեց մինչեւ Շապուհի մահը։

Քրիստոնէութեան համար Իրանի մէջ նոր շրջանէ սկսում Յաղկերտ Ա. ի գահակալութեամբ 399-ին և իր նախորդների հալածանքները նրան այն եղրակացութեան բերին, թէ իզուր է մատածել քրիստոնէութեան արմատախել անելու մասին։ Պէտք է հաշտուել նրա գոյութեան հետ և աշխատիլ քրիստոնեաներին դարձնել օրինապահ հպատակներ։ Նա տեսաւ, որ քրիստոնեաների հալածանքը միայն անտեսապէս քայլայում է թէ բնակչութիւնը և թէ պետութիւնը։ Նոյն կրօնական հաշլածանքներն է, որ քրիստոնեաներին ուղղում է զէպի կայսրութիւն, որտեղից սպասում են իրենց փրկութիւնը։ Բազմահազար կենսունակ և պայքարող քրիստոնեաներ փախել էին կայսրութեան սահմանները և նրա բանակների մէջ կուռմ էին իրանի դէմ։ Մեծ առեւտրականները, որոնք եթէ սնանկացած չէին, փոխազրում էին արեւմուտք։ Յաղկերտը այս բոլորը տեսնելով, որոշեց հաշտուիլ քրիստոնէութեան հետ։ Նրա ժամանակ վերահաստատուած էր խաղաղութիւնը Բիւզանդիայի հետ։ Այս նպաստաւոր պայմաններից և տրամադրութիւններից

\*) Ե. Տեր Մինաւեան Ոսկեդարի Գրականութիւնը. էջ 6.

օգտուեցին քրիստոնեաները։ 410 թուին արքայից արքայի թոյլաւ տուութեամբ հրաւիրւեց իրանի քրիստոնեաների առաջին համագումաս րը Սելևկիայում։ Օրակարգի հարցն էր՝ Հիմք զնել և կազմակերպել իրանի քրիստոնեայ հկեղեցին։ Համագումարը զեկավարում էր Բիւզանդիայից եկած յատուկ պատուիրակ-հպիսկոպոսը։ Փողովը Երանի Քրիստոնեայ եկեղեցին յայտարարում է անկախ եւ ինքնավար։ Եկեղեցին ոչ կրօնական հարցերի, ոչ վարչական-կազմակերպչական խնդիրներում չի դիմում կ. Պոլսին կամ օարեւմուաքիչ եկեղեցուն։ Այս լուծումը բաւարարում էր, գուցէ և թելազրանքն էր իրանի զեկավար շրջանակների։ որոնք կարող էին հաշտուել անկախ և ինքնիշխան քրիստոնեայ եկեղեցու հետ։ Նոր կազմակերպուած եկեղեցու կենտրոնը՝ Սելևկիան պիտի լինէր՝ կից Տիգրոսին։ Նրա զԼուսը կանգնում էր եւ պիսկոպոս-կաթողիկոսը։ որի իշխանութիւնը տարածում էր իրանի բոլոր քրիստոնեաների և համայնքների, կղերի վերայ։ Նրան էր ենթարկուում նահանգային թեմական եպիսկոպոսները։ Ստեղծում էր հոգեւոր իշխանութեան կենտրոնացում։ Նոր եկեղեցու վարչութիւնը ձեւաւորուեց պիտական վարչական բաժանման վերայ, ինչպէս զրանից առաջ կազապարուել էր մոգերի վարչական կազմակերպութիւնը։

—————  
— Պ —————

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ ԶՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ

Հինգերորդ դարի Հայոց հասարակութիւնը մշակուել և կառաւցւել էր նախորդ գարերի հոլովոյթով։ Նա անցել էր ընկերային ձեւափոխումների մի քանի շրջաններ և հասել էր հայոց աւատական կարգին, որ մնայուն քաղաքա-անասնական ձեւն էր մեր հին և միջնադարեան պատմութեան։ Հայոց ընկերային ուժերի գարզացման տեսակէտից յատկապէս չորրորդ դարը մեծ արժէք ունի։ Այդ դարում հանգէս եկան և ուժեղացան այն գործոնները, որոնք հինգերորդ դարում որոշչի գեր պիտի խաղային մեր պատմութեան մէջ։ Եթէ նախորդ գարերում հայկական կեանքի ղեկավարներն էին նախարարութիւնը և արքայական հարստութիւնը, ապա չորրորդ դարում երեւաց մէկ նոր ուժ՝ քրիստոնէութիւնը, որ կազմակերպուեց, դարձաւ եկեղեցը, ստեղծեց իր սպասաւորների բազմութիւնը՝ նույրապետութիւնը։ Նա բռնեց հեթանոս եկեղեցու տեղը, կղերն էլ փոխարինեց նախկին քրմական դասին։ Ժառանգելով նաև նրա նիւթական հարըստութիւնը։ Քրիստոնէութիւնը չուտով ընկերային-քաղաքական մեծ ուժ է զառնում և խորապէս ազգում Հայոց հասարակութեան ներքին և արտաքին քաղաքականութեան վերայ։

Չորրորդ դարը հայ նախարարութեան սոկեղարն է։ Նա մեծացաւ Արշակունիների հետ և նրանց անկումով էլ սկսում է նրա վայրէջքը, քայլայումը։ Անկումի և քայլայումի այս գործը պայմանաւորում է ոչ միայն իշխող, ստարների քաղաքական միաւումներով՝ թուլացնել, սչնչացնել հայ սաղմի ուժը, այլև նրանով, որ հայ նախարարութիւնը ներքնապէս շերտաւորում էր։ Նրա կրտսեր անդամները՝ Սեպուհները գուրս էին զալիս նախարարական տոհմից, անջատում էին, ստանում էին իրենց բաժին հողերը և մեկօւսանում տոհմի գործերից։ Արշակունիների գերիշխանութեան տակ նախարարութիւնը գեռ պահում էր իր միութիւնը, հողերի ամբողջականութիւնը և ռատանուտէրների» առաջնութիւնն ու հեղինակութիւնը։ Արշակունիների անկումով սկսում է նախարարական կարգի ներքին

հոգեւարքը : Եւ հինգերորդ և վեցերորդ գարերը «սեպուհական» կարգի հզօրացման շրջանն է : Սաեղծուում է «սեպուհական», սեփական հողաբաժինը՝ նախարարական կրտսեր անդամները՝ սեպուհների այս ճիգը թուլացնուում է, քայլայում է տոնմը թի ուղղմապէս և թէ տընտեսապէս:

Հայոց հասարակութեան հոլովայթը ընթացաւ այն ուղղութեամբ, որով զնաց իրանինը պարթեների և Սասանեանների օրով։ Եւ այս հասկանալի է, որովհետեւ այն գործօնները, որոնցմով պայմանաւորւում էր իրանի ընկերային և քաղաքական կեանքը՝ կային, գոյութիւն ունէին նաև Հայաստանում։ Չորրորդ գարում մենք նշանարում ենք շշտուած և չընդմիջուող մի պայքար հայոց կենտրոնաձիգ և կենտրոնախոյս ուժերի մէջ, որ և կազմում է բովանդակութիւնը Հայոց պատմութեան։ Իրանի Սասանեանները կարողացան սանձահարել կենտրոնախոյս ուժերին և վերջ գնել հակապետական բնագրներով օժարւած աւատատիրութեան և մացնել նրանց համապետական շահերի շրջանակին մէջ։ Այս բանը արեցին նրանք կազմակերպուած բիւրուկրտայի և մանր ազնուականութեան վերայ յենուած։ Հայաստանում այս ուժերի մրցութիւնը հասցրեց միանդամայն տարբեր հետեւանքների։ Այս կորուի մէջ պարտուող կողմը՝ Արշակունիներն էին, յաղթանակողը հայ նախարարութիւնն էր։ Սակայն յաղթողները չկառուցին նոր կարգ, չասեղծեցին խիստ ապակենտրոնացած, աւատական Հայաստան։ Բնդինակառակն նրանց յաղթանակը եղաւ Հայոց պետականութեան քայլայման սկիզբը։ Կոսուող կողմերի մրցութիւնից շահուեցին միայն օտարները, որոնք վերացրին նախ Հայաստանի անկախութիւնը, ապա Արշակունիների հարստութիւնը և վերջն էլ հայ նախարարների քաղաքական ինքնավարութիւնը և գասային-ընկերային արտօնութիւնները։

386 թուի Հայաստանի բաժանումը, 428 թուի Արշակունիաց հարստութեան անկումը հետեւանքն են այն խոշոր զիպքերի, որոնք տեղի ունեցան Հայաստանի մէջ, չորրորդ գարում։ Դարի վերջին միայն լուծում ստացան այն հարցերը, որոնք հասունացան մէկ գարի մէջ։ Հայոց աւատականութեան պատմագիրը՝ Փ. Բիւրունդացին մեղ բաւարար նիւթեր է մատակարարում վերահասու լինելու կատարուած գէպքերին և ըմբռնելու եղածի իմաստը։ Հայ Արշակունիները ամբողջ չորրորդ գարում հետապնդել են սանեղծելու, կառուցելու ուղղմապէս ուժեկ, քաղաքականապէս կենտրոնացած աւատական միապետութիւն, ուր հայ նախարարաները պահելով իրենց կալուածներն ու արտօնութիւնները՝ զիշելու էին կենտրոնական իշխանութեան քաղաքական և ուղղմական գործերը։ Այսինքն չորրորդ գարում Հայաստանում տեղի էր ունենում այն, ինչ որ միջնադարի վերջերին և նոր

զարերի սկզբներին կատարուեց Եւրոպայում, միայն այն տարրերութեամբ, որ Արեւմտեան Եւրոպայում պետականութեան սկզբունքը յաղթանակեց, իսկ Հայաստանում հակապետական ուժերը յաղթանակեցին: Արշակունիները ջանում էին վերջ տալ ներքին այն անիշխանութեան, որ սերմանում էին աւատատէր նախարարները մասնակի կույներով, և որ համարում էին իրենց իրաւունքը, փորձում էին արգիլելու նրանց՝ արտաքին իշխանութիւնների հետ յարաբերելու և հակապետական համաձայնութիւններ կայացնելու: Սասանեանների նըման նրանք էլ խոշոր զինական ուժի տէր նախարարներին պահում էին իրեն մօա, պալտառում, Նրանք իրենց պատասխանատու էին համարում հայոց հողերի ամբողջականութեան համար, նրանք բնական պաշտպաններն էին աւերութեան բազաւորութեան Հայաստան Երկրից: Նրանք շահագրգուռած էին նաև իրենց հարստութեան ապագայով, որ վասնգի տակ էր երրորդ գորից սկսած: Սասանեանները հաշտ աչքով չէին նայում ոչ Արշակունիների գոյութեան, ոչ էլ Հայաստանի անկախութեան: Նրանց սկսած կոիւը Հայաստանի զէմ Պարթեւ Արշակունիների զէմ մզած կոուի շարունակութիւնն էր: Հայաստանի վերականգնուումին և Արշակունիների ձեռք առած րէֆորմներին հաշտ աչքով չէր նայում նաև Հռոմը, ապա նրա ժառանգ Բիւզանդիան: Հայաստանում տեղի ունեցող ներքին ուժերի մրցութիւնը բարգանում էր նաև Նրանով, որ զրաից՝ Իրանը, Հռոմը շարունակ միջամտում էին մեր ներքին գործերին, սաեղծում իրենց համակիր և գործակից հասանքներ և հայոց ուժերի միջոցով պառակում, կազմալուծում հայութեան միասնականութիւնը: Եթէ Իրանի մէջ Սասանեանները յաղթանակեցին հակապետական և հակագինաստիական ուժերին, պատճառներից մէկն այն էր, որ գրսից որեւէ միջամտութիւն նրա ներքին գործերի մէջ չկար: Նա թողնուած էր ինքնիր ուժերի հոլովոյթին: Հայաստանում բալորովին հակառակն էր. «Հայաստանի սահմանակից մեծ պետորիւնները, առում և ակադեմիկոս Յ. Մանանդեանը, օգտում են հայ իշխանների ներքին այս Երկպառակութիւններից եւ աջակցում ու նովանաւորում են խռովարներին: Սասանեան Պարսկաստանը եւ Բիւզանդական կայսրութիւնը չէին կարող բնականաբար հանդուրժել Հայաստանի միացումն եւ զօրեղացումը, ուստի եւ իրենք են յանախ Երկպառակում Երկիրը եւ պատասխում իւնեց բաղակականուրեան հլու եւ նանելի խռովար եւ ըմբոս իշխաններին»\*):

Արտաքին այս գաւագիր և հայոց պետականութեան թշնամիների զէմ էր, որ անհրաժեշտ էր ունենալ սազմունակ և կենցրունացած պե-

\*). Յանանդեան. Ֆեուտալիզմը Հին Հայաստանում. Էջ 268:

տականութիւն։ Ուժեղ և հեղինակաւոր իշխանութիւն ստեղծելու այս  
միտումը Արշակունիների գէմ հանեց հայ նախարարներին և կղերին։  
Սրանց գէմ պայքարիլը, սրանց թուլացնելը Արշակունիների ներքին  
քաղաքականութեան հիմնական նպատակը եղաւ. նրանք բոլորն էլ  
այս կամ այն չափով լծուեցին այս պայքարին, ուստի չկայ այս կամ  
այն Արշակունու անձնական վերաբերումը, այլ Արշակունիների՝ հե-  
տեղական և ընդհանուր քաղաքական զիծը նախարարների և կղերի  
վերաբերմամբ։ Այս պայքարի գլուխը կանգնում են հայր մարզպետ-  
ները, որոնք գործում են թագաւորների անունից և չորրորդ զարում  
մեծ քաղաքական գեր են խաղում և ասպարէզից հեռանում են Ար-  
շակունիների հետ։ Նրանք արքայական-պետական հոգերի, ամրու-  
թիւնների, բերդերի, պալատի գործակալներն էին։ Արքունի հոգերը  
ըստ հայրիՄ. Գարագաշեանի, գտնում էին «ընդ տեսչութեամբ մարդ-  
պետաց»։ Հականախարարական և հակակղերական վարքագծի պատ-  
ճառով հայր մարզպետները առաջի էին նախարարութեան պատմա-  
գիր Փաւատոս Բիւզանդացուն։ Հայր մարզպետը ըստ նրա էր «Այր մի  
անօրէն եւ այսամուտ, որ աւելի ընդ ազգն նախարարացն գրգռեր զրա-  
գաւորն Տիրան... Այր ներքինի, չարասիր, չարախորհուրդ, չարագործ,  
որում հայր կոչին»։ Ինչ են անում հայր մարզպետները, որի հա-  
մար արժանացի են մեր պատմագրի այդպիսի որակումին։ Նրանք  
չորրորդ դարի մեր մոնարխումախներն են, այսինքն՝ միապետական  
զաղափարի համար պայքարողները և հակառակորդ ուժերի թուլաց-  
նողները, Նրանք բանագրաւում էին նախարարական կալուածները,  
աչք ունէին եկեղեցական, ինչպէս և կուսաւորչի աան հոգերի վերայ։  
Փորձում էին փիղքապէս բնաջնջել հայ անուանի նախարարական  
տոհմերին։ Նրանք պետականութեան և նրա ուժերի հզորացման ներ-  
կայացուցիչներն էին։ «Սա կոտրեաց զամենայն ազգս նախարարացն  
ի ժամանակս բագաւորին Տիրանայ արքայի եւ նոյնպէս առ բագաւո-  
րութեամբն Արքակայ՝ եւս չար քանազին գործել չար առ ամ  
մարդք\*.

Հայր մարզպետները հաւասարապէս պայքարում էին թէ հոգեւոր  
և թէ աշխարհիկ ազնուականութեան գէմ։ Նրանք է որ հարուածում  
են Ռշտունեաց և Արծրունեաց տոհմերին։ Նրանք է, որ նախանձով  
նայում են եկեղեցու բարգաւաճ կալուածներին և զատապարտում ա-  
ռաջին քրիստոնեայ Արշակունի թագաւորին՝ եկեղեցական կալուա-  
ծատիրութիւնը ստեղծելու համար։ Մենք կարծում ենք, թէ այս հա-  
լածանքները ուղղուած էին նախարարութեան ուազմա-քաղաքական

\*) Փ. Բիւզանդացի. Պատմութիւն Հայոց. 1883 թ. էջ 40:

գորութեան խորտակման և եթէ երբեմն հասնում էին ծայրայեղութեան, առհմերի ամբողջական բնաջնջման, կալուածների բոնազրաւումին՝ պատճառը նախարարների ուժեղ զիմազրութիւնն էր, նրանց չհաշտութելը Արշակունի միտումների հետ Արշակունիները նպատակ չունեին հայ նախարարութիւնը կալուածազուրկ անելու. այս բանը միայն պատճական միջոց էր: Մի գուցէ նրանք էլ Սասանիաների նման հետապնդում էին նրանց կալուածները մանրացնելու, կոսորաւկելու, ցրելու: Բոնազրաւելով նախարարների կալուածները՝ Արշակունիները շատ յամախ չէին պետականացնում այն, այլ նորէն բաժանում էին հոգեւոր և աշխարհիկ տէրերին: Այսպէս օրինակ՝ երբ Որգունեաց և Մանաւազեան առհմերը՝ օգտուելով մասնակի պատշազմի իրաւունքից՝ կուում են իրար զէմ, անիշխանութեան մատունում երկիրը և մերգում թագաւորի ու կաթողիկոսի միջամառութիւնը՝ Խոսրով Բ. կոտորել է տալիս երկու առհմերին էլ և նրանց կալուածները յանձնում Ազգիանոսեան եպիսկոպոսական առհմին: Թէ Արշակի և միւս Արշակունիների ծրագրին մէջ չի մաել նախարարներին կալուածազուրկ անելը՝ երեւում է ներսէսի խօսքերից՝ ուղղուած վերջիններին: Նա յորգորում է նրանց տազնապալից վայրկեանին չլքել Արշակին. «Զի ամենեան դուք, աւադիկ կայք եւ վկայէ մանաւանդ, զի ամենեան դուք կեցեալ եֆ յազգի Արեակունեոյ, ումանք ի ձենց գաւառատեարք լեալ ի նոցանիկ եւ ումանք մեծամեծ աշխարհաց, ումանք աւագ աւագ աւանաց, գեղից եւ զանձուց տեարք լեալ եֆ եւ պես պես դաստակերտաց»\*): Ուրեմն նախարարները վարձատրում էին հարստանում էին նաև թագաւորից ստացած հողաբաժիններով իրենց օրեւէ ծառայութեան համար: Ինչ հոգեր էին դրանք:

Շատ հաւանական է ինչպէս իրանում, Հայաստանումն էլ հոգի մեծ մասը պետական էր, արքունական, ոչ թէ տոհմական, այսինքն հոգերն ամբողջութեամբ բաժանուած չէին արքայական ընտանիքի, նախարարական տոհմերի և եկեղեցու մէջ, որոնք կազմում էին նըրանց անձնական, աւելի ճիշդ տոհմական կալուածները: Դժուար է ենթագրել, նկատում է ն. Ագոնցը, որ ամբողջ Երկիրը բաժանւած լիներ քագաւորների եւ նախարարների եւ ընդհանրապէս ազատների միջեւ»\*\*):

Արշակունիները անշուշտ որոշ հողային փոնդ ունէին իրենց ձեռաքի տակ-վարձատրելու համար նախարարներին և անտարակոյս այդ հողերն իրենց կալուածները չէին, որոնք առանց այն էլ քիչ էին՝ արքայական տոհմի բազմացող անդամներին կերակրելու գամար: Ար-

\*.) Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Վենետիկ. 1881. էջ 504:

\*\*) Փ. Բիւզանդացւոյ. էջ 137:

շակ Գ.ի հետ հեռացած հայ նախարարները ուղարկ են վերադառնալ իրանահայաստան և խնդրում են Խոսրով Գ.ին վերադարձնելու իրենց առնմական կալուածները: Նա պատասխանում է. «Դարձուցանել ի ձեզ զծառանգութիւն ձեր, որ ունիմք յարքունիս, բացի յայնմանն որ ունիմք ումեկ պարզեւեցաք...» այլ փոխանակ ընդ այնդ եւ յարքունուս լեռում եւ ի ձերոյն պակասութիւննեն\*): Այսպիսով՝ գաղթած նախարարների մէկ մասի հողերը յարքունիս է գրաւուած, մէկ մասը տրուած է ուրիշներին. և զրանց փոխարէն թագաւորը խոստանում է լրացնել պակասը արքունի հողերից: Տարբերութիւն է արուած չժառանգական» հողերի և «արքունի» հողերի մէջ: Հայոց հողերի մէկ մասը, զաւցէ և մեծ մասը ոչ մէկի կալուածն էր, այլ պետական էր, պատկանում էր «Տէրութեան քաջալութեան Հայաստան Երկրի»: Նա գտնուում էր թագաւորի իշխանութեան տակ, նրանք է՛լ համապետական նպատակների համար օգտուում էին նրա հասոյթներից: Հայ պատմագրութիւնը չի պահել այս երկուուը՝ տոհմական կալուածատիւրութիւնը և պետական հողերը զատորչող յատուկ բառեր Փաւստուը գիտէ յերկիրն արշակունեաց որ աւատական իմասս ունի և «Թագաւորութիւն Հայաստան Երկրի», որ պետական-քաղաքական գաղափար է: Այս հողերից հայ Արշակունիները բաժին էին հանումնախարարաներին, և կեղեցուն: Արշակունիները արքայական հողերից կաղմում էին յատուկ զօրագնդեր, որ նախարարական չէր: Արքունի այս հողերի վերայ նստածները «ազատներն» էին, «ոստանիկները», որոնք անմիջապէս ենթարկուում էին թագաւորին: «Ազատները Հայաստանում իրօք ստորին ազնուականներն իլն»: ասում է Յ. Մանանգեանը. Ազատներն ու նախարարները Հայոց ազնուականութեան տարրեր շերտերն են՝ տարբեր՝ հողատիրական քանակով և ընկերային արժէ քով: Նըրանց՝ այս «ազատների» մէկ զգալի մասը ապրում էր նախարարական հողերի վերայ և իր զինուարական պարտականութիւնները կատարում էր նրանց հանդէպ: Միայն արքայական հողերի վերայ կզած ազատներն է, էր կազմում էին թագաւորի բանակը և ենթարկուում էին նրա զերիշխանութեան: Նըրանց զրութիւնը շատ նման էր Իրանի դեհկանների գրութեան: Բայց ընկերային արժէքը տարբեր էր: Իրանում նրանք եղան յենարանը միապետութեան ձգտող Սասանիանների: Արշակունիաց Հայաստանում չի երեւում, որ նրանք նեցուկը լինեն իշխանութեան: «Արքունի բանակը» թոյլ և անշմար գեր է խաղում: Սրանով էլ պէտք է բացատրել, այն, որ երկու ուժերի մէջ տեղի ուշնցող կաիւներում նախարարութիւնն է, որ յազմանակում է: Հաւա-

\*) Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Վենետիկ. 1881. էջ 504:

նական է, որ Արշակունիների անկման շրջանում պետական հոգերի մեծ մասը ընկած լիներ այս սստանիկ ազատների ձեռքը, իսկ մնացածը որպէս հանրային-պետական սեփականութիւն անցած լինի արքայից-արքային։ Անա մարզպանական շրջանի իրանի գերազոյն տիրոջ անցած՝ այս հոգերի վրայ ապրող ազատներն է, որ գինուրական կարգեն դուրս է արւում և փոխարինում է աւելի վստանելի քրտնցիներով։ «Սասանեան Պարսկաստանի բաղաքանական այս ընթացքը միան, գամայն հասկեալի է. Քաղաքական իր իշխանութիւնը Հայաստանու ամրապնդելու համար, ևս բնական է,որ Պարսկաստանը պետք է ամեն կերպ ձգտե ուստանիկ բնիկ ազատներից կազմած գունդը փոխարինելու իրեն հնազանդ արխոնի նոր գունդով»<sup>\*)</sup>։

Արշակունիների անկումից յետոյ ոչ միայն արքունի հոգերի մէկ մեծ մասը բաժին է ընկնում Սասանեան թագաւորին, այլեւ բազմաթիւ բերդեր, ամրոցներ և երկրի հանքային հարստութեան ազրիւթիւները։ Եղիշէն իր «Վարդանանց պատերազմի» մէջ մէկ առ մէկ թըւում է այն աւաններն, քաղաքներն ու բերդերը, որոնք գանձում էին իրանցիների ձեռքին։ «Այն ծամանակ նորից յարձակուեցին այն բերդերի եւ աւանների վերայ, որ երկրի զանազան ամուր տեղերում գրաւել են պարսկները։ Կարծանեցին, բանդեցին նրանց բնակչութիւնները։ Նախ մեծ Արտաքարը իր աւաններով եւ առան անմաշչելի ամբողջութեան կաղաքը. Անին, Արտազերսը եւ իրենց աւանները, Երկայնորդն ու Արհենին եւ իրենց աւանները, Արփանեալը, Վանաւանի, Երաւանեանները, Գուեալն ու Կապոյսը, Մրոն ու Վասակածարը»<sup>\*\*)</sup>։ Այս վայրերից շատերի տեղը անյայտ է. բոլորն էլ սակայն իրանահայաստանի մէջ էին գտնուում։ Ինչ քաղաքներ և ամրութիւններ են սրանք։ Անշուշտ նախարարների հետ եկած մոգերն ու վարքաթիւ բանակը չէ, որ նոր միայն գրաւեցին։ Դրանք այն քաղաքներն են ու բերդերը, որոնք որպէս Արշակունիների՝ պետական-արքայական շրջաններ անցել էին Սասանեաններին և մարզպանութեան շրջանում որպէս պետական կալոււածներ՝ ունէին իրենց կառավարիչները. զօրք և բնակիչները։ Այս բերդերի և քաղաքների վերայ է, որ յարձակուում են հայերը Վարդանանց ճակատամարտից առաջ։ Այս քաղաքներում և աւաններում ու բերդերում կառուցուած էին ատրուշաններ իրանցի զինուրների և պաշտօննեանների համար. ատրուշաններն են որ կործանում են ապատամբ հայերը։

\*) Յ. Սանանդեան. Դիտող. Հին Հայաս. Շինական. մասին. Գլուխ. Տեղեկան. 1. էջ 13:

\*\*) Ալիքե. Վարդանանց Պատերազմը. էջ 150,

Բնական է, որ Արշակունիների հականախարարականն այս քառականութիւնը որանց մէջ առաջ լերէր որոշ հակազդեցութիւնն էայց մենք չենք տեսնում, որ նախարարութիւնը երեւան գար զասայնօրէն կազմակերպուած և ընդհանուր ճակատ կազմէր կենարոնական իշխանութեան դէմ, գործէր որոշ ծրագրով, ընդհանուր քաղաքական պահանջներ առաջարկէր, այսինքն այն բոլորը ինչ որ տեղի ունեցաւ Արեւատեան Եւրոպայում և որ տարաւ, առաջնորդեց նրան նախ դէպի գասային միապետութեան, ապա բացարձակ միապետութեան ստեղծման։ Հայաստանում ներքին պայքարների մէջ տեղի չունեցաւ նախարարական ուժերի համախմբում՝ պետական շինիչ ծրագրի շուրջը։ Եւ երբ նախարարները փորձում են իրար մօտ գալ, համազրել իրենց ուժերը ապա միայն նրա համար, որպէսզի դիմին օտար ուժերին միջամտելու իրենց ներքին գործերին և խորտակելու հայոց պետականութիւնը։ Նախարարները իրենց զատի պաշտպանութեան համար ոչ թէ ապաւինում են իրենց միութեան, այլ արտաքին գործոններին և խառնում նրանց հայութեան պայքարին։ Ստեղծում են հոսանքներ, կուսակցութիւններ, որոնք իրենց ներչնչումներն ստանում են գրսից, մեծ, նուածող պետականութիւններից։ Արա հետեւանքով նրանց գործը, կոիւը՝ շինիչ չէ, սաեղծիչ չէ, արդիւնարեր չէ։

Կոորով Բ. Ի. ժամանակ թագաւորի դէմ ապստամբուում է Ազգանեաց բգեշխը օնեն ձեռն յարքային պարսից եւ մատնեաց զարքունի տունը, որ յենց իննեն եւ եւ հաց զօրս արքային պարսից թիկունս իւր եւ հատաւ իշխանութիւնն հայոց եւ Տայր պատերազմ ընդ արքային հայոց ուժով պարսից բագաւորութեան»\*): Արշակի օրով կատարուում է նոյն երեւոյթը աւելի ծաւալուն չափով և աւելի գժբախտ հետեւանքներով։ 363 թ. «ամօթալի» գաշինքից յետոյ, իրօք սկսուում է Արշակունիների հոգեւարքը։ Հայաստանը մնում է մենամինակ գերազանց ուժերի տէր Իրանի առաջ։ Նրա ուզմունակութիւնը անբաւարար էր գիմագրաւելու Շապուհի տեւական յարձակումներին, որոնց ընթացքին Հայոց ուժերը պակասում էին, նոսրանում։ Պատերազմը վարող հայ նախարարները գգոռն էին և մէկը միւսի յետեւից լքում էին Արշակին։ Հարաւի ազգեցիկ նախարարներից մէկը՝ Մեհրուժան Արծունինի գեռ կոիւների սկզբին լքեց թագաւորին և գնաց միանալու Շապուհին։ Նա պարագլուխն էր Իրանամիտ հայ նախարարների և հակաարշակունի պայքարի ոգին։ «Յայնմ ժամանակի ապստամբեաց յարքային հայոց մի ոմն ի նախարաց մեծամեծաց Մերուժան անուն Արծունին,

\*.) Փ. Բիւզանդացւոյ. Էջ 19:

եւ չոգաւ, եկաց առաջի քազաւորին Պարսից նապիոյ եւ դնել ընդ նրա մաս ուխս երդմամբ՝ զի յաւիտեան ծառայ լիցի նմա»;\*) Հստ Մ. Խորենացու Շապուհը Մեհր. Արծրունու մրջոցով շատ աւելի ընդարձակ ծըրագիրներ է մշակում Հայաստանի համար. «խոստացաւ տալ նմա ըգիայոց քազաւորութիւնն, միայն թէ զնախարարն նուանելով ի դեմ Մազգիկանց զաւխարին դարձուացե»\*\*). Պէտք է ենթագրել որ ոչ մժայն Շապուհը, այլև հայ նախարարների շրջանակից է զուրս զալիս Արշակունիներին գահազուրկ անելու միտքը։ Հարաւի նախարարները շատ քիչ էին կապուած Միջնաշխարհի արքայական տան հետ։ Նըրանց համար նա օտար էր և անհարազատ։ Այս արամազգրութիւններից կարող էր ոգտուել Շապուհը և Մեհրուժան Արծրունուն նոտեցնել հայկական գահի վերայ։ Արանով պահուած կը լինէր և հայոց թագաւորութիւնը և վերացոծ կը լինէր իրենց զարաւոր թշնամի Արշակունիների հայկական ձիւզը։ Շապուհը միայն մի պայման է առաջազրում՝ նախարարների մազգեղականութիւն ընդունելը։ Այս պայմանի մէջ արտացոլում է նրա հակաքրիստոնէական քաղաքականութիւնը, որ տարածում էր ամբողջ պետութեան քրիստոնեաների վերայ։ Մեհր. Արծրունին զառնում է Շապուհի լաւագոյն գործակիցը Հայաստանում իրականացնելու իր ծրագիրը։ «Են զամենայն կարգ քրիստոնեան զանայր խափանել, զեպիսկոպոսն եւ զբանացան պատճառով կապեալ յերկիրեն պարսից տայր առնել։ Եւ զոր մի անգամ զիրս զաներ այրեր եւ հրաման տայր մի ուսանել զդարութիւն յունարեն, այլ պարսիկս եւ մի ոք իշխնեցէ յոյն խօսել կամ քարզմանել»\*\*): Այս մէկ ամբողջ քաղաքական մշակութային ծրագիր է. որի գործազրութիւնը յանձննում է հայ նախարարի։ Այստեղ էլ արքայից արքայի միտումը նոյնն է ինչ որ իրանում՝ թուլացնել, քայքայիլ եկեղեցին, աքսորել նրա սպասաւորներին, քանզել եկեղեցիները եւ ջանաւ նախարարներին կապել մազգեղականութեան։ Արգելել յաների հետ որեւէ հոգեւոր հազորքակցութիւն, այրել յոյն գրքերը և պարսկերէնը տարածել հայերի մէջ։

Հայ իշխանների Արշակին լքելը զանգուածային ընոյթ է ստանում 363 թուից յետոյ, երբ հոսմէացիք հրաժարում են իրենց հընամենի քաղաքականութիւնից, այն է թուլ չառալ, որ իրանը հաստատուի հայկական լեռնաշխարհում. թողնում են հայերին մինակ իրենց թոյլ ուժերով զիմազրաւելու իրանցիներին։ Ոչ մէկ հեռանկարչկար պետութիւնն ու հայրենիքը պաշտպանելու։ Իւրաքանչիւր նա-

\*) Փ. Բիւզանդ. էջ 119:

\*\*) \*\*\*) Մ. Խորենացի. Պատմութիւն Հայոց, էջ 471-472.

խարար մտածում է միայն իր ժառանգական կալուածները աւերից և աւարումից պատճելու մասին։ Թէ պատերազմից յոպնած և թէ Արշակի ներքին քաղաքանութիւնից ահարեկուած՝ նախարարները թողնում են թագաւորին, մերժում են իրենց ածառայութիւնը։ «Եւ սկսաւ սորուել զնալ ի բանակին հայոց քաղաւորին. բոլին իւրեանց արքայ Արշակ. բայց նախ այս զնայոց սկիզբն առնելին մեծամեծ աւագանին. նախ բդեշին Աղձնեաց եւ Նուշիրական բդեշին եւ Մահկեր սանցն եւ Նինորական եւ Դասրենտին եւ ամենայն նախարարութիւնն Աղձնեաց. եւ զօրն եւ տունն տոնիմին Աղձնեաց կողմանց ապահանքին յարհային հայոց Արշակայ եւ չոգան կային առաջին արքային պարսից Շապելյան<sup>\*)</sup>։

Աղձնեաց բգէշխութեան, ինչպէս և հարաւի իշխանների ապըստամբութիւնը յաճախակի երեսոյթ է մեր պատմութեան մէջ։ Այդ պիտի տեսնենք նաև հետագայում Նրանք սահմանակից էին իրանին և իրանի Միջագետքի հոգերին ու Նրանց անմիջական հարուածներին ենթակայ։ Պատերազմի ժամանակն նրանք է, որ առաջին հերթին աւարի և աւերի էին ենթարկուած։ Իրանին միանալը մի տեսսակ ինքնապատպանութեան միջոց էր նրանց համար։ Իսկ նոյն հարաւի իշխանութիւններին է, որ Արշակունիները յամառորէն և խըստօրէն ուղում էին իրենց ենթարկել միշտ ի նկատ ունենալով երկրի լեռնային զիրքը, ոսղմական կարեւորութիւնը։ Այսուղից էլ տեւական կուրը, հարաւի նախարարութնանց իրանական զիրքորոշումը և հակաարշակունի տրամադրութիւնները։ Բայց կար և մէկուրիշ պատճառ, ոչ պակաս արժէքաւոր։ Հարաւային գաւառների մէջ միայն հայերը չէին, որ ապրում էին։ Այնտեղ խառն բնակչութիւն կար, հայերն ապրում էին օտարների հետ և այնքան ուժեղ չէին քանակով, որ հայացնէին նրանց. ընդհակառակն շատ աւելի ուշ՝ իրենք Կորցրին իրենց ազգային զիմաստիքը և լեզուն։ Դեռ ևս Սարաբոնը հարաւի այդ շրջանների մասին գրում էր. «Ելինելով Բաբելոնեայի մասը (Աղիաքենը) սա ուներ իր սեփական կառավարիչը, բայց երբեմն միացած է եղել Արմենիային։ Մեդացիները, Արմեները ու Բաբելոնացիները, որոնք ամենամեծ քիւ կազմող ժողովուրդենքն էին, միւս այսեղ սկզբից նենց այնքան էին հակառակ իրար, որ յարմար դեպքում միմեանց վերայ էին յարձակում եւ նորից հաշտում<sup>\*\*</sup>)։

Իրենց պատմութեան իսկ արշալոյսին հայերը մեծ զանգուածնե-

<sup>\*)</sup> Փ. Բիւզանդ. էջ 119.

<sup>\*\*)</sup>  Յ. Մանանդեան. Պատմական-աւիտարհագրական մանր նետազուրիներ. Երեւան. 1945. էջ 8-9.

րով թափանցել էին հարաւ։ Հայոց ազգագրական տարրի կենարոնացումը կատարուել էր հարաւ-արեւելքում, սակայն օտար տարրի համաձայնումը այստեղ գանդապ էր ընթանում և երբեք չամրողացաւ։ Հարաւային այս նահանգները քաղաքականապէս միացած էին Հայաստանին։ և զեռ հարց է հարաւի բգեշխութիւնները, գոնէ նրան զեկավարութիւնը հայ էր, կամ հայացել էր։ Սրա հետեւանքով Հայաստանի այս մասում ստեղծւում էր անհաստատ և անկայուն կացութիւն, որից օգտառում էր միայն Իրանը։

Հարաւի իշխանների անջատողական միտումը միակը չէր։ հիւսիսն էլ զնումը էր նոյն ուղիով՝ «Եւ յես սորա Գուգարաց բդեխին եւ յես սորա Զորւոյ զաւառի տերն եւ Կողբայ զաւառի տերն եւ ընդ նորա Գարդմանաձորոյ տերն... եւ չոգան, զնացին առաջի կացին բագաւորին պարսից Շապիւոյ... Ապսամբեցին յԱրշակայ արքայն Հայոց ամուռ զաւառն Արցախայ եւ ամուռ զաւառն Տմորից... ապա եւ տեր զաւառին Կորդուաց»\*)։ Նկատեի է, որ սրանք բոլորը Հայաստանի սահմանային գաւառներն են հիւսիսից, հարաւից և հարաւ-արեւելքից և միշտ Իրանի հարուածի տակ և խառն բնակչութեամբ։ Հիւսիսային այս ծայրագաւառները հայացումը չէր վերջացրել, բայց հետազայում այս վայրերի հայացումի զործը աւելի յաջող պիտի ընթանար, քան հարաւային նահանգներինը, ուր նա կուլ զնաց սեմականների մէջ։ Մայրամասերը, ինչպէս տեսնում ենք չորրորդ զարում զբեթէ ոչընչով կապուած չէին Միջնաշխարհի հետ, ուր սագմիաւորուեց եւ մեծացաւ Հայաստանի պիտական անկախութիւնը։ Հայացման զործազութիւնն էլ Միջնաշխարհից զիմում էր զէպի ծայրամասերը՝ բայց նրա ալիքները թուլանում էին մինչեւ սահմանագլուխ համարիլը։ Եւ երբ կենարոնում քաղաքական կեանքը տագնապի էր ենթարկւում, որ յաճախ էր պատահում, ծայրագաւառները բանում էին բաժանումի, անջատման ուղին և միանում էին աւելի ուժեղին իրենց զոյսւթիւնը ապահովելու համար։ Այս ոչ միայն նշանակում է, որ Հայաստանի սահմանները ապահով չէին, այլև որ եղրային երկիրները հայացած չէին Բգեշխութիւնները, որ ստեղծուած էին սահմանագլուխներին, ոչ թէ սահմանապահներ էին, այլ սահմանները բացազ թշնամու զիմաց։

Զանգուածային այս զաստքութեան տուաջ հայ թագաւորները զրեթէ ոչ մի բան անել անընդունակ էին։ Հայոց կեանքում նրանք յենարան չունէին։ «Ուստանիկ ազատանին», որ արքայական հոգերի վերայ էր նստած, ինչպէս երեւում է միծ ուժ չէր, որ նեցուելը լինէր

\*) Փ. Բիւզանդացւոյ պատմութիւն. էջ 135.

կենտրոնական իշխանութեան։ Հայ քաղաքաբնակը, քաղքենին չը-  
կար, ինչպէս չկար և իրանում, որպէս հօգոր քաղաքական ուժ։ Մը-  
նում էր եկեղեցին, սակայն նա էլ իր կազմակերպութեամբ յարմար-  
ուել էր տեղական աւատական միջավայրին և իւրացրել նրա գաղա-  
փարներն ու շահերը։

«Եկեղեցու ազգայնացումը՝ համազօր էր նրա նախարարականաց-  
ման կամ աւատականացման,— ասում է Ն. Աղոնցը. որովհետեւ Հա-  
յառաջանի քաղաքական կարգը ունէր աւատական բնոյթ և իշխանու-  
թիւնը բաժանուած էր բազմաթիւ աղոնուական տոհմերի մէջ. բնա-  
կանարար նաև եկեղեցական իշխանութիւնը պէտք է յարմարուէր  
ներգործող միջավայրին և ընդունէր նոյն միջավայրի պատրաստի  
ձեւերը»\*): Հաւանարար նա ժառանգել էր այն կարգն ու սարքը, ինչ  
որ աւնեցել է հայոց հեթանոսական եկեղեցին, որովհետեւ վերջինս էլ  
սաղմնաւորուել և մեծացել էր աւատական միջավայրում։ Եւ նրանից  
քրիստոնէութեանն անցաւ նաև անձնակազմի մէկ մասը, եկեղեցա-  
կան կալուածները, շարժական հարստութիւնը։ Նոյն հեթանոսական  
շրջանից անցաւ նաև կղերի՝ և ափսէկոպոսապեաների ժառնգականու-  
թեան սկզբունքը։ Կաթողիկոսութիւնը ժառանգական էր Գրիգոր Լու-  
սաւորչի տան և իր մրցորդ Աղքանոսի տոհմի մէջ։ Վերջինս նախ-  
կին հեթանոս քրմական միջավայրից է, որ անցել էր քրիստոնէու-  
թեան։

Հայ կղերը ընկերային տեսակէտից «ազատների» դասի մէջ էր։  
Նա ապահարկ էր և օգաւում էր իր կալուածների և ուրիշ նիւթմական  
հարստութեան կատարեալ ազատորէն տնօրինելու իրաւունքով։ Զոր-  
որդ գարում ոչ միայն նրանք հարկատու չեին Արշակունիներին և  
նախարարներին, այլև մեծացնում էին իրենց կալուածները ի հաշիւ-  
արքունի և նախարարական հոգերի։ Ոչ միայն եկեղեցին էր կալուա-  
ծատէր, այլև եկեղեցականները։ Զորրորդ գարում լուսաւորչի տոհմի  
կալուածները ցրուած էր Հայաստանի բոլոր կողմերում. նրանք տէր  
էին գարձել նախկին մեծենական կալուածներին. այսպէս էին և ե-  
պիսկոպոսները։ Նրանք վատթարագոյն միջոցների էին գիմաւ կալ-  
ուածներ ձեռք բերելու համար. Փ. Բիւզանդացին յիշում է Յովեան  
եպիսկոպոսի օրինակը։

Բացի այս մեծ հոգային հարստութիւնից և շարժական բարիք-  
ներից՝ եկեղեցին ստանում էր նաև ժողովրդից՝ տասանորդ։ Եւ այս  
բոլորից վեր նա ունէր իր ձեռքին «գատաւորութեան» գործակալու-  
թիւնը, այսինքն մասնակից էր երկրի բարձրագոյն կառավարութեան

\*.) Ն. Աղոնց. Հայաստանը Յուսինիանոսի դարում. 361:

մէջ՝ վարելով դատի և արդարութեան գործերը՝ Ընկերային այս արտօնեալ կացութիւնը՝ իր նիւթեկան հարսաւթիւնը նա ոչ միայն գործագում էք բարեկործական հաստատութեանց, հիւանդանոցների, անկելանոցների հիմնումի համար, այլև իր զիրքի, ազգեցութեան բարձրացման համար։ Կոթնած իւր նիւթեկանին՝ նա ջանում էք քաղաքական կիանքում տեղ զրաւել և մասնակցութիւնը ունենալ։ Իր քաղաքական զիմաշրջումը բխում էք եկեղեցին ուղիս նախատուրին պահելու մասնոցութիւնից։ Խոկ եկեղեցին մէկ նոր և շատ բախշգործ գործո՞ն էք հայոց կիանքում։ Այս նպատակը՝ եկեղեցու պահպանումն՝ չէր կարող նրան մօտեցնել ոչ իրանին և ոչ էլ իրանամիտ նախարարներին, որքան իրանի քաղաքական զեկավարների միտումը մնաց՝ քրիստոնեայ եկեղեցու քայլայումը և եկեղեցականների զըլիստումը։ Այսաեղից էլ հայ կզերի քաղաքական զիրքորոշումը՝ յենուել Բիւզանդիայի վերայ, որպէս քրիստոնեայ պետութեան և կտղմակերպուած եկեղեցու բնական է, հայ կզերի բանիմաց, զիտակից մասի այս զիմաշրջումը ևս առաւել իր զէմ պիտի հանէր նախարարութեան իրանամիտ տարրերին, նայնիսկ Արշակունի թագաւորներին, որոնք չէին ուզում ամբողջութեամբ ընկնել Բիւզանդիայի քաղաքական ջրապատուտի մէջ։

Հայ եկեղեցու զիրքորոշման աեսակէտից իրանի հանդէպ՝ վերին ասահճանի հետաքրքիր է այն տեսակցութիւնը, որ Ներսէս կաթողիկոսը և նախարարները ունենում են։ Ներսէսը նրանց յորգորում։ Է վերջին բախտորոշ վայրէեանին չլքել Արշակին և չանցնել իրանի արքայից արքայի կողմբ։ Նա ընդունում է, որ Արշակունիները շատ մնզքեր ունին։ Ոքէալ եւ առ արարիչն Ասուած յանցաւուրիցին պիդագին Արշակունեաց»... Արշակունեաց ազգը նրա և նախարարների համար պիզդ է ոչ թէ միայն իր անհատական բարոյական կեցուածքով, այլև և եկեղեցու և նախարարների հանդէպ ունեցած քաղաքականութեամբ։ Բայց ըստ Ներսէսի այս բարորը իրաւունք չէ տալիս դաւաճանել արքային և զնալ միանալ իրանին։ Նա կանգնած է Արշակին և Արշակունի տոհմը պահպանելու աեսակէտի վերայ։ Զպիտի ևմերժել զբնակ տիարսն ձեր, զոր տուեալ և ձեզ լԱսուծոյ։ Ուրեմն Արշակունի թագաւորները թէպէս «պիզծ» բայց Սոսածուց են որոշուած։ այստեղից էլ հետեւում է քրիստոնէութեան միւս պատուիրանը՝ ծառաները հնազանդ պիտի լինեն իրենց տիրոջը։ Ուրեմն եկեղեցին և կզերը իրհնց պաշապանութեան տակ են վերցնում Արշակունիներին։ Տիրասիրական այս օրինակը սակայն անշահախնդրական չէ։ Արշակունիների պաշապանութիւնը նրանց պէտք է, որովհետեւ նըսրանց թուլութիւնն ու պարտութիւնը, նախարարների Շապուհին միանալը իրեւ հետեւանք ունենալու է իրանի տիրապետութիւնը։

ապստամբ նահանգները, վերանուածում և հայոց թագաւորի գերիշխանութիւնը հաստատում այդ վայրերում. «Եւ այնուհետև սկսաներ սպառապիտն Հայոց Մուտեղ հարկաներ զայնոսիկ, որք ապստամբ եղեն ի քաջաւորութիւնն Արշակունեաց՝ նախ հարկաներ գտուն քաջաւորին Հայոց, որ յԱրշապատկանին էր .. Հարկաներ Մուտեղ զայնոսիկ նույրա կան աշխարհին, որ ապստամբեցին յարեւուիլիկն Հայոց, առնոյր աւերեր, գերեր եւ ի մնացորդացն առնոյր պատանդն եւ զբնակիչս երկրին ի հարկի ծառայութեան կացուցաներ... հարկաներ... զգաւառս ապստամբեալս յարեային Հայոց զկորդուս, զկորդիս եւ զմեռիս... եւ զերկիրն Արձախայ... եւ բափեր ի նոցանե բազում գաւառս զոր հատեալ էր ի նոցանեն՝ զմւտի, զնակուտեն եւ զօրոն Գարդմանայ»\*): Այսպէսով Մուտեղ Մամբկոննեանը Հայոց պառակառուած, ցրուած հողերի հաւաքողն է և Արշակունիների իշխանութեան ամրացնողը անկման այդ օրերին, Բայց այդ ճիզը մնայուն արդիւնք չտուեց: Ինքն էլ զոհ զնաց զաւագրութեան: Պապի սպանումից յիտոյ Հայոց պետութիւնը արագօրէն զնում էր գէպի քայլայսում: Ժամանակակիցները զգում էին, որ իշխանութեան հզօրացումը անկարելի է: չափազանց շատ էր սպառուած Հայոց ուժերը ներքին և արտաքին կոփուների մէջ: Եւ չափազանց շատ էր պայծառ հայ նախարարութեան մէջ տեղական, տոհմական շահերի զիտակցութիւնը: Ընդհանուր այս փլզումի հանդէս հայրենաուեր պատմաբանը՝ Փ. Յիւզանդացին միայն տիտուր և յուստանատշեաով՝ նկարագրելով գէպքերը եղրակացնում է: «իսկ թիւն Հայոց պակասեաց յայսմ հետ և եւ յապա», յիտոյ «նախարարները՝ «սփոնցան իւրախնչիլ տունն իւրեանց»:

Բնական է, որ տեւական ներքին պայքարի հետեւանքով հայ վարիչ ուժերի մէջ զործակցութիւն լինել չէր կարող, վերացաւ և հաշտ, համերաշխ մթնոլորտը: Ընդհակառակն հայութիւնը չորրորդ զարի վերջը հասաւ պառակառուած և իր ուժերը սպառում: Հայ նախարարները միանգամայն անտարբեր գտնուեցին այն հարուածների հանդէս, որին անձնապէս ենթարկուեցին Արշակունի թագտուրները: Իրանցիները գերեցին Արշակին. Յիւզանդացիք սպանեցին Պապին: Վերջինս Հոսմի օժանդակութեամբ է, որ զահ էր բարձրացել, բայց այդ արշելք չեղաւ, որ նա վարի հայկական քաղաքականութիւն, զուրս զայ Հոսմի շահերի շրջանակից, պետական հսկողութեան տակ առնի յունամիտ հոսանքը, կղերի գործերն ու կալուածները, ջանոյ ուժեղ և ռազմունակ պետութիւն ստեղծել, հոււաքել իր շուրջը Արշակի հաւածանքներից զժզոհ նախարարներին, հոգացին պահանջներ անի

\*): Փ. Յիւզանդացւոյ. ԷՏ 175 177:

Հոռմից : Եւ այս բոլորի համար է , որ կայսրութեան գործակալները սպանում են նրան : Եւ ինչ են անում հայ նախարարները այս քաղաքական ոճիրների հանդէպ : «Եւ ոչինչ արկին ի միտ կամ վրեծ լսնդրել եւ կամ այլազդ ինչ իր առնել , այլ անցին կացին լուռ...»\*) :

Անա այսպիսի մթնոլորտում՝ ատելութեան և փոխադարձ անվտանգութեան մէջ կատարում է Հայոց պատմութեան մեծագոյն և զըմքախտ զէպքերից մէկը՝ Հայաստանի բաժանումը 386 թուին : Նա բաժանում է երկու մրցակից պետութիւնների՝ Բիւզանդիայի և Իրանի մէջ : Առաջինը գրաւում է Բարձր Հայքը՝ Եկեղեց գաւառը , Դիրջանը , Ծոփք և Անգղը . վերջին երկուաը մնացորդներն էին հին հայկական գաւառների , որ 298 թ . գաշինքով սատցել էր Հոռմը : Հայաստանի մնացած մասը անցաւ Իրանին , որ հինգ անգամ աւելի մեծ էր քան Բիւզանդական բաժինը : Բատ Փարագեցու Բիւզանդական բաժինը միայն Այրարատ նահանգին հաւասար էր : Այս համաձայնութիւնը պարտութիւնն էր Բիւզանդիա գարծող Հոռմէական կայսրութեան : Նա զբաղուած էր ներսը կրօնական-գաւառնական հարցերով , որոնք պառակտում էին և զեկավարութիւնը և թուլացնում եկեղեցին . արտաքին հակատի վերայ բարբարոսները սպառնում էին կայսրութեան իսկ գոյութեան : Նրանց արշաւողները երբեմն երեւում էին կ . Պոլսի տակ : Բաւկաններում և արեւմուտքում յաջողելու համար անհրաժեշտ էր արեւելքում խաղաղութիւն ձեռք բերել : Բիւզանդիան զիջող կողմն էր : Եւ սրանով էլ մեկնաբանելի է սուհմանային համաձայնութիւնը : Նա բաւարարում էր Հայաստանի մէկ հինգերորդով , իսկ Իրանին թողնում էր չորս հինգերորդը : Հիւսիսում՝ Կարինը Բիւզանդիային էր մնում , հարաւում՝ Մծրինը Իրանին : Վերջինիս էր անցնում հայոց միջնաշխարհը , քաղաքական և կրօնական կենտրոնները : Նրա մէջ էր մնում հայոց բնակչութեան մեծ մասը , և նախարարական մեծ աները :

Բայց մինչեւ 386 թ . բաժանումը Հայաստանի սահմանների մէջ մեծ փոփոխութիւններ էին առաջացել : Իզուր չէր անցել սահմանամերձ նախարարութիւնների , բոլէշվոութիւնների կենարոնախոյս ուժերի պայքարը : Հայաստանի սահմանները փոփոխութեան էին ևնթարկել Իրանահառումէական մի շարք գաշինքներով : 297 թ . պարտութիւնից յետոյ , Իրանի արքայից արքան՝ Ներսէհը զիջեց Հոռմին Հայաստանի հարաւային գաւառները՝ Ծոփքը , Անգեղ տունը , Աղձնիքը , Կորգուքը , Մոկքը Ծաւզէից աշխարհը : Իսկ դրա փոխարէն Հայաստանը 298 թ . գաշինքով ընդուրձակուեց Իրանի սահմանի մէջ : Այս

\*) Փ. Բիւզանդացի . Էջ 197:

երկիրները, որ ռազմական մեծ արժեք ունէին և իշխում էին Միջաւգեաբի վերայ, չատ քիչ փոփոխութեամբ մնացին Հոռմի գերիշխանութեան տակ մինչեւ 363 թ. Հոռմի հայկական քաղաքականութեան վլումը։ Շապուհը վերադրաւեց այդ հողերի մէկ մասը։ Հայերը ջանացին հաստատուել այս կողմերում Պապի ժամանակ, բայց անյաջող, տեղական իշխանութիւնները անւական ապատամբ գրութեան մէջ էին։ Մուշեղը կարողացաւ մի առժամանակ ենթարկել նրանց կենտրոնական իշխանութեան, բայց այդ միայն ժամանակաւոր յաջողութիւն էր։ Դարի կէսերին Հոռմի ձեռնթափ լինելը արեւելեան գործերից, Հայուստանի անիշխանութեան մատնուիլը, Արշակի գերութիւնը, հարեւան մեծ ու փոքր ժաղովուրդներին մղում են արկածախնդրութեան և զրաւումների ի հաշիւ Հայուստանի։ Գուգարաց աշխարհը, որ Արտաշիսինների ժամանակից նուածուած էր՝ այժմ կցում է Վրաստանին։ Վրացինները Փոքր Կովկասի միջին մտսերին տէր զառնալով ռազմապէս իշխում են Հայոց Միջնաշխարհի վերայ։ Աղուանները զըրաւում են Աւտիքը և Արցախը, ուր հայոց իշխանութիւնը տարածուել էր Տիգրանի ժամանակ։ Նրանք արեւելքից նպաստաւոր գիրքեր գրաւեցին Հայուստանի նկատմամբ։ Փլում էր Արտաշիսինների պետական գործը և վըտանգում էր Հայուստանի կենտրոնական մասերը՝ իր սահմանապահ լիները ուրիշների ձեռքն էին։ Հեր և Զարեւանդ գաւառները, Իրանահայքը, ուր հայ տարրը թափանցել էր Քրիստոսից առաջ և իր հետ Արաքսի ափերին և Մասիսի շուրջը՝ համաձուլել էր մարերին, անշատուում է Հայուստանից և միանում Արտպատականին։ Հարաւում՝ Աղձնիքը, Տմորիքը, Նոշիրականը միանում են Աղիաբէնին, Արաքիստանին, որոնք Իրանի գերիշխանութեան տակ էին։ Այս անդամանատումները, կցումները կատարուում էին 386 թ. մեծ բաժանումից առաջ, գարի 50.60 թուերին և վերջանում են 70ական թուերին։ Հայուստանի քաղաքական շփոթ շրջանում։ Այս անշատուած գաւառների մէջ, ասում է Ն. Աղունցը «Բնակչութիւնը խառն եր՝ հայ-վրացական, հայ-աղուան, հայ-պարսիկ, հայ-սիրիական եւ հայ-երդական, որոնց հետևանիով տրջանների հատումը, բաժանումը, հիմնաւորուում եր եւ արդարանում նաև ազգագրօնեն»\*):

Հայուստանի ծայրամասերի այս կորուսը ի նկատի ունի մեր Փ. Բիւզանդացին երբ ասում է. «Եւ ի նոցանե բազում զաւաց կրծեալք, հատեալ այսր-անդր եւ մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկոսնաց բազաւորսն»\*\*), Փ. Բ/ւզանդացին՝ իրատես այդ պատմիչը

\* ) Ն. Աղունց. Հայուստանը Յուստինիանոսի դարում. 1958. Էջ 230:

\*\*) Փ. Բիւզանդացի. Էջ 222:

ւու հասկանում է կատարուածի իմաստը: Իրանցիները և Բիւզանցացիք գորք են մուծում Հայաստան և զրաւում իրաքանչիւրը՝ իր սահմանամերք շրջանները. սակայն ոչ թէ կուռւմ են՝ այլ բանակցում են երկրին իրենց մէջ բաժանելու համար: «Միմեանց առ միմեանս երեւեկին» ու ի վերջոյ բազում բանագութիւններից յետոյ երկու կողմերը համաձայնում են «Ա, ի համարեցան զախսարին հայոց նախ ընդ երկուսի մէջ իւրեանց բաժանել, զի ասկին թէ ի մէջ մերում բնակեալ է այս հզօր եւ հարուս քաղաւորութիւն: Նախ ընդ երկու բաժանել, երկու բազաւորօնն Արեակունելով, զոր կացուցաք, ապա եւ ընդ նոսա կրծել զանացուք, ալքատացուցանել ի մէջ արկանել ի ծառայութիւն, զի մի կարեսց ի մէջ մեր ամբանալ զգլուխս»\*): Ուրեմն բաժանման հետ կապում էր մի ամբողջ ծրագիր: բաժանումն միայն առաջին գործողութիւնն էր: Արշակունիների վախճանը նախօրոք ուրոշուած էր, միայն պէտք էր իրականացնել ոչ մէկ անդամից, այլ աստիճանաբար: Ծրագրի առաջին մասին՝ պիտի յաջորդէր և երկրորդը: Նոյն «կրծողները» օժանդակ պիտի ունենային հայութեան մէջ գործող ուժերին՝ նախարարութիւնը եւ այդ բազգործը օրերին Հայաստանը երնեւան չբերեց ոչ կամք, ոչ ուժ իր անկախութիւնը պաշտպանելու: լաւ է ասում Դ. Փարպեցին՝ «պատառուեցաւ յերկուս ծուելու, ըստ օրինակի հնացեալ ձորձոյ»\*\*):

386 թ. մէկ գարձակէտ է մեր պատմութեան մէջ: Հայութիւնը ապրել էր հազարամեայ պատմութեան մէկ շրջան՝ սկսած արմէնների՝ հայաստանների երեւան զալուց: Այդ հազարամեակը հայութեան ծագման, ստեղծման, պետականացման, հզօրացման և աստիճանն կան անկման շրջանն է: Հայութիւնը կառուցուեց մի քանի իշխնութեանց տակ՝ սատրապական միջավայրում, իրանի ընձեռնած խոսվազութեան մէջ, Սելեւկիան միապետների ստեղծած ինքնավար պայմաններում և Արտաշիսեանների պետութեան մէջ: Արտաշիսեանները կենարոնացան Հայոց Միջնաշխարհում, որը միայն այնքան ընդարձակ էր, որ կարող էր հաւաքել, միացնել իրար հետ մարդկային աւելի մեծ խըմբակցութիւններ: Յենուած նրանց վերայ Արտաշիսեանները գրաւեցին Հայոց լեռնաշխարհը և Ուրարտացիններից յետոյ առաջինը եղան մեր աշխարհին քաղաքական միութիւն տուողը: Տիգրանը Հայաստանի հզօրացման առաջ նոր ուղիներ բաց արեց: Բայց հայութեան մեծաւ-

\*) Փ. Բիւզանդացի. էջ 222:

\*\*) Դ. Փարպեցի. էջ 1:

ցումի այս գործը կանգ առաւ Տիգրանից յետոյ: Հայաստանը ընկաւ անհետանութեան մէջ: Մեր պատմութեան այս մեծ անիշխանութեան շրջանը տեւեց շուրջ հարիւր քսան տարի՝ Տիգրանի մահից մինչեւ Արշակունիների գահ բարձրանալը՝ 56 թ. Քրիստոսից առաջ, 63 թ. Քր. յետոյ: Այս անիշխանութեան մէջ ոչնչացաւ այն բոլորը, ինչ որ ստեղծել էր Արտաշիսեան հարստութիւնը՝ և հելինիստական մշակոյթի պատուաստում և Հայոց պետականութեան զաղափարը: Անգամ Տիգրան Մեծի գործն ու անունը որպէս աւանդութիւն և նրա գործերը ժողովրդական յիշողութեան մէջ վերագրուեցին ուրիշն: Միայն 63 թ. Քր. յետոյ Հայաստանում զրութիւնը կայունացաւ: Օտար մէկ հարստութիւն՝ Արշակունիները բարձրացան Հայոց գահը՝ բայց բոլորովին նոր պայմաններում: Մեծ անիշխանութեան որջանում սնուել ու կազմակերպուել էին ուժեր, մշակել ունակութիւններ, սացել իրենց ուժի գիտակցութիւնը: Սրանք հայ առնմապեսներն էին, որ այժմ տոհմերի քայլայտան հետեւանքով գարձել էին խոշոր հողատէրեր, իւրացրել էին ուրիշների հողերը, շարժական հարստութիւնը, իրաւունքներ դարձել էին դիկավար զաս: Նա աստիճանաբար դասնում էր նախարարութիւն: Նա կար, զոյսւթիւն ունէր Հայաստանում, երբ Արշակունիները տիրեցին Հայոց գահին: Հայ նախարարութիւնը իր քաղաքական վարքագիծը մշակեց այդ մեծ անիշխանութեան զարում: Զհաշտուեց օարածին Արշակունիների հետ, պայքարեց նրանց կենտրոնաձիգ միասումի դէմ: միշտ եղաւ անջատական, գիրազաս համարեց իր տեղական շահները, չմիացաւ իր նմանների հետ և չհաւաքուեց թագաւորի շուրջը ընդհանուր՝ համահայկական նպատակների համար: Հայ նախարարութեան պատմութիւնը մէկ շրնմիջուղով պայխար և բոլոր կենցրնաձիգ փորձի գէմ: Այս պայքարի մէջ նա սպասեց իր ուժերը, սպասեց և Արշակունիների ուժերը, նրանք երկուսն էլ հասան չորսորդ գարի վերջները պառակատած և թուլացած:


Հազարամեայ պատմութեան այս շրջանին հայութիւնը քաղաքական զաղափար էր, այսինքն նա հաւաքուած էր մէկ պետութեան մէջ: Այս պետութիւնը հսկոյ աշխատանք կատարեց: նպաստեց մեր բարձրաւանդակում ապրազ ցեղերի միացման, մէկ լեզուի ստգմնաւորման, որ պետութեան հովանաւորութեամբ և օժանդակութեամբ թափանցում էր ամեն տեղ: Հաւաքական պայքարի մէջ ստեղծուեցին դէմքեր, հերոսներ, որոնց մասին ծովովուրգը պատմեց վէպեր, առասպելներ: Այդ պատմումների մէջ և նրանց միջոցով լեզուն և կատարելապուեց և ծաւալուեց: Հայոց քաղաքական հոլովոյթը կատարում էր տոհմից զէպի միապետութիւն տանող ուղիով: Այս գործողութեան մէջ առաջ էր գալիս վարիչ փոքրամասնութիւն, որ կոռում էր կոփում էր հայութեան ճակատադիրը: Այդ վարիչ փոքրամասնու-

թեան շրջանակից բարձրացան առաջին իշխանները, թագաւորները, զինասահիները, որոնք ոչ միայն կառավարում էին, այլև ճիզ էին անում աւելի բարձր և կատարեալ հասարակութիւն ստեղծել: Արտաշիսահները փորձեցին Հայոստանը տանիլ հելենիստական բարձր մըշակոյթի ուղիով: Հայութիւնը հելենացներու նրանց ճիզը մեծ արդինք չառւեց: Այդ փորձը կանգ առաւ Տիգրան Մեծի մահով: Օտար, բարձր ու բարդ մշակոյթի ընդօրինակման միաւումը՝ թոյլ չառւեց, որ սաղմնաւորուի զուտ հայկականը: Այդ միաւումը կասեցրեց հայոց լեզուի հոլովոյթը, չզարձրեց նրան զրի լեզու: Հայութիւնը զիր չունեցաւ իր հաղաքական հօգութեան վերելին: Ճիշտ այդ պահուն նրա վարիչ խաւը՝ արքունիքը խրացրեց յունարէնը, Արշակունիների օրով՝ իրաներէնը. և բաւն հայոց լեզուն չբարձրացաւ, չհասաւ զրին ու զրականութեան: Բազմաքական իշխանութեան օրինակին հետեւեց և եկեղեցին: Մէկ զար նա օգառւեց յոյնարէնից: ասորերէնից՝ հայութեան մէջ քրիստոնէութիւնը քարոզելու:

Այս պատճառով էլ հազարամեայ պատմութեան այս շրջանում հայութիւնը ունեցաւ միայն բանահիւսութիւն, որին նիւթ մատակարարում էին մեր քաղաքական վերիվայրումները. անհուն կունեները, պայշաքարը օտարների դէմ: Վարիչ, զեկավար փոքրամասնութեան կեանքը, նկարագիրը և զբազումն ու տենչերն են արտայատուած նրանց մէջ: Բանահիւսութիւնը որպէս բանաւոր երկ՝ մեծանում է և հարըստանում քաղաքական վերելքին զուգահեռ:

Հայոց պետութեան զեկավարները նպաստեցին հայոց լեզուի կառուցման և տարածման, բայց շանացին նրան դարձնել զրականութեան լեզու: Նրանք ստեղծեցին հայոց քաղաքական միութիւնը, որ չունէր ամուր հիմքեր: Սւատական անիշխանական տարրը, միշտ կախուած էր նրա զլիսին որպէս փորձանք: Բանահիւսութիւն պատումները, վեպերը նպաստեցին մէկ հայութեան ստեղծման, բայց այդ նպաստը խոր և մեծ չէր: Իշխանութիւնը պատրաստի զտաւ զրի և զրականութեան լեզուն՝ յունարէնը, արամէականը: Այս էլ ծառայում էր շատ սահմանափակ շրջանակի: Եթէ Տիգրան Մեծի հօր պետութիւնը աւելի երկար կեանք ունենար, մի զուցէ նա բռնէր ազգայնացման ուղին և հայոց լեզուն բարձրացնէր զրի աստիճանին: Բայց այզպէս չեղաւ: Արշակունիները օտար զպացին իրենց մեր երկրում՝ մօտ երկու զար, և երբ փորձեցին ազգայնանալ լծուեցին քաղաքական ինքնապաշտպանութեան պայքարի: Նրանք պետականացրին քրիստոնէութիւնը, այս բանը նրանց մեծագոյն զորձերից մէկն է. բայց չը փորձեցին ժողովրդականացնել: Այդ զորձը կատալ եց հայ կղերը, աւելի ճիշտ նրա այն թեւը, որ ամենից իշխան զզում էր օտար՝ ասու

բական քրիստոնեական ճնշումը և այն արգելքը, որ նա դնում էր  
հայոց հոգեկան ուժերի զարգացման վերայ. Այս կղերական միջավայ-  
րից է, որ հանդէս եկաւ հանձարեղ մէկ մարդ՝ Մեսրոպ Մաշրումը  
յեղաշրջեց հայոց հոգեւոր կեանքը և նոր պայծառ ուղիներ հարթեց  
նրա գալիք զարգացման համար։ Հինգերորդ դարի սկզբին վերջանում  
էր հայոց հաղաքական պատմութեան հազարամեակը եւ բացւում էր մեկ  
նոր դարաշրջան, որի մէջ դեկավարը կղերն եւ բովանդակութիւնը  
մշակոյրն ու լեզուն։



## Գ. ԳԼՈՒԽ

### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԵԼՔ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԷԶՔ

386թ. Հայաստանը կորցրեց իր անկախութիւնը և բաժանուեց երկու մասի: Արշակունիաց հարստութիւնը պահեց իր գոյութիւնը, բայց ոչ որպէս ինքնիշխան տէր ու աիրական Հայաստանի, այլ որպէս ենթակայ ու հպատակ մի կողմից Իրանի արքայից արքային, միւս կողմից Բիւզանդական կայսեր: Հոկտեմբեկան բաժնում իշխեց Արշակ Գ., ըստ պատմագրի «լաւ համարեալ նուազ կողմանն սիրել եւ ծառայել քրիստոնեայ քագաւորի»: Նրա բաժինը շատ փոքր էր և մեկուսացած, հեռու հայոց կրօնական ու քաղաքական կենտրոններից: Արշակի հետ Արարատիան դաշտը, Հայոց միջնաշխարհը լքեցին շատ հայ նախարարներ, որոնք հաւատարիմ էին Արշակին, յունամիտ էին: Սրանք հաւաքուեցին Բարձր Հայքում, Եկեղեցաց աշխարհում, քաղաքական տարագիրներն էին, դրկորած հայրենի կալուածներից: Հայաստանի միւս մասում՝ Իրանահայաստանում արտօնները զգոյշ և մեզմ վերաբերումով ջանացին հայերին չհանել իրենց զէմ: Ոչ մէկ ուժ հայութեան մէջ չկար արգելելու, եթէ Սասանիանները ուզեին վերացնել Արշակունիների զինաստին: Սակայն այս բանը նրանք չարին: Նրանց զիմաց չստեղծեցին ուրիշ հարստութիւն, ինչպէս փորձեցին անել չօրրարդ զարում: Թուլացած և զերիշխանութիւնից զուրկ Արշակունիները անվանուի էին:

Իրանական Հայաստանի մէջ թագաւորում էր Խոսրով Գ. Արշակունիաց առհմից: Ինչպէս երեւում է Իրանի զրաւման հետեւանքով, նախարարների մէկ հասուած լքել էր երկիրը և անցել Բիւզանդական Հայաստան: Այս բանը մահովեց Իրանի արքունիքը. նա միջոցներ էր որոնում Արշակի հետ գնացած նախարարներին վերադաշներու: Ըստ Մ. Խորենացու Շապուհ Գ. Թուլզի է զրում նախարարներին՝ ասելով, որ «ոչ կարին հօֆ առանց նովուաց լինել», ուստի Խոսրովին նշանակում է թագաւոր, ումն ի դեմք ձերմէ եւ յազգեն բնիլ ձերը եերութեան»: Առաջ հրահանգում է վերագառնալ իւրաքանչիւրը իր կալուածները. «արդ՝ դարձեալ ձեր յիւրաքանչիւր արարս՝ իւխնեցէն ուսպէս ցայծմ»: Բիւզանդական Հայաստանում հաւաքուած հայ աւա-

գանին կարող էր վատանգաւոր լինել Իրանի համար, ուստի պէտք էր ցըել նրան և եթէ կարելի է կոպել Իրանի հետ։ Այս կոչը արձագանք է գտնում Արշակի հետ եկած հայ նախարարների մօտ, «բալեալ զերակ՝ դարձան ի բնակութիւն իւրեանց»։

Նրա մօտ մնացին մի քանի նախարարներ։ Սրանց կարւածներն է, որ որպէս պատժական միջոց, Խոսրովը յարքունիս գրաւեց «հրամանաւ Շապիոյ»։ Նախարարների զարձից յետոյ Արշակի զիրքը խախաըւում էր, նա այլեւս ուժ չունէր իր հետ, որոնց վերայ յենուէր։ և զարմանալի չէ, որ Նրա մահից յետոյ 389 թ. Բիւզանդացիք նոր թագաւոր չնշանակեցին իրենց բաժին Հայաստանի վերայ՝ թէպէտ մէկ Արշակունիի կարող էին գտնել իրենց սահմանում։ Արշակին փոխարինում է լոյն Կոմեալ, բարձրաստիճան մէկ պաշտօնեալ, որ կայսեր անունից պիտի կառավարէր «կես ազգն հայոց»։ Ուրեմն Բիւզանդական մասում «կրծելր», «մասումը» շատ շուտ սկսուեց։ Այս բանը շատ ճնշող տպաւորութիւն թողեց հայերի վերայ։ Սկսուեց նոր գաղթ դէպի Իրանահայաստան։ Նոյնիսկ նրանք էին զազմում, որոնց «հայրենական հոգերը» Բիւզանդական Հայաստանի մէջ էին։ Գաղթեց և Սահմակ ասպետը, որին Խոսրովը շատ լաւ ընդունեց և իր բանակի սպարապետ նշանակեց։ Նրան տալիս է «հայրենական հոգերը» և բացի դրանից «այլեւ աւանս հանգերձ ազարակօք պարզեւեաց նմա յայնոցիկ ի ժառանգութենէ։ որք ի բաժնոյն պարսից առ Արշակայ մնացին»։ Արշակի մահից յետոյ գետեւս Բիւզանդական Հայաստանում մնացած նախարարները զիմում են Խոսրովին և որոշում են «կամաւ հետազանիքի բազաւորին Խոսրովու»։ Խնդրում են միայն ներումն և կալուածների վերադարձ։ Խոսրովը նրանց էլ ընդառաջում է և խոստանում է նըրանց կալուածները վերադարձնել և լրացնել այն՝ արքունական հոգերով։

Այս ձեռով Իրանական Հայաստանը գառնում է նախարարների հաւաքման կենտրոն։ Նրանք բաւարարուած էին։ պահեցին իրենց զասացին արտօնութիւնները, կալուածները և «աւանուտէրական» իրաւունքները։

Իրանի արքունիքը ոչինչ չփոխեց այն կարգից, ինչ որ հարիւրաւոր արքիների անցեալ ունէր։ Միայն Արշակունիներն է, որ կրեցին հարուածը և կորցրին իրենց գերիշխանութիւնը։ Բայց 386 թ. համաձայնութիւնը աւելի խիստ հարուած տօւեց հայութեան։ Մինչ այդ հայութիւնը մէկ էր՝ հաւաքուած մէկ պետութեան մէջ։ Այդ պետութիւնը հոկայ աշխատանք էր կատարել ստեղծելու հայութիւնը, ծայրամասերը միացնելու, բազում ցեղերին հայացնելու, հայ լեզուն տարածելու, հայութեան առաջ մշակութային նոր ուղիներ բանալու, նոր կրօն որդեգրելու, պետականացնելու գործի մէջ։ Եկեղեցին, որ նոյն-

պէս մէկ էր ու անբաժան՝ փորձեց շարունակել պետութեան սկսած գործը մերթ նրա հետ գոշնակցելով, մերթ նրա զէմ պայքարեւ լով։ Այժմ Հայաստանը բաժանուեց երկու մասերի, մէկը միւսից անջառուած։ Նրանց պատմական հոլովայթը այնուհետեւ տարբեր ուղղութեամբ պիտի ընթանար, տարբեր քաղաքական և ընկերային միջավայրում։ Տիրողները պիտի աշխատեն այնուհետեւ միեւնոյն ազգի երկու հատուածների մէջ կտրել բոլոր կապերը, առ անձնացնել, մեկուսացնել եւ մարել մէկ հայուրեան զաղափարը։ Դրա հակառակ հայուրինը իր բոլոր նիզերը պիտի լարեր սահմաններով բաժանուած հայուրեան միացնել լիզուի, կրօնի, դաւանակի միջոցով եւ պահել մէկ հայուրեան գիտակցութիւնը։

Իրանահայաստանում երկրի տէրը նախարարներն էին։ Այս պատշաճով էլ Հայաստանի այս մասը // «նախարարական կամ տանուեկանացների և արքունիքի մէջ եղած դարաւոր պայքարը։ Նախարարների համար այլեւս Արշակունի թագաւորը վատնգաւոր չէր։ Նա չունէր այլեւս ոչ իր ներքին և ոչ էլ արաւարին քաղաքականութիւնը։ Իր ընթացքը նա պիտի յարմարեցնէր զերիշխան տիրոջ քաղաքականութեան։ Նախարարների Բիւզանդական մատից վեհապահնալուց յետոյ՝ Իրանական Հայաստանը դառնուած է հայ քաղաքական և կրօնական շարժումների կենդրոն։ Մշակուած էր մէկ նոր մատյանութիւն, որ Հայաստանի այդ մասը պէտք է պահել։ Նախարարական անները պիտի կենարունանան այնակեզ, հայ բանակը պիտի մնայ և ուժեղնայի Բիւզանդական մասում Արշակունիների վերացումը Խոսրովը և իրեն շըրջապատողները օգաազործեցին հիմնաւորելու այն միտքը։ Թէ Հայաստանը միայն իրանական բաժինն է։ Հայկական նպատակներ և զործ միայն այնակեզ կարելի է սկսիլ և արդիւնաւորել։ Այսպիսի պայքանաններումն է, որ Խոսրովը կաթողիկոսութեան է կանչում Սահակին, Ներսէսի որդուն և Լուսաւորչի տան վերջին ժառանգին։ Նա իր հօր մահից անմիջապէս յետոյ պիտի զրաւէր այդ գահը, ստկայն Պապի հակարիւզական ընթացքը, Հակակղերական զիրքը հեռու պահեց նրան կաթողիկոսութիւնից։ Այժմ նոր պայքաններում երբ տեղի էր ունենուած բոլոր կենսունակ ուժերի կենարունացում Սահակի կաթողիկոսացումն անհրաժեշտ էր։

Նրա միջոցով Խոսրովը իր հետ կը կապրէր յունամիտ կուսակցութիւնը, նրա միջոցով բարեկամական կապեր պէտք էր պահել յոյների հետ։ Հենց նոյն ժամանակներում մէկ ուրիշ աշխարհական՝ արշայական զիւանատան պաշտօնեայ՝ Մատուցը լքում է պաշտօնն ու աշխարհական կեանքը և գառնուած է վանական ու քարոզիչ։ Ընդհանուր մէկ ճիզ է նշմարւում ի մի համախմբել ցրուած ուժերը, պա-

հել այն ինչ որ մնացել էր 386 թ. համաձայնութեամբ։ Հենց այս  
միջավայրումն է յզանում մէկ միտք՝ տարածել Խոսրովի իշխանութիւ-  
նը նաեւ Բիւզանդական Հայաստանի վերայ, վերահաստան տարբեր  
Արշակունիների հարստութիւնը, ստեղծել երկու Հայաստան տարբեր  
իշխանութեանց թեւարկութեան տակ, բայց մէկ հայ թագաւորով։  
Այս ծրագրի շուրջը համախմբւում են բիւզանդական Հայաստանում  
մնացած նախարարները՝ Գաղաւոն Կամսարականի գլխաւորութեամբ։  
Բիւզանդիոնը համաձայնում է այս առաջարկին։ Բայց այս ծրագիրը  
միայն հայ նախարարութեան մէկ մասինն էր։ այս միջոցով նրանք  
ուզում էին վերականգնել քաղաքական կեանքը Արեւմտեան Հայա-  
տանում, որի մէջ ապրում էր «կես ազգն Հայոց»։ Իրանամիտ հոսան-  
քը այս ծրագրին զէմ էր։ զիտէին, որ այս զէպքում շատ պիտի մե-  
ծանայ հակառակ հոսանքը և իրենք պիտի մնան սուսերի մէջ։ զի-  
տէին, որ քրիստոնէութիւնը նոր յինարան պիտի ստանայ և ինքը  
զառնայ յինարանը յունական զիմաշրջման ծաւալումի։ Անշուշտ կա-  
տարուող բանակցութիւնների և զէպքերի մասին լաւատեղեակ էր ի-  
րանի արքունիքը։ Հայ զեկավարութեան իրանամիտ հոսանքը զեկու-  
ցում էր արքունիքին։ Խոսրովը հրաւիրում է Տիգրոն իր գերիշխա-  
նի մօտ։ Նա զիտէր ինչ է սպասում իրեն։ Փորձում է յոյների հետ  
համաձայնութեան զալ։ «Եւ իսկոյն խօսեցաւ ընդ Արկալյա։ զի լուծեալ  
զիաւուրիւն ընդ Շապիոյ օգնեսցէ նմա զօրու եւ սա դարձուացէ առ նա  
զբոլոր աշխարհսայ\*։» Բայց յոյները չեն օգնում, և ոչ մէկ խօսաւում չեն  
անում։ Եւ ինչպէս Դ. Փարպեցին է ասում՝ «ոչ ոք գտեալի սատարութիւն»։  
Հարկագրւած՝ Խոսրովը մեկնում է Տիգրոն՝ արքայից արքայի մօտ,  
ուրաքս առ իւր իշխան եւ բարեկամ։ Արքունիքում նրան մեզազրում են  
երկու բանի մէջ՝ յոյների հետ գաղտնի յարաբերութիւն մշակելու մէջ,  
ապա «անիրաման կարգել յեպիսկոպոսութիւն զմեծն Սահակ»։ Խոսրովը  
իրանի համար այլեւս քաղաքականապէս անվստահելի էր, արդարա-  
նալ չկարոզացաւ և չզերագարձաւ Հայաստան։ աքսորուեցաւ Ան-  
յուշ բերգը։ Նրա նզբայրը՝ Վաղարշ արքայից արքայի կամքով  
թագաւորից Հայաստանում վասմշապուհ անունով։ Հայ զեկավարու-  
թիւնը այժմ համոզուեց որ իրանահայաստանի մէջ էլ Արշակունինե-  
րի կիսանկախ պետութեան հրմքերը թոյլ են, խախուտ, որ Խոս-  
րովը զոհ գնաց իր քաղաքականապային ծրագիրներին։ Համոզւեցին  
որ Իրանը թոյլ չի տալ որեւէ շարժում, որ կարող է իր գերագոյն  
իշխանութիւնը թուլացնել Հայաստանում։ Բայց նրանց առաջին մը-

\* ) Մ. Խորենացի. Պատմութիւն Հայոց, եջ 508 :

տահոգութիւնը լինում է Տիղբոնի արքունիքի հետ հաշտութեան եզր գտնել, մէկ կենսածեւ մշակել: Այս զործը կատարում է Սահակը Խոսրովի անկումով նա էլ կասկածի տակ էր: Պէտք է ենթադրել, որ նա էլ մասնակից էր Խոսրովի յունական ծրագիրներին: Այժմ նրա հետ միասին կասկածի ենթակայ էր նաև եկեղեցին: Սահակն անձամբ զնում է Տիղբոն և ներկայանում է Վումին բոլոր առկախ հարցերը լուծելու: Նա Տիղբոնում միծ յաջողութիւն է ունենալում. պաշտպանում է այն տեսակէտը՝ թէ հայերը քաղաքականապէս վստահելի են, յոյների հետ եղած կապը գուտ կրօնական է: Նա կարգադրում է մի շարք գործեր նախարարական աների վերաբերմամբ: Այս մեծ յալթանակ էր Սահակի համար: Ամբացաւ նրա զիրքը թէ Հայաստանում նախարարների մէջ, թէ արքունիքում:

Վումշապուհի օրովզ, 391—414 Հայաստանում խոշոր քաղաքական գէպքեր տեղի չունեցան: Խաղաղ մէկ շրջան էր, որ ապրեց հայութիւնը և ջանաց կասկածներ չարուցել իրանի արքունիքում: Այս խաղաղութիւնը հետեւանք էր իրանաշյունական հայտ քաղաքականութեան: Այս խաղաղութեան մէջ տեղի ունեցաւ Հայոց պատմութեան միծագոյն և բազգործ գէպքերից մէկը՝ Գրեգի զիւտը: Հոգեւոր որոնումի այս շարժման գլուխը կանգնում է ոչ թէ նախարարութիւնը, որ անկարող եղաւ անգամ իր հայրենիքի ամբողջութիւնը և անկախութիւնը պաշտպանելու, այլ հոգեւորականութիւնը, հայ կղերը: Նա էր, աւելի ճիշգ նրա գիտակից և գործունեաց փոքրամասնութիւնն էր, որ ազգային լեզուով գրի և գրականութեան կարիք էր զգում: Նա էլ գառնում է զեկավարը նոր շարժման: Սակայն այս բանը հոգեւոր վերածնութեան առաջին փորձը չէր, նա շարունակութիւնն էր այն միծ զործի, որի ոգին և յղացողը ներսէն էր, չորրորդ զարի կէսերին:

Տեսանք, որ չորրորդ զարի սկզբներին Հայաստանում քրիստոնէութիւնը պետականացաւ. բայց նա գանցպազօքէն էր տեղ գրաւում հայկական կեանքում: Նա կազմակերպուց որպէս հաստատութիւն, բայց չգարձաւ կենցաղ, մտայնութիւն, բարոյական վարքագիծ. չկաղապարեց իրենով հայ հոգին, հասարակութիւնն ու ընտանիքը: Նա պետականացաւ, բայց չազգայնացաւ: Ուստի եկեղեցին Հայաստանում ամուր չէր. իշխանութիւնը թոյլ յենարան էր. նա ինքը յաճախ գուրս էր զալիս եկեղեցու զէմ՝ կոահելով այն վանդը, որ նրանից կարելի է սպասել: Դեռ զարի կէսերին նախարարներից շատերը հաշկուած էին մնացել հին հեթանոս ուսմունքներին, իսկ շատերն էլ ընդունում էին մազգեղական կրօնը, որ նրանց աւելի հարազատ էր եւ քաղաքական տեսակէտից էլ նոր յառաջդիմութիւն խոսացող: Մեծքուժան Արծրունին բացառութիւն չէր հայ նախարարների մէջ, երբ

Շասպուհին խոստանում էր՝ եթէ «ինձ դարձ լիցի յիմ աշխարհն եւ յիմ տունն, նախ ևս ասէ, սինեցից ատրոււան յիմում տան սեպհականին, այսինքն տուն կրակին պատճելով»\*): Հայութիւնը թէեւ քրիստոնեայ՝ սակայն իր հոգեւոր կեանքով, իր շահերով և կենսահայեցողութեամբ գեռ հեթանոս էր։ Քրիստոնէութիւնը աւելի բարձր միջավայրի արգիւնք էր և աւելի խիստ պահանջներ էր անում իր հետեւզներից։ Նա ճիգի կրօն էր. որին հայութեան հոգեկան ուժերը չէին կարող հասնիլ չորրորդ գարում։ Մեր Փ. Բիւզանզացին, որ չորրորդ գարի քրիստոնէութեան իրական և հարազատ պատկերի գծագրովն է, շատ մուայլ զոյներով է ուրուագծում հայութեան կրօնական կեանքը։ Հայրը՝ «առին նորա զանուն քրիստոնէութեան» միայն։ Եթէ նախարարների և ժողովրդի զլիսին զցայլ եւ զցերեկ նստեալ վարդապետացն եւ ըստ նմանուք ամպոցն իյշեւ զլորդահեղեղ ինչ անձեւաց սասկուրի գվարդապետուրիւն ի վերայ հոսկին, ոչ ոչ ի նոցանին եւ ոչ մի ոչ. եւ ոչ մի բան, եւ ոչ կես բանի, եւ ոչ զգոյզն յիշատակ ինչ, եւ ոչ նումարան ինչ զոր լսէին եւ ոչ կարէին ինչ ունելի ի մտիչ\*\*): Պատմագիրը յիշում է, որ հայութեան բոլոր գասերի հոգին կազմապարուած էր հեթանոսութեան կենցազով և բարոյական գաղափարներով։ Նրանց հարազատ էր ևեւ զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն։ Եւ այսպէս էր ոչ միայն աշխարհիկը, այլեւ կղերի մեծ մասը, որ մտել էր նրա շարքերը ամեն բանի, բայց ամենից քիչ քրիստոնէութեան գաղափարախօսութեան համար։ Իրօք նոր կրօնը, որպէս կեանքի նոր կենսիմաստ, նոր վարք ու բարք, որ պիտի յեղաշրջէր անցեալը, ըստեղէր նոր հայը, քրիստոնեայ հայը՝ միայն գոյութիւն ունէր կղերի փոքր մասի մէջ, որ հաւաքուել էր լուսաւորչի տան շուրջը։ Նրանց և նրանց գործի վերայ հաշա աչքով չէին նայում ոչ թագաւորները, ոչ նախարարները, նրանց հատ չէր և ժողովուրդը կղերն էլ հակուած չէր ոչ մեր ժողովրդի բանաւոր ստեղծագործութիւնը, ոչ էլ նրա պատմական աւանդութիւնները հասկնալու և արժէքաւորելու։ Քրիստոնէութիւնը տառջացրեց հայութեան մէջ ճեղքուած, հոգեկան կեանքի երկութիւն։ Նա հայկական կեանքում առաջ բերեց կոիւ, պայքար՝ գաղափարների, կենցազի, հնի և նորի, անտեսական շահերի, քաղաքական զիմաշրջման։ Այս պայմաններում միայն հասկանալի է դառնում աքսորը, սպանաւթիւնները. գաւադրութիւնները, որ յաճախ աեղի են ունենում հայոց կեանքի մէջ, չորրորդ դարում։ Այս պայքարի և հալածանքի մէջ պիտի պարաւէր, մեռնէր քրիստոնէութիւ-

\*) Փ. Բիւզանզացւոյ պատմութիւն. էջ 119:

\*\*) Փ. Բիւզանդ. էջ 29:

նը, եթէ չփորձէր ամուր յենարաններ ստեղծել իր գոյութեան համար։ Պետականացած քրիստոնէութիւնը պէտք էր ժողովրդականացնել, զարձնել և հասարակից և ռմեծատանա սեփականութիւնը։ Նրա բարոյական ուսմունքի նուազագոյնը պէտք էր իրականացնել կեանքում։ Հին հեթանոսական երգին, զրոյցին, վարք ու բարքին պիտի փոխարինէր նորը՝ քրիստոնէականը՝ շարտկանը, պատումները սուրբերի մասին, նոր հերոսների կեանքը, վարքագրութիւնը, Այս յեղաշըրջումը պէտք էր կատարել, այլապէս քրիստոնէութիւնը և եկեղեցին չեին կարող ապրել Հայաստանում։ Վատանգոււած էր զրա հետևանքով նաև եկեղեցու նուերապետութիւնը, նրա նիւթական հաշըսառութիւնը։ Ուրեմն իրենց գասային շահերի, եկեղեցու կայունացման համար խսկ պէտք էր հսկայ աշխատանք կատարել և քրիստոնէութիւնը մաաչելի զարձնել ժողովրդին։ Այս նպատակով առաջին փորձը անում է ինքը՝ Գրիգոր Լուսաւորիչը։ Նա հիմնում է յոյն և ասորի լեզուներով զպրոցներ։ Բայց ընկերային և կրթական մեծ բարենորոգումների ծրագիրը մշակում է միայն Ներսէս Կաթողիկոս։ Նա փորձում է յեղաշրջել մեր կեանքը քրիստոնէութեան սկզբունքների նուազագոյնը կիրառելով այնտեղ։ Այս ծրագրի հիմնական գաղափարները պէտք է մշակուած լինէին Ներսէսի հրաւիրած Սշափառի համաժողովում։ Այդ նոյն ժամանակ՝ զարի կէսին Արշակը սկսում է իր շինարարական գործը։ Երկու իշխանութիւնները սկզբում համերաշի էին ընթանում և ընդհանուր ծրագիր ունէին հայութեան ներքին կեանքի վերակառուցման։ Փ. Յիւզանգացին գժրազգաբար շատ քիչ բան է հազորգում Արշակի արած բարենորոգումների մասին, մինչ Ներսէսի բէփորմների վերայ աւելի մանրամասն է կանգ առնում։ Վերջինս հիմնում է հիւանդանոցներ, անկելանոցներ, ապաստաններ՝ բորոտներին, ազքատներին պատապարում է, սնունդ է մատակարարում և առնում եկեղեցու հովանուտակ։ Հիմնում է մենաստաններ, մեծ չափի է հասցնում վանական կեանքը։ Բարենորոգում է ամուսնականները, ջանում է ազատազրել այն հեթանոսական բարոյականից և կառուցել քրիստոնէութեան պահանջների վերայ։ Ներսէսի գործը նոր երեսոյթ չէր, այս բոլորը լայնօրէն կիրառում էր կայսրութեան մէջ աւելի ուշ 11—15րդ զարերում նոյնն էր կատարում եկեղեցին Եւրոպայի մէջ։ Եկեղեցին ընկերային արգարութեան գաղափարի կիրառուցն էր, հասարակական խոնարհ խաւերին նա էր առնում իր հովանուտակ և տալիս ապահովութիւն, խնամք, և սնունդ։ Պիտութիւնը այս գործերով չէր զրագոււմ, նա զնում էր միայն զինասափական և ռազմական նպատակներ։ Եկեղեցու գործի սահմանն աւելի լայն էր։ Նրա միջազգայրումն էր զարգանում նաև զիրն ու զրականութիւնը, կրօնական և փիլիսոփայական միտքը։

Ահա այս բոլորը, սեղմ չափերով տեղի էր ունենում Ներսէսի ջանքերով Հայաստանում չորրորդ գարի կէսերին: Նա հիմնած է յոյն և ասորի գպրոցներ. «կարգեր ի տեղիս տեղիս դպրոց»: Ի հարկէ ընկերացին և կրթական այս հաստատութիւնները պահելու համար անհրաժեշտ էր խոչոր նիւթական հարստութիւն. եկեղեցին ունէր իր կալուածները. Ներսէսը հոգ է տանում նրանց բարգաւաճման համար:

Այս բոլորի հետեւանքով Ներսէսի եւ եկեղեցու հեղինակութիւնը արտակարգօրէն բարձրացաւ. Հանրային օժանդակութիւնը, քրիստոնէական ողորմածութեան և բարին գործելու հրահանգը և փորձը մէկ զէնք էր կղերի ձեռքին. իր իշխանութիւնը գերակշիռ դարձնելու: Հստ Ներսէսի Հայոց ամբողջ ժողովուրդը պիտի կազմակերպուէր որպէս «կարգ միաբանութեան վաճականաց համաշխարհից», որի մէջ թոյլաւաըլում էր միայն օրինական ամուսնութիւնը: «Առաքելակարգ» կանոնները միայն պիտի կիրառուի կեանքի մէջ: Ներսէսը Արշակունիաց պետութեան մէջ ստեղծել էր՝ կրօնաւորների, վանականների մէկ պետութիւն, լուս կազմակերպուած, աւելի զիտակից և կարգ ու կանոնի հնթակայ և միանդամայն անկախ աշխարհիկ իշխանութիւնից և յենուած եկեղեցու մեծ հարստութեան վերայ: Բնական է, որ Ներսէսի կրօնական իդէալը և նրա իրացումը պիտի հանգիսէր աշխարհիկ իշխանութեան ուժեղ գիմագրութեան: Արշակ Բ. եկեղեցու հզօրացման և անկախութեան հետ հաշտուել չէր կարող: Նա իր աշխարհների նըման մեծ ջանք էր թափում ստեղծելու կենտրոնացած և թագաւորի հեղինակութեան միայն ենթակայ իշխանութիւն: Այս միտումը իրեն պիտի ենթարկէր նաև եկեղեցին: Զէր կարելի միգ անել թուլացնելու աշխարհիկ նախարարութիւնը և պահել ու խնայել կղերական աւատահրութիւնը: Որքան Արշակը պայքարում էր առաջնների զէմ, նոյնքան և էլ աւելի նա զէմ էր կղերի հեղինակութեան մեծանալուն և կալուածատիրութեան: Հայր Մարգարեալ, որ Արշակի գաղափարների արտայայտիչն է և գործազրողը՝ Ներսէսի առաջ պղնէր թենալան Տրդատ արքայի ի մեռեալս եւ կենդանեացն ի կեանս, ազգի եւ տակի եւ տոհմի Արքակունեաց բագաւորացն Հայոց: Զիարդ ասէ, այսպիսի տեղիս կանանցանանդերձ մարդկան տուեալ է եւ ոչ արանց»\*): Այս մատայնութիւնը յազմանակում է Պապի ժամանակ. տեղի է ունենում եկեղեցական կալուածների բոնագրաւումը և նրա նուիրապետութեան թուլացումը:

Ներսէսի հիմնած գպրոցներում ուսումը պիտի լինէր կրօնական և անշուշտ յոյների և ասորիների միջոցով: Նրանց աւելի ուշ՝ միանում

\*): Փ. Բիւզանդացի. Էջ 97:

նայ գպրոցներն աւարտած հայ աշակերտները, որոնց մէկ մասը իր ռասումը կատարելազործում էր ասորական և յունական զգրոցներում՝ Փոքր Ասիայում և Ասորիքում։ Այդպիսի զրթութիւն էին ըստացել Լուսաւորչի տան նշանաւոր գէմքերը։ Ուրիմն քրիստոնէութիւնը բերեց բարձր մաւար կրթութեան պահանջ։ Նա սակածեց հայ ռւասնողութիւնը։ Սրանք ասորայունական միջավայրում ծանօթանում էին ոչ միայն նոր կրօնի, վարզապետութեան, եկեղեցական հայրերի գրականութեան, այլև գեղեւս վերապրոց հելենիստական զրական երկերի և փիլիսոփայական համակարգութեանց հետո Նրանք օտար երկիրներից բերում էին նոր կենցազ, նոր ըմբռնումներ և ապրելակերպ։ Իրենց կրթութիւնը աւարտելուց յիսոյ, նրանք վերադառնում էին Հայաստան, մանում հոգեւորականութեան շարքերը և ուսուցանում ժողովրդին։ Սրանք աւելի մօտ էին ժողովրդին, հաղորդակից կենզանի լեզուով։ Նրանք էլ եկեղեցիներում կարգում էին յունաբէն և ասորերէն, բայց թարգմանում էին հայերէն։ Ուրիմն զեռ չորրորդ զարի կէսերին Հայաստանում սակածուած էր հայածազում թարգմանիչների մէկ ստուար խումբ, որ կարգում էր օտար լիզունեարով, սակայն քարոզում էր հայերէն։ Նրանց բերանում հայ լեզուն մշակուում էր, շակուում, հարստանում և զտոնում աւելի բարդ, բարձր, վերացական մտքերի, գաղափարների զործիք։ Նրանք հայ լեզուի մշակոցներն էին, բայց ոչ ասուջինները։ Մեր լեզուն անցել էր հոլովոյթի երկար զարեր։ Երրորդ զարում Քր. առաջ նրանով՝ արդեն խոսում էին Հայոց բարձրաւանդակում ապրոց ժողովաւրցները։ Նրածաւալման շատ են նպաստում Սրատշիսեանները իրենց արքունիքով։ Եթէ նրանց օրով հայ լեզուն զրական լեզու չգարձաւ, ապա զո՞նէ պետական էր՝ պալատում խօսում էին այդ լեզուով, պաշտօնեաներին։ և զօրքին հրահանգները արևում էր հայերէն։ Այդ լեզուն մշակուեց դուսանների, վիպասանների բերանում։ Սրանք նրան գործքին հերոսական գործերի, ազգային մեծ գէմքերի և նրանց մասին վէպեր հիւսող և պատմող, աստուածներին փառարանող լեզու։ Նա հզօրացաւ և գարձաւ հոգեւոր բանաստեղծութեան լեզու քրմական շրջանակում։ Գուսանների, վիպասանների միջոցով այդ լեզուն՝ արքայական պալատներից մաւ նախարարների գղեակները, ամրոցները և այնականների խրճիթները։

Քրիստոնէութիւնը՝ երբ բանաւոր թարգմանիչների միջացով հայ լեզուն զարձեց նոր կրօնի համար, շարունակողն էր հանգիսանում հին գործի, նախարար սերունդների, որոնք ստեղծել էին հայ լեզուի ծաւալումը, ժողովրդականացումը։ Այդ լեզուն նայ այժմ գարձրեց նոր գաղափարների մշակման և արտայայելու զործիք։ Նախ բերանացի, բանաւոր, ապա ժառանգութիւն տուեց հինգերորդ զարի թարգմանիչներին, որոնք զարձրին նրան զրական լեզու։

Բայց Ներսէսի օտարալեզու այս դպրոցները անբաւարար էին քը-  
րիստոնէութիւնը ժողովրդականացնելու, մատչելի զարձնելու հայու-  
թեան։ Օտար դպրոցների միջոցով նա սեփականութիւնն էր գտնուում  
շատ քչերին։ Օբազմութիւն ժողովրդոց ունայն եւ քափաւեք երածար-  
եալի գնալին լիկեղեցւոյն։ Եւ ուսուցիչք հանելավ յոգւոց եւ նառաջնելով  
զլօսնային զննոնի զանեն իւրեանց\*)։ Օտար լեզուի միջոցով կարելի էր  
սահղձել թարգմանիչների խումբ, բայց անկարելի էր ամբողջ մէկ  
ժողովութիւն քրիստոնէացնել։ Իր մեծ զանգուածներով հայութիւնը  
մասնակից չէր քրիստոնէութեան հոգեւոր հարսաւութեանն Ներսէսը և  
իր գործակիցները ճիշտ նախառակին զիմեցին սխալ ճանապարհով։  
Պէտք էր շակել այն։ Հայութեան քրիստոնէացումն պէտք էր կատա-  
րել միայն և միայն հայերէն լեզուով։ Այս ճանաչողութեանն հասաւ  
Ներսէսին յաջորդող սերունդը՝ իր իսկ որդու։ Սահակի առաջնորդու-  
թեամբ։

Հայ լեզուն բարձրացնելու, զրի և քրիստոնէութեան լեզու գար-  
ձընելը ունէր և մէկ ուրիշ պատճառ։ Դրանով միայն կարելի էր տա-  
պահել ասուրիների զերակընութիւնը հայ դպրոցի, նույրապեսուրեան  
մէջ։ Գրանով միայն հայ կեանից բարձրացող կլիերական մաւլերականը  
կարող էր գառնալ հարազա մոլովրդի կրօնական-կրքական դեկալարը,  
և ել եւ դիրք գրաւել մեր կեանեում։ Ուրեմն լեզուն և զրի պահանջը  
ընկերային պայքարի արտայայտութեան մէկ ձեւն էր, որ աեղի էր  
ունենուում հայ և ասորի կղերականութեան մէջ։ Ակզրից և հա ասորի-  
ները հայոց նույրապեսութեան մէջ գերակիո զեր են խաղուում։ Ասո-  
րական եկեղեցին իր հոգեւոր նույածումների սահմանի մէջ տառ Հա-  
յաստանը և շատ վազ ժամանակներից միսիոնարներ ուղարկեց այն-  
տեղ։ Գրիգոր Լուսաւորչից առաջ Հարաւային Հայաստանում ոչ միայն  
քրիստոնայ համայնքներ կային, այլև ստեղծել էին որոշ վարչու-  
թիւն՝ այդ համայնքներին միացնող, ուր ասորիները իրենց ձեւքն  
էին պահել զեկովարութիւնը։ Պէտք է ենթազրիլ, որ հարաւեց թա-  
փանցող քրիստոնէութիւնը միայն ասորիների միջոցով չէր կատար-  
ուում, այլև հայերի, որոնք հիւսիսային Միջազետքի քաղաքների մէջ  
զգացի թիւ էին կազմուում։ Այս քաղաքներից «Եղեսիան հանդիսանում  
էր ասուրական ազգային երիտասարդութեան ամենանեանալոր կենցընքը։  
Դարձնուում է յաւնարէնի շնորհիւ յետ մզուած ասորիները եկեղեցական  
լեզու և սկսուում է աշխատիւ նաև իր հարեւանների մէջ աւետարանի  
լոյսը տարածելու մասին մտածել»\*\*։ Աւելի ուշ Մծբինն է զտոնում

\*) Պ. Փարպեցի, էջ 16:

\*\*) Ե. Տեր Մինասեան. Հայոց եկեղեցու լարաբերութիւնները ասո-  
րական եկեղեցիների հետ. 1908 թ. Էջմիածին էջ 19:

ասորական լուսաւորութեան կինտրոնը։ Քրիստոնէութեան մէկ ուրիշ հոսանք Հայաստան է թափանցում արեւմուտքից։ Այդ հոսանքը մենք կոչում ենք յունական։ Նրա զլուխը կանգնած էր Գր. Լուսաւորիչը, որ աշխարհիկ իշխանութեան օժանդակութեամբ զլուխ է րերում այն, ինչ որ չկարողացաւ անել հարաւի՝ ասորական հոսանքը՝ քրիստոնէութեան պետականացումը։ Գրիգորը Հայաստան մանում է Փոքր Հայքի վրայով. այնտեղ կոչ է անում եղբայրներին միանալ իրեն եւ գնալ Հայաստան քարողելու։ Պէտք է ենթագրել, որ այդ եղբայրները միայն յոյները չէին, այլև հայեր։ Փոքր Հայքը թէեւ անջատուած էր Մեծ Հայքից քաղաքականապէս, բայց մնաց հայկական շատ երկար ժամանակ. նա մշակոյթով աւելի բարձր էր. երկար դարեր ապրել էր յունա-հռոմէական քաղաքակրթական միջավայրում. այնտեղի քաղաքներում քրիստոնէութիւնը մեծ նուաճումներ էր կատարել։ Փոքր Հայքի հայութիւնն է, որ մասնակից էր քրիստոնէութեան վերելքին և ընդհանուր եկեղեցուն տուել էր նշանաւոր զէմքեր։ Արդ, անկարելի է ընդունիլ, որ այդ հայերը արձագանքած չինեն Գր. Լուսաւորչի կոչին և մասնակից եղած չլինեն Մեծ Հայքի քրիստոնէացման։ Մենք չենք ընդունում, որ հարաւից և արեւմուտքից՝ հայաշատ վայրերից օտարները թափանցեն Հայաստան նոր կըրօնը քարողելու՝ առանց այդ տեղի հայերի մասնակցութեան։ Բայց նրանք զեկավարութեան մէջ չէին, գալիս էին որպէս մասը յոյն և ասորի միսիոննարական խմբերի և գործում էին նրանց շարքերում և օգտուում էին նրանց լեզուից և գրականութիւնից։

Գրիգոր Լուսաւորիչը Հայաստանում գտաւ կազմակերպուած ասորի համայնքներ, եկեղեցի և վարչութիւն։ Նրանք Հայաստանի հարաւը առել էին իրենց ազգեցութեան տակ։ Այս բանին նպաստում էր այդ վայրերի խառն բնակչութիւնը։ Եկող ասորիները զործում և քարոզում էին լեզուակից ժողովրդի մէջ։ Գրիգոր Լուսաւորիչը ի նկատի պիտի ունենար նրանց ուժը, կազմակերպութիւնը։ Նրանցից պիտի ընտրէր իր գործակիցներին։ Այդպիսիներից մէկն էր ասորի Դանիէլ եպիսկոպոսը, մի սրբակեաց և խիստ մարդ։ Տարօնը ասորի քրիստոնէութեան կենարոններից մէկն է զառնում։ Այդ շրջանի եպիսկոպոսները ասորական ծագումն ունեին. «Հայոց երկի հարաւային եւ հարաւային եւ մտեան մասում ասորական ֆարողիշները այնքան հաստատուի արմատներ են բոնել Գրիգորի ժամանակ, որ վերջինս կարիք չգտաւ այդ կողմերը նորից ֆարողիշներ ուղարկելու»<sup>\*)</sup>։ Գրիգոր Լուսաւորչի և ասորի քարողիչների գործակցութիւնը ունեցաւ այն հետեւանքը, որ

<sup>\*)</sup> Ե. Տի Մինասեան. Հայ եւ ասորի եկեղեցիներ. էջ 29:

Հայաստանը բաժանուեց երկու կրօնաշկրթական ազգեցութեանց ըլլը ջանակի. հարաւային Հայաստանը ընկաւ ասորիներին և նրանց ազգեցութիւնը այնքան մեծ էր և այդ շրջանակից զուրս, որ նրանց զեկավարները բարձրանում էին նաև Հայոց կաթողիկոսութեան զահը: Պէտք է ի նկատի ունենալ, որ իր սազմնաւորման շրջանում հայ նուիրապետութիւնը մեծ չէր. զուցէ կազմուած լինէր միայն երկու ընտանիքից՝ Գրիգոր Լուսաւորչի և Աղքիանոսի: Վերջինս քրմական միջավայրից էր զուրս եկել և մաել նոր կրօնի նուիրապետութեան մէջ:

Այս երկու տունը և փոքրաթիւ հայ կղերը անկարող էին քրիստոնէութիւնը տարածել և պատուասել Հայաստանում. հայոց կղերի մեծ մասը հաւանաբար ասորիներ լինէին, որոնք իրենց թիկունքում ունէին ասորաւսեմական աշխարհը: Չորրորդ զարում ասորայունական մրցութիւնը՝ Հայոց նկեղեցին իրենց ձեռքին պահելու հասնում է իր բարձր աստիճան և վերջանում է միայն հինգերորդ գարի 40 շական թուերին: Այս մրցութիւնը անցնում է բազմաթիւ փուլերով և միայն կրօնական, մշակութային սահմանների մէջ չի մնում:

«Ասորի նոգեւորականն եր սկսել Հայաստանը լուսաւորելու գարծը եւ բնականաբար չպիտի բոլլ տար, որ իրենից տաս յետոյ եկող նելենական միսիննարեները զործունեութեան ասպարեզները իր ձեռքից խլեն: Ամբողջ Գ. եւ Ե. դարեւում պայքար են մզում երանէ իրենց իրաւունեների համար, մինչեւ այն ժամանակ, երբ մայրենի ասորական եկեղեցին ներին բաժանումից պառակուած եւ բուլացած այլեւս անկարող եր որեւէ կերպ օգնել երանց»\*):

Հայաստան էին գալիս ոչ միայն ասորի միսինարիներ, այլև ուսուցիչներ, ասորի մաւարականներ. նրանք Հայաստանի կրթական զործը տուել էին իրենց ձեռքը: Ասորինը զանոնում էր բարձր մտաւորական և կրթութեան լիզու անգիր Հայաստանի համար: «Ասորիները, ասում ե ակաղեմիկոս Ս. Մալիսանանը իր՝ Մովսես Խորենացու աշխարհաբար բարգմանուրեան բնդարձակ ներածութեան մէջ, վազուց իվեր տիրապետող ազգեցութիւն եին ձեռք բերել Հայաստանում: Զմոռանանէ, որ Քրիստոնեութիւնն սկսուելուց իվեր ասորի նոգեւորականներով լցուեց Հայաստանը. ժամերգութիւնը կատարում եր ասորերէն լեզուով. հայ պատանիները Ասորի եին զնում ասորերէն սովորելու, որպէսզի հայրենիք վերադառնալով կարողանան ասորերէն լեզուով պատամունի կատարել հայոց եկեղեցիներում: Ասորիները ուժեղ եին իրենց

\*) Ե. Տե՛ր Մինասեան. Հայ եւ ասորի եկեղեցիները. էջ 11:

մասսայով եւ գրաւած բարձր դիրքերով): Հայը առաջին անգամ առարտկան քրիստոնէութեան միջոցով ծանօթանում էր մէկ ուրիշ մըտաւոր աշխարհի հետ. նա լսում է և կարդում քրիստոնեայ հերոսների, նահատակների կենաքի մասին, ծանօթանում է եկեղեցական հայրերի գրուածներին, որոնց մաքերը ուրիշ խնդիրներով են զբաղուած, նրանք՝ ասորիները լերում էին նոր երգեր, չարականներ՝ նըուիրուած սուրբերին, Քրիստոսին, Սատու փառաբանութեան. ծանօթանում էին ասորի հեղինակների հետ: Նրանք քրիստոնէութեան միջոցով բերում էին նոր զգացում՝ բարոյական չափանիշ՝ մեղքի, արդարութեան, հասուցման զաղափարը: Նրանց միջոցով հայերի առաջ բացում էր մէկ նոր աշխարհ՝ մաքերի, կենսաձեւի, պատմութիւնների, հերոսութիւնների, որոնք ոչ մէկ առնչութիւն չունեին իրենց վէպերի, առասպէլների, գուսանական երգերի հետ: Ասորիները առաջին յեղափոխիչներն էին հայ մաքի: Նրանց զպրոցներից է, որ գուրս էին գալիս հայ առաջին ուսանողները և նոր գաղափարների սերմնացանը հանդիսանում:

Բայց այս բոլորը չէր: Ասորիները չէին սահմանափակում միայն կրթական-միսիոնարական գործերով: Նրանք գալիս էին Հայաստան բարձր զիրք զրաւելու, նիւթական հարստութիւն ձեռք բերելու: Նըրանք տէր էին զարձել եկեղեցական կալուածների, հասոյթաբեր վանքերի: Նրանք Հայաստանում ազգեցիկ և արաօնեալ զաս էին հայոց նուիրապեատութեան մէջ: Նրա մէջ օատարները, առաջին հերթի, ասորիները գերիշխող զիրք էին գրաւել:

Ասորի միսիոնարները մինակ չէին գալիս Հայաստան, այլ ընտանիքով, ազգականներով: Հասկնալի է, որ սրանք լցում էին Հայաստան ոչ թէ կրօնական նպատակներով, այլ հարստանալու տեհնչով: Հայաստանը ասորիների համար շահագործման ընդարձակ դաշտ էր, փառքի, զրքի հանելու միծ ասպարէզ կար նրանց առջեւ: Նըրանք զարգացրին նեպոնիզմը — այսինքն վանականների, կղերի հետ եկող ազգականների համար և նրանց միջոցով Հայաստանի և հայ վանքերի ու եկեղեցիների կողապուտը: Եւ ինչպէս վկայում է Զ. Փարագեցին՝ նկողները իրենց գարք ու սարքով օրինակ ծառայել չէին կարող հայութեան համար: Նրա խօսքը վերաբերում է հինգերորդ զարին, բայց նոյնն էր և չորրորդ զարի ասորին: Ոմն Բրքիչոյ՝ նըր-

\*) Այս հատուածը վերցրել ենք Ամերիկանալ «Լրաբեր» թերթից, ուր սպագրւած էր Ս. Մալխասեանի Խորենացու քարգմանուրեան ներածութիւնը:

շանակւում է Հայոց կաթողիկոս այր յազգի ասուլոց, եկեալ յաշխար-  
հին Հայոց իւրով գաւառակցով, որ չի լոյծ կրօնիւք, եկեալ ընդ եր-  
մա յԱստեսաննե, ըստ սովորութեան իւրեանց աշխարհին տանտիկնօֆ եւ  
ոչ կի լոյս սուրբ եւ անբիթ կրօնիցն...\*) : Եւ բնական է, որ նրանց  
պարագարը հակառակորդների գէմ ոչ թէ ուզգուում է միայն իրենց գա-  
ղափարների պաշտպանութեան, այլև այն բացառիկ դիրքի, շահաբեր  
արտօնութիւնների, նիւթական ազգիւրեններին, որ ձեռք էին բներել  
Հայաստանուում: Անշուշտ նրանք իրենց հետ ունէին հայ ծագումով  
կղերականներ, որոնց հովանաւորում էին, պահում իրենց ձեռքի տակ,  
բաժին հանում իրենց հարատութիւնից և այս ձեւով ստեղծում յենա-  
րաններ: Սրանք հայ կղերի այն խաւն էր, որ հաղիւ աւարտում էր  
տեղական գպրոցները և անցնում մանր մունիք վարչական գործերի՝  
ծառայելու համար տէրերին: Նրանք աւելի մեծ նպատակներ չունէին:  
Քան ձեռք բերել զիրք, նիւթական բարիք և զովքը անել նրանց,  
ովքեր այդ բոլորը կտային իրենց: Առանց այս յենարանի, ասորի իշ-  
խող կղերը չէր կարող յարատելի իր գոյութիւնն և նոյնիսկ կա-  
թողիկոսական գահը ժառանգիլ: Նրանք այնքան ուժեղ էին, որ նոյն  
իսկ 410 թ. կազմուած ասորի եկեղեցու պետը՝ Սելեւկիայի կաթողի-  
կոսը՝ կարող էր իրեն համարել նաեւ Հայաստանի կաթողիկոս: Ան-  
շուշտ նա յենուում էր Հայաստանի մէջ եղած այն մեծազանդուած ա-  
սորի կղերի վերայ, որ հակուած էր գէպի նոր կազմակերպուած կա-  
թողիկոսութիւնը և ուզում էին նրա հեղինակութեան և ազգեցու-  
թեան առաջապահը լինել Հայաստանուում: Այս բոլորը ասորի ազգայ-  
նութեան վերելքն էր և ծաւալումը: Զորրորդ դարում Հայաստանի  
մէջ չկար զիմաքրասկան մեծ հոսանք, որ կասիցնէր նրանց արշաւը և  
սահման դնէր նրանց ազգեցութեան: Բայց այդ չի նշանակում, որ  
ամեն ընդդիմութիւն մեռել էր: Հայ ուսանողների այն հոսանքը որ  
վերագանուում էր յոյն և ասորի գպրոցները աւարտելուց յետոյ՝ մըտ-  
նում էին ժողովրդի մէջ և նրանց գործը աւելի արդիւնաւորում էր,  
որովհետեւ նրանք հայերէն էին քարոզում, ուսուցանում: Նրանք ա-  
ւելի հարազատ էին ու մատչելի: Ժողովուրդը նրանց հետ աւելի պի-  
տի կապուէր: Այս նոր՝ վերազարձած երիտասարդ ուժերը բնակոն է,  
որ ջանային կեանքում առաջնակարգ զիրք գրաւել, լեզուակից և հա-  
րազատ ժողովրդի ուսման և եկեղեցու վարչութեան վլուխոն անցնել.  
հասկնալի է և այն, որ նրանք զժկամութեամբ նայէին, թէ ինչպէս  
օտարները վատնուում են հայկական հարստութիւնները, ինչպէս բա-  
րիքի մէկ մասը գուրս է զալիս երկրից և զնում Ասորիք:

\*) Վ. Փարպեցի. էջ 26:

Երանք թշնամիները պիտի լինէին ասորական նէպոտիզմի և նըրասնց ազգեցութեան։ Հակասասրական այս պայքարի մէջ զիտակից ինքնաճանաչ հայ երիտասարտ կղերը իր զէմ պիտի ունենար նաև հայ կղերի այն զանգութիւնը պարտական էր ասորիների գերակոռութեան։ Նրանք առաջ էին դնացել, զիրք գրաւել ծառայելով միայն ասորիներին, նրանց զիրքի ամրացման։ Ասորիների գերակոռութեան զէմ եղած պայքարը ի վերջոյ ուղղւում էր և նրանց դէմ, որոնք աւելի տգետ էին, պատեհապաշտ, մեծ գաղափարներից և ներշնչումներից զուրկի եւ նրանք էլ միացած ասորիների հետ պիտի հալածէին հայ կղերի այդ նոր ինքնաճանաչ հատուածին, որ ձիգ էր թափում Հայոց եկեղեցին և կրթութիւնը աղատադրելու. Նրանցից Այս բանը ցայտուն կերպով երեւում է հինգերորդ գարում, որի փայլուն ապացոյցը Պ. Փարպեցու թուղթն է, ուր արտայայտել է երկու հոսանքների պայքարը, սակայն անշուշտ նոյնը պիտի եղած լինի և չորրորդ գարում։ Այդ պայքարն է, որ ի վերջոյ սաեղծում է հայ զիրը; լեզուի բարձրացումը, որ յետ էր վանելու ասորի լեզուի մենատիրութիւնը հայ զգրոցներում։

Յունական քրիստոնէութիւնը, որ մուտք էր գործում Բիւզանցիայից չէր կատարւում մեծազանգուած յոյն միսիոնարների միջոցով, այլ հայերի։ Գոնէ այդ հոսանքի զեկավարութիւնը հայերի ձեռքն էր։ Մեզ յայտնի է Գր. Լուսաւորչի տունը, որ հարիւր արտոց աւելի, զիլսաւորեց յունական քրիստոնէութիւնը։ Այս առնմը խօշոր գործ կատարեց Հայտատանի կրօնական-բարոյական և կրթական գործի մէջ։ Նրա անուան հետ է կապւում քրիստոնէութեան պիտականացումը, եկեղեցու կազմակերպութիւնը, գպրոցական-կրթական ցանցի ստեղծումը, քրիստոնէական սզորմածութեան և սիրոյ նուազազոյն կիրառումն մեր կեանքում։ Տիգը ժողովրդականացնելու և ազգայնացնելու քրիստոնէութիւնը։ Այս հոսանքը ուղում էր Հայոց եկեղեցին սերտութիւն կապուած տեսնել յունական եկեղեցու հետ։ Իր ներշնչումները, զիրն ու գրականութիւնը, նոր կրօնի ըմբանումները նա մշակել էր և ստանում էր Բիւզանցիայից։ Նա շեշտուած յունական գիմազրչում ուներ, որովհետեւ միայն նրա վերայ կրթնած նա կարող էր պայքարի ասորական շատ ուժեղ ազգեցութեան զէմ, ապա մի քիչ յետոյ՝ իրանի զէմ։

Կրօնա կրթական, զիրքի և հարստութեան համար մզուող այս մրցութիւնը աւելի բարզանում, զառնում էր բաղաբական նոսանեների մրցութիւն։ Կազմակերպում էր երկու կուսակցութիւն՝ ասորական և յունական։ Սոսացինք որ ասորիների հետ միացած էր հայ կղերի մէկ մասը։ Դրսի ուժերից՝ իրանը օգտաւում էր ասորական հոսանքից, պաշտպան կանգնում նրան, նրանց հետ էր նաև հայ նախարարու-

թեան այն մասը, որ հակուած էր իրանին։ Վերջինիս համար, եթե քրիստոնէութիւնը մնալու, յարատեւելու էր Հայաստանում։ գերազասիլի էր, որ դա լինի ասորական քրիստոնէութիւնը։ Ասորիները, մանաւանդ Հայաստանի մէջ ապաքաղաքական տարր էին։ Էլ աւելի, իրենք է, որ որոնում էին իրանի հովանին հայ բարձրացող մասւորականութեան և յունական ազգեցութեան զէմ պայքարելու համար։ Սատիճանաբար այս հոսանքին մօտեցաւ նաև Աղբիանոսեան տոհմը, որ մրցորդ էր Գր. Լուսաւորչի տան՝ կաթողիկոսութեան համար։ Աղբիանոսեան տան կաթողիկոսները՝ լաւ համբաւ չունին մեր պատմագիրների մօտ։ Շքայց միայն իւր անձն սուրբ պահեր եւ ի նարկէ ընգերեր ալօրէն քագաւորին եւ ըստ նորին կամացն երազ հնազանդեալ։ Այս աւում է Փառէնի մասին Աղբիանոսի տոհմից։ Շահակը հետեւում էր ըստ նմին օրինակից։ Ներսէսի հրաժարումից յետոյ Արշակը կաթողիկոսութեան է բարձրացնում ոմն Զունակի։ Նա ուր սրուկ ի սրտկաց արքունից, և ու ուր Զունակ այր զգօն եւ ոչինչ ուներ լեզու յանդիմանուրեան կամ խրատու, այլ հաւանեալ էր քագաւորին զինչ եւ նա զործիցէ։ Ներսէսի մանից յետոյ Պապը կաթողիկոսութեան է կանչում Յուսուկի եպիսկոպոսին Աղբիանոսեան տոհմից։ Նա էլ ըստ պատմագրի ուր սա Երիսոնեայ, բայց համարձակութեամբ, յանդիմանուրեամբ ինչ ընդ ումեկ զիշէներ բարբառել կամ զի երկնչոս էր եւ հաւան եւ ըստ կամաց քագաւորին միայն ուներ զպատիւն...\*)։ Աղբիանոսեան տոհմին հարազատ չէր յունական կրթութիւնը և յունական քրիստոնէութեան պահանջները։ Նրանք այն մեծ բէֆորմների ծրագիրը չունէին, ինչ ունէր Ներսէսը, և բարոյականի մէջ էլ այն խստապահանջը չէին, ինչ Յուսուկը, ոչ էլ այն մեծ գիտական պատրաստութիւնը ունէին՝ ինչ Սահակը։ Նրանք հեթանոս հայութեան քրմական շրջանակից էին բարձրացել և պահել էին նրանից շատ բան։ Յարմարուող էին, կամակատար, որովհետեւ միայն այդ միջոցով նրանք կարող էին պահել կաթողիկոսութիւնը։ Նրանց զէմ էր Կհսարիան, յունամիտ հոսանքը և գուցէ այս էր պատճառը, որ նրանց օրով տեղի ունեցաւ հայ և կհասրիայի աթոռի խղումը։ Այդ բանը Պապի ցանկութիւնն էր։ Նա ուզում էր թուլացնել Բիւզանդական ազգեցութիւնը Հայոց եկեղեցու վրայ։ Վարչականորէն նա անկախացրեց եկեղեցին և այս գործում Աղբիանոսեան տոհմը նըրա հետ էր։ Այսպէսով մենք տեսնում ենք, որ չորրորդ պարում Հայաստանի մէջ շատ շեշտուած ձեւով երեւում են երկու հոսանքներ։ Այդ կուսակցութիւններից մեկը քագաւորական տան եւ ազնուականու-

\*) Փ. Բիւզանդացի. էջ 39, 105, 191:

բեան մեկ խուռ մասի հետ իրեն տեսնապէս եւ կուլտուրապէս միացած եր զգում պարսկական պետութեան հետ եւ ոչ մեկ ցանկութիւն եւ նուշիւ չուներ նրանից բաժանուելու կամ նյոնիսկ խորքանելու. Միւս կուսակցութիւնը, որի գլուխը կանգեած է լինում Կեսարիայում յունական կրութիւն ստացած եւ յունական օրինեացիա ունեցող հայ կարողիկուները Գրիգոր Լուսաւորչի ցեղից եւ որին անդամակցում եին նաեւ նումեական նահանգների սահմանակից եւ նումեական ազգեցութեան ներքո գտնուող որոշ հայ նախարարական տեսքուածքներ կապուածքներ եւ ապա Բիւզանդիան, որի հետ նրանի իրենց կապուածքներ կապի Հոռոմը եւ ապա միայն տեսնասական տահերով, այլեւ կուլտուրական տահագրգութիւններով<sup>\*)</sup>: Հոսանքների այս պայքարը տեղի է ունենում նախ լեզուի շուրջը, ոչ թէ հայոց, այլ քրիստոնէական գրականութիւն և միաք սահեղձած յոյն և ասորի լեզուների շուրջը: Որը նրանցից պիտի իշխի, գործածութեան գրուի Հայաստանի մէջ, Երկրի բաժանումից առաջ էլ այդ հարցը գրուած էր. Իրանի զեկավարութիւնը արդելում էր յունական գրքերի գործածութիւնը հայ կեկզեցիներում և հալածում էր հայ կզերի յունամիտ հսունքին: Տեսանք որ Մեհր. Արծրունին այրում էր յունական գրքերը, արգելում էր յոյն լեզուի գործածութիւնը: Նոյնը տեղի միծ չափով կատարուեց Հայաստանի բաժանումից յետոյ: Իրանը նետապնդում էր, որ իրեն բաժնի նայութիւնը իր բոլոր կապերը խսի Բիւզանդիայի հետ. այս և՛ քաղաքական և՛ կրօնա-կրթական միտում ունէր:

Հայ կզերի բանիմաց մասը սննուած էր յունական քրիստոնէութեան մշակոյթով. դա նրա հոգեկան հարստացման ազգիւրն էր. պէտք էր ցամաքեցնել այդ ազգիւրը: Կարելով Բիւզանդիայի հետ ամեն կապ՝ հայութիւնը կարում ու խորթանում էր նաև սահմանից միւս կողմը գտնուած «կէս ազգն Հայոց» հաւաքականութիւնից: Իրանի զեկավարութեան համար ինչ որ յունական էր՝ կասկածելի էր ու վանդաւոր: Դրա փոխարէն նա թոյլ էր տալիս ասորերէնի ազգան աւ համատարած գործածութիւնը, որ ինչպէս ասացինք վանդաւոր չէր, նա ապաքաղաքական ազգի և զանգուածների լեզու էր. մինչ յունական լեզուի թիկունքում կանգնած էր հոկայ Բիւզանդական կոյսրութիւնը: Իրանի սահմաններից ներս և զուրսը ասորին չէր հետապնդում որևէ քաղաքական նպատակ, սիմական աշխարհը իր ուժերը վազուց սպառել էր այդ բանի համար. յունական աշխարհը սահեղձել էր նոր յունական-ըիւղանգական կայսրութիւնը. որ նուաճումների հետամուռ էր և բոլոր միծ ու փոքր ազգերի մէջ ըս-

\*) Ա. Տես Մինասեան. «Ուկելարի հայ գրականութիւնը». Էջ 7:

տեղծում էր յինարաններ, հսանկքներ՝ իր ազգեցութիւնը տարածող: Յոյն լիզուն ծառայում էր այդ ազգեցութիւնը շրջանակը ընդարձակելու: Ասորական ազգային-կրծական վերելքը կատարում էր իր լեզով ու գրականութեամբ, որ նոյնքան ժխտական վերաբերում ուներ յունական լեզուին և գրականութեան հանգեպ, որքան իրանը: Ասորին օգտում էր իրանի այս վերաբերումից և ծառայեցնում էր այն իր օդախն: Նա Հայաստանի բաժանումից յետոյ չատ աւելի համարձակ էր: Հայութիւնը պիտի յարմարուէր նոր պայմաններին և ջանար ասորերէնի միջոցով լրացնել իր հոգեւոր ծարաւը: «Գրերի զիւտի համար Ս. Մեսրոպը Ասորիք դիմեց եւ ոչ Յունաստան: Ս. Գիրը առաջին անգամ ասորերէնից բարգմանուեց, նոյնիսկ յունարէն գրուածքները հայերէն էին բարգմանում ասորերէն բարգմանութիւնից: Ս. Սահակի զամբնեցութեան միջոցին յետեւ յետեւ Հայոց կարողիկոս նստեցին ասորի հոգեւորականներ: Ասորիները ուժեղ էին իրենց մասսայով եւ զըրաւած բարձր դիրեկվ եւ ունեին շատ հետեւողներ հայ հոգեւորականութեան միջից: Այս խումբը պահպանողական էր եւ համեմատաբար աւելի սգէս»\*): Հայերի մշակութային այս դիրքորոշումը հարկադրական էր: Ջանում էին կասկած չյարուցանել իրանի զեկավարութեան մէջ: Այս դիրքորոշումից գդգոհ էին նաև Բիւզանդացիք: Նրանք Կորցնում էին յունական մշակոյթի ծաւալման մէկ ընդարձակ երկիր: Գրերի գիւտից յետոյ Սահակը իննդրում էր կայսերական արքունիքից, որ թոյլ տրուի իրենց հայ պարոցներ բանալու յունական Հայաստանում, Կայսրը մեղադրում է Սահակին. «զի ամենայն սրտի միտեցար զիես ներանու բագաւորի էր մեզ եւ ոչ բղբով բաւականացար ծանօթանալու: Եւ առաւել յայսմ մեղադրեմ զի արհամարեալ զիարտարօն, որ ի մերում հաղափիս, յԱսորեաց ոմանց խնդրէիր զիմաստից զիւսաւ: Աւելի որոշ է կ. Պալսի պատրիարքի՝ Աստիկոսի մեղադրական գրութիւնը Սահակին. «Եւ առաւել ընդ այս զարմանամք, երեւ զիարդ բողեր զալլիիւրըն եկեղեցւոյ զիայր մեր Յովինաննես, որ ոչ միայն սիեզերական մայրաքաղաքիս, այլ սովու եւ ամենայն քրիստոնեայք եւ ընդհանուր առ խարի ի նմանէ վարդապետեալ ուսանի, ուստի եւ ոսկերեան կոչեցին զնա եւ ձեր զանց զնովաւ արարեալ կամեցաք ի սահմանական ջրոց զիափառ ծարաւոյն յագեցուցանել»\*): Բիւզանդիայի զեկավարներին հաճելի չէր հայերի հակուիլը ասորիների կողմը:

Ասորական այս կրթութիւնը հայ երիտասարդները ձեռք էին բերում շատ մեծ ծախքով և ճիգերով, երկար ճամբարդութեամբ: Մաշ-

\*) Մ. Մալխասեան. Խորենացու բարգմանութեան նախաբանը:

\*\*) Մ. Խորենացի. Պատմութիւն Հայոց, էջ 534-536:

տոցը տեսնում է «զմեծ ջանն եւ գտութելապիս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում բռնակօֆ եւ նեռազնաց նանապարհօֆ եւ բազմաժամանակեայ դեղերմամբք մասեին զաւուրս իւրեանց ի դրաբոցս ասորի զիտուրեան»\*): Դ. Փարապեցի, ասորական լիզուն և գրականութիւնը կոչում է «աճիօգուտ ուսում»։ ինքը յունական կրթութեան և գպրոցի մարդ է։ այն աւելի հարուսա էր, խոր և բազմակողմանի Քաղաքական պատճառների բերումով ասորերէնը Հայաստանում դարձաւ թոյլատրուած, միակ լիզուն։ Այդպէս էր և իրանի ամբողջ պետութեան մէջ, քանի որ Այսրկովկասից գուրս իրանի քըրիստոնէութիւնը գերազանցորդէն ասորական էր։ Տեսանք, որ ընիկ իրանցի քրիստոնեաներ քիչ կային։ Ասորական քրիստոնէութեան այս մինատիրութեան հետեւանքով՝ ասորի լիզուն կայսրութեան մէջ գըրեթէ միակ քրիստոնէական գրականութեան, ժամերգութեան և զբարոցի լիզու էր և իր տարածումով՝ երկրորդը՝ իրանական լիզուից յետոյ։ Մէկը քաղաքական տիրապետութեան լիզու էր, միւսը կրօնական։ մէկը կրթուած էր միւսի վերա։ Հայոց եկեղեցու եւ աշխարհիկ դեկապարները երկու պայքար պիտի մղեին՝ երկու տիրող, նուանող ուժերի դեմ։ Մէկ՝ Խրանի՝ իրենց բաղաբական եւ Տեսնական ազատութեանց համար, միւսը՝ ասորի լեզուի եւ ասորի կղերի դեմ՝ իրենց լեզուի, հոգեկան եւ մսէի ազատութեան համար։ Մէկը միւսից անջատ չէր, եւ դէպքերն այնպէս զասաւորուեցին, որ հայութեան ազատագրական պայքարը նախ սկսուեց ասորիների գերիշխանութեան զէմ։

Ասորիները շատ լաւ էին օգտագործում սանեղծուած կացութիւնը։ Հայաստանի բաժանումը ծառայեց նրանց տիրապետութեան համար, քանի որ Հայոց աշխարհի չորս հինգերը բորդ մասը անցաւ իրանին։ Նախարարներն անզամ հետամուտ էին, բր իրենց տներում յունարէնը գործածութիւնից զուրս գայ։ Ասորի լիզուի այս մենատիրութեան մասին է, որ խօսում է Դ. Փարապեցին, երբ զրում էր։ «Քանի պատօն եկեղեցւոյ եւ կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարեին ի վանուայս եւ յեկեղեցի, Հայաստան մողաքրդոցս, յորմէ ոչինչ եին կարող լսել եւ օգտել ծողովուրդին այսպիսի մեծ աշխարհի եւ լիներ պատօնիցն աշխատութիւն եւ ծողովրդոցն անտառութիւն յանրութենէ լեզուին ասորւոյ»\*):

Այս էր Հայաստանի հոգեմատաւոր կացութիւնը չորրորդ դարի վերջին։ Հայոց եկեղեցին ասորանում էր, նա ասորանում էր լիզուով, գպրոցներով, ժամասացութեամբ։ Այս շատ վանդաւոր կացութիւն էր։ Հայութիւնը նոր էր կորցրել իր քաղաքական անկախութիւնը,

\*.) \*\*) Դ. Փարապեցի. էջ 13.

այժմ կանգնած էր հոգեւոր-եկեղեցական անկախութեան կօրուսաի առաջ՝ Պէտք էր ազատազրել հայի հոգեւոր կեանքքը, զպրոցը և եկեղեցին ասորիների մենատափրութիւնից: Պէտք էր զործի կանչել և լայն ասպարէզ տալ հայ մուտերականութեան, որ կանգնած էր յետին շարքերում: Անհրաժեշտ էր ազգայնացնել եկեղեցական նույրապեառութիւնը, վարչութիւնը, լեզուն, զեկավարութիւնը և գարձնել այն նայ նաստառութիւն, նայկական նպատակներով: Պէտք էր սկսիլ լեզուից և գրից: Լեզուն բարձրացնել զրականութեան, զրականութիւնն էլ հայացնել լեզուի միջոցով:

386 թ. Հայաստանի բաժանումը և 389 թ. Բիւզանդական Հայաստանում թագաւորութեան վերացումն արագացրեց մշակութային որոնումների զործը: Ժամանակի զործիչները պայծառորէն աեսնում էին, որ հայ քաղաքական կեանքը խախուտ է: Նրանք տեսան նաեւ Խոսրով Գ.ի անկումը: Հայերի զոյութիւնը արգէն վասնուած էր Բիւզանդական մասում: Կրօնը կապում էր նրանց յոյների հետ: Ճիշտ է զետես նախարարական սիստեմի զէմ հալածանք չէր սկսուած, բայց հայութիւնը վասնուած էր յունական բարձր մշակոյթի մէջ, որ հրամաւրիչ էր հայ նախարարութեան համար: Նրանք մտնում էին պետական ծառայութեան մէջ, որ առաջին քայլն էր սեփական ազգային գանգուածից անջատուելու: Իրանական Հայաստանում զրութիւնը նոյնքան վատ էր: Թագաւորներ իջեցնող, թագաւորներ բարձրացնող արքայից արքան մէկ օր էլ թագաւորութիւնը վերացնել կարող էր: Զկար այն ուժը հայութեան մէջ, որ ծառանար օտարի դէմ: Ընդհակառակն նա գործակցեց օտարի հետ անկախութիւնը թուշլացնելու, սահմանափակելու: Օտարը սպասում էր միայն յարմար առիթի: Հայ զեկավարութիւնը Խոսրով Գ.ի աքսորեց յետոյ համոզուեց, որ քաղաքական կեանքի վերականգման համար պայքարն ապարգիւն է և անիմաստ: Մնում էր պայքարը շարունակել ուրիշ ճոկատի վերայ՝ ներքնապէս մեծանալ, հոգեւոր արժեքներ ստեղծել. հաւաքուիլ եկեղեցու շուրջը: Քայլական կեանքը վերանում էր, պետք էր կերտել հոգեւոր-կրօնական կեանքը: Հայութիւնը մինչ այդ պետք թեան մէջ էր հաւաքուած, այժմ պիտի հաւաքուի եկեղեցու մէջ: Պետութիւնը իր զործ աւարտել էր, նիմա շարունակելու էր եկեղեցին: Պետութիւն և եկեղեցի այս երկուուր՝ հայութեան հոլովոյթի երկու իրարու յաջորդող փուլին են:

Ժամանակի զործիչները համոզուած էին, որ եթէ խորտակուող քաղաքական անօթը վերանորոգել անկարելի է, ապա կարելի է ապրել, հաւաքականորէն յարատեւել, բարձրորակ միութիւն դասնալ՝ հոգեւոր կեանքի ստեղծումով: Եւ այդ պիտի կառուցուի հայոց լեզուի վերայ: Նա պիտի բարձրանաց, զառնայ զրի լեզու, ծաւալուի, մտնէ

ամեն տեղ, զօդի, կապի բոլորին իրար հետ, զառնայ հասարակական, մշակութային մնե ուժ, զառնայ զպրոց, երգ, զիրք, մանի ամեն խրճիթ և պալատ, լինի գործիքը նոր չինիչ, մնե զաղափարների, ըդգացումների: Նրա շուրջը պիտի հաւաքուի և նրա միջոցով պիտի ստեղծուի այն ինչ կոչում ենք՝ հայութիւն: 400-ական թուերի մտածողների, գործիչների առաջ դրուած էր նոյն հարցը՝ ինչ որ Ներսէսի և իր գործակիցների առաջ, ասացինք, որ Ներսէսը ճիշտ նպատակին դիմեց սխալ ուղիներով, այժմ հինգերորդ զարի սկզբի գործիչները ճիշտ նպատակին դիմում են ուղիղ ճանապարհով:

---

Գրերի զիւտի վերայ աշխատեց մէկ սերունդ, որ սովորել էր Ներսէսի դպրոցներում և տեսել էր Հայուսաւանի անկախութեան կորուստը: Գիրը գանուեց Արշակունիների հարստութեան անկումից քսան տարի առաջ: Հետեւապէս Հայոց քաղաքական կեանքի այդ տագնապների մէջ՝ գիւտը արդիւնքը պիտի լինէր գերազոյն ճիգերի, ծըրագրուած որոնումների: Դեկավարութիւնը տեսնում էր հայութեան անսաոյդ և վանճաւած ապագան: Արշակունիների պետութիւնը, թէպէտ անկատար, բայց և այնպէս Հայոց միութեան մէկ ձեւն էր: այժմ այդ միութիւնը չկար, Արշակունիները ընկնում էին ընդ միշտ: Նրա հետ թուլանալու էր նաև Հայոց սազմի ուժը՝ նախարարական և սասանիկ բանակը, նրա անկումով քաղաքական կեանքի սապարէզգից պիտի քաշուէին մի քանի նախարարական տներ, որոնք մինչ այդ, խոշոր գործեր էին կատարել: Մամիկոննեանների հոչակը ոչ միայն իրենց տոհմի սազմունակութեան մէջ էր, այլև այն բանի, որ նրանք Արշակունիների-սպարապետն էին, և Հայոց բոլոր զինեալ ուժերի հրամանատարները:

Արշակունիների թուլացումով պիտի արժէքազրկուէր նաև հայոց լեզուն, որ տեղ էր բոնել արբունիքում, զարգանում էր նրա հովանու տակ, որպէս պաշտօնէութեան, «աշխարհածովովների», բանակի հրամանատարութեան, գուսանական երգերի լեզու: Քաղաքական անօթի հետ լեզուն էր, որ սատիճանաբար կապող, զօդող ուժ էր զառնալու հայ կեանքում: Արշակունիների անկումով՝ պիտի սեղմուէր նաև Հայոց լեզուի գործածութեան սահմանը: Նրան փոխարինելու էր տեղական և ցեղական հիմքերով բարբառները: Նախարարների զըզեակները, ամրոցները զառնալու էին այդ բարբառների կենտրոնները, պալատական գուսաններին փոխարինելու էին նախարարական կեանքն ու կենցազը երգող աշուղները: Պալատը փոխարինուում էր զզեակով, թագաւորը՝ նախարարով, լեզուն՝ բարբառով, համապետական նպատակները՝ տեղական շահերով: Փոխուում էր մէկ ամբողջ ընկերային

կարգ ու սարգ, մէկ լեզու, բանահիւսական մէկ վէպ, որի կենտրոն նում ընկած էին մեր միծ արքաների զորձերը եւ այժմ ընկերացին և քաղաքական այս տագնապի պահուն բարձրացաւ մէկ նոր խաւ, որ իրեն յայտարարեց ժառանգը հին արժէքների: Արշակին և Պապին յաջորդեց Սահակը և Մեսրոպը: Սրանք չթողեցին, որ հայ լեզուն անգործածութեան մէջ կորչի. սիփականացրին այն և դաբճրին եկեղեցու լեզու, զրի և գրականութեան լեզու, ճիշդ այնպէս, ինչպէս արեւմուտքում լատին լեզուն կայսրութիւնից ժառանգութիւն անցաւ կաթոլիկ եկեղեցուն, զարձաւ ամբողջ Եւրոպան միացնող մեծագոյն զորձեքներից մէկը: Իրենց գործի հէնց սկզբից մեր վերածնիչները ունէին հայ հոգու և մաքի արտայայտիչ լոււազոյն միջոցը, որ և զարձաւ զոյութեան հիմքը: Քաղաքական անօթը փշուեց այն պահուն, երբ ստեղծում էր մշակութային և լեզուական հայութիւնը, Վերջին Արշակունի մեծ թագաւորը զում էր զալիք վանանը, ուստի իր բոլոր ուժերը նուիրեց, միացրեց Սահակի և Մեսրոպի ջանքերին ստեղծելու, հիմնաւորելու նոր հայութիւնը: «Ալլեւս նեարաւոր չեր ուզմակաղաքական կոլիք. ահա այն մեծ փոփոխութիւնը, որ սիփառն էր փոխութականութիւնը — ասում է Մ. Աբեղեանը — մնում էր ուրեմն միայն ներքին յենարանը, ներքին ուժերը օրացել եւ նրանց վերայ յենուելով՝ կուլտուրական պայքար մղել պարսկական ձգումների դեմ»\*):

Այդ պայքարը արգէն սկսուած էր չորրորդ դարում, բայց կիսատ, անկատար: Այդ պայքարը հինգերորդ զարի սկզբին ստանում է նոր թափ և պսակում յաջողութեամբ: Չորրորդ զարի վերջին հայ կղերի մէկ խումբ աշխատում էր՝ հաւաքուած Սահակի և Մեսրոպի շուրջը: Նրանց աշխատանքը զոյզ էր ընթանում Խոսրով Գ.ի և իր գործակիցների աշխատանքին, որոնք ջանում էին պահել իրանական Հայաստանը, բոլոր կինսունակ ուժերը հաւաքել այնտեղ: Այս միտումն էր զահ բարձրացրել Սահակին և վանականութեան կանչել Մեսրոպին: Խոսրովի և իր շուրջը հաւաքուած մարգկանց աշխատանքը քաղաքական գունաւորում ունէր: մինչ Մեսրոպի որոնումները գնում էր այլ ուղղութեամբ: Այս պատճառով էլ նա լքում է զինուորական վարչական ասպարէզը: Նա մէկ մարդ էր, որ ամենից առաջ լսում էր իր ներքին ձայնին, խղճի թելագրանքներին: Այդ ներքին ձայնը մշակուեց և համոզմունք զարձաւ քրիստոնէական միջավայրում և հելենական զրքերի ընթերցումով: Բատ Հ. Ն. Ակինեանի նա իր ուսումը կատարելագործել է Սնտիոքում և աշակերտակից է եղել նրանց

\*) Մ. Աբեղեան. Հայ հին գրականութեան պատմ. I. էջ 83:

որոնք քիչ յետոյ ընդհանուր եկեղեցու միծագոյն դէմքերը գարձան։  
Իր հակումներով նա աւելի կրօնաւոր էր։ «Ասա սիրեաց զմենակուրեան  
զիւրա»։ «Ճռմկալ» էր։ որոնում է անապատը, ինքնամփոփ, ճրգ-  
նական կեանք վարելու։ «Ասծու ծառալութիւնը» դերադասում է  
«մաքմնական պատիւներից», ուստի ամերկացաւ իշխանական ցանկու-  
թիւններից։ Նա իրեն յանձնում է «միանձնութեան», լիոնակեցու-  
թեան, բանջարածաշակութեան, կեանքից վերցնում է նուազազոյնը՝  
բարձրագոյն հոգեկան աշխարհը մշակելու համար։ Կատարելագործելով  
իր մէջ քրիստոնէան՝ նա չի հետապնդում միայն իր անձի փրկու-  
թիւնը։ Նա ուզում է ուրիշներին էլ առաջնորդել զեպի կատարեալ  
կեանքը։ ուստի չի կարուսմ աշխարհից, ունի աշակերաներ, որոնց  
սովորեցնում է, վարժեցնում է խստակեաց կեանքի և հոգեկան որո-  
նումների։ Իր աշակերանների հետ ճգնում է ու քարոզում Գողթն զա-  
ւառում, որ հնուց անտի հեթանոս կենցաղի, զուսանական երգերի  
հայրենիքն էր և ուր հին կենցաղն ու բարոյականը կենցանի էր, ներ-  
շընչող իզուր չէ, որ կորիւնը Գողթնը կոչում է «անեկարգ եւ ան-  
խրնամ» աշխարհ։ Մեսրոբը աշակերանների հետ քարոզում է քրիստո-  
նէութեան լոյսը և հալածում է հին կենցաղի մարդկանց, որոնք ողե-  
ւերի զանազան կերպարաններով փախան, բնկան Մարերի կողմե-  
րը\*): Միսիոնարական այս փորձի մէջ նա էլ հանդիպեց այլ զժուա-  
րութիւններին, ինչ որ անոնք էին ներսէսի բալոր աշակերանները։ Այս  
քարոզութեանց ժամանակ է, որ Մեսրոբը մտածում է սիամայն աւ-  
խարհի ծողովրդի մխիթարելու մասին։ որովհետեւ «Տրտմութիւն և ինձ  
համար եւ անպակաս են իմ սրտի ցաւերը իմ եղբայրների եւ ազգակից-  
ների համար»։ Ուրիշն ցաւն ընդհանուր է, միջոցն էլ պիտի լինի ընդ-  
հանուր։ Ի վերջոյ նրա մտքերը գնում են այն ուզութեամբ, թէ  
ընդմիշտ պիտի հրաժարուել ասորերէնի և յունարէնի միջոցով հային  
քրիստոնեայ զարձնելու մարքից։ Պէտք է հայ գիր և զրականութիւնն  
մատչելի, հարազատ լիզուով։ Այս իր մտածումները նա յայտնում է  
Սահակին։ «Երանելի միաբանների» ծողովը իւրացնում է այս միաքը։  
Նրանց իր գործոն աջակցութիւնը բերում է Վասահապուհ թագաւորը։  
Աշխարհիկ և հոգեւոր իշխանութիւնները զործում են միասին։ Ակիզ-  
ըը բաւարարում են Դանիէլեան նշանագրերով, որ հարաւային Հա-  
յաստանի զործածութեան համար յօրինել էր Դանիէլ ասորին։ Բայց  
այս գրերի զործածութիւնը ցոյց տուեց, որ նրանք պակասաւոր են,  
թերի։ Նրանք չէին կասուցուած հայոց հնչիւնաբանութեան վերայ։

\*.) Կորիւն՝ Վարք Մատոնցի — աւխարհ։ — քարզ. Մ. Աբեղեան.  
1941 նրեւան. էջ 41:

չէին արտայայտում հայոց հնչիւնների բազմազանութիւնը և հարըս-  
առութիւնը։ Պէտք էր նորը յօրինել, նշանների մէկ այնպիսի շարք,  
որ չափուի և ձեւաւորուի հայոց հնչիւնների լիութեամբ արտայայտե-  
լու վերայ։ Այս պատճառով էլ Մեսրոպը չի ընդորինակում իր ժամա-  
նակի արեւելքի լեզուներից որևէ մէկը ամբողջութեամբ։ Անկասկած  
նա լուսպէս ծանօթ էր իրանի և յոյն լեզուների հնչիւնական կարո-  
ղութեան և որպէս մեծ գիտնական-հնչիւնաբան օգտուել է նրանցից։  
Բայ նա զիտէր և այն, որ իր ճամանակի աղբիւրներից եւ ոչ մեկը  
եւ ոչ նոյնիսկ յունարկենը բաւական չէին հայոց լեզուի բոլոր հնչիւնա-  
կան հարստութիւնն արտայայտելու համար։ Դանիիեան նեանագրերը  
նոյնպէս թերի էին դուրս եկել»\*): Եւ թերի էր նրա համար, որ զիւ-  
տարարը օտար էր և անշուշտ զիւտն էլ չափուած էր օտարի հնչիւ-  
նական ունակութիւնների վերայ։ Մեսրոպը հայոց հնչիւնաբանութեան  
հանձարեղ զիտունն է. զիտէ նրա բոլոր նրբութիւնները։ «Մեսրոյ-  
եան նեանագրերը» — այսպէս անուանել է Մ. Խորենացին ։ Իմբեր-  
ւած են կատարեալ հնչիւնական սկզբունքի վերայ, որ ե՛ ամեն հնչիւն  
իր առանձին տառ պիտի ունենայ եւ ամեն տառ մեկ հնչիւնի արտա-  
յայտիչը պիտի լինի։ . . . Մասոցի ալիքարեսի այս կատարելութիւնը  
հետեւանք է նրա հեղինակի իր ժամանակի, նոյնիսկ մեր ժամանակի հա-  
մար զարմանալի խորին ծանօրութեան հայերենի հնչիւնական դրութեա-  
նը, մեր լեզուի բազմարիւ հնչիւնների նուրբ տարբերութիւններին\*\*):  
Մրանով էլ մեկնաբանելի է հայ լեզուի արագ նուաճումը հայութեան  
բոլոր խաւերին, տարածումը բոլոր գասերի մէջ և նրա կատարեալ և  
բազմազանի արտայայտիչ լինելը հայոց հոգեմատաւոր կարողու-  
թեանց։ Մնում էր միայն, որ հայ միտքը ճիգ անի բառեր, գարձ-  
ուածքներ յօրինի արտայայտելու այն բարդ մտքերը, որ գրերի գիւ-  
տից յետոյ յայտնուում էին մեր աշխարհում յոյն գրականութեան, կը-  
րօնական գրուածքների և փիլիսոփայական երկերի ուսումնասիրու-  
թեամբ։ Այս բանն էլ հայ լեզուն և միտքը կատարեցին մեծ յաջո-  
ղութեամբ։

\* Իր գործը արդիւնաւորելու համար Մեսրոպը աշակերտաների հետ  
զիտական մէկ արշաւ է կատարում Ասորիք՝ ծանօթանալու ժամանա-  
կի զիտունների հետ, քննարկելու նրանց հետ իրեն հետաքրքրող հար-  
ցերը։ Բայց օտարները նրան շատ քիչ են օժանդակում, և նա եր-  
կար, ինքնուրոյն պրատումներից յետոյ է, որ գլուխ է բերում հետա-  
պնդած նպատակը՝ հայ գրի յօրինումն։ Սամսատի մէջ մէկ յոյն զի-  
տունի օգնութեամբ ձեւաւորում է գրութիւնը, զասաւորում է տառե-

\*) \*\*) Մ. Աբեղեան. Հայ Հին գրականութ. պատմութ. I. Էջ 581-582:

ըը և առաջին անգամ թարգմանում մէկ հատուած՝ Աստուածաշնչից Սյս մեծ գործը կատարւում է 406—407 թուերին։ Սրանով հայութիւնը մանում է զիր ունեցող ազգերի շարքը։ Մինչ այդ տիրապետող ասորիերէնը «մուրացածոյ բարբառ» էր։ այժմ հայ լիզուն փոխարինում է նրան։ Օտարի այդ զիրը հայութիւնը գործածեց մի քանի դար։ Բայց օտար լեզուն մեծապոյն արգելքն էր հայ մտքի անկաշկանդ զարգացման։ Այժմ այդ արգելքը վերացաւ։ Եւ այդ մեծ զործը Մեսրոբի հաճարի արգիւնքն էր։ Ի հարկէ ժամանակի գիտակից խաւը զգում էր այդ պահանջը, որոնումն ընդհանուր էր։ Մեսրոբը այդ համատրած պահանջին է, որ բաւարարեց։ Բայց այս չի պակասեցնում նրա արժեքը, չի դարձնում նրան շատերից մէկը, այլ միակը, մեծը, չկրկնուողը, եղակին։

Հայ զիրը բազմապիսի հետեւանքներ պիտի ունենար։ Ամենից առաջ չափազանց մէծ էր նրա ընկերալին արժեկը։ Հիմա հայ զիրն իմացող, հայերէն կտրդացողն է, գրողն է, որ առաջնութիւնը պիտի վայելէր, զիրք գրաւէր հայկական կեանքում։ Հայոց եկեղեցին, նրա նուիրապետութիւնը պիտի հայանար, ազգայնանար։ Կղերի աձնիակազմը օտար էր, ասորի, յոյն, հայը միայն զործակից էր։ Այժմ զիրքերը պիտի փոխուէին։ Հայ կղերն է, որ վարիչը պիտի լինէր մեր կեանքի, օպարը միայն գործակցու։ Սենդում եր նայ ղեկավարութիւնը՝ կղերական ղեկավարութիւնը։ Նա իր ձեռքն էր առնելու հկեղեցու վարչութիւնը, զպրոցները, նա պիտի զառնար եկեղեցական հասոյթի տէրը։ Ուրեմն բարձրանալու էր, մեծանալու էր որակով և քանակով մէկ զառ, նոզեւոր նուիրապետութեան դասը։ Սյս առաջին մէծ հետեւանքն էր զրերի զիւտի, ձիշդ է ասորական հոսանքը զեռ շատ ուժեղ էր և յենուած իրանի իշխանութեան վկրայ և նոյնիսկ մինչեւ հինգերորդի դարի 40-ական թուերը կաթողիկոսութիւնն էր պահել իր ձեռքին։ Նա պայքարում էր այս «նոր մարդկանց» դէմ իր զիրքի, նիւթական հասոյթների համար։ Ձիշդ է 40-ական թուերից ասորիները իրենց տեղը զիջում են հայերին, սակայն ասորական մըտայնութիւնը՝ որպէս քաղաքական զիմաշրջում, որպէս մտքի պատրաստութիւն և կենցաղ մնում է հայ կղերի մէկ մեծ մասի շրջանակում։ Եւ հին պայքարը շարունակում է, բայց այժմ հայ կեանքում զործող երկու հոսանքների մէջ։ Սաեղծում է երկու տարրեր, իրար միրժող մշակութային-քաղաքական հոսանքներ։ Սյս բանը իր արտայայտութիւնը գտնում է նաև զրականութեան մէջ։ Երկու հոսանքներն էլ աշխատում են հիմնաւորել իրենց տեղը և արժեքը, անցեալը օդնութեան կանչելով։ Յունամիաների շրջանակից զուրս է զալիս Գր. Լուսաւորչին, նրա միխիտնաբական գործին նուիրուած գիրքը՝ Ազարանցեղոսի պատմութիւնը։ Հայերի դարձը, քրիստոնէութեան տարածումը

և պիտականացումը ամբողջութեամբ Դր. Լուսաւորչի գործն է: Նա իր կրթութիւնը ստացել էր Կեսարիայում, յունական քրիստոնէութեան մարդ է: Այս գիրքը շարահիւսում է այն ոզով, որ կարծես Հայաստանում Լուսաւորչից առաջ չէ եղել որեէ քրիստոնեայ և քրիստոնէական համայնք: Զի յիշում և ոչ մէկ անուն որ գործած լինի Հայաստանում Լուսաւորչից առաջ: Ագաթանգեղոսի մէջ, ինչպէս առում է Ակադ. Ստ. Մալիսասեանը այսնական օրինացիան իր գագարնակեսին է հասցուած»\*):

Ասորական հսաննքի մարդիկ լուս չմնացին այս ելոյթի հանդէս: Նրանք էլ փորձեցին զրական հիմաւորում աալ իրենց հնութեան և հայութեան մէջ քրիստոնէութեան առաջին տարածողի պատիւն իրենց վերապահել: Այս նպատակով թարգմանուում է ասորերէնից Լաբուբնալի գիրքը: Ըստ այս գրքի ասորական բնագրի Թագէսս առաքեալը քարոզում է Եղեսիայում և մեռնում այնաեղու Հայ թարգմանիչները փոխում են այն: Թագէսս առաքեալը Եղեսիայում քարոզելուց և ժողովրդին օրհնելուց յիտոյ ուղեւորում է «արեւելի»: Այս արեւելիքը Մանզուխա կոյսի վկայարանութեան մէջ գարձել է Հայաստան, ուր Թագէսսը նահատակւում է Մանզուխա կոյսի հետ Հայոց Մանաւուկ թագաւորի հրամանով: Ըստ Ստ. Մալիսասեանի «այս երկու գրուածքները, որոնք սկիզբ են առնում Ասորելից, նապատակ ունին նաև մացնելու Կեսարացի հարողիչ Գրիգորին, երա տեղ դնելով երկու նահատակուած առաքեալը\*\*): Գրական այս պայքարի արդիւնքն է նաև Դ. Փարպեցու նշանաւոր «Մելպագրութիւն սախիսու աբեղայից» թուղթը՝ ուղղուած Վահան Մամիկոնեանին:

Գրերի գիւտը հայ կղերական զասի մէջ ստեղծում է մէկ խաւ, որի սաղմերը միայն կային չորրորդ զարում: Դա հայ մաւորականութիւնն է: Գրականութեան, զպրոցի միջոցով նա որակով և քանակով մեծացաւ: Նա երեւան է գալիս որպէս թարգմանիչ, ուսուցիչ, մտածող, հեղինակ: Իր հոգեւոր ձնունդը նա ստանում է քրիստոնէութեան զրականութիւնից, աստուածաբանութիւնից, եկեղեցական հայրերի երկերից, գաւանաբանական աշխատութիւններից: Բայց նրա մտաւոր կառուցումը կատարում է նաև յոյն փիլիսոփաների, քերական-լեզուաբանների երկերի ուսումնասիրութեամբ: Հինգերորդ զարի մեր մտաւորականութեան մէջ էլ աստիճանաւորում կար: Ումանք ստեղծում էին հոգեկան-մշակութային արժէքներ, ումանք տարածում էին, ժողովրդականացնում այդ արժէքները, նոր զագափարները: Բայց եր-

\* ) \*\*) Ակ. Ստ. Մալիսասեան. Խորենացու առեղծւածի տուրքը. 1940, Երեւան. էջ 132:

կուսի մէջ մէկ ընդհանուր բան կար՝ հանրութեան ծառայելը, երա վերելին սպասարկելը: Նա հանրային գիտակցութեան չափանիշն է, ի՞նչպէս և հանրային գաղափարների գործիքը: Նա առաջնորդում է զանգըւածներին, բարձրացնում է նոր գաղափարներ հասկանալու, նոր հաստատութիւններ ստեղծելու, նոր բարոյական սկզբունքներ իւրացընելու աստիճանին: Մտաւորականի միջոցով ազգերն ստեղծում են այն տարրը, որի գործը լինում է տեւական մաքի, գաղափարների, իդէալների սրանում: Բարձրորակ մտաւորականը ստեղծող է, կերաող գրոնի, գիտութեան, հանրային մտքի, փիլիսոփայական սիստեմների: Առանց այս ընկերային խաւի՝ չկոյ վերելք, շարժում, գաղափարների պայքար, գարարջանների յաջորդումն, իդէալների հետապնդումն: Ազգութիւնը առարկայօրէն գոյութիւն ունի վազնջական շրջաններից որպէս կենցաղ, քաղաքական այս կամ այն ձեւի կաղմակերպութիւն, որպէս գործող և պայքարող միաւոր, բայց նա իր հաւաքական գիտակցութեան հասնում է միայն մտաւորականութեան հանդէս գալով:

Հինգերորդ գարումն է, որ երեւան է գալիս մեր մտաւորականութիւնը և հայութիւնը նրա միջոցով հասնում է ինքնաճանաչութեան՝ հետապնդում է իր ոգեկան հարստացման և հակադրում է իրեն ուժիչներին: Այս մտաւորականութիւնը փորձում է կառուցել նոր հայութիւնը և հաւաքել Երան եկեղեցու ուրցը՝ ճիշտ այնպէս ինչպէս Սրբակունիները փորձում էին հայութեան հաւաքել պետութեան մէջ: Դործը միւնոյնն էր, գործոն ուժերն են տարբեր: Կղերական շրջանակից բարձրացող մտաւորականը երեք բան ունի իր ձեռքին՝ լեզուն, եկեղեցի եւ դպրոց, որոնցմով ճիզ է անում կառուցել հայոց ազգայնութիւնը: Հաւաքական ինքնանաշումը կատարում է կրօնի նիմեով եւ նինգերորդ դարի մեր մտաւորականութիւնը ստեղծում է կրօնա-եկեղական հայութիւնը. Եա բռնեց հաղաքական հայութեան տելը:

Ամրանալու, հաստատ արմատներ բռնելու համար՝ հայ կիանքի մէջ՝ հայ կղերը գրերի գիւտից անմիջապէս յետոյ ձեռնարկում է միշտա աշխատանքների: Նախ բացւում են զպրոցներ: Արշակունի իշմաստան թագաւորը՝ միկենատն է հանդիսանում նոր կրթական հաստատութիւնների՝ օժանդակութիւն է տալիս պետական միջոցներից. անշուշտ եկեղեցական կալուածների հասոյթների մէկ մասն էլ զնում է այդ նպատակին: Վաղարշապատում հիմնում է կենտրոնական զըպրոցը. գաւառներում՝ վանքերին կից կառուցւում են տեղական զըպրոցներ: Այս գրպացներում սովորեցնում են հայ ուսուցիչները՝ առաջին հերթին ինքը՝ Սահակը, Մհարութը: Նրանց օգնականները անշուշտ հայեր էին՝ տեղական ասորայունական զպրոցներում ուսածները, կամ արտասահմանում իրենց ուսումը կատարելազործածները, սրոնք ունէին գիտութիւն, այժմ միայն պիտի իւրացնէին հայոց:

այլուրէնը։ Հաւանաբար սկզբում գործը դանդաղ էր առաջ գնում՝ ուսուցչական միծ անձնակազմ չունենալու հետևանքով։ Հէնց այս պակասը լրացնելու համար է, որ մի քանի անգամ ուսանողների լըմբեր են ուղարկում Բիւզանդական միծ քաղաքները շնելենական դրաբութեան» մէջ կատարելագործուելու։ Ի հարկէ գրերի գիւտից անժիշտապէս յետոյ ասորական և յունական զպրոցները չգազարեցրին իրենց գործունէութիւնը, բայց նրանց կից սկիզբը է առնում է ազգային դպրոցը, որ աստիճանաբար միայն գուրս է առնում ասպարէզից օտար կրթական հաստատութիւնները։ Բնական է սրա հետ մէկ տեղ ըստառարաթիւ օտար ուսուցիչներ և նրանց գործակից հայ պաշտօնեաններ պիտի զրկուելին իրենց նիւթական հասոյթից, պատուաւոր դիրքերից և պայքարի պիտի մանէին՝ այժմ միայն առաջնութիւն ձեռք բերած հայ մտաւորականութեան դէմ։

Դպրոցական-կրթական այս գործին Մեսրոբը մասնակից է անում նաև Այսրկովկասի երկու քրիստոնեայ ժողովուրդներին՝ աղուաններին և վրացիններին։ Կրօնական հիմքերով արդեմ սեղծուած էր Այսրկովկասեան միուրիւնը, Գրերի գիւտը աւելի հիմնաւորում և ամրացնում է այդ միութիւնը։ Երեք ազգերը այժմ հաղորդակից են լինում քըրիստոնէութեան ուսմունքին։ Հինգերորդ զարեսկզրի մշակութային միծ շարժումը համակովկասեան ծաւալ է ստանում։ Եւ այս շարժը-ման զլուխը կանգնած էրն հայերը, որովհետեւ, թէպէտ և անկախութիւնը կորցրած, բայց և այնպէս Հայաստանը զեռեւ, ռիանուր հիւսիսականաց վեհագոյնն» էր։ Երեք ազգերի կրօնա-մշակութային՝ այս գործակցութիւնը և միութիւնը՝ հայերի առաջնութեամբ՝ տեւեց մինչեւ հօթներորդ գարի սկիզբը։ Մարզպանական Հայաստանի սահմանների սեղմուելով, քաղաքական թուլացման և հայ նախարարութեան ցրիւ գալու հատեւանքով՝ վրացինները զաւանապէս բաժանուեցին հայերից, խզեցին ամեն եկեղեցական կապ հայ կաթողիկոսների հետ և միացան Բիւզանդիային։ Վրացինները առաջին հարուածը հասցըրին Այսրկովկասի ազգերի միութեան։ Ապա 11—13րդ զարերում Միջին Ասիայից գաղթող սկլզուկներն ու թաթօրները ստուարաթիւ զանգուածներով հաստատուեցին Աղուանից աշխարհում և աստիճա՞նաբար իրենց մէջ համաձուլցիցին բնիկ ազուան ժողովրդին, որի մէկ մասն էլ գաղթեց Հայոց լիսնաշխարհը՝ հայացաւ, մէկ մասն էլ համաձուլուեց վրացինների հետ։ Այսրկովկասի միութեան քայլքայումից յետոյ հայութիւնը մնաց մենակ։

Ազուաններին և վրացիններին մասնակից անելը նոր զպրոցական-կրթական գործին հայերի համար յենաբաններ և զաշնակիցներ ունենալու հարց էր։ Եւ այդ յաջող մտածում էր։ Նոյն հինգերորդ զարում

Կրեք ազգերի զեկավար՝ նախարարութիւնները սազմի դաշտում միասին էին պաշտպանում Այսրկովկասի ընդհանուր շահերը:

Բայց կրթական այս վերածնութիւնը կատարւում էր միայն իշխանական Հայանատանում: «Կևս ազգն Հայոց», որ ապրում էր Բիւղաղական սահմաններում մասնակից չէր այս վերելքին: Հայոց ազգայնացման և ինքնաճանաչումի այս գործը իր մէջ պիտի առնէր և յունական Հայաստանը, եթէ նա ուղղում էր լինել ամբողջական և կատարեալ: Կ. Պոլսի արքունիքը տրամադիր չէր իր սահմաններում ապրող հայութեան ազգայնացումին նպաստելու հայ գրի և դպրոցի միջոցով: Անհրաժեշտ է լինում, որ Միսրորը անձամբ Կ. Պոլիս գընայ: Կայսերական զեկավարութիւնը այդ հարցը քննարկում է Բիւղանդական շահերի տեսակէտից: Լաւագոյն պիտի լինէր ի հարկէ եթէ իր սահմանների հայութիւնը առնէր յունական մշակոյթի մէջ մանաւանդ, որ եկեղեցիների բաժանման խնդիր չկար և հայ-յունական դաւանաբանական վէճերը չէին սկսուել: Բայց կար և քաղաքական չահը: Այդ միջոցի կիրառումով նա ընդմիշա յետ պիտի վանէր իրանից հայութեան մեծագոյն մասը, որ ապրում էր Իրանական Հայաստանում և որի զեկավարութեան մէկ մեծ թեւք մշակոյթով և քաղաքականութեամբ հակուած էր Բիւղանդիային: Բիւղանդական Հայաստանում թոյլ տալ հայ գարոցներ բանալ, հայոց լիգուն ուսուցանել՝ նշանակում էր նորանատել յունական քրիստոնէութեան ծաւալման, նրա գրականութեան, նրա լիզուի տարածման՝ սահմանից այն կողմը և յունական հոսանքի ուժեղացման իրանական Հայաստանում և նրա միջոցով էլ՝ Ազուանքում և Վրաստանում: Այս պիտի լինէր խաղաղ կրթական պայքար Այսրկովկասի քրիստոնեաների միջոցով իրանական կրօնի և քաղաքական զերիշխանութեան զէմ: Այսպիսի վերաբերումը պիտի նպաստէր նաև առորական քրիստոնէութեան թուլացման Հայաստանի մէջ, այսինքն այն ուժի, որի վերայ յենուում էր Իրանի զեկավարութիւնը: Զգէտք է մոռանալ, որ ճիշդ այն ժամանակներում 410 թուին Իրան-ասորական քրիստոնէութիւնը կազմակերպւում էր և գոռնում առանձին եկեղեցի և փորձում էր բոլորովին անկախանալ ապրեւմուաքից» ոչ միայն այսքան, այլև Սելևկիայի ասորական և կեղեցու պետք ճիգ էր անում իր իշխանութեան տակ առնել նաև հայոց եկեղեցին: Զմտածուած քայլ պիտի լինէր իրանահայութեան մէջ սկսուած կրօնական ազգային շարժումը չխրախուսել, հայերին չկապել իրեն հետ, չնովանաւորել:

Բիւղանդիան այս և ուրիշ պատճառներով յարգեց Մեսրոպի զիւմումը և թոյլ տուեց, որ իր սահմանի մէջ գտնուող Հայաստանում գարոցներ բացուին և հայ լիզուն ուղարենու նոյնիսկ պիտական զանձարանից նպաստ որոշուեց նոր բացուող գարոցների համար: Այս բա-

նը մէկ շատ մեծ յաղթանակ էր հայութեան համար . այժմ երկու Հայաստանների մէջ էլ տեղի էր ունենում նոյն հոգեւոր-մշակութային վերելքը , երկուսն էլ ապրում են միեւնոյն հարցերով , ունին միեւնոյն մտահոգութիւնները և դիմում են միեւնոյն նպատակին : Բայց ինչպէս երեւում է Կ . Պոլսի արքունիքը հայ զեկավարութեան պարտազրել էր որոշ պայմաններ : Տեսանք որ ըստ Մ . Խորենացու , յոյները դժգոհ էին հայերից՝ նրանց մշակութային զիմաշրջումի համար : Այժմ նրանք պարտաւորեցնում են հայերին , որ նրանց ուսանողները կատարելագործութին Բիւզանդական դպրոցներում եւ իրօք զրերի զիւտից մէկ երկու տասնեակ տարի յետոյ մենք նկատում ենք ընդհանութեար մէկ հսուանք ուղղուած Ազէքսանդրիա , Բիւզանդիա . . . Նոյնպէս այս թելազրանքի , պահանջի արտայայտութիւնը պիտի համարել Սատուածանչի ասորերէն թարգմանութեան ուղղումն , նոր խմբագրութիւնը՝ յունական օրինակի վերայ : Գրի զիւտը և զպրոցը մօտեց հայերին՝ յոյների հետ . այդ մօտեցումը մշակութային էր . բայց նա կարող էր հիմք ծառայել նաև քաղաքական մօտեցումին : Ծատ հաւանական է , որ մշակութային այս մօտեցումը նաեւ Սահակի գործը լինէր , որ յունամիտ էր և յունասէր ոչ միայն մշակոյթով , այլև քաղաքական զիմաշրջումով : Այս բոլորը հայոց մէկ ուժեղ՝ յունամիտ հսուանքի յաղթանակն էր և ընդհանրապէս հայ մշակոյթի առաջին այս յաղթանակը այդ հսուանքի գործն էր . ընդհակառակն ասորական հոսանքը : որպէս հոգեւոր ուժ ընկրկում էր . թէպէտ նկեղեցական վայ-չութիւնը իր ձեռնքն էր : Յունամիտ հսուանքի այս նոր յաղթանակը չէր կարող ի նկատի չունենալ Իրանի զեկավարութիւնը , որի ճիգերն ուղղուած էր հայ-բիւզանդական յարաբերութիւնների խղումին : Քզ-կզրում իրանահայութեան մէջ կատարուող այս մտաւոր-կրթական շարժման հանդէպ Իրանի արքունիքը բարեցակամ զիրք էր բռնիւ . այն տեսակէտին էր , որ հայ զիրն ու զպրոցը , հայ զրականութեան սահեղծումը պիտի բաժանեն նրան յոյներից : Հայոց հոգեւոր այս վերածութիւնը նա համարեց ուղղուած յոյների զէմ , ուստի և հանգուրժեց , ոչ մէկ արգելք չհանեց : Հինգերորդ զարի սկզբին Սասանչեան զեկավարութիւնը կարծէք եկել էր այն համոզումին , որ անկարելի է հայութեան մէջ պատուասել մազդեղական կրօնը : Արդ , եթէ այդ բանը անկարելի էր , պէտք էր հայերին բաժանել նաև յոյներից , պահակը նրանց հոգեւոր հովանիից : Այստեղից էլ այն բարեցակամ արամազրութիւնը , որ Իրանի արքունիքը երեւան բերեց մեր մեծ վերելքի հանդէպ : Բայց տեսաւ բոլորովին հակառակ երեւոյթ : Հայոց մշակութային շարժումը մօտեցրեց նրանց յոյներին : Այստեղից էլ Իրանի քաղաքականութեան փոփոխութիւնը Այսրկովկասի , մասնաւորապէս Հայաստանի նկատմամբ :

Կրթական-դպրոցական այս շարժումը միայն մէկ դէմքն է այն մեծ զաղափարական հոգեւոր նուաճումի, որ աեղի ունեցաւ Հայոս-տանում: Կար և երկրորդը: Նոր հասնող զրագէտ սերունդի ձեռքը գիրք պէտք էր տալ, հոգեւոր սնունդ մատակարարել նրան: Ինքնուշ-րոյնը գեռ չկար. բնական է, որ դիմէին պատրաստ եղածին՝ յոյն և ասորի քրիստոնէական զրականութեան: Այժմ միայն յոյն և ասորի զրականութիւնները կատարում են իրենց զերը՝ մատակարարում են հայերին հոգեւոր սնունդ թարգմանութեանց միջոցով: Առաջին հերթին թարգմանուում է Աստուածաշունչը, որի թարգմանութիւնը և խմբագրութիւնը լրանուում է միայն հինգերորդ դարի 30-ական թուերի կեսերին: Այս գործի սկզբը զրել էր Մեսորոբը: լրացնուում է Սահակը՝ իր հնատ ունենալով հելենագէտ աշակերտների մէկ խումբ, յատ-կապէս մեծ զեր է կատարել Եղնիկը՝ մեծ աստուածաբանական և փի-լիսոփայական ծանօթութիւններ ունեցող դէմքը իր ժամանակի:

Աստուածանչի թարգմանութիւնը մէկ դարավլուի է Հայոց մշա-կոյթի համար: Կարելի է ասել նրանով է սկսում հայ մշակոյթը: Նա ոչ միայն հայ լեզուի յազթանակն էր, հայ մաքի ճիգը բառեր, դարձ-ուածքներ գանելու նոր զաղափարների, մաքերի համար, այլև մէկ նոր աշխարհի յայտնագործումն էր հայութեան առաջ: Սահակի գըր-խաւորութեամբ աշխատող հայ թարգմանիչները անշուշտ նոր չեին ծանօթանուում Աստուածաշնչին: Նրանք իրենց ձեռքի առակ ունեցել են յոյն և ասորի օրինակները, կարգացել են եկեղեցիներում, զպրոցնե-րում, թարգմանել են ժողովրդի համար, մտածել են ճիշտ, հարազատ թարգմանութեան մասին: հմացել են նրա ուսումնասիրութեան մէջ, ապա այս բոլորի արդիւնքն է, որ լրացել, ամբողջացել է 30-ական թուերի կեսերին: Աստուածաշնչի թարգմանութեամբ հայու-թիւնը իր լեզուով ունեցաւ մէկ գիրք, որ կազմուել էր զարերի ըն-թացքում՝ բազմաթիւ հեղինակների գործակցութեամբ: Աստուածա-շնչը հրէութեան հաւաքական կենսագրութիւնն է՝ պատմած իր իսկ ժողովրդի կողմից՝ յետոյ միայն զրի անցրած: Դա հրէութեան մտա-ծումն է Աստուածոյ, մարգու և կեանքի մասին: Բայց այնտեղ համա-դրուած են ոչ միայն հրէութեան, այլև արեւելեան քաղաքակիրթ ժողովուրգների մտածումն: Աստուածաշնչի մէջ հայութիւնն առաջին, անգում ծանօթանուում էր տիեզերածնութեան և մտրու ծագման մէկ տիսութեան հետ, որը իշխող մեաց մտածութեան մէջ երկար դա-րեր: Նու վերահասու էր լինուում աշխարհի կործանման, ջրհեղեղի և ազգերի ու լեզուների ծագումին: ծանօթանուում էր մէկ «աստուա-ծենակիր» ժողովրդի պատմութեան՝ իր նախնական շրջանից մինչեւ կործանուումը, ցրումը, պարզ կառույցից մինչեւ բարդ ընկերային կազմ ստեղծելը, տեսնուում էր այն ճիգերը, ինչ որ կատարում են մտրու-

ները փրկելու, վերանորոգելու հրէական հասարակութիւնը՝ կրօնական և ընկերային նոր բարենորոգումներով։ Նրա առաջ ցայտուն կերպով զծագրում էր հրէութեան ազատազրտկան շարժաւմները՝ ուղղուած օտարի տիրապետութեան դէմ։ Նրա մէջ հայերը տեսնում էին իրենց պայքարի արգարացումը նորէն օտարի տիրապետութեան դէմ։ Աստուածածունչով հայ ընթերցողը ծանօթանում էր հրէութեան ստեղծած բանաստեղծութեանց, իմաստութեամբ լի առակների, կրօնական նոր գաղափարների, Մովսիսական պատուիրանների հետ։ Եւ այս բոլորը նոր էր, բոլորովին անձանօթ, թարմ, բավանգակալից և վերին աստիճանի հետաքրքիր։ Մի տմբողջ աշխարհ է, որ բաց էր լինում հայութեան առաջ։

Նոր կատակարանը հային տալիս էր նոր կենսահայեցողութիւն։ այնաեղ ծանօթանում էր մէկ՝ բոլորովին ուրիշ բարոյական թելազրանքների հետ։ Տեսնում էր նոր հերոսներ, առաջինը՝ ինքը Քրիստոսը, որ մահ է ընդունում գաղափարի յազդանեակի համար, ծանօթանում էր բարձր իդէալների, կրօնական վեհ սկզբունքների հետ։ Նոր կատակարանը նրան ծանօթացնում էր մեղքի, քաւութեան, արդարութեան, հանդերձեալ կեանքի հետ, պահանջում էր նրանից ճիգ բարձրանալու, կատարելագործուելու։ Նոր՝ կատարելիութեան իդէալն էր տալիս նա քրիստոնեայ հայութեան։ Գործք առաքելոցի մէջ նա ահանում էր նոր մարդկանց՝ նոր հերոսների, նա հանդիպում էր մարդկանց, որոնք մեանում են իրենց համոզմունքների համար։ Նրա առաջ բացում էր մէկ նոր՝ յաւիտենական աշխարհի հեռանկարները և լարում նրա ճիգերը՝ նախապատրաստում նրա համար։ Այս բոլորը նա չէր տեսել, չէր ապրել իր ազգային վէպերի, առասպէլների, գուսանական երգերի մէջ, որոնք այս աշխարհին էին նույիրուած։ Նրանց մէջ կատարելագործութեան ճիգ չկար, բարիի և չարի հակադրութիւնը չկար, մէկ աւելի կատարեալ կեանքի հեռանկարը չկայ։ Հայութեան միաբարը յեղաշրջում էր, բարոյականը երկրնարանքի ենթարկում։ Աստուածաշունչը հայութեան կապում էր քրիստոնեայ աշխարհի հետ, ապրեցնում էր միենոյն գաղափարներով, տալիս էր միենոյն բարոյական իդէալները, առաջարկում էր ընթերցանութեան միենոյն գրքերը։ Անշուշտ հին և նոր կատակարանների կատարած այս յեղափոխիչ գերն ի նկատի ունի մեր Կորիւնը երր գրում է։ «Այն ժամանակ անպայման սխանչելի դարձաւ մեր երանելի եւ ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հաւասարակիցների ձեռքով, յանկարծ, մի անգամից եկան, հասան, հայաբարբառ, հայերենախոս դարձան օրինառուոյց Մովսեսը մարզական դասի նես եւ առաջադեմ Պօլոսը՝ բոլոր առաքեալների զնդով՝ Քրիստոսի աշխարհակեցոյց աւետարանի նետ միասին»։ Բառ նոյն Կորիւնի Հայաստանը մէկ երկիր էր, մեկուսա-

ցած, ապրողիր սահեղձած երգերով, վէպերով, նա աւելոնն անգամ չեր լսել այն կողմերի, ուր բոլոր ասուածային սխանչելի գործերը կատարուեցին: Նա ուսովի խսկոյն իմացաւ բոլոր եղած բաները՝ ոչ միայն ժամանակով կատարուածները, այլև առաջազոյն յաւիտենականութիւնը եւ յեսոյ եկածները, սկիզբը եւ վերջը եւ բոլոր ասուածային աւանդուրիւնները\*):

Եթէ մի կողմից Աստուածաշունչի հայացումը հարստացնում էր հայ ընթերցողի միտքը, ծանօթացնում բոլորովին նոր նիւթերի, աշխարհների հետ, կազապարում նրա կենսահայեցողութիւնը, ապա միւս կողմից նա գառնում էր ազգային գոյութեան հիմնաքար ։ Միայն գրերի գիւտով և նրա գործազրութեամբ է, որ մինք ինքնուրոյնութիւն ենք ստանում և գործում, մտածում մեր անհատականութեամբ։ Իրանիգմը, որի շրջանակում հայերը ապրել էին մի քանի գար՝ մեզ համար այլեւս վահնգաւոր չէր։ «Հայ Աստուածաւոնցը ազատեց հայութիւնը իրանական աշխարհին մեջ ձուլուելու վահնգին։ Ամրացուց քրիսոնուրիւնը Հայաստանի մեջ եւ խաչին նառագայրները նակարեց յարձակողական մազգեզականուրեան կրակին։ Հայաստանը վերջնականապէս փիսուեցաւ քրիսոնեայ դաշտի մը եւ այլեւս այդպէս մեաց դարերու ընթացքին»\*\*): Ուրիմն հայ Աստուածաշունչը ունեցաւ հասարակական մեծ արժէք, նպաստեց ազգային ինքնաճանաչութեան, Պատահական երեւոյթ չէ, որ գիրն ու գպրոցը, Աստուածաշունչը երեւում են Հայաստանում, անկախութեան անկումից յիտոյ և Արշակունիների հարստութեան վերանալուց մի քիչ առաջ։ Սրանք դէպքեր են՝ իրար հետ սերտօրէն կապուած։ Աստուածաշնչի հետ միասին թարգմանուում են նաև ուրիշ գործեր, որոնք անհրաժեշտ էին եկեղեցու գործածութեան համար։ Արդէն ամբողջացած էր յոյնասորի հեկեղեցիների արարողութիւնները, ժամերգութիւնները, ծէսերը, երգերը, քարոզները։ Եկեղեցին ստեղծել էր հսկայ գրականութիւնն, առաջ էին եկել նրա մէջ մեծ գէմքեր, որոնք թողել էին գլական մեծ ժառանգութիւնն՝ նամակներ, ջատագովութիւններ, Ս. գրքերի մեկնաբանութիւններ, մշակուել էր վկայաբանական գրուածքների ձեւերը։ Այս բոլորը հայ մտաւորականները ջանում են հայացնել և մատչելի գարձնել հայ ընթերցողներին։ Սահակը «Եկեղեցական գրքերի» թարգմանութեամբ է զբաղւում, այսինքն՝ ժամերգութեան, պատարագին, տօնականին նուրիրուած գործերը, ինչպէս և «Սուրբ հայրապետների

\*) Կորիւն. Վարք Մաւսոցի. էջ 57:

\*\*) Ն. Սղոնց. «Հայացած Աստուածաւոնցը». «Յուշարձան աստուածանի հայերէն քարգմանու թեան 1500-ամեակի»։ Երուսաղէմ. էջ 319։

նեմարիս խմասութիւնն» է հայացնում՝ այսինքն աստուածաբանական-զաւանաբանական գրուածքներն է թարգմանում։ Նոյնիսկ օտար դրական-կրօնական կինարօնները հասուն և պատրաստ մարզիկ են ուղղարկում տեղինութեղը աշխատելու և հայացնում կատարելու։ Այսպէս Յովաէփր և Եզնիկը դործառագրում են Եղեսիք՝ «ասորական սուրբ հայրերի աւանդութիւնները» հայերէն թարգմանելու։ Կ. Պոլիս զնացածները՝ հինգերորդ գարի երեսունական թուերին ծանօթանում են զաւանաբանական մեծ վէճերին, որ ծայր էր տուել ընդհանուր եկեղեցու մէջ, կատարելագործում են հելինական ուսմունքների մէջ և վերագրանում են Հայաստան «Ընուհագիր հայրերի աւանդութիւնները» բերելով։ Ապա երբ Մեսորը վերացանում է Բիւզանդիայից, բերում էր իր հետ՝ քրազում ընուհագիր մատեանս զիարցն եկեղեցւոյ սացեալու։ Համահայկական այս վերելքի մէջ անշուշտ շատ մեծ մասնակցութիւն պիտի ունենար յունահայաստանի մտաւորականութիւնը, որ աւելի լաւածանոթ պիտի լինէր յունարէնին։ Թարգմանութեան նիւթմատակարարում են թէ ասորական և թէ յունական գրականութիւնը։ Հայ մտաւորականութիւնը ազատագրուեց ասորիների մենատիրութիւնից, բայց իր յարաբերութիւնները չխցից ասորական գրականութեան հետ։ Ամբողջ հինգերորդ գարում այդ լեզուից կատարում են թարգմանութիւններ և ասորական գրականութեան փոքր ի տակ կարեւոր հեանակութիւն ունեցող եկեղեցական հայրերից եւ ոչ մեկին անուշագրութեան չեն մատենել հայ քարգմանիշները\*). Բայց ի հարկէ յունականը անհամեմատ աւելի հարուստ և ճոխ գրականութիւնն էր, որին զիմում էին հայ առաջին մտաւորական թարգմանիչները։ Եկեղեցու հայրերի լաւագոյն աշխատանքները թարգմանում են հայերէն։ Հայ ընթերցողը իր մայրենի լեզուով կարգում էր Աթանաս Աշղեքսանզրացու, կիւրեղ երուսաղէմացու, Եւսէրոս Կիսարացու, Բարսեղ Կիսարացու, Գրիգոր Նիսացու, Գրիգոր Աստուածաբանի, Յովհան Ոսկեբերանի գործերը։ Խսկ սրանք իրենց ժամանակի մտքի կոթողներն էին, աստուածաբանական, փիլիսոփայական մտածողութեան բանաձեւողները, որոնց ձայնին լսում էր ամբողջ քրիստոնեայ մարդկութիւնը։ Բացի սրանցից հայ մտաւորականը իր լեզուով կարգում էր հին գիտունների, փիլիսոփաների լեզուարաններականագէտների աշխատանքները։ Նրա հետաքրքրութիւնը ընդարձակ էր, լայն և նըրան բաւարարում է յոյն գրականութիւնը իր բոլոր ճիւղերով։ Այս թարգմանութիւնները հիմքն են կազմում հինգերորդ գարի մեր մըտաւորականութեան իմացութեան և աշխարհայեցողութեան։ Այս հե-

\*) Ե. Տեր Մինասեան. Ոսկեդարեան գրականութիւնը. էջ 12:

զինակների հայացումը ինքնին ապացոյց է, որ կարձ ժամանակի մէջ Հայաստանում սաեղծուել էր զրագէտների մէկ դաս, որոնք արտասահման չէին գնում, բնադիրները չէին կարգում, բայց կարիք էին զգում վերահասու լինելու քրիստոնէութեան առաջաւոր զրագանութեան և նրա մէջ հանդէս եկած մտաւոր հօսանքներին... Աւետարանը և Ս. զրքերը ընդհանրապէս գտնում են ընդհանուր պահանջ: Նա գուրս է գալիս եկեղեցու, կղերի սահմաններից՝ մտնում է նախարարների գղեակները, ազատների ամրոցները և շինականի խրճիթը: Ոմանք ոգեւորում են նրա մէջ տեղ բոնած ազատազրական պայքարներով, ոմանք մարգարէտկան զրքերի մէջ տեսնում են արի ոգու և հզօրութեան օրինակներ, շատերին համելի էր լսել ու կարգալ առակները, հազար ու մի պատմութիւնները: Թիրքն իր հոգեւոր շըրջանակի մէջ է առնում հայութեան բոլոր խաւերը և նոր, անցեալում չեղած բան բերում մեր երկիրը: Թէ ինչ յեղաշրջում էր առաջ բերել գիրն ու զպրոցը Հայոց կեանքում: Երեւամ է այն բանից, որ հազիւ կէս գար անցած զրերի գիւտից՝ հայութիւնը իր բոլոր խաւերով ծառանում էր պաշտպանելու և իր հոգեւոր անկախութիւնը և նոր մըշակութային նուաճումները և այն ընկերոյին կառոյցը, որի մէջ ապրել էր մի քանի գար, այժմ միայն քրիստոնէութիւնը հայոց կեանքի մէջ՝ նրա մտքի, ընտանեկան և հասարակական յարաբերութեանց մէջ՝ անփոխարինելի տեղ էր զրաւել: Չորրորդ զարի կէսերին մէկ Վարդանանց պատերազմ անկարիի էր, ինչու և հինգերորդ զարի կէսերին՝ մէկ Մեհրուժան Արծրունի:

Թարգմանչական ընդարձակ զրականութիւնը խթան է հանգիսանում հայ մտքի ինքնուրոյն սաեղծակործութեան: Նա ծառայում էր որպէս հրմք, որի վերայ պիտի բարձրանար, կառուցուէր ինքնուրոյն հայոց գրականութիւնը: Սրա հրմքը զնում են Սահակն ու Մեսրոպը, որոնք յօրինում են եկեղեցական երգեր, «խրատագիրներ», ճառեր: Բայց ինքնուրոյն գրականութեան լաւագոյն օրինակը մեր պատմագրութիւնն է, որ զարգանում է զրերի գիւտից երկուերեք տասնամակ յեայոյ: Եւ այդ զարմանալի չէ, մէկ, մէկնեկէս զարի մէջ Հայաստանում կատարուել էին հսկայ գործեր, յեղաշրջուել էր հայ կրօնական-իմացական աշխարհը և Հայաստանի քաղաքական կեանքը: Գրիզոր Լուսաւորիչը և իր գործակիցները կրօնապէս կարեցին հայութիւնը իր անցեալից և նոր ուղիի վերայ զրին նրա հոգեւոր կեանքի ընթացքը: Մեսրոպը շարունակեց այդ գործը՝ և հաստատն հրմքերի վերայ զրեց հայի հաւաքական գոյութիւնը: Երանց գործը բոլորի ուշագրութեան, ծովովրդական պատումների նիւթ էր. և բնական է որ նրանք էլ զանային առաջին գէմքերը, որոնց կեանքը զրուէր, վարքագրուէր: Եւ ահա Ազարանգեղոս կոչուած զիրքը նոր հայութիւնը կարգադրութեան առաջին գէմքերը, որոնց կեանքը զրուէր,

թեան պատմում է Գր. Լուսաւորչի գործի մասին, Կորիւնը գրում է՝  
«Երկրորդ Լուսաւորչի» Մհարորի վարքը։ Չորրորդ զարից հայութիւնը  
զուրս եկաւ քաղաքականապէս թուլացած և կրօնապէս անորոշ վի-  
ճակում։ Այդ զարի խոշոր, բազզորոշ գէպքերը զրի է առնում Փա-  
ւրսոս Բիւզանդացին։ Նա պատմիչ չէ, այլ հաւաքող բոլոր այն զը-  
րոյցների, պատումների, աւանդութիւնների, որոնք շատ կարծ ժա-  
մանակում ստեղծուել էին չորրորդ զարի կրօնական և քաղաքական  
գէպքերի և անձերի շուրջը։ Եվիեն զրում է Հայոց առաջին մեծ կը-  
ուիւնների, ապստամբութեան մասին, որ հայութիւնը տուեց Իրանի  
գէմ Վարդան Մամիկոննեանի առաջնորդութիւնը։ Ապստամբութիւնը  
կազմակերպեց մէկ սերունդ, որ մեծացել էր երկու մեծ ուսուցիչների  
հոգանու տակ և նրանց գաղափարներով։ Քիչ յետոյ Ղազար Փարավե-  
ցին գրելու էր իր Հայոց պատմութիւնը, որի կենտրոնում ընկած էր  
80-ական թուերի Վահան Մամիկոննեանի ապստամբութիւնը Իրանի  
գէմ։ Ուրեմն հինգերորդ զարի գրական վերածնութիւնը արձանա-  
գրում է մեր պատմութեան մեծագոյն կրօնական և քաղաքական գէպ-  
քերը և ջատագովում նրանց գործը, օտարի դէմ մղած աղատագրա-  
կան շարժումները։ Բայց այս քիչ է։ Ինքնաճանաչութեան եկած հա-  
յը որոնում է իր սկիզբը, ծագումն ու անցեալը։ Նախքան գիրը հայ  
միտքը գործել էր այդ ասպարէզում։ Ստեղծել էր հայութեան ծագման  
մէկ տեսութիւն, Հայկի և նրա հարաւից գալու տեսութիւնը։ Նոր  
հայութիւնը կառչում է զրան։ ստեղծել էր լեզնողական։ բայց  
ներշնչող և խորհրդանշող անձնաւորութիւն, որ երկար զարեր իշխել  
էր մեր պատմութեան վերայ։ Մովսէս Խորենացին՝ հինգերորդ դարի  
մեր մեծագոյն մտաւորականը՝ իր հերենիստական և քրիստոնէական  
կրթութեամբ ձեռնարկում է զրելու Հայոց ամբողջական պատմութիւ-  
նը։ Նա ընդգրկում է Հայաստանի գէպքերի ընթացքը սկզբից մինչեւ  
մեծ ուսուցիչների մասը։ Իրենից առաջ եղած պատմագիրները զրում  
են մէկ գէպքի, մէկ գէմքի մասին։ այժմ նա փորձ է անում զրելու  
հայութեան ամբողջական պատմութիւնը։ Այս արգէն նշան է մեր  
հաւաքական ինքնաճանաչութեան։ Մ. Խորենացին «նայատակ եւ գրել  
իր ձեռքի տակ եղած աղբիւրների եւ հնարաւորութիւնների հիման վրայ  
տալ Հայոց ազգի ծագման եւ զարգացման պատմութիւնը մեր երկրն ու  
ժողովուրդը սիրելի դարձելով մերայիներին»\*)։

Ամբողջական պատմութեան պահանջը բոլոր ազգերի մէջ ներքին  
ինքնաճանաչութեան հետ է զարթնում և խորապէս կապակցում է իր  
ժամանակի ընդհանուր տրամադրութիւնների։ հոգեկան վերելքի հետ-

\*) Ե. Տե՛ր Մինասեան. Ռոկեդարի հայ գրականութիւնը. Էջ 39.

Մովսէս Խորենացու գիրքն էլ բաւարարում էր իր օրերի հայութեան մեծ վերելքին և պատասխանում նրա հարցասիրութեան։ Հետաքըրաքիրն այն է, որ հայութիւնը հետազային այդպիսի փարձեր չարեց մինչեւ 18-րդ դարի վերջերը, երբ ամբողջական Հայոց պատմութեան գրելը վերածնուռզ հայութեան առաջին գործերից մէկը եղաւ։ Միջնադարի մեր պատմիչները միայն կրկնողներն էին Մովսէս Խորենացու գրքի, ուրիշ ոչինչ։

Եթէ Մովսէս Խորենացու գործը համագրութիւնն էր հայ ազգային պատմագիտական մտքի, ապա Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» համագրութիւնն էր հայ ինքնուրոյն կրօնական մտքի Նա հինգերորդ դարի հայ մտաւորականութեան կրօնական մտքի հասունութեան չափանիշն է։ Նա կարող էր գրուել մէկի կողմից, որ կրօնական մեծ հետաքրքրութիւն ունի, ծանօթ է քրիստոնէութեան մէջ տեղի ունեցած հոսանքներին։ լաւապէս գիտէր նաև կրօնասփիլիսոփայական ուրիշ սիստեմները։ Նա պայքարում է հեթանոսական ուսմունքների դէմ։ Վերլուծութեան է ենթարկում նիւթը, մատերիան՝ իր բազմապիսի ձեւերով, մերժում է նրա յաւիտենական լինելը։ Տիեզերքը ստեղծուած է մեծ Արարչի ձեռքսվ, որ միայն ոգեկան ուժ է։ Կառուցիչ, յաւիտենական։ Զարը նրա ուսմունքի մէջ համազօր չէ բարիին, ինչպէս ուսուցանում էր զրագաշտական կրօնը և յաւիտենական չէ։ Նա մանրամասն քննարկութեան նիւթ է զարձնում իրանական կրօնը, մերժում զրագաշտական երկութեան ուսմունքը։ չարի զոյակ լինելու տեսութիւնը։ Նիւթապաշտութիւնը ծաղրում է։ Այս գլուխը Եղնիկի գրքի՝ գաղափարօրէն պաշտպանութիւնն է քրիստոնէութեան ընդգէմ իրանական կրօնի։ Եւ նա՝ իր տեսութիւնը չէ միայն, այլ ամբողջ առաջաւոր հայ մտաւորականութեան և զեկագարութեան։ Այդ երեւում է նաև Եղիշէի մէջ պահուած՝ հայ կղերի պատասխանից՝ իրանական արքունիքին։ Այս պատասխանի հեղինակը հաւանաբար Եղնիկը լինէր, որ անձամբ մասնակցել էր Արտաշատի 449 թ. ժողովին։

Գրերի գիւտով, զպրոցների բացումով, գրականութեան ստեղծումով արտակարգօրէն բարձրացաւ եկեղեցու հեղինակութիւնը, որովհետեւ այս բարձրը տեղի էր ունենում եկեղեցու հովանու տակ, նրա միջոցով և կղերականների ճիգերով։ Այլևս՝ հինգերորդ զարի կէսերին եկեղեցու վիճակը անստոյդ և երերուն չէր, ինչպէս չորրորդ զարի կէսերին, նա հայ կեանքի ամենէն ամուր և արմատացած հաստատութիւնն էր և նրա սպասաւորներն էլ կղերը աւելի կազմակերպուած, աւելի հայացած ու գրտակից տարրն էր հայութեան։ Նա էր կանգնել զրական, զպրոցական շարժման գլուխը, նա էր, որ նոր կրօնական և եկեղեցական հայութիւնն էր կառուցում և Հայոց ազգայնութիւնը մշակում։ Եկեղեցըն միայն հայոց հաստատութիւններից մէկը չգար-

ձաւ, այլ միակը, նա իր մէջ առաւ հայութեան միտքը, ընտանիքը, երգը, ընկերային կեանքը. նա պահապանը դարձաւ հայութեան ըստեղծած բոլոր արժէքների, բանեց պետութեան տեղը: «Եկեղեցին այս քուախանին ոչ միայն պահապանն էր կրօնական գիտակցութեան, այլեւ կ'ընդգրկիր մարդկային մտքի բոլոր արտայալութիւնները: Ազգային եկեղեցի մը ունենալ կը նշանակէր ունենալ սեփական մշակոյք, ինքնայտուկ լեզու, գրականութիւն, արուեստ, մեկ խօսքով ամեն ինչ, որ կը բնորու ազգի մը հոգեկան կեանքը»\*):

Բայց ինչպէս կը նայէր իրանի կենարոնական իշխանութիւնը հայոց այս վերածնութեան, որ կատարւում էր իր իսկ պետականութեան սահմաններում:

---

414թ. Վուամշապուհը մեռնում է: Յազկերաը նրա փոխարէն Հայաստանի թագաւոր է նշանակում Խոսրովին, որ երկար ժամանակ աքսորուած էր իրանում: Նա «յոյժ ծեր» էր. «Կեցեալ ամիսս ուր՝ վախսնաներ»: Վուամշապուհն ունէր մէկ որդի՝ բայց անշափահաս: Յազկերաը կարող էր փոխարինել նրան ուրիշ Արշակունիով: Բայց այդ չի անում և Հայաստան ուղարկում է իր որդուն՝ Շապուհին: Մեր երկու պատմագիրները, որոնք յիշում են պատմական այս գէպերը տալիս են նրան քաղաքական իմաստ:

Յազկերա Առաջ մեզմ և հաշտ քաղաքականութեան կողմնակից էր. նա լաւապէս լուծեց քրիստոնէաների հարցը իրանի մէջ՝ ստեղծեց իրանուասորական քրիստոնեայ ինքնավար եկեղեցի: Կրօնական հալածանքներ հայերի գէմ չնանեց: Սակայն իր կեանքի վերջին հարկագրուեց զսպել քրիստոնեաներին, որովհետեւ սրանք օգտուելով իրենց չնորհած ազատութիւններից, պայքարում էին զրադաշտականութեան դէմ. Քարոզում էին բարձր՝ նախարարական ու պալատական շրջանակներում և նոյնիսկ կործանում ատրուշանները: Բայց այս բոլորը չփոխեց ընդհանրապէս նրա հանգուրժող վերաբերումը: Յազկերա առաջինի օրով էր, որ տեղի ունեցաւ հայոց գրերի գիւտը, գպրոցական ու գրական վերելքը: Իրանի զեկավարութիւնը հաշտ և հանգուրժող վերաբերմունք ունեցաւ հայերի այս մշակութային շարժումների հանդէպ՝ սպասում էր, որ այս բոլորը հիմովին պիտի անջատեն հայերին յոյներից, բայց բոլորովին հակառակը եղաւ. հայ գըրերի գիւտով և մտաւորական նոր խաւի ստեղծումով Հայաստանում թուլացաւ այն հօսանքը, որի վերայ յենուում էր իրանը. ասորական

---

\*) Ա. Ադոնց՝ Հայացած աստուածաւունչը, էջ 320. «Յոււարձանի» մէջ:

և նրա հետ միացած հայերի հոսանքը իրենց աեղը աստիճանաբար  
 պիտի զիջէին հայ նոր մտաւորականութեան, որ շեշտուած յունասէր  
 զիմաշրջում ունէր: Ապա գրերի գիւտը կատարուեց հայ կղերի ձիգե-  
 րով, աւելի ճիշդ այն մասի ջանքերով, որ հակուած էր յոյներին.  
 գիրը, թարգմանութիւնները, զպրոցները մօտեցրին հայերին յոյնե-  
 րին: այս մօտիկութիւնը այժմ աւելի սերտ էր, որովհետեւ մշակութա-  
 յին էր, հոգեւոր հազորգակցութիւն էր երկու ժողովուրդների մէջ: Սրա հետեւանքով եկեղեցին արտակարգ հեղինակութիւն ստացաւ. նա  
 միայն եկեղեցի չէր, այլ մէկ մեծ հաստատութիւն, որ իր մէջ և իր  
 շուրջն էր համախմբել բովանդակ հայութիւնը, աալիս էր նրա մաքին  
 սնունդ, կամքին ուղղութիւն և սրաին նոր զգացումներ: Նո դառել  
 էր հայութեան միացնող, համախմբող ուժը՝ աւատական պառակառզ  
 միջավայրում: Իսկ հորագիւտ գիրն ու զրականութիւնը զարձան ե-  
 կեղեցու ձեռքին մէկ հզօր զէնք թէ իր շահերի, հաստատութեան և  
 թէ հայութեան հաւաքական գոյութիւնը պահելու համար: Իրանի  
 արքունիքը ուշ հասկացաւ, որ հայութեան հոգեւոր վերածնութիւնը  
 ուղղուած էր իրեն՝ իրանիզմի դէմ, իր հովանին վայելով՝ ասորական  
 կղերի գերիշխանութեան գէմ: «Հայ Աստուածառունչը ազատեց հայու-  
 թիւնը իրանական աշխարհին մէջ ձուլուելու վանգին: Ամրացուց քիս-  
 տնելութիւնը Հայաստանի մէջ եւ Խաչին նառագայրները հակադրեց յար-  
 ձակողական մազգեղականութեան կրակին»\*): Իսկ Վրաստանին և Աղ-  
 ուանից աշխարհին իրեն հետ կապելով՝ գրի միջոցով՝ Հայաստանն  
 ստեղծում իրանի հիւսիսարեւմուտքում մէկ ուժ՝ որ կարող էր վը-  
 տանդաւոր լինել համախմատական շահերի համար: Պէտք էր որոշ մի-  
 ջոցներ ձեռք առնել այս մեծ շարժման հետեւանքները չեղոքացնելու  
 Յազկերտը այս նպատակով էլ Հայաստան է ուղարկում իր որդուն  
 Շապուհին, որպէս յաջորդ Արշակունիների: Նրա վերայ գրուած էր  
 մեծ առաքելութիւն: Բառ Մ. Խորենացու Յազկերտը այս միջոցով  
 հետապնդում էր հայերին աստիճանաբար մօտեցնելու Իրանին. «Այս-  
 պէս հանապազ առ նմա նախարարքն յանձնեցին խօսիւք, ուուր եւ ա-  
 ռիւք. իրախնանուրեամբ եւ զբոսանուքունց, այլեւ եկամուտ հարա-  
 զատուրեամբ մերձաւուրեսցին խնամուրեամբ, զի մարը լիցի զնոսա եւ ի  
 դին մազգեղանց սաղապեցուցանել, որով ամենեւիմք զաշչիցին ի յու-  
 նաց»\*\*): Նպատակը նոր չէ, ոչ էլ միջոցները. այդ բոլորը զործա-  
 գըրուել էր չորրորդ գործում և մեծ արգիւնքներ չէր տուել: Եւս ա-  
 ռաւել նու արգիւնաւոր չէր լինելու հինգերորդ զարում:

\*.) Ն. Աղոնց. Հայացած աստուածառունչը. էջ 319. «Յութարձան»:

\*\*) Մ. Խորենացի. Պատմութիւն Հայոց. էջ 524-525:

Աւելի որոշ է Յաղկերտի նպատակը Դ. Փարավեցու մեկնարարնութեան մէջ, Հսու Իրանի արքունիքի՝ «Աւշաւան» Հայոց մեծ է եւ օգտակար, սահմանակից եւ դրակից է յունաց իշխանութեանն, ընդ որոյ ձեռամբ բազումք են ննազանդեալք յազգեն Սրբակունեաց, որոց գուցէ զորովեալ առ մի մեանս ազգացն, ըստ օրինի եղբարց, որք ընդ մերով եւ ընդ յունաց իշխանութեամբն են եւ հաւանեալ Երբեք սիրով ընդ միմեանս եւ եկեալք ի միաբանութիւն խօսեցին ի խաղողութիւն ընդ բազաւորին յունաց եւ ընդ նորս ննազանդութեամբ յօմարեալք՝ ապրասամբեցին ի մենջ . . . . ։ Եւ Երկրորդ՝ զի յօրինացս մեր օսաւ են եւ ասեցովք եւ միահաւան ունեն զպածօն նոցա եւ գօրենս։ Արդ ի բազաւորել յազգիս մերմէ ի վերայ աշխարհին Հայոց՝ յամենայն այդպիսի կասկածանաց անհոգացեալ լինի բազաւորութիւնս մեր։ Եւ նորա ցանկ Երկրիդի եւ դողութեամբ ծառայեն եւ օսարուսի ինչ եւ վնասակարս ինչ ոչ խորին։ Ե զի եւ սովորութիւն առնուն յանձել յօրենս մեր, նանապազ խօսիւք ընդ միմեանս եւ ընդելական բարեկամութեամբ, ի զբումունս որոց եւ խաղս, որ լինի ի միջի նոցա, այլեւ ամուսնութեանց Տուր եւ առիւն հաղորդեալք առ միմեանս՝ զատուցեալք այնուհետեւ որոշն ի սիրոյ նոցա եւ յօրինացնա\*):

Երկու պատմագիրներն եւ շատ որոշ տուել են Իրանի քաղաքականութեան բնոյթը։ Իրանի զեկավարութիւնը միշտ մասհոգուած է եղել Հայաստանի՝ Բիւզանդիային սահմանակից լինելու խնդրով։ Ըստ Նրա հայութիւնը թագուն, ներքին մէկ միտում ունի քրիստոնեաց մհծ պիտութեան միանալու։ Կրօնը ծառայում է որպէս միջոց քաղաքական միութեան ձգութեամբ։ Սահմանից այն կողմը կան Արշակունիներ, որոնք իրաւատէր են հայկական գանի։ Նրանց շուրջը կարող են համախմբուել երկու կողմերի հայերն եւ և Բիւզանդիայի օճանգակութեամբ ապստամբուել Իրանի գէմէ կայ և այն՝ որ հայերը Իրանի կրօնին օտար են, արհամարոզ։ Կրօնաւ-քաղաքական այս պատճառներով Իրանի արքունիքը Հայաստան է ուզարկում Շապուհին, որ նա կասեցնէ այն բոլոր շարժումները, որ վերոյիշեալ հիմքերով կարող էին ծնուել։ Եւ արքունիքը նախատեսնում է նաև այն միջոցները, որոնցմով կարելի է հայերին բաժանել յոյներից։ Բարեկամութեամբ, ամուսնութեամբ, որսի և խաղերի միջոցով, արքայական տան անձի ներկայութեամբ, ուրիշ խօսքով՝ առօրիայ շփումներով, ընդհանուր կենցաղի, պարսից «օրէնքի» ատրածումով ժամանակի ընթացքին կը կատարուի այդ շատ ցանկալի միութիւնը, քաղաքական և կրօնական դիմաշրջումը, որին միշտ ձգտել է Իրանը։ Բայց այս մեծ նպատակի

\*) Պ. Փարավեցի. էջ 18, 19:

համար Շապուհը ամենէն անյարմար մարդն էր։ Նա չվայելեց հայ նախարարների յարգանքը, սրոնք միայն ծաղրում և արհամարում էին նրան։ Նա քաղաքական հոտառութիւն չունեցող մարդ էր և իր թեթևաբարոյ վարք ու բարքով հայերին հանեց և իր և իրանի դէմ։ Առօմ Մոկացին նրան անուանում էր «կնամարդի», Խոսրով՝ Գարզմանի տէրը՝ ծաղրում էր նրան և կոչում «կրակի որդի», Շահասպ Արծրունին՝ կը հեգնէր և կը նախատէր։ Շապուհը աննկարագիր էր և վախկոտ։ Այսպիսի մէկը չէր կարող յարգանք և պատկառանք ներշընչել հայ նախարարներին, որոնք ունէին իրենց արժանապատուութեան և իրաւունքի խոր գիտակցութիւնը։ Եւ եթէ հայերը նրան գուրս չարին իրենց երկրից, պարզ նրա համար, որ ոչ ճէ ի միաբանութիւն հաւաքեաց զգունդն հայոց։ Կար և այն, որ հինգերորդ դարի 20-ական թուի հայութիւնը շատ աւելի ինքնաճանաչ, գիտակից էր, քան չորրորդ դարինը, հետեւապէս և գմուար զործ էր նրան իրանի մշակութային, կրօնական զործին կապելը։

Բայց Հայ-իրանական հարցը լուծուեց բոլորովին անակնկալ ձեռվ. 420թ. Յազկիրտը մեռաւ և Շապուհը շտապեց Տիգրոն գահը գրաւելու. այդ գահակալական կոիւների մէջ էլ նա սպանելում է։ Հայաստանը մնաց անզլուխ։ Բայ Խորենացու Շապուհը մեկնելով իրան՝ կարգադրում է իր տեղակալին հայ մհծամհծներին ձերբակալել և իրան ուղարկել մնւել զմեծամեծ հայոց եւ տանել ի Պարու։ Հայ նախարարները ի հարկէ թակարդը չընկան, այլ միացան և ոմն ներսէս ձիճրակացու զլիսաւորութեամբ ապստամբեցին իրանի դէմ, «Տան ընդ զնդին պարսից պատերազմ»։ Բայց իշխանութիւն չստեղծեցին, երկրում կարգ ու կանոն չհասաւաեցին։ «Խնքեանք ցրուեալք տիրապլուխ, անձնապահապետ յամենայն լերին եւ յամուրս ըջէին»։ Սւրեմն գհաւարու հայ նախարարների մէջ հին հոգերանութիւնը ամուր էր, նրանք չէին միանում արտաքին թշնամու զիմաց, ընդհանուր շահերի շուրջը չէին հաւաքւում, այլ հետապնդում էին մասնակի չնչին շահեր։ Սրա հետեւանքով «Աղմկալ եւ բազում խռովութեամբ մեացեալ աւխարհս մեր յանիշխանութեան ամս եւես եւ աւերեալ ամայանար, վասրն որոյ պակասեալ լինեին նաւեկ արքունի եւ հատեալ նանապարհ ռամկաց . . . \*). Ներքին այս անիշխանութիւնը եւ երկրի աւերը ոչ իրանի արքունիքի էր նպաստաւոր, ոչ էլ նախարարներին, մանաւանդ որ վերջիններս գրական նպատակներ չէին զնում շարժման մէջ։ Վասամ Գոռը 420—438 պատերազմի մէջ էր Բիւղանդիայի հետ, դեռ նոր էր իր գահը տիրել քաղաքացիական կոիւների մէջ, ամուր

\*) Մ. Խորենացի. հզ 328-329։

չեր զգում՝ գահի վերայ. ուստի հայերի նկատմամբ նա զիջումի քաղաքականութիւն է որդեգրում. թէպէտ աւդի զիջումները ոչ անկեղծ են, ոչ ել յարաւեւ», ինչպէս ասում է Յ. Մանանդեանը: Վուամը զիշտէր նուև, որ Հայաստանը չի կարելի կառավարել ասանց հայերի օժանդակութեան — «Առանց նախարարացն հայոց ոչ մարի ունել զայիարեն»: Ուստի, նա նկրումն է շնորհում ապատամբներին, «Մուրիակ մոռացման յանցանաց կենք», ապա Հայաստանի թագաւոր է նշանակում «Արտաշեան, որդի Վուամապիոյ»: Վերականգնուում է Արտաշիսեան հարատութիւնը: Արտաշէսն արդէն չսփահաս էր: Պէտք է ենթագրել, որ տիրամարդիրութեան զգացումը չէր, որ հայ նախարարներին մղեց նրան Հայաստանի գահը բարձրացնելու. մի գուցէ չէին ուզում կրկնուած տեսնել Շապուհի փորձը, անշօւշա զեր եր խազացել և Սահակը, որին բնաւ հաճելի չէր որևէ իրանցու անմիջական իշխանութիւնը Հայաստանում:

Սկզբից և եթ զործակցութեան եզր չէ գտնուում նախարարների և երիտասարդ թագաւորի մէջ: Մեր պատմաբանները թագաւորին ծանըր սրակումներ են տալիս: «Իգամոլ», «Բազում անառակուրեամբ վարե զրագաւորութիւնն», ասում է Գ. Փարպեցին: «Սկսաւ ողողանել յանառկ ցանկութիւնն» — զրում է Մ. Խորենացին. «Զեխն եւ մոլական վարուց Տեր» էր: Այս անհատական նկարագիրը՝ որ գուրկ է բարոյական ամեն առաքինութիւններից՝ չափազանցուած է հայ պատմագիրների գրչի տակ: Եւ բարոյական այս թերութիւնների համար չէ, որ նախարարները երես էին թեքում նրանից և գաւագրում նրա դէմ: Այս տեսակէտից իրենք էլ շատ բարձր չին: Թւում է թէ այս շարժումը զեկավարում է մեկ մուր ձեռք, որ արդէն կ'անխորուել եր Հայաստանի բաղադրական անկումը: Կային ուժեր, որոնք շահագրգըռուած էին Արշակունիների անկումով: Վուամը իր նախարգների նման հետապնդում էր միենայն նպատակը՝ Հայաստանի պետական կեանքի խորակիման: Իր նախարգներն արել էին առաջին քայլը՝ բաժանել էին Հայաստանը, սահմանափակել էին. նրա անկախութիւնը, հալածել էին Հայաստանում յունական գիմաշրջում ունեցող հոսանքին. բայց չին Դիմիատան՝ որ խորհրդանշում էր նրա անկախութիւնը, զիս զութիւն ունէր: Հարուածը նրան պէտք էր տալ, որով հնամենի քաղաքական կեանքի վերջին մնացորդն էլ կը կորչի: Թէպէտ Վուամ Գողագական կեանքի վերջին մնացորդն էլ կը կորչի: Թէպէտ Վուամ Գողագական սական ակսենտ էլ սկսեց գործել իր նախարգների մեթոսով: Նրա գոյութեան հետ: Նա էլ սկսեց գործել իր նախարգների մեթոսով: Թագաւորի դէմ հանեց իրանասէր հոսանքին: Հաւանական է, որ վերջին Արշակունին որոշ փաստեր տալիս էր իր հակառակորդների ձեռքք: Նա շատ լուրջ էր ընդունում իր թագաւոր լինելը: Գուցէ ինքնազըռուիս զիրք էր բոնում իրանի հանդէպ և նախարարների նկատմամբ

գարում էր Արշակունիների տօհմոյին քաղաքականութիւնը։ Հին պայքարը նորից վերսկում էր և նախարարներն էլ ընթանում են իրենց նախորդների ուղիներով՝ ճակատ են կազմում Արտաշէսի զէմ։ Պէտք էր գնալ իրանական արքունիքը «Զարախօսել առ արքյախ պարսից եւ ի բաց ընկենուլ զբագւորն իւրեանց», կամ ինչպէս Դ. Փարապեցին է ասում։ «Բառնալ ի միջոյ զայնափիսի անբարեժեալ քագաւոր»։ Արշակունի վերջին թագաւորին իր հոգանու տակ է առնում Սահակը, ճիշտ այնպէս ինչպէս հօթանասուն տարի առաջ իր հայրը՝ Ներսէսը ձիգ էր առում հաշակեցնել նախարարներին Արշակի հետ։ Սահակն ինքն էլ ընդունում էր որ Արտաշէսը «մեղաւոր» է։ Բայց «Թէկիէ եւ իցե պոռենիկ, այլ զկնիի հօտին Քրիստոսի կրէ յանձին իւրում, գինացեալ և մարմնով... սկարաեալ ե ի կանայս...»։ Ուրիմն իր բարոյականով Արտաշէսը արժանաւոր ժառանգն էր «Անիծեալ Արշակունեաց ցեղի», ինչպէս ասում էր Ներսէսը։ Բայց այս բոլորը իրաւունք չեն տալիս հայ նախարարներին մատնելու Արտաշէսին իրանի վարիչներին։ Ճիշտ՝ իր հօր նման Սահակն էլ խնդրում է «Յաւ ձեզ, որդի, մի խորհիք զիսորենուրդդ զայդ եւ զբնիկ զծեր զեեարդ, որպէս եւ ոմանք ի ձեր նախնեացն կորուսանել մի զանայք»\*),

Սահակի նման գիրքորոշումը և Արշակունի վերջին թագաւորին հոգանաւորելը նոյնպէս անշահախնդիր չէր, որքան Ներսէսինը 60-70 տարի առաջ։ Նա գիտէ, որ Արշակունիների վերացումով Հայաստանը կորցնելու է իր ինքնավարութիւնը և եկեղեցին վտանգուելու էր և նրա կրթական-մշակութային այն գործը, որ նոր էր սկսուել՝ ընդամենը քսան տարի՝ կանգ պիտի տոնէր։ Սահակը լաւապէս ծանօթ էր իրանի քաղաքական նպատակներին, ուստի ճիգ է անում հայ նախարարներին յետ կանգնեցնել կործանարար ուղիից։ Նա պատրաստ է գործը յանձնել «հաւատացեալ քագաւորին», Բիւզանդիային, որի հետ մի գուցէ կարելի լինի ելք գտնել, բայց «անհաւատի» զատաստանին գիմել նա համաձայն չէ։ Նոյն քաղաքական շեշտը կայ նաև Մ. Խորենացու մէջ։ Սահակը յորդորում է նախարարներին՝ «Եւ արդ պարտ է փոքր մի տանել քերուքեան առն՝ մինչեւ ելս իրացն խորհել մարբացուք կայսերքն յունաց Թէկոդսուի, եւ ոչ անօրինացն մատնել ի ծաղր եւ յայպանումն»\*\*): Այս բոլորի մէջ երեւում է Սահակի Բիւզանդական գիրքորոշումը։ Նա շատ լաւ հասկանում էր, որ խնդիրը Արտաշէսի անձի շուրջը չէ, այլ պայքարում են երկու քաղաքական զիմաշըրջումներ՝ իրանականը՝ հայ նախարարների միջոցով։ Բիւզանդականը՝

\*) Դ. Փարապեցի, էջ 22:

\*\*) Մ. Խորհենացի, էջ 552։

իր և հկեղեցու միջոցով։ Եկեղեցու շահերի տեսակէտից անհրաժեշտ էր, որ Արշակունիների տաճմը շարունակէ իր գոյութիւնը, այսինքն եղած գոյավիճակը մնայ։ Բայց տաւեալ պայմաններում իրանական հստանքը աւելի ուժեղ էր և գործում։ այսակից էլ նրա անդիջով լինելը Սահակի յորդորներին։ Նախարարները որոշում են «բոլոնի բազաւորին պարսից ի բաց բառնալ ի բազաւորութենք այսի»\*), Դ. Փարպեցին վկայում է, որ այս գործին մասնակից էին «բովանդակ աւագանին աւխարհի»։ Ինչպէս և «ամենայն ազատազնդք աւխարհիու հայոց։ Երանք պահանջում են, որ Սահակն էլ միանայ իրենց, գործակցի իրենց հետ, մի բան, որ նա անել չէր կարող։ «Ինձ բար լիցի մատիշ լինել»։ — պատասխանում է նաև Նախարարներին անհրաժեշտ էր Սահակի գործակցութիւնը՝ հեղինակութիւն տալու իրենց պահանջին։ Եւ երբ վերջինս մերժում է, նրանք որպէս հօգեւորականութեան ներկայացւցիչ առնում են իրենց հետ Սուրբմակին։ Եւ միաբանեալ ամենենին անցին առ արքայն պարսից Վռամ՝ հանդերձ Սուրբմակաւ ոմամբ արծիւացի՝ փառամոլ երիցու՝ շարախօսել արքային իւրեանց զՄրտարեւել եւ զմեծեն Սահակայ՝ զՅունովի դրեալ խորհրդովնե»։

Վոամը արքունիք է կանչում Հայոց վերջին Արշակունի թագաւորին և Լուսաւորչի տան վերջին կաթողիկոսին։ Պալատական քընութիւնն ժամանակ երիտասորդ թագաւորը բնորոշում է Հայոց նախարարների գիրքորոշումը։ Նո չգիտէ թէ ինչի մէջ են մեղադրում իրեն։ բայց զիտէ մի բան, որ նրանք՝ «Սովոր են ի բնէ թեամանել զեւարա իւրեանց ըս նմին օրինակի եւ այժմ կամին կատարել զշար կամաց իւրեանց զինդիրս։ Խոնդի միւս իշխանափոխ լեալ են եւ տիրաեացիք»\*\*): Այս բնորոշումով վերջին Արշակունին բանաձեւում է նախարարութեան զիրքորոշումը Արշակունիների հանդէպ՝ ամրող պատմութեան ընթացքում։ Նոյն է պատասխանում և Սահակը։ Նո չգիտէ թէ ինչի մէջ են մեղադրում թագաւորին, միայն զիտէ, որ «շարախօսութիւն» է այդ բոլորը։ Տիզբանում փորձում են նորից՝ Սահակին կողմ գարձնել, միացնել նախարարներին և հանել Արտաշերի զէմ, որովհետեւ, ասում է Դ. Փարպեցին «կամին բառնալ ի միջոյ զքագաւորութիւնն հայոց»։ Աւրիմն խնդիրը քաղաքական բնոյթ էր կըրում։ Խանական արխանիքը արգեն որուել եր Հայաստանի բակալական կառույցը փոխել, եղածը միայն ձեւեր էին՝ արդար ու անարդար նիմնաւորում տալու անելիքին։ Եւ որպէսզի գործը համարուի սասոյդ եւ արգար՝ գործում են միացնելու իրենց հետ Սահակին։ Իսկ վերջինս իր շիտակ և արի կեցուածքը պահեց մինչեւ վերջը։

\*). Դ. Փարպեցի. էջ 20. \*\*). Նոյնը. էջ 23:

Այս մեծ քաղաքական յիշաշրջումը կատարելու համար չափազանց աննշան էին հայ նախարարների մեզադրանքը թագաւորի հասցեին Ուստի խնդրին տալիս են քաղաքական բնոյթ։ Այս հարցումն ևս Սահակը ուներ պարզ և որոշ պատասխան։ — «Զի ես զնորա ապրամբութեան ինչ խորհուրդ ոչ զիտեմ։ Իսկ նախարարները պահանջում են կարճ և կարուկ՝ մինաւ չի իսկ եւս պիտոյ է քագաւոր. այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիզի մեզ, որ եւ զիւրաքանչիւր ուրուկ ի մենջ ծանուցեալ զիպատակութիւն եւ զանհապատակութիւն ցուցցէ ձեզ»\*):

«Ուստի գոհ էր. «Յոյժ ուրախանայր»։ Հասել էր նպատակին հայ նախարարների իսկ միջոցով։ Հոյերն իրենք էին հրաժարում թագաւոր ունենալուց. բաւական է մի իրանական իշխան։ Հայաստանը կառավարելու։ Լաւ և գաղտնի կազմակերպուած խաղը իր արգիւնքը տուեց։ 428 թ. Արշակունի վերջին քագաւորը զահընկեց եղաւ. նա մնաց իրանում, իսկ արքունական հոգիրը և Արշակունի կալուածները յարքունիք գրաւեցին։ Սահակն էլ զահազուրկ եղաւ. նրա կալուածներն էլ բռնագրաւեցին։ Սուրբմակն ստացաւ իր վարձը՝ բարձրացաւ կաթողիկոսական գահը։ Մեր Դ. Փարպեցին շատ լաւ հասկանում է կատարուածի քաղաքական իմաստը։ Բայ նորա. «Յայնմինեսէ բարձաւ բագաւորութիւն յազգին Արշակունեաց. . . եւ անկաւ աշխարհս նայոց թնդ լծով ծառայութեան անօրէն իշխանութեան պարսից»\*\*):

Փակւում էր Հայոց պատմութեան մէկ շատ մեծ շրջանը, որ սերտորէն կապուած էր Արշակունիների հետ։ Բայց փակւում էր նաև Հայոց եկեղեցու պատմութեան մէկ շրջանը, որ կապւում էր Գրիգոր Լուսաւորչի տան հետ։ Ճիշտ է, մի քանի տարի յիշոյ. Սահակը նորէն իշխանութեան պիտի կանչուէր, բայց 428 թ. վերջանում էր նրա քաղաքական գործը՝ գալիք մի քանի տարիները նա տրամադրում է Առաջաւածանչի թարգմանութեան իր աշակերտների հետ։ Այս երկու իշխող տոհմերը միասին բարձրացան և միասին ընկան։ 297 թ. տեղի ունեցաւ Արշակունիների վերահաստատումն Հայոց գահի վերայ. Դ. գարի սկզբին Գր. Լուսաւորիչը դարձաւ Հայոց եկեղեցու և նըուիրապետութեան գլուխը։ Ամրող չորրորդ գարը և հինգերորդ գարի առաջին քառորդում մեր պատմութիւնը այս երկու իշխող անների պատմութիւնն է՝ քաղաքական և եկեղեցական մարզի մէջ։ Երբեմն նրանք գործակցում էին իրար հետ, բայց ընդհանրապէս պայքարի մէջ էին։ Արշակունիները իրենց պետական վերելքի մէջ հանդիպեցին ուժերի, որոնցից պարտուեցին — նախարարներին։ Եւ Արշակունի

\*). \*\*). Դ. Փարպեցի. էջ 24-25:

վերջին թագաւորի գատավարութիւնը՝ և մեզազրուիլը հայ նոտիա-  
րաբների կողմից՝ այն քաղաքական գրամայի վերջին արարն է, որ  
սկսել էին Մեհրուժան Արծրունին և հայ սահմանապահ նախարարինե-  
րը։ «Իշխանափոխութեան», «արբատեացութեան» այս ելոյթին հան-  
դէպ՝ Լուսաւորչի տան կաթողիկոսները պաշտպան էին կանգնում ե-  
րերուող Արշակունիներին՝ օտարի հանգէպ՝ միշա իրենց և եկեղեցու  
շահի տեսակէտից։ Գր. Լուսաւորչի տաղանդաւոր ներկայացուցիչնե-  
րը մի կողմից ամրացին եկեղեցին, անկախացրին նրան աշխարհիկ  
իշխանութեան հանգէպ, միւս կողմից բովանդակութիւն տուին նրան,  
նպաստեցին բարքերի մաքրումին, լուսաւորութեան տարածման,  
Հայաստանի արեւմուտքին մօտենալուն։ Նրանք՝ իրենց շուրջը հա-  
ւաքուած ինքնաճանաչ փոքրամասնութեան հետ զլուխ բերեցին մէկ  
հսկայ գործ Հայաստանի քրիստոնեացումը։ Եթէ Գրիգոր Լուսաւորիչը պ  
ետականացրեց քրիստոնէութիւնը, Ներսէսը մեծ ճիզ արեց ազգայ-  
նացնելու այն, ապա միայն Սահակն եր վերապահուած այս գործի  
զլուխ բերելը՝ հայ գրի, զպրոցների և հայացած Աստուածաշունչի  
միջոցով։ Առանց Լուսաւորչի տան մեծ ներկայացուցիչների, անկա-  
րելի է հասկանալ չորրորդ գարի մեր վերելքը, կատարուող պայքար-  
ները։ Բաղաբական հայութեան մշակութային հայութեան փոխուիլը եւ  
մեր արեւմտեան դիմաւորում ունենալը։

## Դ. ԳԼՈՒԽ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

428թ. Արշակունիների հարստութիւնը վերջացաւ Իրանահայաստանում: Մեր հայրենիքը յայտարարուեց մարզպանութիւն, այսինքն վարչական մէկ շրջան, որի գլուխը կանգնած էր Իրանի արքունիքից ուղարկած բարձր պաշտօնեան՝ մարզպանը: Ի նկատի ունենալով Հայաստանի սազմաքաղաքական արժէքը՝ մարզպանը ընտրւում էր Իրանի նշանաւոր տաճմերի անդամներից, որոնք մօտ էին արքունիքին, վստահելի էին և վարչական և պետական փորձ ունեին: Բիւզանդական կայսրութեան սահմանակից Հայաստանում մարզպանը աւելի շուտ օսմանապահաց պիտի լինէր, այսինքն զինուրական-քաղաքական գործառնութիւնը պիտի գերազաէր՝ քաղաքացիականին: Մարզպանը հսկում էր երկրի ապահովութեան, կարգ ու կանոնի, ու սահմանների վնրայ: Եղիշէն մոգպետի բերանով որոշում է մարզպանի գործը: Նա զիմում է Վասակին այս խօսքերով՝ «Քանի որ բոլոր նախարարներից մեծը դու եր եւ այս ամբողջ աշխարհը ենք եր յանձնելած, ինչու դու ինք նոզ չտարար մեծապէս...»\*): Աւելի որոշում է մարզպանի գործունէութիւնը Վասակի խօսքերը Վարդանին ուղղըւում: «Եւ ես մինչ վրաց մարզպան եի եւ դուռն Ազուանից յիմում ձեռնըն եր: Բազում զօրագլուխ հոնաց ընդ իս բարեկամացան ուխտիւ. Եւ հարկս ամենայն աշխարհիս հայոց առ իս են եւ այլեւս բազում կարասի, զո՞ ի պարսիկ զարծակալացն հանի, որ աս ի հայս են յիմում գանձի կայ»\*\*): Երկրի հարկը կենարոնանում է մարզպանի ձեռքին, ուստի հարեւան մողովուրզների, ցեղերի հետ բանակցելու իրաւունք ունէր: Մարզպանը Հայաստան էր գալիս «Կնաւ եւ որդուվի, դրամի եւ սիրելեօֆ, ծառալի եւ աղախնիւ»: Նա ապրում է մարզի՝ Հայաստանի հաշուրին: Նրան ընկերակցում են բազմաթիւ պաշտօնեաններ՝ զինուրական և քաղաքացիական: Նրա հետ գալիս էր մէկ

\*) Եղիշէ. եջ 145:

\*\*) Պ. Փարակեցի. եջ 83:

բանակ՝ պաշտպանելու սահմանները, զրաւելու բերգերն ու ամրութիւնները, հսկելու մեծ ուղիների վրայ, որոնք կարում էին Հայաստանը իրանի հետ։ Մարզպանի անմիջական իշխանութեան տակ էին պետականարքայական հոգերը՝ փոխանցուած Արշակունիներից Սասաններին։ Մարզպանը ընդհանուր և վերին հսկողութիւնն ունէր հայ զործակալների վերայ, որոնք երկրի անմիջական ղեկավարներն էին։

Մարզպանութեան մէջ Հայաստանում պահուեցին այն կարգերը, որոնք մշակուել էին դարերի հոլովոյթով և որոնց պահպանման համար նախարարները այնքան պայքարել էին Արշակունիների դէմ եթէ Սասաննեանները փորձէին արմատախիլ անելու այդ կառոյցը, որ քաղաքական էր և ընկերային, Հայոց եկեղեցու կազմակերպութիւնը, պատահարակոյս նրանք իրենց դէմ պիտի ծառացած տեսնէին ամբողջ հայոց վարիչ գասին։ Սասաննեանները այս բանը չարին։ Այս տեսակէտէն չէ գերման հայագէտ Կ. Գիւտերով, որ իր շատ կարեւոր «Քիւզանդին» եւ Պարսկասան» աշխատութեան մէջ գրում է. «Պարսկանայաստանը, որ Թեոդոսեան դաշինքն վերջը սկզբան անդ Իրանին կախուած յատուկ կազմը սազած է, 429ին իր ինքնավարութեան մեացորդն ալ տուժելին եւ իր պարսկական նահանգ միացուելին վերջը»։ Բայ այսմ Արշակունիների անկումով, վերանում է նաև Հայոց ինքնավարութիւնը, այսինքն ընկերային և պետական այն կազմը, որ հայերը պահել էին 386 թ. բաժանումով։ Սակայն այդպէս չէ, Այս բանը ճիշա է միայն 440 թուերի վերջերի համար, երբ իրանցիք փորձեր արեցին սկիզբը կրծատելու, պատ վերացնելու ինքնավարութիւնը։ Բայց մինչեւ այդ հայութիւնն ապրեց քանամեայ մէկ շրջան ներքին լայն ինքնավարութեամբ։ Նա պահեց իր ընկերային կազմը, գասային արտօնութիւնները, քաղաքական զործառնութիւնը։ Ստեղծուեց ինքնավար Հայաստան։

Թէ մարզպանական Հայաստանը իրօք ինքնավար միաւոր էր, երեւում էր այն բանից, որ այնտեղ նամապետական օրենքները չին կիրառուում։ Այդ օրէնքների աղբիւրը մազգէղական կրօնն էր. նա օրէսգրում էր հաւատացեալների համար, նրանց ընկերային և ընտանեկան կեանքն է, որ առնում էր իր շրջանակի մէջ։ Հայութիւնը զեկավարում էր իր սովորութական իրաւունքներով, որոնցից շատերը տոհմական յարաբերութիւնների կնիքն էին կրում, իր եկեղեցական կանոններով, որ մեծ մասամբ փոխառութիւն էր հարեւան քրիստոնեայ ազգերից կամ մշակուած հայոց եկեղեցու ժողովներում։ Այս օրէնքներին ենթակայ էր ընտանեկան յարաբերութիւնը, ժառանգութիւնը, ազգակցութիւնն ու ամուսնական կապերը, տնտեսական-ընկերային կարգը, Հայաստանը հարկային ուրոյն միուրիւն էր։ Հարկը

հազարամետի հսկողութեամբ հաւաքում էր նրան և նիթակոյ պաշտօնեաների ձևով և յանձնուում մարզպանին։ Հարկերի քանակը և գանձման ձեւը մնաց նոյնը ինչ որ առաջ էր՝ Արշակունիների օրով։ Նա շատ ծանր չէր և ոչ էլ քայլայիչ աւտաական տնահասութեան համար։ Մարզպանն էլ չէր միջամտում երկրի հարկային բաշխումի և հաւաքումի գործին։ Հայաստանի ուրոյն կրօնական միտոքին եր։ պետական կրօնը այսաեղ հայ հետեւողներ չուներ։ Ինչպէս իրանի մէջ զրադաշտականութիւնը իրանացել էր, ազգայնացել, այսպէս էլ Հայաստանում քրիստոնէութիւնը ազգայնանում էր։ Հայը եթէ ընդուներ իրանական կրօնը՝ նա կը զագարէր հայ լինելուց, կը գտննար իրանցիւ եւ այսպէս էր, որովհետեւ կրօնական միութեան զիտակցութիւնն էր, որ իշխում էր մաքերին, կամ աւելի ճիշտ, կրօնն էր, որ զունաւորում էր ազգութիւնը։ Զորբորդ զարում իրանը բազմաթիւ փորձեր արեց հայ նախարարութեան մէջ պատուաստելու մազգեղական կրօնը՝ բայց մեծ յաջողութիւն չունեցաւ նրանք հայ ուրացող նախարարների միջացով «ԱՏՐՈՒԵԱՆ Շինէին ի բազում ՏԵՂԻՆ ԵԼ ԳԻՄԱՐԴԻ ԲԻՆԱԳԱՆԳԵԿԻՆ ՕՐԻԲՆԱԳԵ ՄԱԶԳԵՂԱԿԱՆ Ի ԲԱԳՈՒՄ ԴԻՐԵԽԱԾ ԱԵՒԻՖԱԿԱՆ ՇԻՆԷԿԻՆ ԱՏՐՈՒԵԱՆ ԵԼ ԳՈՐԳԻՆ ԵԼ ՊԱՋԱՅԻՆ Ի ԻՐԵԽԱԾ ՏԱՅԻՆ ՅՈՒՍՈՒՄՆ ՄԱՋԵՂԵՂԱՆ»<sup>\*)</sup>։ Օատր այս կրօնին յարսդները միշտ մը նացին որպէս աննկատելի փոքրամասնութիւն։ Ընդհակառակն հինգերորդ զարի սկզբին քրիստոնէութիւնը շատ աւելի խորն էր թափանցել հայ հոգիների, ընաաննեկան յարաբերութիւնների եւ մատուրական կեանքի մէջ։ Նա ազգայնացել էր և ժողովրդականացել։ Դրան շատ նպաստեց, ինչպէս տեսանք նորագիւտ գիրը, թարգմանական գրականութիւնը, ինքնուրոյն գրական փորձերը։

Հայաստանի զինուորական ուրոյն միաւոր եր։ Նրա ուզմի ուժը աւտաական էր, այրուծին հայոց ենթարկում էր հայ սպարապետին, որ ամբողջ չորրորդ գարում Մամբկոնեան տոհմի զործակալութիւնն էր, ինչպէս և հինգերորդ զարում։ Սյդ բանակը հազուագիւտ գեպքերում միշտ գուրս էր գալիս Հայաստանի ոսհմաններից։ Աւատական այս բանակի զոյութիւնը եղիշէն համարում է Հայաստանի ինքնավարութեան նշան։ «ԵԽԱՄԱՆՈՐՓԻՆ Անցաւ Հայոց նախարարներին, որովհետեւ բեկէս նարկը պարսից արքունիքն եր գնում, սակայն հայոց հեծելազօրը ամբողջապէս նախարարներն ին առաջնորդում պատերազմի ժամանակ»<sup>\*\*</sup>)։ Ճիշտ է մարզպանի ներկայութիւնը՝ ստհմանափակում էր Մամբկոնեան սպարապետների ազատութիւնը, մանաւանդ որ նը-

<sup>\*)</sup> Փ. Բիւզանդացի. էջ 152։

<sup>\*\*) Եղիշե. Վարդանանց պատերազմը. էջ 101։</sup>

բանք իրանական զիմաշրջումի մարդիկ չեին, բայց և այնպէս բանակի և նախարարների մէջ ունեցած մեծ հեղինակութիւնը նրանց գարձնում էր հայոց քաղաքական բախտի անօրինողներից մէկը... Միաժամանակ նրանք միշտ կասկածելի էին Իրանի տրքունիքում, որովհետեւ նախորդ դարի հակաբանական շարժման գեկավարները նրանց տօնմից է, որ գուրս էին եկել: Գուցէ այս էր պատճառը, որ նրանք չկանչուեցին համապետական մեծ պաշտօնների, նրանց չվըստահացան Հայաստանի մարզպանութիւնը: Բայց և բոլորովին էլ անտեսել նրանց անկարելի էր: Թողեցին նրանց ձեռքին սպարապետութիւնը, որպէսզի նրանց չցցեն Բիւզանդիայի դիրքը:

Նախարարները պահեցին իրենց ընկերային արտօնութիւնները, կառուածների եկամուտները, գատական և ոստիկանական իրաւունքները կրօնի և պաշտամունքի ազատութիւնը, իրենց զինեալ ուժերը: Մարդպանը այս ներքին գործերի մէջ չէր մտնում: Եկեղեցին էլ դգոսիելու առիթներ չուներ. նա պահնեց իր «ազատութիւնը», ապահարկութիւնը, Արշակունիների ժամանակներից ստացած կալուածները: Նրա նըուբրագետները էլ աւելի կողմակերպուած էր, աւելի գիտակից և գործունեայ: Ճիշտ է Սասանեանները ջանում էին կաթողիկոսական գահի վերայ անսնել իրանեան հակումներ ունեցող մարդկանց, կամ օտարների, ասորիների, բայց և այնպէս եկեղեցին որպէս կազմակերպութիւն մնաց և մեծացաւ: Հայ ազատ դասերը Արշակունիների ժամանակ հաւաքըւում էին «աշխարհածովների», ուր քնննարկուում էին հանրային-քաղաքական հարցերը: Սրան մասնակցում էին աւագ նախարարները, «ազատները», գործակալները: Այդ ժողովներում ընտրում էին կաթողիկոսին, որոշում էին կրօնական և քաղաքական հարցեր: «Աշխարհաժողովներ» նախարարական կարգի ստեղծածը չէ, նա տօնմական կարգի արգիւնք է և ինչպէս չատ բան՝ այն էլք անցաւ աւատական կարգին յարմարուելով ընկերային նոր պայմաններին: Տօնմական կարգի մէջ տօնմիր բոլոր անդամներն է, որ մասնակցում են այդ ժողովներին, նախարարական կարգի մէջ միայն «ազատները», հասարակութեան խանարհ խաւերը, շինականն ու ուսմիկը հեռու է նրանից: Նոյն «աշխարհաժողովներում» մշակուել են ընդհանուրը, պարտազիր կանոններ-օրէնքներ, որոնք վերաբերում էին հայոց հասարակութեան բոլոր խաւերին: Ահա, մարզպանութեան առաջին տարիներում այս «աշխարհաժողովներն» էլ գումարուում էին, որ մէկ մեծ ազացոյց է հայութեան ինքնավար կեանքի գոյութեան: 443 թ. Շահապիգանի ժողովն է հաւաքըւում. այս ժողովի կանոնագրութեան մէջ յիշուում են նաև մարզպանութեան ժամանակ գործող գործակալութիւնները. «Վասակայ Սիւնեցոյ մարզպանութիւն Հայոց. Վահանայ Ամատունոյ հազարապետութիւն և Վրայ Խորիսորունոյ մախա-

դութիւն»: «Այս բոլորը, ուրեմն պարզ ցուցմունքներ են, որ 429 րուից  
յետոյ պարսկական Հայաստանի նախարարական ինքնավար կազմակեր-  
պուրեան մեջ զգալի փոփոխութիւններ չեն եղել»\*),

Հայ նախարարները սահեղուած կացութիւնից դժգոհ լինել չէին  
կարող: Սյամ իրանական իշխանութեան աակ նրանք ունեին կեանքի  
և զայքի ապահովութիւն: Հկար այն տեւական պայքարը, որ նրանք  
մղում էին Արշակունի թագաւորների զէմ: Այսմ նրանց հալածող չը-  
կար, յարգուած էր ռատնուաէրտական իրաւունքները: Արշակունինե-  
րը Հայաստանին խաղաղութիւն չտուին, այժմ օտար ուժեղ ձեռքը  
կարդ և խաղաղութիւն մուծեց այնտեղ: Սակայն հարցն այն էր, թէ  
իրանի զեկավարութիւնը պիտի պահէ, պիտի յարգէ այս ինքնավա-  
րութիւնը, իր վարչական, կրօնական, հարկային, զինուորական և  
օրէնսդրական սահմաններում: Նա համարում էր արդիօք սահեղած  
կարզը մշտական, հայ-իրանական շահները հաշտեցնելու, միատեղելու  
համար, թէ ժամանակաւոր մէկ զիջում՝ հին հալածանքը նորից  
վերսկսելու համար: Զորբորդ գարի հայոց պատմութիւնը, հայ-իրա-  
նական յարաբերութեանց անցեալը ոչ մէկ յոյս չէին ներշնչում, որ  
հայկական ինքնավարութիւնը մնայուն լինել կարող է: Իրանի զիր-  
քորոշումը հայութեան հանգէու եղել է պարզ և որոշ: Նա չէր հաշ-  
տըւում ոչ հայոց պիտականութեան, ոչ էլ հայոց ազգայնութեան  
հետ Նրա ծրագիրն էր՝ հայութեան վարչական քաղաքական ինքնա-  
վարութեան ջնջումը, կրօնական մշտակութային համածուլումը իրա-  
նութեան մէջ: Նա այս նպատակին զիմում էր ասաիճանաբար, հան-  
գըրուաններով: «Պարսկական քաղաքականութիւնը, որ հայ բագաւո-  
րուրեան բարձումը արագացուցած էր, կ'աւշասէր այժմ բառնալ այն  
առանձնայակարութիւնները, որոնք իսկբաննեկ կը վայելէր Հայաստան: Իր  
նպատակն էր Հայաստան մարզը հաւասարեցնել պարսկական պիտուրեան  
անբաժին միւս մարզերուն»\*\*):

Այս նպատակի համար է, որ Հայաստանը բաժանուեց երկու մա-  
սի, որով վարչական և քաղաքական տեսակէտից՝ հայութիւնը մի  
քայլ մօտեցաւ իրանին: Այս նպատակի համար իրանահայտանում  
արգիլուեց յունարէնի գործածութիւնը, որով հայերը հազորգակից չը  
պիտի լինէին յունական բարձր մշտակոյթին և քրիստոնէութեան ուս-  
մանքի ազրիւթներին:

Նոյն նպատակով է, որ Յաղկերած իր որգուն Շապուհին ուղար-

\*) Յ. Մանանիեան. Ֆեոդալիզմը Հին Հայաստանում. Էջ 282:

\*\*) Հ. Ակիննեան. Եղիշէ վարդապետ եւ իր պատմութիւն Հայոց.  
Բ. մաս. Էջ 401:

կեց Հայաստան՝ անձնապէս ազգելու, կապելու Իրանի հետ հայ նախարարութեան։ 428 թ. Արշակունեաց հարստութեան վերացումը նուրբէն նոյն նպատակին պիտի ծառայէր։ Նոյն փաստերի շարքին է պատկանում նուա կուսաւորչի կաթողիկոսական տոհմի դէմ հալուծանք հանելը, նրա վերջին շաստափին Ստհակին կաթողիկոսութիւնից զըրկելը, նրա աշակերտաներին վիրքազուրկ անելը և հալածելը։ Անհըրաժեշտ համարուեց թուլացնելու հայոց կղերի այն թեւը, որ յունաշկան գիրաշը ջում ունէր։ Այս բոլոր միջոցառումները հանգրուաններ էին միւննոյն նպատակին առաջնորդով։ Արդ, պատմական այս փաստերը ի նկատի ունենալով կարելի էր սպասել, որ Իրանի զեկավարութիւնը մարզպանական Հայաստանի ինքնավարութիւնը համարէր, լոկ մի ժամանակաւոր զագար — վերսկսելու իր հին հալածիչ քաղաքանութիւնը։ Նրա նիզերով հայեալուել եր Հայոց պետութիւնը, պետք եր հայքայել նաև Հայոց հասարակութիւնը։ Այս իմաստով էլ հայկական հարցը բազում անգամ քննարկութեան նիւթ է զանում Իրանի արքունիքում կային, գոյութիւն ունէին մի քանի ուրիշ օժանդակ պատճառներ էլ, որոնք արտագնում էին հայկական հարցի նոր ձեւաւորումը։ Ինքնավար Հայաստանը գտնեւում էր Բիւղանդիայի սահմանների վերայ։ Վերջինիս հետ հայութիւնը կապուած էր ընդհանուր կրօնական կապերով։ Սահմանից այն կողմը ապրում էր մեծազանդուած հայութիւն, որ նոյնպէս բռնել էր ազգային մշակոյթի վերելքի ուղին։ Այս «կէս ազգն հայոցը» սահմաններով միայն բաժանուած էր միւսից, բայց ապրում էր միւննոյն հոգսերով, խօսում էր նոյն լեզուն, կարգում էր միւննոյն զրքերը և շատ բնական ու առողջ ապրում էր լինէր, եթէ երկու հատուածները ուզենային քաղաքականապէս իրար միանալ։ Եւ Իրանի զեկավարութիւնը միշտ կասկածում էր որ հայերի մէջ այս միաւումը կայ և այս պիտի լինէր յօգուա Բիւղանդիայի։ Սրանով վահնդուած կը լինէր նաև ամբողջ Այսրկովկասը։ Հայերն իրենց յետեւից կը տանէին կրօնակից աղուաններին, վրացիներին, որոնցից ստեղծել էին հաւասարիմ զաշնակիցներ։

Կար և մէկ ուրիշ պատճառ, Իրանի հանգուրժող վերաբերումը չորրորդ զարի վերջերին և Յազկերտ Ա. սի օրով նպաստեց, որ քրիստոնէութիւնը Հայաստանում աւելի խորանայ, ազգայնանայ, քան Արշակունիների օրով էր։ Նրա միջավայրից ծնունդ առաւ հայ վիրը և զրականութիւնը։ Ճիշա է Սասանեաններն արգիլեցին յունարէնի ուսուցումը իրենց բաժին Հայաստանում, բայց հէնց այս բանը նըսպաստեց նախ ազգային զրերի գիւտին, հայ լեզուի բարձրացման և հայ գրականութեան ստեղծման, այսինքն ազգ-կրօնական հայութեան կերպման... Իրանի վերին զերիշխանութեան տակ էր, որ հայութիւնը վերակառուցուց շատ աւելի ամուր հիմքերի վերայ, քան

չորրորդ գարսումն էր : Հայութիւնը քաղաքական անկախութեան կոռուսափց յետոյ, ներքնապէս շատ աւելի հասուն էր, ինքնաճանաչ ու միակամ, թէպէտ բաժանուած երկու պետութիւնների մէջ :

Հայոց հասարակութեան այս վերելքն ևս մատհոգութիւն էր պատճառում Իրանի արքունիքին, յատկապէս Յազկերա Բ.-ի օրով 438—457: Իրանի միասումն էր հայ պետականութեան ջնջումից յետոյ, քայլայել նաև Հայոց հասարակութիւնը, իրաւազուրկ անել, աղքատացնել նրա զեկավարութիւնը, այսինքն հարուածել այն գործոն ուժերին, որոնցմով կանգուն էր և կենսունակ հայոց հասարակութիւնը: Մենք տեսանք, որ բուն Իրանի մէջ Սասանեանները զրկեցին նախարարներին քաղաքական-վարչական իրաւունքներից, հաւաքեցին պալատում, հեռացրին զեկավարութիւնից, բայց նոյն Սասանեանները 428 թուի Արշակունիների անկումից յետոյ շարունակեցին պահել նախարարական կարգը Հայաստանում: Այս մէկ վատանգաւոր և հակասական քաղաքականութիւն էր՝ հովանաւորել և պահել ծայրագաւաններից մէկում այն, ինչ որ թուլացուել և իրաւազուրկ էր արուած Իրանի մէջ: Նախարարական կարգի պահպանումը մարդպանութեան մէջ պիտի ստուարացնէր ներքին գովանների թիւը: Կար և մէկ ուրիշ բան: Սասանեանների ներքին քաղաքականութիւնը զնում էր վարչութեան, օրէնքի, կրօնի միարարութեան ուղիով: Մեկ պետական մէջ մէկ կրօն մէկ ծողովրդի համար: Այսպիսի մատհութիւնը չէր կարող հանգուրժել քաղաքական-կրօնական, լեզուական բազմազանութիւն:

Անա այս առումով և այս սահմաններումն է, որ հայկական ինքնավարութեան հարցը քննարկում էր Իրանի զեկավարութեան շրջաններում: Անշուշան նա միակ հարցը չէր: Հայաստանի և հայկական խնդիրը այն քաղմաթիւ ազգային-կրօնական և պետական հարցերից մէկն էր, որոնք գրուած էին Իրանի գործիչների առաջ, բայց ամենից բարզն էր ու վտանգաւորը, որովհետեւ Հայաստանի սահմանակցութիւնը Բիւլանդիայի հետ և այնտեղ էլ մէկ կառոր Հայաստանի հողի գոյութիւնը կարող էր առաջ բերել նորանոր և անակնկալ իրնուգիրներ: Ուրեմն հայկական հարցը երկու զէմք ուներ: որպէս ներքին հարց նա Իրանում ապրող քրիստոնեանների խնդրի մէկ արտայացութիւնն էր, նրա մէկ մասը, որ սահպատեալ երեւան էր զալիս: Որպէս արտաքին հարց՝ նա քննարկում էր Իրանաւրիւլանդական յարաբերութեան տեսակէտից:

Հայկական խնդիրը Յազկերաի առաջին տարիներում յատուկ քըննութեան առարկայ չէր այն պատճառով, որ արքայից արքան զրադուած էր Իրանի արեւելքում քուշանների զէմք կոռւելով: Սկզբում նա հայերի հետ հաշտ էր: Գուցէ այդ հաշտութեան և համակրանքի նը-

շաններից մէկը Վասակ Սիւնիի Հայաստանի վարչութեան պետ՝ մարզպան նշանակելն է, մէկ մարզու, որ քաղաքական և վարչական գործի մնած անցեալ ունէր Իրանում և Վրաստանում։ Այս նշանակումով Հայաստանի զեկավարութիւնը ամբողջութեամբ անցնում է հայերի ձեռքը։ Նա՝ Վասակը զործակցել էր Մեսրորի հետ իր ռատանուտէրութեան» մէջ, Սիւնեաց աշխարհում զպրոցներ բանալու համար։ «Եւ այն ժամանակ Աստուած տուեց, որ Սիւնիի իշխանութեան զլուխն անցաւ քաջն Սիսական Վասակը, խելացի եւ հանեարեղ եւ կանխագէս, աստուածային իմաստուրեան շետրիով օժտուած մի մարդ։ Նա շատ նպաստեց աւետարանի բարողութեան զործին։ Նա ինչպէս որդին հօրը հնազանդութիւն ցոյց տալով եւ աւետարանին վայել կերպով ծառայելով մինչեւ վերջը զործադրում էր երա (Մեսրորի) երամանները»<sup>\*)</sup>։ Սիւնիքը Վասակի տանուտէրութիւնը Հայոց աշխարհի կենարում չէր։ աշխարհազրօբէն նա էլ ծայրագաւառ էր՝ Հայաստանի հիւսիս արեւելքը։ Ազգագրորէն էլ նա ուրոյն միութիւն էր, որ չորրորդ զարից սկսում էր հայանալ, քըրիստոնէութիւնն էր ամսուր և խոր արմատներ չէր զցել։ Վարչական տեսակէտից նա միշտ ջանացել է անջատուել Հայոց Միջնաշխարհից և կապուել հարիւտան և աւելի մօտ Ատրպատականի հետ։ Անջատողական այս միտոււմը և կենարոնից հնուու լինելը՝ նրա զեկավարներին տուել են ուրոյն զիրք և Միջնաշխարհի հայութեան պետերը հարազատութեան զգացում չեն սնուցել նրանց հանդէպ։ Եղել է միշտ մի անջրպետ երկու աշխարհների մէջ։ Եւ մի զուցէ Վասակի մարզպանն նշանակելն էլ Իրանի արքունիքից այդ միտումն ունէր։ Միջնաշխարհի հայոց նախարարների հանդէպ ստեղծել մէկ ուժեղ հոսանք, որ հաշտ չլինէր նրանց հետ, կապուած չլինէր ոչ անձնական մտերիմ կապերով և ոչ էլ քաղաքական հակումներով։ Միջնաշխարհի նախարարութեան զլուխը կանգնած էր Վարդան Մամիկոնեանը։ Արշակունիների անկումով սեղմուեց Մամիկոնեանների քաղաքական և սազմական զործի լայն սապարէզը։ այժմ Վասակ Սիւնիի մարզպան նշանակելը ստորագատումն էր նրանց տօնմի՛ ծայրագաւառոի՛ Սիւնեաց տանուտէրութեան։ Վարդանը պիտի հնիթարկուէր Վասակին։

Բայց հայ-իրանական այս համերաշխութիւնը երկար չտեսեց։ Քուշանների զէմ արած արշաւանքը վերջացաւ Յագկերաի յազմիութեամբ։ Այժմ նա կարող էր իրագործել այն, ինչ որ միայն յետաձգուած էր։ Քուշաննաց արշաւանքի իսկ ժամանակ նա փորձում է զլուխ բերել իր նպատակը, բայց միայն բանակում գտնուող քրիստոնեանների վերաբերմամբ։ Մոզերը նրան խորհուրդն են տալիս հեռաւոր արեւել-

<sup>\*)</sup> Կորիւն. Վարք Մատուցի. Պետրաս. 1941 թ. Երեւան, էջ 63։

քում նրանց «իմի օրենս մոգութեան» զարձնել, Քրիստոնեայ զինուոր-ները և զօրականները չարչարանքի ևն ևնթարկւում, հալածւում են: Պատերազմից յետոյ այդ հալածանքը զանգուածային բնոյթ է կրում և տարածւում է ամբողջ պետութեան մէջ: Նա զառնում է քաղաքական ծրագիր և նրա յշացողն ու գործադրողը իրանի մեծ հազարապետըն էր. «վզրուկ հրամատարը» Միհր-Ներսինք: Նա իրանական բարձր բիւրոկրատիայի ամենէն ազգեցիկ զեկավար դէմքերից էր: Մեր Փարացեցին նրան որակում է «Այր չարանեար եւ դժնամիս, որոյ առկեալ ի միտուաց ամաց զիսորեգս անօրէնութեան՝ ի կործանումն եւ ի կորաւս բուլամիս ոգւոց»\*: Իսկ Եղիշէն նրա մասին ասում է. «Սա ամբողջ պարսից պետութեան իշխանն ու նրամանաւարն էր, որի անունը Միհր-Ներսին էր եւ ամենեւին ոչ մեկը չկար, որ համարձակուեր նրա խօսից դուրս գալ եւ ոչ միայն մեծամեծները եւ փորեւեր. այլեւ քագաւորն ինիք լսում էր նրա խօսին»\*\*): Հսա Եղիշէի նա էր «ձեռնարկելի այս ձախողական գործերը», այսինքն հայկական հալածանքները: Նա իրանական քաղաքացիական պաշտօնէութեան զլուխն էր կանգնած և «զերկորդ տեղի պետութեան» ունէր: Մեր Եղիշէն Միհր-Ներսինքն կոչում է հազարապետ, իսկ Միհր-Ներսինը ինքն իրեն անուանում է «վզրուկ հրամատար իրանի եւ անիրանի»: Նա թագաւորից յետոյ առաջին դէմքն էր՝ կանգնած համապետական վարչութեան զլուխը և այս պատճառով էլ բազմաթիւ էին նրա զործերը. որպէս առաջին մինստր նա զեկավարում էր պետութեան ներքին և արտաքին քաղաքականութիւնը: «Սասանեան պետքի առաջին եւ զլսաւոր մինստրն էր: Նրա ձեռքի տակ էր եւ պալատական բիկնապահ զունդը, որտեղից ծագում էր եւ նրա հազարապետ կոչումը». Պարսից հազարապետը աւելի արտաքին զործերի մինստրի եր նմանում»\*\*\*):

Իրանի վզրուկ հրամանատարը, Միհր-Ներսինը ծագումով Արշակունի էր, բայց իր ամբողջ տաղանդը ի սպաս բերեց Սասանեանների փառքին: Յագկերտ Ա.-ի օրով նա մեծ հազարապետ էր, վոամ Ե.-ի օրով նա Բիւզանդիայի դէմքորդ բանակների հրամանատարն էր: Նա էր կառավարում իրանի լայնածաւալ կայսրութիւնը, իրը արքայից արքան երկարատեւ կախւներ էր մզում արեւելեան իրանում քուշանների դէմ և բացակայ էր մայրաքաղաքից: Նա էր որ, իրանական դեսպանութեան զլուխն անցած զնաց կ. Պոլիս և կայսեր հետ հաշտութեան դաշինք կնքեց: Դրանից յետոյ հրամարուեց քաղաքա-

\*.) Ա. Փարացի. Էջ 38:

\*\*) Եղիշէ. Էջ 16:

\*\*\*) Ն. Ադոնց. Հին Հայ. շինակ. Էջ 97:

կան գործերից ծերութեան պատճառով՝ Յաղկերտ Բ. Նրան հանեց իր  
 առանձնութիւնից և պետութեան զեկավարութիւնը յանձնեց նրան:  
 Եր գարի լաւագոյն կրթուած մարդկանցից մէկն էր. «չ միայն մեծ  
 քաղաքական գործիչ էր, այլև մեծ իմացութեան տէր. ժամանակի  
 կրօնների լաւագոյն ճանաչողն էր: Հայ կղերը իրենց պատասխանի  
 մէջ նրան որակում է. «Գիտեմ որ ինչպէս ուրիշ ամեն բանով՝ շատ  
 իմաստուն ես»: Իսկ Տարարին նրա մասին գրում է. «Այս Մինե-Ներ-  
 սեիր մեծ ակնածանի եր վայելում պարսից բոլոր քագաւորների կողմից  
 իր նուրբ կրթուրեան, մեծ խոնմուրեան եւ վատանուրեան պատճառով,  
 որ դեպի նա տածում էր մոլովուրդը»: Մի ուրիշ տեղ նա նորէն խօ-  
 սում է Մին-Ներսէնի մասին «Սա իր ժամանակի իմաստուն մարդն էր,  
 կատարեալ կրթուրեան տեր եւ իր վարուեցողուրեամբ գերազանց եւ աշ-  
 քի ընկնող եր ժամանակակիցների մէջ»\*: Յատկապէս քաջանմուա էր  
 մազգեղական կրօնի իմացութեան և մեկնաբանութեան մէջ: Նա ու-  
 նէր պայծառ քաջաքական սկզբունքներ, որոնք իր հոգարապետու-  
 թեան ժամանակ զեկավարեցին արքունիքը: Ըստ նրա թագաւորները  
 «ոչ միայն զվայելչուրիւնն էամից... այլև յաղազս զիւտի ոգուց ար-  
 ժան և մտաւ ածել, որով ոգիք ծառայից մի կորիցեն»... Ասուածք զոգ-  
 ւոցն զիւտս զերմագոյն եւս գրեն եւ կամեն տեսանել»\*\*): Այս մէկ շատ  
 որոշ ահսակէտ է, որի գործազրութիւնը պիտի ունենար ծանրակշիռ  
 հետեւանքներ: Թագաւորները պարտական են հոգալու հպատակների  
 հոգիների փրկութեան համար, այս նոյնքան անհրաժեշտ է և թագա-  
 ւորների պարտականութեանց մէջ, որքան պետական շահերի, նրա  
 ականովութեան մասին հոգալը: Ամեն քաջաքացի, ամեն հպատակ  
 իր բովանդակ հոգիսով, մատծողութեամբ, խղճով իշխանութեան են-  
 թակայ է: Նա չունի իրաւունքներ և ազատութիւններ: Միջնադարի  
 զեկավարները կարծում էին, որ ամեն մարդ ընդունակ չէ զտնելու  
 իր փրկութեան ուղիները. դրա համար կար կազմակերպուած եկեղե-  
 ցին ու կղերը, որ ուղեցոյցն է մեղաւոր մարդկութեան, և եթէ ո-  
 մանք յամառեն՝ ծշմարիտ ուղին բոնելու՝ դրա համար կար, ոտեղծ-  
 ուած էր հաւատաքննութիւնը, խարոյկը բարձրացնելը, հաւատաց-  
 եալների համայքից գուրսա անելը: 16—17րդ դարի աշխարհիկ զեկա-  
 վարները կարծում էին, որ խղճի ազատութիւնը միայն տիրողների  
 համար է, և իրենք է, որ պիտի որոշեն հպատակների կրօնը, գաւա-  
 նանքը: Այս պատճառով էլ այդ գարերում կրօնական մեծ ազատազը-  
 րական շարժումները կիսատ մնաց, նա ստացաւ դասային բնոյթ և

\*) Ե. Տե՛ր Մինասեան. Վարդ. Պատերազմ. էջ 294. ծանօթ. 49:

\*\*) Ղ. Փարագի. էջ 42:

անհրաժեշտ էր նոր շարժումներ ու յեղափոխութիւն՝ խղճի ու մաքի,  
 անհամար ազատազրութեան համար։ Անա այս ահսակէաներն են, որ  
 երեւում են եւրոպական փորձից հազար երկու հարիւր տարի առաջ,  
 իբանում։ Այստեղ կրօնի հարցը իշխանութիւնը բանաձեւում էր ճիշտ  
 այնպէս, ինչպէս 16րդ դարի կէսերին գերման աւատատէրերը։ Հայ  
 զեկովարութեան դրած թղթի մէջ Միհր-Ներսէնը, ըստ Եղիշէի ա-  
 սում էր. «Իմացած եղէք, որ ամեն մարդ, որ բնակում է Երկնքի տակ  
 եւ չունի դեն մազգեղան կրօնը, նա խուլ է եւ կոյր եւ Հարամանի դե-  
 ւերից խաբուած»\*). Մեզ համար կարեւոր չէ այն հարցը, թէ իրօք  
 այս խօսքերը վաւերական են։ Միհր-Ներսէնի դրած վաստամղթից է  
 է հանոււած, կամ այդպիսի փաստաթուղթ զոյութիւն ունեցել է,  
 պատմութեան համար բաւական է և այն, որ նա պարունակէ իր մէջ  
 ընդհանուր տրամազրութիւնը. զեկավար մտայնութիւնը։ Այս ահսա-  
 կոտից Եղիշէի՝ որպէս փաստաթուղթ բերուած վկայութիւնը՝ իրօք ի-  
 րանական արքունիքի տրամազրութիւնն է, նրա քաղաքական տե-  
 սակէտները։ Բայ այս Միհր-Ներսէնը պետական կրօնի գաղափարա-  
 խօսն է դառնում։ Մեկ պետութիւն մեկ կրօն՝ ահս իրանի զեկավարու-  
 թեան պահանջը։ Բայ այս կրօնը պիտի ծառայէ միայն պիտութեան  
 հիմքերի ամրացման։ Բազմաթիւ կրօնները պառակառում են պետու-  
 թիւնը։ Այսպէս էր մտածում նաև ճիշտ այդ ժամանակուայ Բիւզան-  
 դական զեկավարութիւնը, որ մեծ ճիգ էր անում պահելու եկեղեցու-  
 ամբողջութիւնը և զաւանանքի միասնականութիւնը։ Միայն կազմա-  
 կերպաւած և ուժեղ եկեղեցին է, որ կարող էր յինարան և պիտանի  
 լինել կայսրութեան, իսկ զանազան զաւանանքների հանդէս գութ-  
 թուլացնում էին եկեղեցին և պետութիւնը։ Թուլացած և պառակտը-  
 ւած եկեղեցին աշխարհիկ իշխանութեան համար կարեւոր չէր։ Այս-  
 պէս էր մտածում նաև Սասանեան զեկավարները։ Ում Երկիրը՝ նրա ել  
 կրօնը՝ բանաձեւը մշակուեց 16րդ դարում, բայց որպէս քաղաքական  
 ծրագիր՝ հին է, արեւելեան ծագում ունի։ Միհր-Ներսէնը ընդհանուր  
 քրիստոնէական խնդիրների մէջ հայկական հարցին բացառիկ տեղ էր  
 տալիս և մէկ ուրիշ տեսակէտից։ «Հայոց մեծ աշխարհն՝ պիտոյ է եւ  
 օգտակար եւ առ նմին վրաց եւ աղուանիցն... գույք ինքնին գիտէ եւ  
 ամենայն արիք զաշխարհն Հայոց՝ թէ որպէս մեծ է եւ պիտանի եւ մօ-  
 եւ սահմանակից է կալսեր իշխանութեանն եւ զօրեն եւ զպաւոսն ըզ-  
 նոյն ունի զի կայսր զիշխանութիւն նացա ունի»\*\*). Ուրեմն Հայաստա-  
 նը կարեւորութիւն է ստանում իր մեծութեամբ, հարստութեամբ եւ

\*) Եղիշէ. էջ 115:

\*\*) Պ. Փարպեցի. էջ 42-43:

մանաւանդ Բիւզանդիային սահմանակից լինելով և նոյն կրօնը, «օրէնքը» ունենալով: Կրօնակցութիւնը սանգծում է շահներ և համակըրանքների շրջանակ, որի պատճառով էլ հայերը իրենց հայեացքը յառել էին սահմանի միւս կողմը: Այստեղից էլ Միհր-Ներսինի քաղաքական ծրագիրը Հստ նրա, իթէ հայերին ամերոց օրինաց բժտանեցուցանեկ եւ ընտելենուն եւ կարին նանաչել երե ցայծմ մոլորեալք էին եւ արդ ի նանապարհ եկեսցեն, այսուհետեւ ձեզ սիրեն եւ Արեաց աշխարհն եւ ի կայսեր եւ յօրինաց նորա եւ յաշխարհն մերժեն եւ հեռանան ի բաց... եւ յօրծամ հայք սերտի մեզ լինեն, վիրք եւ Աղուանիք այնուհետեւ մեր իսկ են»\*): Աւրեմն Միհր-Ներսինի մատանսգողը՝ վերջին հաշով քաղաքական խնդիրն է՝ Հայաստանի, ծայրամասի այդ կարեւոր մարզի, սերտ միութիւնը իրանի հետ Այս բանը կարելի էր միայն կրօնական միութեան ստեղծումով: Դրա համար պէտք էր քայլայի հայութեան կազմակերպուած ուժը՝ եկելեցին եւ նախարարութիւնը:

Միհր-Ներսինի կրօնա-քաղաքական այս սկզբունքները իւրացրել էր նաև Յազկերտը: Նրա ժամանակ իրան-ասորական քրիստոնէութիւնը ենթարկում է խիստ հալածանքի: Այս հալածանքները ըսկըսում է 445 թուրին: Նա հրամայից Հիւսիսային Միհրագէտքի քրիստոնեաներին ի մի հաւաքել և պահանջել ընդունելու մազգէղական կրօնը: Հստ հին ասորի ազրիւրների տամնեւերկու հազար հոգի նահատակութեցին: «Եթիսոնեաների սուրբ ուխտից ատելեցին խախտեց, մեկին սպանեալի խօսերով, միւսին ըլքաներով եւ սանցանեներով, երրորդին շարաչար մահով սպանելով: Յափէտակում եր նրանց սացուածքը եւ կալուածները եւ մեծ անարգանով տանջում եր բոլորին»\*): Ապա յայտարարում է՝ արքայից արքան Իրանի բոլոր քրիստոնեաներին. — «Իմ խեխանութեան ներկոյ գտնուած բոլոր ազգերն ու ժողովուրդները՝ բողբոլորը ձեռք հաշեն իրենց մոլոր կրօններից եւ զան երկրպագութիւն անեն միայն արեգակին զնիեր մատուցանելով եւ ատուած անուանելով (նրան) եւ սպասաւորելով կրակին: Բացի այս ամենից մոգութեան օրէնքներն ել կատարեն առանց որեւէ բան պակաս բողնելու»\*\*): Նոյնն էին թելազրում նաև մոգերը, որոնք կենսականորէն շահագրգոռուած էին իրենց համայնքի թիւը ստուարացնելով, եկեղեցու կալուածներին աէլ զառնալով: Քուշանսերի գէմ յաջող կոռուից յետոյ, նրանք խորհուրդ են տալիս արքայից արքային. «Մարդկանց բոլոր մոլարումունքները վերացնեն եւ բոլորին գրադաւական կրօնին ու պատութին դարձնեսա\*\*\*):

\*). Ղ. Փարպեցի. եջ 43:

\*\*). Եղիսէ. եջ 102 \*\*\*). \*\*\*\*) Նոյնը՝ եջ 111 112:

Ոչ մի ժամանակ իրանական արքունիքում զեկավար ուժերի մէջ չէր իշխել այնպիսի համաձայնութիւն քրիստոնեաների հարցի վերաբերմամբ՝ որքան Յաղկերտ Բ.-ի օրովկի Հաւանաբար այս տեսակէալ Միհր-Ներսէնին էր, որ ներշնչել էր միւսներին. նա պետական-կրօնական հարցերի մէջ հեղինակաւոր մարդ էր, տասնամեակների վարչական փորձ ունէր, լաւածանօթ էր երկրի իրական պահանջներին և գիտէր նրա թոյլ և ուժեղ կողմերը և անշուշա գիտէր նաև քրիստոնեաների քաղաքական արամագրութիւնները։ Այսպիսի կրօնաքաղաքական շահերի շրջանակի մէջ է, որ արժէք է ստանում Հայաստանը, ուր քրիստոնէական հալածանքների ալիքները հասան 449 թուին։ Եղիշէն պատմում է, որ Յաղկերտի հալածանքները ուղղուած էին բռնուր քրիստոնեանների դէմ, բայց մասնաւորապէս հայերի և պատճառաբանում է. «որովհետեւ նրանց աւելի զերմեռանդ եր տեսնում ասուածապատճութեան մէջ»\*): Խնդիրն ի հարկէ «ջերմնուանդութեան» մէջ չէ, այլ այն բանի, որ հայ երկիրը սազմական բացառիկ զիրք ունէր, սահմանակից էր Բիւզանդիային, հայ նախարարութիւնը գեռ պահում էր իր սազմա-քաղաքական կենսունակութիւնը, հիստեապէս վանդաւոր և կասկածելի, հայ կղերի լաւազոյն և գիտակից մասը յունամիտ էր։ Այս բոլորն ել սպանութիւն էին իրանին. Հայաստանը նրա հետ չէր. . . Պէտք էր հայոց կենսունակ ուժերը արժէքազուրկ անել, քայքայել։

449 թ. Յաղկերտի հայկական քաղտքականութեան մէջ հիմնական բեկումն է տեղի ունենում, բայց հալածանքը, սահմանափակումները անցնում են մի քանի փուլերով։ Սկսում են որպէս անտեսական ճնշում, վերջանում են որպէս կրօնական հալածանք։ Հայաստան ուղարկում է պետական մէկ բարձր պաշտօնեայ՝ Դենշապուհը, «իր հաւատարիմ ծառաներից մէկը» որ ցուցակագրումն է կատարում, աշխարհագիր է անում իրը թէ «ի բոլորին հարկաց եւ ի բերեւուրին ծանրութեան այրումիոյն»։ Նախ «եկեղեցու ազատութիւնը ծառայութեան ասկ դրեց», որ Կանակում է եկեղեցական կալուածները և կը-զերի հողերը հարկի տակ առաւ։ Ուրիմն էին զրութիւնը բոլորովին փոխում է. «Պարսից տրապեսութեան ժամանակ, այսինքն բուն իսկ մարզպանութեան ժրջանում հոգեւորականութեան դրութիւնը խիս փոփախութեան է ենթարկում։ Ինչպէս ելիթեն հաղորդում է այս փոփոխութեան սկզբնակեր Ե. դարի կեսերին Դենշապունի աշխարհագիրն եր որից յետոյ պարսիկները վերացրին եկեղեցու «ազատութիւնն», այսինքն խլեցին նրա մաղաֆութիւնը, բարխանութիւնը, ապահարկութիւնը եւ

\*) Աղիւէ. էջ 150.

հկեղեցականներին «առկին ի ծառայութիւն», այսինքն նարկատու դարձրին<sup>\*)</sup>: Հստ այս միջոցառումների հայութեան վարիչ դասերից մէկը՝ պիտի իջնէր «օհնականների» աստիճանին, կորցնէր «ազատութիւննից» բդիող իր արտօնութիւնները, իր գիրքը, հարստութիւնները և Այս բոլորը պիտի ազգէր եկեղեցու հանրային-ժշակութային աշխատանքի վերայ: Միանգամայն պատահական չէ, ուրեմն որ Գէնշապուհը առաջին հարուածը տալիս է եկեղեցուն: Այս բանը համապետական ծրագիր էր՝ քրիստոնեութեան կազմակերպութիւնը բուլացնել, զլատել, աղքատացնել: Հստ եղիշէի, եկեղեցին իր բոլոր հաստատութիւններով է, որ հարկի տակ է առնւում. չնա խնայում միայնակեացներին, վանքերի մէջ բնակուածներին: Հարկ էին պահանջում ամայի, չմշակուած վայրերից: Այսպիսով խախտում էր հին կարգը, որ մշակուել էր «Երանելի Գրիգորի» և «Սուրբ Տրդատի» ժամանակներում, երբ եկեղեցին կազմակերպում էր որպէս ուրոյն հաստատութիւն, նրա սպասաւորները գասուում են «ազատների» կարգում: Եկեղեցին ձեռք էր բերել իմունիտեսի իրաւունք, այսինքն աշխարհիկ իշխանութեան առաջ նըրա կալու ածները անձեռնմխելի էին: Այժմ Դէնշապուհի միջոցառումները եկեղեցու հանգէպ՝ պիտի թուլացնէր, աղքատացնէր նրան և քայլայէր նիւթական հիմքերը հայ նորասահղծ մշակոյթի: Ահա ինչու, եկեղեցին է ու կղերը, որ կանգնում են զալիք տարման գլուխը պատշաճներու իրենց շահները: Դէնշապուհի աշխարհագրի մէջ միտում կար՝ նա չէր կատարուում պետութեան գանձարանը հարստացնելու, այլ հայոց հասարակութիւնը թուլացնելու համար: Դէնշապուհը փոխառութեան է ենթարկում նաև հին «գործակալական» կարգը: այսինքն հարուածն ուղղում է Հայաստանի ինքնավարութեան: Հազարավետութիւնը, որ Ամատունեաց առնմի ժառանգութիւնն էր յանձնըւում է մէկ իրանցու: Մեզ մօտ հազարապետութիւնը նոյնը չէր ինչ իրանում: Հայաստանում նա հարկերի աեսչութեան, երկրի տնաեսական վերաշինութեան հետ է կապուած: Եթէ իրանի հազարապետի գործը սերտօրէն կապում է արտաքին քաղաքականութեան հետ, ապա Հայաստանում նա կապում է ներքին գործերի հետ: Նրա վերահըսկողութեան տակ էր գտնուում շինականութիւնը, հարկատու գասը, ինչպէս Մամիկոննեանների ձեռքին էր Հայոց զինուած ուժը: Հազարապետութիւնը Արշակունիներից անցաւ մարզպանութեան: Արշակունիների օրով հազարապետի պարտականութիւնն էր «աջակցիլ երկրի տիեզերական աշխատանքներին եւ տիեզերական տեսեսութեան զարգաց-

\*) Հայաստանի տեսեսական զարգացման պատմութիւնից. Տեղեկագիր Հ. Ա. Խ. Հ: Գիտութիւնների ինստիտուտի Ա. Էջ 54-55:

մանք: Հազարապետուրեան այս պարտականուրիւնները կապուած էին հարկանանուրեան գործի նես: Հոդի մշակուրիւնը, ոռոգման գործը եւ ընդհանրապէս երկրի ժեն վիճակը հանակուրիւն ունեին իրեւ նիմք եւ աղբիւր պետական բարեկեցուրեան եւ պետական եկամուտների»<sup>\*)</sup>): Հազարապետութիւնը միայն Արշակունիների տան կալուածների համար չէր, այլ ամբողջ պետութեան: «Պետական հազարապետը աւելի լայն շրջանների համար եր» ասում է Ն. Ադոնցը, եւ այդ պատճառով էլ Արշակունիներից անցնում է մարզպանուրեան՝ կատարելով իր տիմարար դերը: Եւ ինչպէս եղիշէն է ասում, համարւում էր «Քրիստոնեայ աշխարհի վերակացու հայր»:

Հազարապետութեան գործակալութիւնը մարզպանութեան առաջին տարիներում գտնում էր Վահան Ամատունու ձեռքին, որ այդ շրջանի ականաւոր գործիչներից էր և յունամիտ հոսանքի պարագը-լուխներից մէկը: Դէնշապունը նրան է, որ հեռացնում է պաշտօնից և տեղը նշանակում մէկ իրանցի: Այս ձեռվլ իրանը աւելի խորն էր միարձում հայկական գործերի մէջ և խախտում ինքնավարական կարգը: Հաւանական է, որ հազարապետի փոփոխութեան հարցի մէջ գեր խազացած լինի նաև Վասակը, որի յարաբերութիւնները վահան Ամատունու հետ բարեկամական չէր:

«Դատաւորուրեան» գործակալութիւնն էլ, որ հոգեւորականութեան ձեռքին էր, յանձնուում է մոգակետի: Փէտք է ի նկատի ունենալ, որ կղերի գատարանին հնթակայ էին հայ ընտանիքի ամբողջ կեանքը՝ ամուսնութիւնը, ծնունդն ու մահը: Քրիստոնէութիւնը շուրջ մէկ ու կէս գարի ընթացքում մշակել էր և որոշ չափով արժատացրել ընտանեկան և ընկերային բարք, բարոյական ըմբռնում, հիմա մոզպետը իշխանութեան տակ այս բոլորը պիտի վերանար: Անշուշտ մոզպետն ու մոզերը գատարաններում չպիտի առաջնորդուէին եկեղեցու կանոններով և հրահանգներով, այլ մազգեղական կրօնի թելազգրանքներով: Այս էր իմաստը փոփոխութեան: Հայ ընտանեկան յարաբերութիւնը այժմ պիտի օրոշուէր զբագաշտական բարոյական թելազրանքներով: Այս բանը պիտի յեղաշրջէր Հայոց հասարակութիւնն ու ընտանիքը, արժատախիլ անէր այն բոլորը, որի համար եկեղեցու լւաւագոյն գէմքերն աշխատել էին մէկ և կէս գար: Բնական է, որ եկեղեցին ծառանար նաև սրա զէմ, որի կիրառումը զուրս պիտի անէր նրան հայոց հասարակութիւնից, նրա զեկավարութիւնից: Եւ իրօք Դէնշապունի գործի մէջ շատ որոշ նկատում է մէկ բան՝ հարուածել եկեղեցուն, բաժանել նրան աշխարհիկ իշխանուրիւնից:

\*) Յ. Մանադեան. Ֆեոդալիզմը Հին Հայաստանում. էջ 69:

Միայն՝ այս բոլորից յետոց է, որ Միհրներսենը 449 թ. վերջին հրամարակում է իր նշանաւոր հրովարտակը: Նո պահանջում էր, որ հայերը ընդունին գրադաշտական կրօնը: Պէտք է ենթագրել, որ իրանի արքունիքի նպատակը չէ եղել մէկ անդամից ամբողջ հայութեան մազգեղական կրօնին գարձնելը: այս գուռարին և անկարելի գործ էր և իրանցիները ոչ մէկ պատրաստութիւն չունեին այդ բանը գլուխ բերելու: Նրանց նպատակը եղել է միայն նախարարական չըրջանակում պիտական կրօնի ասրածումը: Եւ եթէ նա այդ միջավայրում ամրանար այնուհետեւ նա վերից վար կը թափանցէր և իր ըըրջանակի մէջ կ'առնէր ամբողջ հայութիւնը, ճիշտ այնպէս՝ ինչպէս քրիստոնէութիւնը ասրածուեց Հայաստանում: Ասացինք, որ հինգերորդ գարի սկզբներին կերտուում է ազգային կրօնական հայութիւնը, խարսխուած լեզուի և գրականութեան վերայ: Այդ լեզուի և գրականութեան պահողները եկեղեցականներն էին, մեր առաջին մտաւորականները: Եւ այժմ այս ազգայնութեանն էր, որ վատնգ էր սպառնում: Իրօք հինգերորդ գարի կէսներին՝ որոշ առումով՝ երկու ազգայնուրիւններ են, որ կանգնած են դիմ դիմաց՝ Իրանականը, որ ներընչուած է եւ հիմնուած պետականացած գրադաւականուրեան վերայ եւ որին իշխանութիւնը տամադրում է իր նեղինակուրիւնը, զինական ումը, նիւրական հարատուրիւնը: Նա յարձակողական է, անհանդուրծող եւ մոլեսանիք: Նրա դիմաց կանգնած է նայ ազգայնութիւնը, որ խարսխուած էր երիտասնեկուրեան վերայ, որի պաւապանը նախարարութիւնն էր եւ ազգային-կրօնական գաղափարի մշակողը՝ նայ կղերը: Այս պայքարի մէջ հայոց ազգայնութիւնը պաշտպանողական դիրքի վերայ էր: 449 թուի հրովարտակը լրացնում էր, ամերողջացնում այն սահմանափակումները, որոնք իրօք վերջ էին տալիս Հայաստանի ինքնավարութեան: Սահզեւում էր մէկ նոր կացութիւն հայութեան համար և հայ — իրանական յարաբերութիւնները մանում էին նոր փուլի մէջ: Ըստ եղիշէի՝ հայերին ուզուած գրութիւնը Միհր-Ներսենի անունից է: Այսուղ պաշտպանուած է պիտական կրօնի սկզբունքը: Ղ. Փարափեցումու բերուած գրութիւնը արքայից արքայի անունով է: Պատմական փաստերին և ժամանակի մատայնութեան շատ աւելի հարազատ ու մօտ կարելի է համարել Ղ. Փարափեցու յիշուած հրովարտակը քան եղիշէի գրութիւնը: Վերջինիս մօտ յիշուած գրութիւնը չի ցոլացնում Միհր-Ներսենի կրօնական այս բազմակողմանի իմացութիւնը, որի մասին վկայում են հները: Նրա մէջ պակասում է գաղափարների խոր վերը լուծում և նիւթի հմտութիւն: Ըստ Ղ. Փարափեցու արքայից արքան մտահոգուած է իր նպատակների հոգիների փրկութեամբ և ցաւ է յայտնում, որ իր նախանիքները թույլ են զանուել և հանգուրծել են քրիստոնէութիւնը: Ապա յայտարարում է՝ «պարտիմք ընդ վրկութիւն եւ

բնեց գիւտ՝ ամենեցուն հոգւոց հոգալ եւ գտանել, իսկ եթէ այդ բանը չանի «ծանր պատուհաս կրելոց եմք յասուածոցն»<sup>\*)</sup>: Ուստի թելազգում է հայերին սիրով յանձն առնել այս հրահանգը՝ այսինքն «նեմարիս մեր օրինացն լինիք»:

Այս պահանջին պատասխանելու համար է, որ հայ հոգեւորականութիւնը Արտաշառում ժողով է գումարում: Բայ Եղիշէի՝ ժողովին մասնակցում են 18 հպիսկոպոսներ, որոնց հետ նաև Հրազմաթիւ քորեպիսկոպոսներ և պատուական երէցները: Զի յիշում նախարարների մասնակցութեան մասին: Դ. Փարպեցին յիշում է ժողովին մասնակցող 17 հպիսկոպոսները, բայց չի ճշգում վայրը: Ժողովը հաւաքւում է «ըստ հրամանի տանուտերացն նայոց»: Նա յիշում է 18 նախարարների անունները, որոնք մասնակցել են ժողովին: Բայ Դ. Փարպեցու Յաղկերտին պատասխանում են կղերը և նախարարները: Բայ Եղիշէի պատասխանն ուղարկում է Յովսէփի անունից: Երկու պատասխանները շատ են տարբերում իրարից: Եղիշէի պատասխանը ստոտուածարանական հարցերի վերլուծութիւն է, քննադատութիւնը և ժխտումն մազգեղական կրօնի, ապացուցումն, որ նա նիւթի պաշտամունք է, որ նրա երկութիւնը ժխտումն է Արարչութեան գաղափարի, միակ անսկիզբ և անվախճան գոյի, Արարչի: Միւս կողմից նա քրիստոնէութեան ջատագովութիւնն է. նա է միակ, ճշմարիտ և բարձր կրօնը, միայն նրա մէջն է, որ Ասածու գաղափարը միացած է Արարչին, որ գորովագութ է, փրկարար: Եղիշէն կամ այս պատասխանի հեղինակը հմուտ է և խոր ծանօթ է իր ժամանակի քրիստոնէական եկեղեցու փիլիսոփայական և աստուածաբանական հարցերին: Այս պատասխանը գործն է այն թարգմանիչների, որոնք կրթուել են Բիւզանդիայում Եթէ իրենը՝ Եղիշէինը չէ այս պատասխանը, ապա պիտի լինի Եղիշէինը, որ իր գարի լաւագոյն և հմուտ մարդն է քրիստոնէական վարդապետութեան և ունէր լայն ծանօթութիւն նաև ուրիշ՝ հեթանոս և պարսից կրօնների մասին: Խնաքը՝ Եզնիկը մասնակցել է Արտաշատի ժողովին, որպէս Բագրեւանդի հպիսկոպոս, և ատարինակ չէր լինել, եթէ նրան էլ յանձնուած լինէր խմբագրելու իրանի արքունիքին տալիք պատասխանը:

Եթէ իրանի արքունիքը իր իշխանութեան սահմանների մէջ առնում է նաև հպատակների հոգեկան կեանքի խնամակալութիւնը, ապա հայ վարիչները՝ պիտական այս ամբողջական հովանաւորութեան և միջամտութեան տեսակէտը մերժում են: «Բայց վասն հոգւոց գիւտի եւ կամ կորսեան զձեզ ինչ ամենեւին ալդ նոգ մի աշխատեսց»

<sup>\*)</sup> Դ. Փարպեցի. էջ 44.

— գրում են հայ զեկավարները Յազկերտին : «Անհնար է որ ի բնելուսալեմք եւ նաստանեալ յօրենս յայս անսալ այդպիսի նրամանի եւ նաւանել : այլ վասն օրինաց ձերց, զոր գրեալ եր եւ տուեալ բերել առմեզ մեք ձեզ ոչ լսեմք») : Այսպիսով երկու կողմերը կանգնած են բալրովին տարրեր ահասկէտների վերայ : Իրանի արքունիքը պաշտպանում է պիտութեան տուալիսեր, ամբողջական հեղինակութեան տեսակեաը . պիտութիւնն է որոշում հպատակների բովանդակ հոգեւոր կեանքը և մերժում է ամին մէկ ազատութիւն : Հայ զեկավարութիւնը մերժում է Իրանի վարիչների տյո ըմբռնումը : Մեր հոգեկան կեանքը, մեր խիզճը ազատ է, գուրս է արքայից արքայի հեղինակութեան սահմաններից : Մենք՝ հայերս միայն քաղաքականապէս Իրանցի ենք, ենթակայ նրա զերիշխանութեան, բայց կրօնապէս մենք ուրոյն միութիւն ենք, ուզում ենք մնալ այդպիսին, պահել մեր կրօնը և այդ խնդրում ենթակայ չենք որևէ աշխարհիկ իշխանութեան : Եթէ Իրանցին՝ զրադաշտական է, ապա հայն էլ՝ հայ-քրիստոնեայ է : Այս տեղ՝ հայերը չեն պաշտպանում խզճի ազատութեան սկզբունքը : Եւ ընդհանրապէս արևելքը որևէ ազատութիւն չեր ճանաչում : Կրօնի ազատութիւնը չէ կապւում անհատի հետ : Նա չի յայտարարում անհատի անրանագատելի իրաւունքը . ոչ . կրօնը խմբակցութեանն է . նա հանդէս է դալիս որպէս խմբակցական ազատութիւն : Իրանի մէջ կարծում էին, որ պետութիւնն է այն հաւաքականութիւնը, որ պիտի ուրոշէ իր հպատակների կրօնը . Հայաստանում այն տեսակէտին էին, որ ամեն ազգային միութիւն ինքն է որոշելու իր կրօնն ու գաւանանքը : Իրանի զեկավարները ելակէտ ունէին՝ մէկ պետութիւն՝ մէկ կըրօն սկզբունքը, հայ վարիչների մեկնակէտն էր՝ ամեն ազգ իր կրօնը : Եւ որովհետեւ ազգն ու պիտութիւնը չեին միատեղում, այստեղից էլ այս երկու սկզբունքի պայքարը : Պետութիւնը՝ ուրիշինն էր, որի մէջ հայերը պահել էին որոշ ինքնավար իրաւունքներ, ազգը՝ իրենցն էր, որ երեւան էր գալիս՝ լեզուի, եկեղեցու և մշակութային արժէքների միջացով : Յազկերտը խօսում է և հրամայում պետականացած կրօնի անունից : Հայերը խօսում են և պատասխանում ազգայնացած քրիստոնէութեան անունից : Թէ Եղիշէի և թէ Ղ. Փարակեցու մէջ բերուած պատասխանի մէջ մէկ բան կայ ընդհանուր՝ ցոյց տալ, որ հայութիւնը հաւատարիմ է իրանին և կատարել է իր զինուորական, հարկացին բոլոր պարտքերը արքայից արքայի հանդէպ : Հետեւապէս նա միայն վստահութեան արժանի է : Բայ Եղիշէի «նախնիներից սովորութիւն ունենք աստուածատուր պատուիրանի համաձայն ալօք անել քա-

\* ) Պ. Փարակեցի. էջ 45:

գաւորի կեանի համար եւ անդադար խնդրել Աստուց երկար կեանի նըրքա համար, որպէսզի խաղաղութեամբ վարէ այն տիեզերական իշխանութիւնը, որ Աստուած յանձնել է դրան»\*): Դ. Փարապեցին աւելի որոշակի է. «Ի լուսաւոր եւ հետարիս օրենս մեր գրեալ է. ծառայք հնազանդ լեռու մարմնաւոր տերանց որպէս Աստուծոյ եւ մեր ըս կարի զօրութեամբ մերոյ երկուցեալ նախ ի հրամանէ օրինաց մերոց եւ ապա ի ձեր եւ ի մեծ քաջաւորութենել ի դեալ ի մասի ոչ միայն ըս երկիրդի մարդկան... այլ կամաւ իսկ եւ յօժարութեամբ յամենայնի զաեր կամս եւ հրաման կատարելց»\*\*): Ուրեմն ըստ Դ. Փարապեցու հայերի տիրասիրութիւնը և Իրանին նույիրուած լինելը կրօնական հիմքեր ունի, այդպէս է հրամայում «լուսաւոր և ճշմարիտ» օրէնքը: Հայերը պետութեան նույիրուած տարր են, չեն սնուցանում անջատողական միտումներ: Վարդան Մամիկոնեանը մի քիչ ուշ Յաղկերտի առաջ արած իր յայտարարութեան մէջ՝ նորից յիշում է, թէ ինչ Քաջադրծութիւններ են արել հայերը Իրանի համար:

Իրենց պատասխանի մէջ հայերը ոչ միայն մերժում են՝ մազգեղական կրօնն ընդունիլը, այլև խիստ քննութեան են ենթարկում այդ ուսմունքը: Համարում են այն սոււտ, ծաղրի առարկայ. միայն ըընութեան տարրերի պաշտամունք. ուրեմն նիւթապաշտութիւն. աւրեգական եւ լուսնի, հողմոց եւ կրակի պաշօն ոչ մասուցանեմք: Այս ըստ Եղիշէի հայ վարիչները եղբափակում են իրենց պատասխանը՝ «Այս հաւատից մեզ ոչ չի կարող խախտել, ոչ նրեւսակները եւ ոչ մարդիկ. ոչ սուրը եւ ոչ հուրը, ոչ ջուրը եւ ոչ ել որեւէ այլ դառն հարուած... Երէ այս հաւատի մէջ բողնես՝ ոչ երկրի վրայ ուրիշ տէր կ'ընդունենք նո փոխարէն եւ ոչ ել երկմեամ ուրիշ ասուած կ'ընդունենք Յիսուս-Քրիստոսի փոխարէն... ահաւասիկ պատրաստ ենք՝ մեր ամբողջ մարմինը նո ձեռք տուած... քո կողմից տանշանի, իսկ մեր կողմից յանձնաւութիւն, քո սուրը եւ մեր պարանոցները...»\*\*\*):

Հայերի գիրքորոշումը շաա պարզ էր. իրենք Իրանի հպատակներըն են, ունին այն բոլոր պարտաւորութիւնները ինչ ամեն մէկ իրանցի, բայց կրօնով՝ տարբեր են, քրիստոնեայ: Վերջնու ընաւ չի խանգարում լաւ և պարտաճանաչ հպատակ լինելուն, ընդհակառակն կրօնը հրահանգում է ծառայիլ իրենց տէրերին: Այս ահաւակէաը հայերանական յարաբերութեան՝ չի բաւարարում արքունիքին: Իրանի վարիչները հայ աւագանի այս պատասխանի մէջ ահմանում են զրսի

\*.) Եղիշէ. էջ 119:

\*\*) Դ. Փարապեցի. էջ 45:

\*\*\*) Եղիշէ. էջ 127-128:

թելագրանք, օտարի մատը: Այլապէս «ձառաներ», այսպիսի աներեկիւղապատասխանել չեն կարող տալ. Յազկերաը մի փորձ էլ է անում հայերի վերայ ազգելու և իր ծրագիրը գործադրելու: Նա արքունիք է հրաւերում Սյորկովկասի երեք ազգերի նախարարութեան զեկավարներին: Հայերից գնում են Վասակ Սիւնին, Վարդան Մամիկոնեան, Վահան Ամասունին, որոնք մարզպանական շրջանի հայոց բնագավառութեան վարչէ դէմքերից էին: Նրանց հետ էին հայ նախարարութեան ուրիշ դէմքեր: Արքունիքում Յազկերա հրահանգում է երեք ազգերի զեկավարներին ընդունելու մազգէղականութիւնը: այլապէս նրանք միշտ պիտի մնան կասկածելի: Վատ հպատակ և նրանց «Ճառայութիւնը» անգամ վեսասկար պետութեան համար: Սյորկովկասի նախարարների պատասխանը նոյնն էր, ինչ որ մշակուեց Արտաշատի ժողովում: Եւ այս յայտարարութիւնը անում է բոլորի կողմից Վարդան Մամիկոնեանը. ըստ նրա յայտարարութեան «զվաստակ եւ զիավատակութիւն, զոր ծառայից պարտ և առ իւրեանց ժիարսն» հայերը և միւսները արել են միշտ և պիտի անեն այսուհետեւ էլ, բայց ինչ վերաբերում է կրօնին: «Բայց զօրենս, որ ուսեայ լԱսուծոյ ի մանեկութիւնի իմմէ բոլով եւ ընդերկիւդի մարդոյ փոխանակել չէ հեար»\*: Ուրեմն այսակզ էլ մարզկային գործունէութեան երկու աշխարհ՝ զատւում են իրարից՝ քաղաքականը և հոգեկանը: Մէկով մենք հպատակ ենք իրանին, միւսով մենք ազատ ենք, ինքնավար նաև հաւաքական հայութեան ընագաւառն է, ուր իրանցին մուտք չունի: Սյս տեսակէտը ոչ միայն հայ կղերինն էր, այլև հայ աշխարհիկ նախարարինը: Իրանական՝ տեսակէտի գործադրութիւնը Հայաստանում յեղաշրջելու էր հայոց բովանդակ կեանքը, Յազկերաը ուզում էր որ հայ նախարարները համաձայնեն իրեն հետ, որովհետեւ առանց նրանց այդպիսի մէկ մեծ ծրագրի գործադրութիւնը անկարելի էր: Ապա նա ցանկանում էր, որ նախարարներն ընդունին նոր կրօնը, ճիշտ այնպէս, ինչպէս չորրորդ գարի կէսերին Շապուհը ջանում էր, որ նախարարները գառնան զրադաշտականութեան գործակալները Հայաստանում: Նախարարական շրջանից այդ նոր կրօնը աստիճանաբար կ'իջնէր հասարակութեան խոնարհ մէջ, եթէ նախարարները լինէին այս ծրագրի գէմ՝ անկարելի կը լինէր առանց ներքին և երկարատեւ կոփւների, գուցէ և առանց արտաքին պատերազմի՝ Թիւզանդիայի գէմ, գործը գլուխ բերել: Խոկ նախարարների պատասխանը բացասական էր: Հինգերորդ գարի կէսին հայոց նախարարութեան համար քրիստոնէութիւնը այն չէր, ինչ չորրորդ գարի նախարարութեան

\*). Պ. Փարպեցի. Էջ 49:

թեան համար : Այդ գարում նրանք երկու ուժեր էին եթէ ոչ բոլորով վեն իրար հակազիր, զոնէ իրար շատ քիչ հանդիպող և խկ երը հանդիպում էին, կանգնում էին իրար զէմ որպէս հակառակորդներ : Շատ պուհ եկեղեցին թուլացնում էր, հոգեւորականներին գլխատում նախարարների օֆանգակութեամբ : Հինգերորդ գարում քրիստոնէութիւնը նը իր շրջանակի մէջ էր առել ամբողջ նախարարութիւնը և մասնակից արել նրան արեւուաքի քրիստոնեայ քաղաքակրթութեան, գիր ու գիրք տուել նրա ձեռքը, նրա ընտանիքի մէջ մացրել որոշ բարոյական սկզբունքներ : Եթէ չորրորդ գարի հայութիւնը զեռ գրեթէ ամբողջութեամբ՝ ապրում էր հիթանոսական միջավայրում և գաղափարների շրջանակի մէջ, ապա հինգերորդ գարի միջավայրն ու գաղափարը քրիստոնէական էր: Եթէ չորրորդ գարում կղերը //միծ ուժ չէր, ազգայնացած չէր, ապա հինգերորդ գարում նա աստիճանաբար ազգայնացաւ, կանգնեց նոր մշակութային շարժման գլուխը և իր շրջանակի մէջ առաւ ոչ միայն բոլոր ապատայ դասերը՝ նախարարական տները, այլև շինականը : Չորրորդ գարում կարելի է սպասել, որ քրիստոնէութեան զէմ ուզզուած հարուածները տապալեն նրան, որովհետեւ նա հայոց հասարակութեան մէջ գեռեւս խոր արմաներ չունէր, հինգերորդ գարում այդ վախը չկար, որովհետեւ նա հայացել էր, անդ բռնել հայութեան՝ զատիքարակութեան, հոգեկան հետաքրքրութեան, ընտանեկան կեանքի մէջ:

Հայ նախարարութիւնը լաւ հասկանում էր, որ խնդիրը միայն կրօնին, և կեղեցուն չէ վերաբերում կրօնն ու եկեղեցին գունաւորում էին ամբողջ հայոց ազգայնութիւնը: Նրանք միրճուել են բովանդակ կեանքի մէջ և առել իրենց շրջանակը: կրօնից և եկեղեցուց գուրս կեանք չկար: Եւ կրօնի ու եկեղեցու մէջ եղած փոփոխութիւնները՝ պիտի առաջ բերէին մէկ մեծ ընկերույին-քաղաքական յեղափոխութիւն՝ նման չորրորդ գարի սկզբին անդի ունեցած յեղափոխութեան: Մէկ ամբողջ հասաւասութիւն՝ եկեղեցին՝ որ մէկ գար հսկայ պայքար էր մզել հայոց և արտաքին ուժերի զէմ իր գոյութեան համար և կէս գար մշակութային գործը գլխաւորել՝ ոչնչանալու էր: Նրա հետ վերանալու էր հայ մտաւորականութիւնը և նրա կատարած մշակութային միծ գործը, որովհետեւ այս երկուսն էլ սկսուեցին և զարգացան քրիստոնէութեան հետ զուգընթաց: Անհետ կորչելու էր այն հսկելոր քրիստոնէութեան հետ զուգընթաց: Անհետ կորչելու էր այն հսկելոր գաղային արեւութիւնները պահում էին որպէս ուրոյն ազգային-կերոնական համայնք, երբ ընդունէին մազգէղական կրօնը, նրանք մէկ մասնիկը պիտի լինէին իրանական նախարարական զասի, որ վաղուց զրկուած էր իր քաղաքական արտօնութիւններից և մնացել էր որպէս կալուածատէր: Յաղիերտի պահանջը միայն կրօնական նպատակ չէր

հետապնդում, այլև ընկերային քաղաքական՝ բուլացնելու հայ նախարարութիւնը հաղաքականապէս, արմաւախիլ անելու հայոց եկեղեցին իր անձնակազմի հետ միասին:

Եւ այս կանխօրոշուած և մշակուած ծրագրի դէմ դիրք է բռնուես հայ նախարարութիւնը: Շատ հաւանական է, որ Յազկերարը սպասէր նախարարների գործակցութեան, որովհետեւ սրանց հայրերն ու նախահայրերը շատ անգամ ընդառաջ էին գնացել իրանի տէրերին, գործնել էին «տիրատեացիք» «տիրամերժ»: Բայց Յազկերարը սխալուեց: Նախարարները այժմ վարում են իրենց քաղաքականութիւնը՝ ոչ իրանականը: Նախարարները իրանի հետ չեն, որովհետեւ չկան հայ Արշակունյանները, որի դէմ միանում էին հայն ու բրանցին: Այժմ կար ներքին-կրօնա-հաղաքական ինքնավարութիւն, որի տերն ու վարիչը իրենք են, նախարարները, այդ է, որ վասնգուած եր, եւ այդ է որ պէտք է պատասխանին: Եւ այս պաշտպանելու համար է, որ Յազկերարի ճշնշման տակ նախարարները հարկադրում են առերիս ուրանալու քրիստոնէութիւնը, որպէսզի կարողանան Հայաստան վերազանալ և պաշտպանութիւնը կազմակերպիլ:

Այսրկովկասի նախարարների ուրացութիւնը համարուեց մէկ մեծ դժբախտութիւն ամբողջ իրանական քրիստոնէութեան համար: Հայոց եկեղեցին բացառիկ դիրք ունէր ոչ միայն Այսրկովկասի երկու ազգութեանց մէջ, այլև իրանա-ասորական քրիստոնեաների շարքում, որոնք գեռ նոր էին կազմակերպում որպէս եկեղեցական-վարչական ուրոյն միաւոր: Իսկ հայ կղերը անակնկալի էր եկել նախարարների ուրացումով: Նու չէր սպասում այդ բանը, մանաւանդ Արտաշատի ոսրշումներից յետոյց: Բայց նա որոշեց ինքն իր ուժերով պաշտպանել եկեղեցին և հայութեան մշակութային նուածումները: Դրա համար եկեղեցին պիտի պայքարի մէջ մտնէր ո՛չ միայն իրանի, այլև հայ նախարարութեան դէմ: Ուստի զարմանալի չէ, որ նա քարոզում է ըլիքհանուր անհնազանդութիւն իշխողների դէմ: Հստ եղիչէի նա հրահնգում է բոլոր քրիստոնեաներին. «Հարազատ եղօր ձեռքը բող բարձրանալ այն մերձաւորի դէմ, որ դուրս է եկել Ասծու պատութանի ուխտից: հայրը չխնայէ որդուն եւ որդին չակնածէ հօր պատուից: Կինը կռուի իր ամուսնու հետ եւ ծառան դիմադրի իր տիրոջը: Աստուածային օրէնքը քագաւորի ամեն բանաւ եւ նոյն օրէնքից յանցաւորներն սասան իրենց գատապարտութիւնն ու պատիճքը\*): Ուրեմն հայ կղերն է կանգնում շարժման գլուխը և քարոզում է հաղաքացիական կոխւ Հայոց կեանքում: Շարժման այս փուլի մէջ նախարարութիւնը գործի գլու-

\*) Տաղիւէ. էջ 14:2:

խը չէ, նոյնիսկ նա կտուածելի է: Դեկտվարութիւնը կղերի ձեռքին է, նո էլ չանում է խոնարհ խաւերն ունենալ իր հետ և հաւատարիմ նախարարներին:

Քաղաքացիական կոռուի որոշում տալով կղերի զեկավարները ցըրւում են գաւառները գործադրելու այն: Եպիսկոպոսներն իրենց «իշխանութիւններն անում, քորեպիսկոպոսները «զիւղերն ու աղարակները»: Խնչպէս Եղիշէն է ասում: «Դրդեցին, հաւաքեցին միծ բազմութեամբ այր եւ կին, տինական եւ ազատ, բահանայ եւ միայնակեաց, խրատեցին, ամբափնդեցին եւ բոլորին Քրիստոսի զինուոր դարձրին»\*): Այսպիսի բանակով նրանք պատրաստեցին զիւմադրելու և հարկ եղած գէպքում նաև յարձակուելու: Հայ-իրանական առաջին զինուուծ հանգիպումը տեղի ունեցաւ Անզզ զիւղաքաղաքի մէջ, ուր իրանցիք յարձակուեցին եկեղեցու վերայ: Հայիրը Դեւոնդ երէցի զեկավարութեամբ՝ քարերով և բրերով յետ վանեցին յարձակումը: Այս բանը զգաստացրեց մոգերին, նրանք զգացին, որ զիւրին չէ լինելու Հայաստանի զրագաշտականացումը: Բայց շարունակեցին գործադրել արքունի հրամանը, որ «Ետևասարպից Նետևասարզ» որոշել էր սրբէս ժամկէտ՝ ծրագրի գործադրութեան: Նրանք հայոց եկեղեցին վեր էին ածում կրակատան: «ալիսնաւոր եւ զեղեցիկ Տեղերում» ատրուշաններ էին կառուցում: մոգերի մէկ մասը հաստատում էր նախարարական աներում՝ յատկապէս կանանց և երեխանների զրագաշտական կրօնով գառափարակելու՝ զործագրում են իրանական կրօնի ծէսերը, զոհաբերութիւնները, արարողութիւնները, քանզում են եկեղեցիները, մեկուսացնում են նրա սպասաւորներին: Երկու կրօններն է, նրանց նըստիրապետութիւնը, որ զուրս են գալիս իրար զէմ՝ շահերի, իրաւունքի համար: Եկող մոգերին օժանդակելու էին նաև Հայաստանում եղած իրանցի պաշտօնի բերումով նրանց զօրավիգ պիտի լինէր նաև Վասակը, որի պաշտօնի բերումով նրանց զօրավիգ պիտի լինէր նաև Վասակը, որի զեկավարութեամբ է, որ այս բոլորը տեղի պիտի ունենար: Եւ շատ բնական է, որ իր պաշտօնը կատարող Վասակը հայ կղերի համար կասկածելի լինէր: Մինչ Տիգրոսից վերագարձող նախարարները ցրում են իրենց կալուածները, սկզբում չիմանալով թէ ինչ պէտք էր անել, վասակն է, որ իր պաշտօնի բերմունքով պիտի զործակցէր իրանցիների հետ: Կղերը նըստիրապետ չիմանալով թէ ինչ պէտք էր անել, վասակն է, որ իր պաշտօնի բերմունքով պիտի զործակցէր իրանցիների հետ: Կղերը նըստիրապետ չանչպէս է Եղիշէն: Հոգեւորականութիւնը աղարաներից, շինական ասում է Եղիշէն: Հոգեւորականութիւնը աղարաներից, բնչպէս ասում է Եղիշէն: Հոգեւորականութիւնը աղարաներից, շինական աղարաներից կազմուած բանակով զիմում է հակայարձակման և քանզում, աերում ատրուշանները: Կոիւն ընզունում էր կրօնական բը-

\*.) Եղիշէն. էջ 141:

նոյթ և իրանը իր հարուածները ուղղում էր հայոց եկեղեցու կազմակերպութեան։ Վերջինս այնքան ուժ էր զգում իր մէջ, որ կանոնաւոր բանակով յարձակուում է պետական կալուածների, բերդերի, ամրոցների վերայ։ Գրաւում են Սրաշաշար, Անին, Սրատէքրսը, Դառնին, Խորանիստը և շատ ուրիշ վայրեր։ Սրանք ինչպէս վերն առացինք Արշակունեաց պետական հոգերն էին, ամրութիւնները որոնք անցել էին Սասանեաններին։ Ապա հասպալում, խնդում էին Երանց տեսքերը եւ հրկիզում էին կրակի պատօնարկի եւ պատօնունի տեղերը։ Մարում էին կրապատօրիչների պղծուրիներ եւ գրաւում էին առաւեանների սարք ու կարզը, բերում դնում էին սուրբ եկեղեցում եւ սուրբ քահանների միջոցով նուիրում էին ի ծառայութիւն տերունական սեղանի»\*)։ Հայերը նոյնիսկ համարձակութիւն են ունենում անցնել իրանի սահմանը «յարձակուել Սարպատականի վերայ, «բազմաթիւ ատրուշաններ» քանդել և վերազառնալ Ռւրեմն Հայաստանում կոփէ ընդգէմ իրանի սկսուած էր։ բայց նախարարական մեծ աները չէին շարժուում։ Նրանք երկրնարանքի մէջ էին ծիշտ է ապստամբութիւնը զլուխ ունէր և մազովրդական էր, սակայն նա դիրութեամբ կարսզ էր պարաւութեան մատնուել, որովհետեւ եկեղեցին զինուած չէր, իսկ ապստամբ ազատանին և շինականը իրենց զէնքերով երկար զիմանալ չէին կարող։ Գործի յաջողուրեան համար անհրաժեշ է, որ աւագանին, նախարարութիւնը առնի իր ձեռքը ղեկավարութիւնը։ Այս է, որ սկզբնական շրջանում պակասում էր նախարարութիւնը վերապահն էր և շատերի աշքին կասկածելի։ Այսպիսի երերուն և անվլճուական կացութեան հետեւանք է Վարդանի որոշումը՝ լքել Հայաստանը, հայրենական կալուածները և տնցնիլ Բիւզանզաւ «Վասն անուան Քիստոսի ընտեմ զնալ յօսարութիւն» ասում է նա իր եղբայրներին։ Իր ամբողջ ընատնիքի, եղբայրների, ազատաների հետ նա զաղթում է։ Վարդանի՝ Բիւզանդիա անցնիլը նշան էր հայ նախարարութեան մէջ ամբողջ լքումի հոգերանութեան։ Բայց նրա զնալը մեծ հարուած էր և երկրի ինքնազաշտպանութեան և հայոց եկեղեցուն ու կղերին։ Նա նոյն մշակոյթի, քաղաքական դիմաշրջումի մարդ էր, ինչ կղերը։ Եկեղեցու և քրիստոնէութեան ամենէն հաւատարիմ զէմքը, նա ունէր հսկայ բարոյական և սազմական զրամագլուխ։ Իր տոհմի ազատաւոր զօրավարները, որոնք նախորդ գարում հայութեան ուազմի հանձարի տիպարներն էին։ Իզուր չէ, որ հայ նախարարները Տիգրոսի մէջ ամեն ծիգ անում էին Վարդանին իրենց հետ միացնելու, որովհետեւ «Տեսեալ եր ամեննցուն եւ լիով ի զրոց նախա-

\*) Եղիշէ. 150-151:

չեմ, երե, ամենայն իր այդպիսի գործոյ ի բնել յոլով Մամիկոնեից ազգաւ եւ նոցա միաբանութեամբ ելեալ են ի գլուխա\*), Վարդանի չուն գէտի Բիւղանդիա ընդհանուր լքում պիտի ստեղծէր և նրանց մէջ, որոնք արդէն կռուի մէջ էին իրանի գէմ: Վարդանի գնալով Վասակը կարցնում էր հայ նախարարների մէջ ամենէն ճեղինակաւոր գործակցին, որ նրան պէտք էր, երբ գէպքերը հասունանալին և ստգմի պայքարի գլուխը կանգնէր. նախարարութիւնը: Ռւսափ եկեղեցու զիշկավարները և Վասակը յատուկ սուրբանադաշտներ են ուզարկում՝ նրա յետեւց, համոզելու և յետ գարձնելու: Նրան յետ բերելու գործի մէջ համաձայն էին բարուը և Վասակը և Հայոց «տանուտէրներ» և «Առաջարկները» և կղերը: Նրանք գէպքին նայում են «խորտակեալ աշխիւ». Նրանք հիմա էլ Վարդանի երթից յետոյ խոստովանում են, որ «Առաջ առաջնորդութեան ազգին այնորիկ եւ ոչ մի ինչ իր եւ գործ աշխարհին Հայոց երեալ են ի գլուխա\*\*): Վասակի և միւս նախարարների կողմից Վարդանին յետ բերելու համար զնում են կղերի լաւագոյն քարոզիչը Դեւոնդ Երէցը՝ և մի քանի նախարարներ: Նրանք յանձնում են Վասակի համակը և յորդորում են վերագանալու անց նիւ գործի գլուխը: Նախարարները նրան ասում էին. «Գու աւադիկ հանդերձ եղբարքդ եւ հաւանեալ ընտանեօդդ... անձնապուր լինիք, բայց մեկ ամենեեան կորնչիմք զանվախնան կորուսնի\*\*\*): Վարդանը իր բացատրութեան մէջ ոչ միայն իր փախուստի պատճուռ՝ ազատորէն քրիստոնէութիւնը՝ գաւանելին է համարում, այլև և այն անվտանութիւնը, որ ունի նախարարութեան հանդէպ: «Բայց ի նենցաւոր խաբեութենէ ձերմէ, զոր արարեալ է ձեր բնդ նախնիսն մեր հանապազ, զայն ամենայն յիշելով գնացեալ եմ լինել անձնապուրծք»: Այս բանը պիտի յիշի և Վահանը 80-ական թուերին եղել է չորրորդ գարում որոշ վերապահ վերաբերում Մամիկոնեանների գէմ հայոց նախարարութեան մէջ, որ պիտի բացատրել երկու կողմերի քաղաքական հակամարտութեամբ և զիմաշրջումով: Մամիկոնեանները միշտ մնացին հակաբրանակուն զիրքի վրայ, կողմեակից էին Սրչակունիների հզօր պիտութեան կառուցման, բայց միշտ նախարարական արտօնութիւնների պահպանումով: Նրանք սերտօրէն կապուեցին հայոց համաձայնում է վերագանալ և անմիջապէս անցնիւ տեղի է տալիս համաձայնում է վերագանալ և անմիջապէս անցնիւ զործի գլուխը: Նա գտոնում է կենարոնական անձնաւորութիւնը, ու զործի գլուխը: Նա գտոնում է կենարոնական անձնաւորութիւնը, Ամենից առաջ նա մըրի շուրջը այժմ գառնում են բոլոր գէպքերը: Ամենից առաջ նա մը

\*): Պ. Փարպեցի. Էջ 50: \*\*): \*\*\*): Նոյնը՝ Էջ 58:

տածում է Վասակի որդիների և Աշուշայ վրաց բգչչի մասին, որոնք պատահող էին իրանի արքունիքում: Հաւանական է, որ նա մտածում էր Վասակի մասին, որի գործելու ազատութիւնը պիտի կաշկանդուած լինէր իր երկու որդիների արքունիքում լինելով: Վարդանը կարծում էր, որ եթէ անմիջապէս ապստամբուին՝ «քէ մի գուցէ դժուար ինչ արանցն ի բազաւորհեն դիպեցի եւ վեասիցին» Բայց զեպքերը աեղի էին ունենում արագութեամբ: ապստամբութիւնը, որ սկսուած էր և որ տանում էին հայ եկեղեցու սպասաւորները թուլանում էր՝ հայոց ուժերը շատ չէին: Ընդհակառակն իրանի զեկավարութիւնը այս զէպքերի ազգեցութեան տակ գործողութեան ընդարձակ ծրագիր էր ծշակում ամբողջ Այսրկովկասի համար, նաև իր լաւագոյն բանակները կենարոնացնում էր հիւսիսում: Այն ինչ հայոց նախարարութիւնը գետ գործի չէր անցել: Կղերը շարունակ նրանցից, մանաւանդ սպարապետից պահանջում էր շուտափոյթ գործի սկսիլ: Նրանք աւելի ևս զըրգըսուած էին Վասակի զէմ, որ այս անցման օրերին՝ հարկազրուած պիտի կատարէր իր պաշտօնը: Եւ իրօք բացառիկ էր նրա կացութիւնը: Հայ նախարարները Տիգրոնից վերադառնալով «զնացին յիւրաքանչիւր յաշխարհն»: ոմանք մտածում էին զաղթել, այդ միտքը շատերի մէջ արմատացել էր գեռ Տիգրոնի մէջ: «Թողեալ զաշխարհն՝ զընամք իւրաքանչիւր յօսարութիւն կնաւ եւ որդուվի...»: Այս շարժումը սկսեց Վարդանը անշուշտ եթէ յաջողուէր, նրան պիտի հետեւէին ուրիշները: Վասակը ոչ մնկուսացաւ իր «տանուատէրութեան» մէջ, ոչ մտածում էր Բիւզանդիա ապաստանելու մասին: Նա մեծացել էր իրանական կայսրութեան մէջ, բարձր պաշտօնների էր հասել այստեղ: Հայ էր զգում իրեն, միտցել էր միւս նախարարների հետ՝ մշակել էր գործի նուազագոյն ծրագիր: Որոշել էին Հայաստան վերադառնալուց յիսոյ թօթափել ուրացութիւնը և միասնաբար գործել իրանի զէմ: Բայց երկար ժամանակ հայ նախարարութիւնը միանալ չի կարողանում: Վասակը այդ ժամանակաշրջանում հանգէս է գալիս որպէս Իւրանի բարձր պաշտօնեայ: Նա գործակցում էր մողերի հետ, օգնում նրանց, հարկազրուած էր հալածելու այստեղ ու այնակ հայ կղերին, կուսելու նրա յարուցած ապստամբութեան զէմ, իր գործակիցների միջոցով մեղմացնելու շարժումները, ցոյց տալու՝ արքունիքին նույիրուած լինելը, բանտարկել և աքսորել շարժման աչքի ընկնող գործ/չ-ներին, ատրուշանները քանդողներին: Անկարելի է, որ նա չմտածէր նաև իր երկու որդիների մասին: Որպէս հայր անշուշտ նա մեծ յոյժուեր էր կապել նրանց հետ: իր մտքում մեծ ապագայ՝ նախապատրաստել նրանց համար: Այժմ իր որդիները հարուածի տակ էին, իր ամեն մէկ անզգոյց քայլը կարսղ էր անզրագառնալ նրանց բախտի վերայ: Վասակի՝ այս գործն է, գործակցութիւնը՝ մողերի և պաշ-

տօնեանեցի հետ, որ տեսնում էր մոլեունդ ամբոխը և նրա զեկավա-  
րութիւնը. նա չէր թափանցում նրա գործի խորերը, որ ծածուկ էր  
նոյնիսկ շատ նախարարներից: Հայ ապատամբները չէին հասկանում,  
որ գործի իսկ յաջողութեան համար մանաւանդ որ, գեռ ուժերը կազ-  
մակերպուած չէին, անհրաժեշտ էր որ Վասակը իր մարզպանական  
պաշտօնը կատարէր:

Այս բոլորը ծանր գրութիւն և աւելի տաժանելի ողբերգութիւն էր  
ստեղծում Վասակի համար. նա գործելու էր որպէս իրանի բարձրաւ  
գոյն պաշտօնեայ, նա պիտի իր գործը յարմարեցնէր՝ հայրական ըզ-  
դացումների թելազրանքներին. ապա նա այս բոլորը պիտի հաշտեցը-  
նէր հայութեան շահերի հետ: Դժուար էր միատեղիլ, հաշտեցնել այս  
երեք գործը և թելազրանքները, երբ իւրաքանչիւրը մզում էր նրան  
գնալու տարբեր ուղիներով, գիմելու տարբեր գործելակերպի: Հայ նա-  
խարութեան և ոչ մէկը այս կացութեան մէջ չէին. նրանք ազատ էին  
իրենց անելիքների մէջ. կարող էին ապաստանել հարեւան կայրու-  
թեան մէջ, կարող էին ծուարել, մեկուսանալ իրնց անմատչելի ամ-  
րոցներում: Վասակը և ոչ մէկն անել չէր կարող: Եւ նրա այս կացու-  
թիւնը ոչ ոք չհասկացաւ. կղերը համարեց նրան իրանացած, «արշ-  
անց ընդունած» կրակի պաշտամունքը, ստեղծուեց նրա շուրջն ան-  
վըստահութիւն. ոչ ոք նրան չէր մօտենում. յարաբերութիւններ նը-  
րա հետ թուլանում էին: Այս անվսատահութիւնը կղերից անցաւ նա-  
խարարութեան, որոնցից ոմանք, ինչպէս Վահան Ամատունին՝ ժա-  
մանակը եկած էր համարում նրանից վրէժ լուծելու՝ կամ իրեն խոր-  
ակելու կամ նրա պատանդ որդիներին սպանել ատլու:

Այս վերաբերումը Վասակի հանգէպ մեզմանում է մի քիչ Վար-  
դանի վերագառնալուց յիտոյ: Սկսում է միասնական գործի շրջանը  
և ծրագրի մշակումն: Կղերը, նախարարութիւնը, մարզպանը համա-  
գումար ժաղովի մէջ որոշում են իրենց անելիքը: «Յերել դարձեալ իր  
բամային նախարարեն Հայոց սուրբ եպիսկոպոսացն եւ Երիցանցն՝ զե-  
ւետարան ուխտին սրբոյ եւ երդուեալ ամենալն բազմաւրիւն՝ զօրացն ա-  
զատաց եւ անազատաց հանգերձ իշխանաւ Սիւնեաց Վասակաւ եւ ա-  
մենայն տանուերեալին եւ սեպիօք հաստակին զերդումն եւ որոց  
մատանեալ չեւ եւս եր կնքեալ զեւետարանն կնքեին...»\*): Այս համա-  
ձայնութիւնից յիտոյ է, որ հայ ուժերը ունենում են իրենց սպարա-  
պետը՝ Վարդան Մամիկոնեանը, ցրուած և առանձին գործող գորամու-  
սերը այժմ ենթարկւում են մէկ հրամանատարութեան: Թէպէս այս-  
տեղ ու այնակ մասնակի կոիւնելը իրանցիների և հայերի մէջ շա-

\*.) Պ. Փարպեցի, էջ 61:

բունակւում է : Այդ ժողովից յետոյ էլ՝ «ռամիկ» զօրաց բազմութիւնը , ինչպէս ասում է Դ. Փարագեցին «Զմանալով բնաւ աւազացն հրամանի» պիմեցին ի տուն մոխրանցի եւ առեալ զկրակարանն՝ վարեցին ի զուրացն զկրակսն, որպէս ի զիւրկս եղօրու...\*)».

Սաաջին գործը պիտի լինէր՝ զաշնակիցներ և զործակիցներ որոնել . հայերը հինգերորդ զարումն էլ զգում էին իրենց թուր պակասը , ուզմի ուժի քչութիւնը . զիւրէին որ իրենց ուժերով իրանի զէմ կըոռուիլ չեն կարող : Դաշնակիցները ունենալը անհրաժեշտութիւն էր . առաջին և բնական զաշնակիցները Այսրկովկասի ժողովուրդներն էին , վրացիք և աղուանները , որոնք հայերի հետ միաժամանակ նոյն հայտանքներին էին ենթակայ և նոյն շահներն ունեին . Յայց այս Էլ քիչ էր : Հարեւան ժողովուրդները լաւագոյն զէպքում կարող էին իրանական մէկ երկու բանակ զրագեցնել իրենց երկրում , իսկ հայերին օգնութեան գալ չէին կարող :

Դաշնակիցներ սրոնելու և զաշինքներ կնքելու այս գործի զլուխը կանգնած էր Վասակը : Որպէս մարզպան նաև ազատորէն կարող էր յարաբերիլ հարեւանների հետ : Իր այդ իրաւունքը այժմ նա ի ոպաս է բերում հայկական զալիք ապստամբութեան միջազգայնօրէն ապահովացնելու համար : Նա կապւում է Կովկասի լիսնարնակների յատկապէս հոների հետ , որոնց զեկավարութեան հետ նա կապեր էր՝ հաստատել զեսեւս Վարպատանի Մարզպան եղած մամանակ : Հոները լաւ կոռուզներ էին և միշտ յարձակում էին իրանի վերայ հիւսիսային կիրճերից : Ասպա Վասակի հետ միասին հայ զեկավարութիւնը նամակներ է գրում «Առ բլեւսն Աղձնեաց , առ իշխանն Անգեղան , ի Ծոփս եւ ի Հաւեւանս եւ լինեղեաց եւ այլ իշխանաց իւրաքանչիւր տեղաց»\*\*) : Այս իշխանութիւնները մհծ մասամբ Բիւզանդական սահմաններումն էին գտնում . ուրիմն իրանահայութեան զեկավարութիւնը զիմում է Յունանայաստանի հայութեան օգնելու իրենց գալիք ապստամբութեան ժամանակ : Յայց այս բոլորը նորէն քիչ էր . պէտք էր իր հետ ունենալ Բիւզանդիան : Եւ անտ Վասակը յատուկ պատուիրակութիւն է ուղարկում Բիւզանդուկան արքունիքը , զինական օգնութիւն խընդրելու : Ուղարկելիք գրութիւնները նա կնքում է «իւրով մատանաւաւ» : Պատուիրակութիւնն մաս կազմում են Վահան Ամատունին , ուրպակս զայր մասցի եւ խորհրդական , Հմայեակ Մամիկոնեան , սպարապեաի եղբայրը և ներշապուհ Արծրունին «զեղբայր սրբոյ Աղանայ» : Բիւզանդական արքունիքում հայ պատուիրակները լաւ ընդունելութիւն են գտնում . թէոզոս կայսրը անշուշտ զիւրէր , լաւատեղեակ էր

\*) \*\*) Դ. Փարագեցի . էջ 63:

Հայկական գործերին։ Հայոց կրօնա-քաղաքական ինքն ավարութեան կորուստը ծանր հարուստ պիտի լինէր կայսերական շահերին։ Իրանցիները շատ տւելի ամուռ պիտի զգացին իրենց Սեւ ծովից սկսած մինչև Ասորիքի սահմանը և վատանգուած պիտի լինէր կայսրութեան ամրոջ արեւելիան սահմանը։ Մազմուկան և քաղաքական շահերը պահանջում էին առնւազն Իրանահյառութեան եղած կացութեան պահպանումն ։ Մանաւանդ որ հայութեան այդ մարզը, յունական մըշակոյթի մէկ ընդպարձակ զաշտ էր, որանզից նրա լոյսը ճառագայթում էր գէպի արեւելք՝ մինչև Մարաստան և Կասպից ծովի ափերը։ Այս բոլորը ի նկատի ունենալով է որ Թէոփոս կայսրը խոսանում է հայերին օգնութեան հստակ ։ «Մեծ յօժարութեամբ նոդ է տանում, որ արեւելին եկեղեցիները չափաւակին անօրէն ներանոսների կողմբց ինչպէս տառում է Եղիշէն։ Բայց կայսրը մեռնում է 450 թ. Յանիսին։ Հայերին օգնելու հարցը մնում է անորոշ Նոր կայսրը Մարկիանոսը նախքան օգնութիւն խոստանալը խորհրդակցում է Անատոլ սպարապետի և Ֆլորենտիոս ասորու հետ, որոնք արեւելիան հարցերի նկատմամբ նրան խորհրդատուներն էին։ Իսկ սրանք «Երկուսն ել անարգ ու վատրա, միեւնոյն ժամանակ եւ անասուած մարդիկ» համոզեցին կայսր, որ չը խախտի նախկին գաշինքները իրանի հետ։ «Թագաւորը չկամցաւ ուշադրութիւն դարձել նայերի ուխտին»։ «Եսկ այս անարի մարդը աւելի լաւ եր համարում իր գաշինքը պահել ներանոսների հետ մարման խաղաղութեան համար, քան թէ քրիստոնութեան ուխտին պատերազմակից լինել»\*), Անշուշտ Մարկիանոսի վարքագիծը թելագրուած էր կրօնական այն անելի պայքարով, որ մաշում, սպասում էր Բիւզանդիայի ներքին ուժերը և պատկառում նրա կամքը։

Մինչ հայ պատուիրակները կ. Պալսում գործում էին յանուն Հայյաստանի, մինչ Բագրեւաննում ժողովրդական ապստամբութիւնը էր ծաւարում, մողերի կատարած աեզի ունենում իրանական վարիչ՝ զեկավար մարզը՝ Մինք-Ներսինը մէկ բանակով երեւում է Փայտակարանում իր օգնականներով և ծորաց պահեկի պաշտպանութիւնն ամրացնելու և Ազուանից ուժերը անշարժութեան մէջ պահելու և Այսրկովկասի ապամական գործողութիւնների ծրագիր կազմելու Ազուանները օգնութիւն են խնդրում հայերից և Վարդանը իր լաւագոյն բնկերակիցներով գնում է նրանց օգնելու։ Հայ-իրանական բանակները իրար հանդիպում են Խաղխալ քաղաքի մօտ, որ Ազուանից թագաւորների ձմեռանցն էր Հայերը այսակ յազմում են իրանցիներին, ապա գրաւում Ազուանից աշխարհի հրատարակին մասերը

\* ) Եղիշէն. էջ 154։

ըր, համնում ձորայ պահակ, այնտեղ դնում են իրենց և Ազուանից սահմանապահները: Ազուաններին է յանձնուում երկրի ներսը մաքրել իրանցիներից՝ գրաւել բերդերը, ամբութիւնները, քաղաքները: Շատ ազուան իշխաններ, որոնք ցցիրուցան եին եղել Կապկոն լեռները», վերադարձն եւ միացան Հայոց բանակին: Վարդանը երկրի իշխանութիւնը յանձնում է ազուանից թագաւորների ցեղից վահանին: Ապա վերահասատառում է Հոների և Կովկասեան միւս ցեղերի հետ հին դաշինքը և ապահովում է իր թիկունքը: Հոները՝ սպառնալիք էին իրանի համար և վերջինս մեծ բանակ պիտի պահէր նրանց առաջ:

Հայոց աշխարհում մնացել էր մարզպանը՝ Վասակը: Մեր իրկու պատմագիրներն էլ Վասակին արգէն անցած են համարում իրանի կողմը և զաւելիս հայերի դէմ: Նա յետին զիտաւորութեամբ է, «Ծարդանին ուղարկած է եղել Ազուանից աշխարհը, որպէսզի մինակ իր ծրագիրները իրագործի Հայաստանում: Նա յայտնում է իրանի զեկավարներին ուղարկան գործողութիւնների և հայկական ուժերի ցրումի մասին: Մոզերի և իրանցիների հետ գործակցում է և հայտածում է կզերին: Նորից վերագրաւում է «Հայոց աւելացին շատ էպիկեր»: Եղիշէն յիշում է բազմաթիւ վայրեր, որոնք մարզպանութեան օրով գորքի կայաններ էին, այսինքն պետական կարուածներ, բերդեր, ամրոցներ, որ ապստամբները գրաւել էին: Հսա Դ. Փարպեցու «Սեաց անօրենն Վասակ ուխտին Աստուծոյ եւ նենցեալ դրժեաց Աւելացանին երդման եւ լեսա կացեալ ապստամբեաց ի միաբանութենի նշանաւութեանն...»\*): Հսա Եղիշէի Վասակը կատարելապէս կուր էր յայտարարել եկեղեցու՝ «Ձեռք է տուել սուրբ եկեղեցիներին, տարել է նաեւ Եկեղեցու սեպանի սուրբ անօրեները, գերել է քահանաների բնանիքներին, խոկ նրանց կապել է, բան է դրել...»\*\*): Խնդիրն այն է, որ Կ. Պոլիս պատուիրակների առաջումով հայերը սպասողական դիրք չբոնցին, չգագարեցրին իրենց յարձակումները, գիմազրական պայքարը՝ իրանի հանգէպ: Ոչ միայն այդքան, Վարդանի գլխաւորութեամբ մեծ մեծ քանակ և ընտիր զեկավարներով տնցաւ Ազուանք և նպաստեց այդ երկրի ազատագրման: Հայերը շարժման մէջ էին զրել իրենց բոլոր ուժերը և ապստամբ վիճակի մէջ էին: Եւ այս այն ժամանակ, երբ Բիւզանդիայից ոչ մէկ պատասխան չկար: Հայաստանում եղած իրանցիները բնական է այս ընդհանուր շարժման մէջ պիտի երբեմն յարձակուէին, երբեմն պայշտպանուէին: Այս բոլորը կատարւում էր իրանական հրամանատարների, մոզերի իշխանութեամբ, խորհրդով: «ա-

\*) Դ. Փարպեցի. էջ 67:

\*\*) Եղիշէ. էջ 158:

կայն իրանական վարչութեան զլուխը կանդնած էր վասակը, որ բոլոր պատահած գէպքերի պատասխանառուն էր, Բանի որ Բիւղանդիայից ստոյդ պատասխան չկար, նա պիտի գործէր որպէս իրանական բարձր պաշտօննեայ, երբեմն մնողմացնէր հալածանքները, երբեմն կասեցնէր գէպքերը, երբեմն էլ հայ ապստամբների գէմ պատժական միջոցների գիմելով՝ նրա այս բոլոր գործողութիւնները համարուեցին ապստամբութիւն միաբանութիւնց», «նեռացումն քիսոնիից»։ Նա միակ մարդն էր, որ մտածում էր, թէ Իրանի հետ բալոր կապերը չը պիտի խցել, Մեծ յոյսեր չունէր հարեւան ժողովուրդների առջիք սաղմի օգնութեան, նրա մեծագոյն յոյսը՝ Բիւղանդիան էր, որ շահեր ունէր հայերին օգնելու։ «Ապստամբութեան ծրագիրը հիմնուած էր արեւմուտքից ակնկալած օգնութեան վրայ» — առում է Ն. Ազովցը։ Այսպէս կորիների, խոռվութիւնների և փոխադարձ անվտանգութեան մէջ անցընում է 450 թ. ձմեռը։ Արգմական գործողութիւնները զագարում են, երկու կողմերն էլ պատրաստում են գարնան համար։ Վարդանը պատրաստում է իր բանակները, և գասաւորում նրանց Իրանի սահմանակից վայրարում։ Իրանցիներն էլ իրենց հերթին գորք են կենարոնացում Հէր և Զարեւանդ գաւառներում։

Այսպիսի պարագաներում է, որ ստացում է Բիւղանդական պատասխանը։ «Մեզ ոչ բոլի հանոյ արհամարել զուխս եւ զնաստանութիւն զոր ի բազում ժամանակաց գրեալ եւ կնքեալ և առաջին բագաւորաց։ Բիւղանդիան՝ մերժեց հայերին օգնել ոչ միայն այդքան, այլև նոյն խորհրդական Ֆլորենտիոսի միջոցով յայտնեց Իրանի արքունիքին, որ ինքը հաւատարիմ է իր հին գաշինքներին։ Անշուշտ սրա հետեւանքով Իրանի զեկավարները գիտէին հայ-յունական գիւղանագիտական յարաբերութեանց մասին։

Այժմ հայոց զեկավարութեան առաջ գրւում է մէկ հարց, ինչ առնելու թէ ապստամբութեան ծրագիրը մշակուած էր Բիւղանդական օգնութեան վերաց, ապա այդ օգնութիւնը մերժում է։ Հայ զեկավարութիւնը այս հարցին առաջ գոյութիւն ունէր, ջլատուեց և ստեղծուեցին կողմեր, հոսանքներ, սրանք վերաբերում էին գործունէութեան ձեւին, միջոցին, ոչ նպատակին։ Եղիշեն առում է։ «Թէպէտեւ տեսնում եին իրենց սակաւարթիւնն եւ երկու բագաւորների միաբանութիւնը, բայց եւ այնպէս ամենեւ ին չէին վիատում եւ դովում... թէպէտեւ բագաւոր չունեին իրենց առաջնորդ եւ ոչ ել դրսից ուրեւէ օգնական օսարեներից, բայց բոլոր նախարարներն... ամեն մէկն իր տեսից տապով եկան. մի տեղ հաւաքուեցին...»\*։ Այս միշտ չէ. զրսից օգնութիւն չստանալը – ճակա-

\* Ելիտե. էջ 154:

տազրական նշանակութիւն ունեցաւ հայութեան համար։ Մինակ մը-  
նալով հայոց զեկավարները նոր դիրքորոշման առաջ կանգնեցին։  
Վարդանը և իր գործակիցները մտածում էին՝ թէ ապստամբութիւնը  
կայ, փաստ է, նոր չպէտք է սկսի, մի քանի ամիս է, որ հայոց  
կղերը անցել է զիմազրական շարժման գլուխը։ Կործանուել են եկե-  
ղեցիներ, խորտակուել են ատրուշաններ, հաշտեցնել այլեւս երկու  
կողմերին անկարելի է։ Հայ նախարարները միացել են ապստամբնե-  
րին, նրանք ազատազրեցին Աղուանից աշխարհը, ջարդեցին իրանա-  
կան բանակը, հետազօտական և պատճիչ բանակներ մտան Աարագա-  
տական և կործանեցին կրակարանները։ Հայն ու իրանցին արգեն-  
կոուի մէջ նն։ Այլեւս յետ նահանջել անկարելի է. ընտրութիւն չը-  
կայ՝ պէտք է տարունակել արդէն սկսածը. եթէ ոչ կորած է թէ կը-  
րոնական և թէ քազաքական ինքնավարութիւնը, թէ այն հսկայ մը-  
շակութային գործը, որ հայութիւնը ձեռք բերեց 50 արրուայ մէջ։

Այսպէս չէր մտածում. Վասակը. ապստամբութիւնը նպատակ չէ։  
Բիւզանգիտն չօգնեց, ազուանները և վրացիք թոյլ են՝ մեզ օգնելու  
համար, մեղնից է, որ ոգնութիւն կ'սպասեն։ Մեր ուժերով իրանին  
պարտութեան մատնել անկարելի է։ Կէս ճանապարհից նահանջելին  
իմաստութիւն է... խոհեմութիւն և փրկութիւն։ Ի հարկէ զոհեր պիտի  
տրուին, պիտի հաշտուիլ դրա հետ, բայց այդ լինելու է չնչին կո-  
րուստ՝ համեմատած ապստամբութեան մէջ պարտուած լինելու հետ։  
Այսպիսի պայմաններում ապստամբութիւնը արկածախնդրութիւն է։

Վարդանը և Վասակը միայն իրենց անձնական տեսակէաը չէ, որ  
արտայայտում էին։ Նրանք ներկայացուցիչն էին նախարարական եր-  
կու հոսանքների, որ առաջ եկաւ հայութեան զեկավարութեան մէջ  
Բիւզանգիտիք պատասխանից յետոյց երկու հոսանքների այս ներքին  
պայքարը բանում է 451 թ. գարնան ամիսները։ Երկու հոսանքն էլ  
գործում են. իւրաքանչիւրը ջանում է ուժեղանալ ի հաշիւ միսիւ։  
Վասակը ջանում է իր համախոնների թիւը միծացնել, ամեն միջոցի  
զիմում է հակառակորդին թուլացնելու համար։ Նա ամեն բան անում  
է, որ ապստամբութիւնը տեղի չունենայ։ Նրան միացած էին նախա-  
րարութեան մէկ զգալի մասը։ Մեր պատմագիրները՝ Եղիշէն և Դ.  
Փարագեցին յիշում են նրանց անունները։ Եր. Տէր Մինասիանը եղի-  
շէի թարգմանութեան կցուած ծանօթութեանց մէջ յիշում է բոլոր  
նախարարներին և նրանց կալուածների գասաւորումը\*)։ Վասակին  
միացած են եղել Ռետունիք Վանայ ծովի հարաւարեւելքը, Խարխու-  
ռունիք Վանա ծովի հիւսիսարեւմուտքը, Վանեվունիք հաւանօրէն

ստորին Բառէն. Գաբեղեան՝ այժմեան կազմուանի շրջանը, Բագրա-  
տոնի՛ Հայաստանի ամենախոչը և ամենապատուաւոր նախարարնե-  
րից, որոնց պատկանում էր Բարձր Հայքի Սպէր գաւառը, Այրարատի  
Կողովիտ գաւառը՝ Դարոյք զիլիաւոր քաղաքով, այժմեան Հին Բա-  
յազէտը։ Ավանութի՛ Վանայ ծովից հիւսիս, այժմեան Մանազկերափի  
շրջանը. Ակէ Պարսից Հայաստանում՝ այժմեան Մակուի շրջանը, Ուրծի՛  
տեղը որոշապէս յայտնի չէ. Պայունի՛ որոնք երկու մասի էին բա-  
ժանուած. մհծ մասը բնակւում էր Վասպուրականում, գործակցում  
Վասակի հետ, միւս մասը սահմանակից էր Տարօնին և գործակցում  
էր Վարդան Մամիկոնիանի հետ։ Նախարարական կալուածների այս  
դասաւորումից երեւում է որ զիլիաւորապէս հարաւի և հարաւարե-  
ւելքի իշխանական տննըն են, որ միացել են Վասակ Սիւնիին։ Նրանց  
կալուածները մօտ էին, սահմանակից իրանին և միշտ հարուածի տակ։  
386 թուի սահմանաբաժանումից առաջ՝ հարաւարեւելքի մի շարք  
շրջաններ՝ Սղձնիքի զիլիաւորութեամբ զուրս մնաց սկիզբը Իրանահա-  
յաստանից, ապա մարզպաննութեան շրջանից և Իրանի սահմանները՝  
հարաւից գծուեց Վանի լճի շուրջը։ Հիսուեապէս բուն հայոց նախա-  
րարներն էին այժմ անմիջական օտարի հարուածների տակ՝ սկսած  
Արաքսի ափերը հասնող Սիւնիքից մինչեւ Վանայ լճի շուրջն ընկած  
իշխանութիւնները։ Տեղադրական այս ինզիրը պէտք է ի նկատի ու-  
նենալ՝ նախարարների գիրքորոշումը հասկանալու համար։ Նրանց  
կալուածները պիտի ենթարկուէին իրանի ներխուժման։ անմիջապէս  
ուազչի բեմ գառնային։ Այս էլ հակագրում է հայ նախարարներին  
համաձայնութեան եղր գտնել իրանի հետ։ Իսկ որովհեաիւ այս տե-  
սակէտի պաշտպանը Վասակ Սիւնին էր, ուստի հաւաքրում են նրա  
շուրջը։ Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ Վասակը մինակ չէր։ Նրա  
հետ էր հայ նախարարութեան մէկ մասը։ յատկապէս նկատելի է Բագ-  
րատունիների գործակցութիւնը՝ Սիւնեաց ափրոջ հետ։ Անշուշտ սրանք  
բոլորն էլ հայկական գործի գաւանանները չեն, այլ հայոց քաղաքա-  
կան մէկ մեծ հոսանքը, որ գէմ է ապստամբութեան, համարելով այն  
կործանարար ու աղետաբեր։ Վասակը սրանց մաքերի թարգմանն էր  
և նրանց քաղաքական զեկավարը։ Վասակի հետ էին նաև բազմա-  
թիւ հոգեւորականներ, որոնց եղիշէն որակում է առուա երէցներ» ա-  
նունով։ Վասակը սրանց միջոցով գործում է չարիքներ»։ ուզարկում  
է նրանց հակառակորդների մէջ քարոզիլու, հասկացնելու գալիք ա-  
հաւոր զէպքերը։ նա «անմեղ մարդկանց... իտարում էր և մոլորեց-  
նում։ «Իրեն և բոլոր ուրացողներին ասասուածապաշտների շարքն էր  
գնում և իրեն աւելի հաստատուն էր ցոյց տալիս, քան ամբողջ զօր-  
քը։ Նա մարզիկ էր ուղարկում Տմորիք, Կորզուաց աշխարհ, Արցախ,  
Աղուանից աշխարհ, Վրաստան և Խաղպիաց աշխարհ՝ ամենուրեք տա-

րածում էր այն լուրը, որ Իրանի հետ համաձայնութիւն է կնքել, «արքունիքից սացել է բողոքիան նրանանեւուն. հնահւապէս ապատամ-քութիւնը իմաստ չունի: Այս ձևով Վասակը ուզում էր չէպօքացնել, մեկուսացնել Վարդանին և իր գործակիցներին: Եւ այս յաջողուեց նրան: Եւ ինչպէս Եղիշէն առում է: «Հայոց օրբին դրսից ոչ մի օգնող չեղաւ»: Վասակը կարողացել էր ռուանց զայխ, մեծ պարզեւներով. ուրեմնի զանձարանից առաս-առաս պարզեւներ բաժինով», չեզոքացը-նել եւ մեկուսացնել ընդհանուր զործից»\*): Ըստ Դ. Փարափեռ Վասա-կը «Ոչ երբեք դպրաւեր գրել նամակս առ իշխանս եւ Շինականս եւ Տա-հանայս աշխարհին Հայոց»: ամեն աեղ ցոյց էր տալիս, որ եր ներուի նրանց գործերը, մոսացութեան կր արուի նրանց մեղքերը՝ եթէ բա-ժանուին Վարդանից «Եւ մի կորնչիք ընդ նիսա»:

Բայց այս բոլորը քիչ էր: Որքանի որ Իրանի վերաբերումը փոխ-ուած չէր հայերի նկատմամբ, այնքան էլ հաշտութեան եզր գանել նրանց մէջ անկարելի էր: Վասակի զրական զործը պիտի լինէր և նրա քաղաքականութեան արգարնցումը՝ եթէ Իրանի արքունիքին համոզել կարողանար զիջումի ուզին բանել: Պէտք էր վստահեցնել հայերին, որ նրանք՝ հզանքների համար չեն պատճուելու և որ ամե-նազլիսաւորն է հին կարգը՝ նորից մնալու է իր ամբողջութեամբ: Այս զործին էլ ձեռնարկում է նա:

Իրանի արքունիքի համար Հայաստանի և Այսրկովկասի շարժման այսպիսի ծաւալումը և բնոյթը՝ անսպասելի էր: Առաջին անգամն է, որ կայորութեան ներսը մէկ ընդարձակ և ուժեղ ճակատ էր ստեղծ-ուում իր գէմ: Իրանը այսպիսի բան չէր սպասում: Նո յոյս ունէր թեթեւ յաղթանակներ տանել հայերի խոկ միջոցով, այնպէս՝ ինչպէս եղել էր չորրորդ գարում: Այժմ ամբողջ քրիստոնեաց Այսրկովկասը ծառացել է իր գէմ՝ Հայաստանի գլխաւորութեամբ: Արքունիքում այս խնդիրը նորից քննարկութեան է ենթարկելում. պէտք է են-թագրել, որ այս շարժումը անդրագարձում է ունեցել նաև միւս քը-րիստոնեայ շրջանների վերայ. անշուշտ ոչ սազմապէս: Բայց Պարու-կա-աստրական քրիստոնեութեան համակրանքը եղել է Հայաստանի ապօտամբների կողմը: Կար և այն, որ Յաղիերտը ռարեւելի պատե-րազմից կորիզնաւու եր վերադարձել եւ ոչ թէ բարձրագլուխս, ինչպէս ասում է Եղիշէն, այսինքն քուշուների պատերազմը շարունակուում էր և Իրանի համար ոչ մեծ յաջողութեամբ: Ապա սպասամբութիւնը մէկ ամբողջ հարուստ երկիր՝ Այսրկովկասը՝ գարձրել էր՝ ապահարկ: Պե-տական հասոյթները պակասում էին, երկիրը կոխների հետեւանքով

\*) Եղիշէ. էջ 171:

բանում էր տնտեսական քայլայման ուղին։ Եւ այդ քայլայումը պիտի շարունակուէր, եթէ իրանցիները զինու զօրութեամբ փորձեն ճռչել ապստամբութիւնը։ Խսկ երկրի նիւթական հարստութեան քայլայումը՝ դէմ էր Զրագաշի ուսմունքին։ Նա Անրիմանի գործն է։ Միայն ծայրահեղ պարագաներումն է, որ իշխանաւորը պիտի զիմէ այդ միջոցին։

Այս հսկամանքներն ի նկատի ունելով է, որ Յազկերտը մէկ քայլ նահանջում է և որոշում է հաշտութեան եղբ գոնել ապստամբների հետ։ Անշուշտ այս գործի մէջ պակաս գեր չէ խաղացել Վասակի տեւական յիշեցումները, խորհուրդները Իրանի կենարոնական իշխանութեան։ Նա յիշեցում էր, որ անհրաժեշտ է Հայաստանի կրօնաքաղաքական ինքնուվարութեան պահպանումը։ Արքունիքը ի վերջոյ հարկադրում է որոշ զիջումներ անելու։ Ըստ Եղիշէի՝ Յազկերտի կրօնական հալածանքը ընդհանուր էր ուղղուած բոլոր քրիստոնեաների զէմ, որ Հայաստան հասաւ միայն 449 թուին։ Յազկերտի աներման» հրովարտակն էլ ընդհանուր բնայթ է կրում։ «Թողուրեան հրովարտակներ ուղարկեց իր իշխանութեան ու Տէրուրեան բոլոր կողմերը Քրիստոնեաների վերաբերմամբ։ Հրամայում է, որ «Կապանքների» մէջ եղածները՝ արձակուին, յափշտակուած գոյքերը վերագրածուին։ «Այսպիս ել հողերը՝ թէ նայրական, թէ պարզեւ սացած եւ թէ փողով գրենած՝ երե որեւէ մեկը խել է, նրամայեցինք որ վերագրածնեն։ Յատուկ մարգանց միջոցով «հաւատարիմ վկայութիւն է ուղարկում Հայոց երկիրը եւ երգումով ուխտում եր նրանց առաջ իր բոլոր մեծամեծների հաստատուրեամբ թէ «ամենեւին մտովս չեմ անցկացնի վրեկիսնդիր լինել։ Խնչպիս առաջները նեմարտուրեամբ պահում եիք ձեր կրօնը, այսուհետեւ աւելի պահեցէք, միայն թէ մեր ծառայութիւնից դուրս մի գաֆա»\*).

Ուրեմն Յազկերտը յայտարարում է կրօնի, պաշտամունքի ազատութիւն, յափշտակուած գոյքերի, բանագրաւած և յարքունիս գրաւած կալուածների վերագրածները՝ այսինքն հին կարգի վերահաստատումն։ Արքայական ներման հրովարտակը վերաբերում է ամրոջ Քըրիստոնէութեան, բայց մասնաւորապէս հայերին, որոնք պատամբ դրսութեան մէջ էին։ Դ. Փարպեցին էլ մի քիչ անորոշ, խօսում է նոյն խնդրի մասին։ Վասակի գոնծակալները ամեն տեղ լուրիր են տարածում, թէ «Արքայից արքայ զբանական առողջութեան ամեն ասէ, թէ բնաւ եւ յիշեմ խսկ ոչ, միայն թէ ի բաց զառնայք ի խրատուէ եւ ի բանից

\*.) Եղիշէ. էջ 163 164:

Վարդանայ եւ մի կորնչիք ընդ նմա»\*). Ապա Վաստակը խռովանում է, թէ ինքը միջնորդ պիտի լինի արքունիքի և հայութեան մէջ՝ խաղողութեամբ ամեն բան վերջացնելու:

Բայց հնարաւոր էր հայ-իրաւեական համաձայնութեան եզր զըտնել, Դէպքերը շատ էին տառջացել, անվստահութեան մթնոլորտը համատարած էր, իրանցիները ամեն ելք ի նկատի ունենալով մէծ բանակներ էին հանել Հայաստանի սահմանների վերայ: Հայ կղերը ըստեղծել էր Վասակի և իր կողմանկիցների շուրջը հոգեբանական անվրստահութեան մթնոլորտ: Իսկ իրանի արքունիքի հրովարտակը հայ զեկավարները համարեցին՝ «ներսից մանա բերող, վհատեցնող, պառակտում առաջացնող գրութիւն: Հայերն իրենց հարց էին տալիս. և բարեկործութիւնը տեսան պարսից աշխարհում գտնուած բայր եկեղեցիների վերաբերամբ. . . Ինչպէս որ անիրաւութիւնից արգարութիւն չի լինիր, այնպէս ել ստորիւնից եւմարտութիւն չի լինիր, նմանապէս եւ խոսվասէր մժից ազատուրեան ակնկալութիւն»\*\*): Իսկ Դ. Փարպեցին՝ խոստումները, զիջումները համարում է «բանս ցնորսից», Ուրեմն հայերը լրջօրէն չվերաբերեցին իրանի արքունիքի խոստումներին, չվատահացան և որոշեցին զէնքով զիմազրել նրան: Հաւանական է, որ հետագայ գէպքերի ընթացքի վերայ ազգեցին նաև Բիւզանդիայի որոշումը՝ հայերին օգնութեան չտալը, որին մասին անշուշտ գիտէին իրանի արքունիքում, որովհետեւ կայսրը դեսպանութեանց միջոցով յայտնել էր իրանի զեկավարութեան, որ ինքը պահելու է յոյն-իրանական նախկին գաշինքներն անխախտ: Եթէ հայերի անվստահութիւնը ստեղծում էր ուազմի մթնոլորտը, կայսեր խաղաղատենչ միտումը՝ կարող էր արագացնել գէպքերի ընթացքը՝ մղել իրանին զէնքով լուծելու հայկական հարցը:

451 թ. գարնան՝ արքէն որոշ էր երկու բան — հայերը և իրանցիները պատերազմական յարաբերութեան մէջ են իրար հետ, հայոց ուժերը պառակտուած են, բաժանուած երկու բանակի: Հետեւապէս իրանի գէմ կոիւ պիտի մղէ ոչ թէ ամբողջական, այլ պառակտուած հայութիւնը, նրա մէկ թեւը միայն: Այս էլ որոշելու էր գէպքերի ընթացքը: Վասակը շարունակեց իր գործը. այժմ նա իր կողմանակիցների հետ միացաւ իրանցիներին: Արգեօք հայն էր գործում նրա մէջ, թէ իրանցի բարձրագոյն պաշտօնեան՝ մարզպանը, մի գուցէ և սիրող հայը՝ իր զաւակներին կորուսափց ազատելու: Մինչեւ այդ նա գործում էր որպէս հայ, առաջինն էր նախարարների մէջ. որ կանգնել

\*.) Դ. Փարպեցի. էջ 67-68:

\*\*) Եղիշե. էջ 164.

Էր գործի զլուխը և նախապատրաստել էր ապստամբութիւնը ։ Նա էր որ գործի կանչեց վարդանին ։ Բայց և առաջինն էր, որ հրաժարուեց ապստամբութեան միտումից, երբ տեսաւ, որ նա սկզբից իսկ մատնը-ուած է անյաջողութեան՝ առանց Բիւղանդիայի աջակցութեան ։ Նա յունաէր չէր, ոչ քաղաքական տեսակէտից, ոչ էլ մշակութային, բայց գիտէր, որ ապստամբութիւնը՝ կարող էր յաջողութիւն ունենալ միայն Բիւղանդիայի գործոն մասնակցութեամբ ։ Եւ երբ այդ գործոն օժանդակութիւնը մերժուեց, նա էր, որ արիտմիւն ունեցաւ յայտարարելու թէ Իրանի հետ համաձայնութեան եզր պիտի գանել ։ Նա վերջին պահուն իր և իր ընկերների բանակներով միացաւ Իրանին մի գուցէ այն միտումսվ ։ Թէ Իրանի յաղթանակից յետոյ՝ իր՝ Վասակի հոսանքն է, որ նորից գործի գլուխ պիտի կանդնէր Հայաստանում և նրա ճակատագիրը որոշէր ։ Եւ որպէսզի այդ բանը լինի, անհրաժեշտ էր սերտ գործակցութիւն Իրանի հետ ։ Հայերի պարտութիւնից յետոյ կացութիւնը մեղմացնող ուժեր են հարկաւոր Վասակը կարծում էր, որ այդ լինելու են ինքը և իր գործակիցները ։ Այս մըտածումն է հաւանաբար, որ նրան մզում էր սերտ գործակցութեան Իրանի հետ ։ Եւ այս մտածումն է, որ նրան հայ «ուխտապահների» չրջանակում զարձրեց «զաւածան», ուխտազրուժ և հայկական շահերի թշնամի ։

Պատերազմը տեղի ունեցաւ Աւարայրի գաշտում 451 թ. հայ ռուխտապահ նախարարները պարտուեցին ։ Վարդանը իր աշխատակիցների հետ ընկաւ կոռուի գաշտում ։ Պարսիկները յաղթանակող եղան Բայց Վասակի հոսանքը աէր չզարձաւ հայոց իշխանութեան ։ Հայաստանի զեկավարութիւնը պարտութիւնից յետոյ տարուեց Տիգրոն, ուր և անզի ունեցաւ նրանց զաւազարութիւնը ։

Հայ քաղաքական հոսանքների յարաբերութեան և մտայնութեան տեսակէտից վերին աստիճանի հետաքրքիր է այն անդեկութիւնները, որ հազորզում են մեզ Եղիշէն և Դ. Փարսիկները Տիգրոնի զաւազարութեան մասին։ Այսեղ հայ նախարարների զաւազարութիւնը վեր է ածում Վասակի զաւազարութեան և մեղազրող կողմ գուրս են գալիս և հայ բանտարկուած նախարարները և Իրանի պաշտօնեանները ։ Հայերը վկայում են, ըստ Եղիշէի, որ Վասակը իրենց հետ միաբան է եղել ռազմամբուրեան ուխտից մէջ, որ նա գրութիւններ է ուղարկել Վրաց և Աղուանից աշխարհներին, ևԵւ մի բույր յունաց քազաւորին, ևԱյս բոլոր բղբերի վրայ դրուած էր Վասակի վաւերական մատանին։ Դաստարանում յայտնուած է, որ նա խառն է եղել նաև Զարեհաւանի մոգերի կոտորածի մէջ ։ Նա «մի նախարար» պատգամաւոր էր ուղարկել յոյների մօտ ։ Այդ պատգամաւորն էլ ասած է գալիս և մեղազրում նրան։ Ուրեմն ըստ Եղիշէի Վասակը եղել է «ուխտա-

պահներից գործօն և զեկավար զէմքը Նա է վարել արտաքին յարաբերութիւնները, նա էլ միջազգայնօրէն կազմակերպել ապստամբութիւնը: Արդ, ինչն է պակաս, որ նա էլ յայտարարութիւնը ու «Եկեղեցու ուխտի» համար մարտնչող: Մի բան միայն, որ նա չը միացաւ ապստամբներին, երբ պարզուց որ հայերի վերայ է քննինելու միայն ապստամբութիւնն ծանր բեռը. լաւ համարեց նահանջել: Սրա համար է այն ընդհանուր հալածանքը, որ եկեղեցին և ուխտապահ նախարարները հանեցին Վասակի զէմ: Հստ Դ. Փարպեցու նախարարների կողմից արքայական գատարանում խօսում է Արշաւիր Կամսարականը՝ «ուխտապահ» նախարարներէն մէկը: Նրա ճառը մէկ մեղադրական է Վասակի հասցէին: Իր ճառի սկզբում նա յիշում է. թէ ինչպէս արքայից արքան հարկադրել է նրանց ընդունել մէկ օօրէնք» որ ոչ իրենց նախնիներին է եղել, ոչ իրենցը. թէ ինչպէս իրենք բողոքեցին գրա զէմ և թէ ինչպէս հարկադրուած ընդունեցին զրադաշտականութիւնը, որպէսզի կարողանան վերադառնալ Հայաստան և ապա «քրողսւլ զայսարհն մեր եւ զնալ կնաւ եւ որդւովք եւ երալ կորնչել յօսար երկիր»: Այդ բանը արեց Վարդանը. իր եղբայրների և ազգակիցների հետ չուեց «յերկիրն յաւեցա»: Սակայն թէ Վարդանի և թէ հայ նախարարների այս միտումը չի իրազործուած: Վասակին է, որ արգելք է հանդիսանում: Նա գրում է Վարդանին. «Ձի ես փախուցեալ եւ կամ զինչ երկիխլդ են... զի քել յՈրեաց տեառնեն եւ ի նորին ուժոց զարինւեալ ես՝ մի երկնչիր, դարձիր եւ նամակ առնեմք առ կայսր եւ զանձինս մեր նմա ի ծառայութիւն տամք եւ նա հաւասայ, քե զայսպիսի մեծ աշխարհ՝ նմա մեր կամաւ ի ծառայութիւն տամք՝ խնդութեամբ եւ կամաւ յանձն առնու եւ զօր տայ մեզ, եւ նորա եւ մեք միաբանեալք միւս աշխատ ունեմք զերս արեաց եւ զարիս»\*: Ապա Արշաւիր Կամսարականը պատմում է Վասակի հաների հետ կապած գաշինքի մասին: Նա ատեանին ներկայացնում է Վասակի զրած նամակը Վարդանին: Հստ Կամսարականի՝ Վասակին զրադեցրել է նաև իր որդիների ապագան: ուստի որոշել է. «որ ի հայս պարսկէ զամենեսեան կապաճօֆ յամուր բերդս դնեմ, մինչեւ նարկաւ արքայն զիմ որդիսն ի բաց արձակիցեա»: Նամակներ է զրել կայսեր «եւ այլ պատմանի դրանն»: պատուիրակներ է ուղերկել Բիւզանդիա, Վարդանին և շատ նախարարների Ազուանից աշխարհ է ուղարկել:

Այսպիսով ըստ Դ. Փարպեցու Արշաւիր Կամսարականի բերանով հայ նախարարները գործի ամրազչ նախաձեռնութիւնը տալիս են Վասակին: նա է գործի կոնչել Վարդանին, ապահովել Հայաստանը

\* ) Դ. Փարպեցի. էջ 23:

շրջապատող երկիրների աջակցութիւնը։ Նա է, որ ռպարսից եւ հայոց կոառածների պատճառ է եղել։ Եւ այս բոլորն նաև կատարել է որպէս «ուխտապահների» զլխաւորող առաջնորդ։ Ի հարկէ հայ նախարարները չէին կարող ըմբռնել և արժէքաւորել Վասակի դիրքը անցման այն պահուն, երբ ապստամբութիւնը միջազգային ուժերի տեսակէաից գեռես ապահով չէր, երբ Վասակը հարկազրուած կատարում էր իր պաշտօնը, որպէս իրանի բարձրագոյն պաշտօնեայ։ Նախարարները որա մէջ տեսան ոչ թէ լուրջ, խոնուն վարչի դործ, այլ միայն երկգիմութիւն, զաւազրութիւն։ Արշաւիր Կամսարականի մեղազրական ճառը՝ իրօք մէկ արգարացումն է Վասակի։ Բայց գտտապարտուզ հայ նախարարները լցուած էին վրիժառութեան զգացումով, ուզում էին նրան էլ զցել. և յաջողուեց Վասակը համարուեց գտտաճան իրանտկան պետութեան։ Թշնամու հետ կապ էր պահել և ապօստամբութեան ծրագիր էր մշակել. երկրի աւերման և բազմաթիւ քաջմարդկանց սպանման ու կորուստի պատճառ էր եղել։ Նա այս բոլորի համար գտտապարտուեց յաւիտենական բանտարկութեան։ Հայաստան չկերագործաւ. — Նրա ինչքն ու զոյքը բոնազրաւուեց պետական հարկերը պակասը լրացնելու. Նրա կալուածները յանձնեցին ոչ թէ իր ժառանգներին, այլ իր անձնական հակառակորդին, իր փեսային, որ իրանական գործակալ էր։

Այսպէս վերջացաւ հայութեան պայքարը օտարի դէմ։

Բայց այս գեռես աղատազրական պայքարի վերջին գլուխը չէր։

ԱԻԱՐԱՅՐԻՑ ՅԵՏՈՅ ԵՒ ՎԱՀԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Ճակատամարտը վերջացաւ, բայց հայ-իրանական կոիւները շարունակուեցին: Աւարայրի գաշտը լքած նախարարները, հայոց աւագանին, ազատանին պատսպարուեցին իրենց անառիկ ամրոցները, բերդերը, ապաստանեցին անտառներում և անմատչելի լեռներում ու շարունակեցին կոիւ մտներ ու մեծ խմբերով: Մուշկան-Նուստավարտը իր պատժից զօրամասերով հետապնդում էր հայերին իրենց կալուածներում, սահմանների վերայ, պաշարում էր բերդերը և փորձում անձնատուր անել նրանց: Ի հարկէ կոռուզ հայերը չէին կարծում, որ այս ձեւով յաղթանակելու են իրանցիներին, բայց չէին էլ ուզում կամովին անձնատուր լինել, երբ նրանց ստոյդ մահ էր սպասում: Հայոց զիմադրական շարժումը իր մէջ առաւ Արցախը, Պարիսարեան լեռնաշխարհը, Տայոց աշխարհը, Տըմորիքը, Միջնաշխարհը, այսինքն զրեթէ ամբողջ Հայաստանում ստեղծուեցին զիմադրական շարժման կենտրոններ, Այս շարժումը անդրադարձաւ և ամբողջ Այսրկովկասում հանգիստ չէր ոչ Վրաստանը, ոչ էլ Աղուանից աշխարհը, որ նախքան հայկական ապստամբութիւնը ըմբռոստացել էր պարսիկների զէմ: Հայկական կոիւների երկարաձոռւմն ունեցաւ իր հետեւանքները, Յազկերտը ներում յայտարարեց քաղաքական յանցաւորներին և պաշտամունքի աղասութիւն տուեց քրիստոնեաներին:

Ճակատամարտից անմիջապէս յետոյ հայ բանակի մէկ մասը ապաստանեց Արտազի բերդին մէջ: Բակ զօրովարը կտղմակերպեց գիմադրութիւնը: Բայց պաշարի պակասութեան պատճառով մէկ մասը հարկադրուեց յանձնուելու, իսկ հրամանատարը եօթ հարիւր մարդով ձեղքեց պաշարողների շղթան և ազատուեց: Անձնատուր եղողներից իրանցիները սպաննեցին երկու հարիւր տասներեք մարդ. հոգեւորականներին, որոնց մէջ Յովսէփ կաթողիկոսին և Ղեւոնդ Երէցին չարշարեցին, բայց չսպաննեցին: Աւելի խլզախ զործ էին կատարում հարաւի ապստամբ խմբերը, որոնք պատսպարուել էին Տմորիքում: Ներքանք Ուրմիոյ լճի հարաւարեւմտեան կողմում անցան Պարսից սահմանը և կոտորեցին ու կողոպտեցին պարսիկներին. շատերին սպանե-

ցի՞ն, զերի տարան և ամրութիւններն էլ ջահներով այրեցին: Մի ուրիշ գորաբանակ ամրացել էր Խաղտեաց լեռնաշխարհում: պարսիկները հետապնդում էին նրանց: Հայերի մէկ մասն անցաւ Տայք, ուր հանդիպեցին արքունի զօրքերին և կոտորեցին: Պարսիկները այրում էին եկեղեցիները, իսկ հայերը վրէժխնդիր էին լինում: «յարձակուեցին, բախուեցին միմեանց և հզօրապէս յազթելով ջարգեցին պարսից զնդի զօրութիւնը»: Նրանց հրամանատարն էր Հմայեակ Մամիկոնեանը: Տայքի կոփւներում սպանուում է նա՝ Վարզանի եզրայրը՝ որ վերադառնում էր Յիւզանդիայից և լսելով ճակատամարտի վախճանի մասին՝ իր հետ եղած կոռուզներով դիմում է Տայքի անտառները և կազմակերպում դիմագրութիւնը: Նրա մահից յիսոյ կոփւը այստեղ ուռ այնտեղ շարունակում է: Հայ բանակի մէկ մասը պատասպարում է Արցախի լեռներում: Նրանք կապւում են Անդրկովկասեան հոների հետ: Պաշնակցում են: Հոները մանում են պարսից սահմանները և բազմաթիւ գաւառներ աւարում և աւերում, մեծ քանակութեամբ գերիներ են տանում և վյայտնապէս ցոյց տուին բազաւորին այն միաբանութիւնը, որ ունեին հայոց զօրքի նետ: Ինչպէս երեւում է հոները չէին բաւականացել հայերին օգնելով: այլ աւելի ընդարձակ չափով սազմական գործողութիւններ էին սկսել պարսիկների դէմ՝ գրաւելով և քանդելով նաև սահմանային ամրութիւնները: Եղիշէն այս ի նկատի ունի, երբ գրում է «Թագաւորը սասիկ տրմել եր ոչ միայն երկիրներն աւերելու եւ զօրելով զարդուելու համար, այլեւ առաւել եւս այն պահակի աւերուելու համար, որ շատ ժամանակներից իվեր հազիւ եր կարողացել տինել: այդ պահակն այն ժամանակ հետևորեամբ առնուել եր եւ բանդուել, եւ այլեւս յոյս չկար թէ այն կը տինուի»\*): Հոների յարձակումով և սահմանապահ ամրութիւնների խորտակումով՝ Այսորրկովկասի և Ատրպատականի պաշտպանութիւնը խախտուած էր: Միջնաշխարհում հայկական մէկ զօրամաս ամրացաւ Կապոյտ լեռան բերդերում և երկար ժամանակ հաջուրեամբ կռուելով զարդեցին պարսից զօրքից շատերին:

Հայ պանուականներից շատերը թողին, անցան Բիւզանդական սահման, ուր ապաստան գտան իրենց ազգակիցների մօտ: Շատերն էլ չկարողանալով իրենց կալուածներում հանգիստ գտնել, անցան Հայստանի լեռները, անտառները: Նրանց հետ գնացին իրենց կանայք, երեխանները, հարսները: Երիտասարդներն ու կոյսերը և կանանց ամբողջ բազմութիւնը զնացին, յանձնուեցին անմարդաբնակ ամրոցներն ու բազմաթիւ լեռների ապահով աեղերը: Աւելի լաւ էին համարում

\* ) Եղիւէ: էջ 199-200:

գաղանների նման քարանձաւների մէջ բնակուել աստուածապաշտութեամբ, քանի թէ ուրացութեամբ փափուկ կեանք վարել իրենց անեսրում»\*): Նախարարութիւնը անձնատում չէր լինում՝ նա կամ շարունակում էր կոփւը, կամ գաղթում, թափնուում աւելի ապահով վայրերում։ Ճակատամարտից յևոյ պարսիկները իրենց առաջ գտան ապրատամբ մէկ ժողովուրդ։

Այս կոփւների մէջ իրանցիները մեծ զոհեր էին տալիս և շատ յաճախ էլ պարտում էին։ Բայքայտում էր հայոց անտեսութիւնը, արքայական-պետական կալուածները ամայացել էին։ Ոչ մէկ հասոյթ չէին տալիս թէ վասակը, որ մարզպանութեան պաշտօնի մէջ էր, թէ Մուշկան-Նուսալավարտը ամեն կերպ աշխատում էին համոզել հայերին զենքերը վար գնել, «անուշ խօսքերի զիմելով ուզում էին իւարէյութեամբ նուաճել նրանց» (Էջ 197)։ Հայերի վսահութիւնը դէպի պարսիկները խախառած էր։ Իրանի համար անակնկալ էր հայկան գործերի այսպիսի ելքը, նրանց համար ձեռնտու չէր «աւշխարհի ամբալց աւերտծութիւնը»։ Այժմ պարսից արքունիքում փորձում էին գտնելու «այդ անհանեար զործի վրիպման պատճառները»։ Իշխանութեան զիրքը խախառած էր ամբողջ Այսրկովկասում, որ դարձել էր կուբի թատերաբեմ։ Այս պայմաններում հայերի զիմագրութեան երկարաձգումը կարող էր ծանր հետեւանք ունենալ։ Հայերի զիմագրութեան հանգէպ արքայից արքան բռնեց զիջումի քաղաքականութիւն։ Ամենից առաջ Մուշկան-Նուսալավարտ իր պատմիչ զօրաբանակով զուրս է գալիս Հայաստանից։ Բայց զօրքերի հեռացում քիչ էր։ Անկարելի էր հայերի հետ հաշտուել, որքան վասակը մնար Հայաստանի իշխանութեան գլուխը։ Յազկերտ Բ. այդ լաւ էր հասկանում։ Ուստի հեռացրեց նրան պաշտօնից եւ կանչեց Տիգրոն։ Վասակի հեռացումը մէկ զիջում էր՝ արքունիքի կողմից հայերին արուած։ այժմ կարելի էր համաձայնել հայերի հետ։ Որպէս մարզպան Հայաստան ուզարկում է Ագրորմիզզը, պարսից աւագ նախարարներից մէկը։ «յաշխարհէն հայոց»։ Նրան հրամայում էր «զմարդիկն Հայոց շրնջուացնել, այլ սիրով նաւանել եւ զպածօն քրիստոնեութեանն համարձակապէս ունել ամենեցուն»\*\*): Նոր մարզպանը ջանաց հայերի մէջ վսահութիւն ստեղծել։ Նա ընդհանուր ներում շնորհեց կոռոզներին, իր մօտ էր կանչում նախարարութեան ազգեցիկ գէմքերին և հրահանգում։ «Որ ամեն մեկը իր իշխանութիւնն ստանձնէ եւ նախկին սովորութեան համաձայն յայտնի կորպով պատօն կատարի եւ ազա համարձակ-

\*). Եղիշե։ Էջ 199-200։

\*\*). Դ. Փարպեցի. Էջ 73։

հրապարակ դուրս գայ»\*), Աւերտւած շրջանները հարկից ազտանց, այ-  
րուժիու հաւաքումբ պակսեցուց. հրամայեց, որ «Ժիայնակեացները»  
ամենքը իրենց աեղը զառնան: Նա կոչ էր անում բոլորին. «Եկայք  
տիմեցարով աներկիւղութեամբ եւ մի ինչ զարկուրիի» ինչպէս ասում է  
Դ. Փարագեցին:\*\*) Բոհութեամբ մոգական կրօն ընդունողներին թոյլ  
տուեց նորից զառնալ քրիստոնէութեան, իսկ Յազկերաբ այդ առթիւ  
յայտարարում էր. «Ովկեր սիրով չեն ընդունում մոգեղին կրօնը, այդ-  
պիսիների վրայ ասուածներն ել զայրանում են եւ ես ել ամենեւին ըր-  
նորհակալ չեմ եւ այոր նոյն հրամանն եմ տալիս բոլորին, ամեն մարդու  
քողնել իր կամքի համաձայն վարուելու, ով ինչ կամենում է, բող այն  
պատճե, բոլորն ել իմ ծառանիերն են»\*\*\*):

Այս բալորը ունեցաւ իր ազգեցութիւնը: Նրանք, ովքեր ցիր ու-  
ցան էին եղել «եկան և տէր զարձան իրենց կալուածներին: «Աշխար-  
հի ամրոցներում» եղածները գէնքը վար զրին, իջան լեռներից, գուրս  
եկան թագսարցներից, եկան յանձնուեցին մարզպանին: «Հեռաւոր օ-  
տարութեան» մէջ եղածներն էլ, այսինքն արտասահման գաղթածնե-  
րըն էլ վերագարձան: Եւ եկան յանձնուեցին Հայոց նախարարութեան  
վարիչները, սեպուհները:

Ադրորմիզզը հասաւ իր նպատակին՝ խաղաղուեց Հայաստանը: Նա  
թեթեւ յանցապարտներին չհետապնդեց, չառ բանտարկեալների ա-  
զատեց, հրամայեց եկեղեցիները բանալ, ազատ յայտարարեց քրիստո-  
նէութեան պաշտամունքը:

Բայց այս նրա քաղաքականութեան միայն մէկ կողմնէր: Կար  
երկրորդ երեսը: Ատրորմիզզը ջանաց երկրի վարիչ տարրը, զեկավա-  
րութիւնը գուրս տանել, կասկածելիներին հեռացնել և շարժումների  
մէջ գործօն դեր կատարածներին իրան փոխազրել: Նա «ար-  
քունի հրամանով» մի շարք եպիսկոպոսների, երէցների և նոյնիսկ  
կաթողիկոսին՝ Յովսէփին փոխազրում է Տիզրոն: Այսպէս է վարում  
և նախարարների հետ, որոնք վատանելով նրա խօսքին՝ եկան և յանձ-  
նուեցին: Վերեւից կարգագրուեց, որ նրանց «ոչ թէ կապանքներով»,  
այլ արձակ ձեռներով և «առներով» Տիզրոն ուղարկեն: Այս ձեւով ի-  
րան փոխազրուեցին Արծրունի Ներշապուհ իշխանը, Վանանդի,  
Արշարունեաց, Անձեւացոց, իշխանները, Վահան Ամատունին և ու-  
րիշները: Սրանց միացաւ և մարզպանութեան պաշտօնից հրամարեց-  
ուած Վասակ Միւնին:

\*.) Եղիշե. էջ 201:

\*\*) Դ. Փարագեցի. էջ 73:

\*\*\*) Եղիշե. էջ 201:

Հայոց ուժերը քայլայուեցին. Մամիկոնեան տունը ծանր հարուած ստացաւ. երկու եղբայրները՝ Վարդան և Հմայեակ սպանուեցին. վերջինիս որդիները Վասակի զրումով պատահու ուղարկուեցին Իրանի արքունիքը: Չուփկ իշխանուհին՝ Հմայեակի կինը վերցրեց իր փոքրիկ որգուն և ապաստանեց վրաց Աշուշա բդէշխի մօտ Նրա որդիները Իրանի արքունիքում տեղ և զիրք զրաւել չէին կարող. ապրատամբ հօր որդիներն էին և կասկածելի: Մամիկոնեանների թուլացումով՝ թուլացաւ հաեւ եկեղեցին և յունամիտ հօսանքը: Նրա լաւագոյն ներկայացուցիչները տարուեցին Տիգրոն, գատապարտուեցին, աքսորուեցին և 454 թ. գլխատուեցին, նահատակուեցին: Մեծ ուսուցիչների աշակերտներին և յունամիտ հօսանքին շատ զգալի հարուած հասաւ: Կաթողիկոսութեան տիրացան Ազրիանոսի տան մարզիկ՝ Մելիք և նրանից յետոյ Մովսէս Մանազկերտցիները: Սրանք յարմարուող էին՝ իշխանութեան, մարզպանին: Սրանց օրովէ, որ հին ասորական և ասորամիտ հօսանքը նորից առաջնութիւն ստացաւ և ըսկըսեց հալածել հայ կղերի յունամիտ ներկայացուցիչներին: Վերջիններս՝ մեկուսացան, շատերը փախան. պաշտպան և յենարան չունէին: Ասպարէզը մնաց հայ կղերի աւելի ագէտ, մեծ նպատակներ հանրային իտէալներ չհետապնդող մարզկանց: Եւ անշուշա այս կացութիւնը ի նկատի ունի Մ. Խորենացին երբ իր ողբի մէջ ասում է. «Մովսէս բարձեալ լինի եւ Յեսու ոչ յաջորդէ, Եղիա համբարձաւ եւ Եղիսէ ոչ մնաց»: Սրանց օրովէ, որ սկսում է հալածանք Մ. Խորենացու. Դ. Փարպեցու և ուրիշների զէմ, իրենց մշակութային-քաղաքական յունամիրութեան համար: Յարմարուող կղերի այս հօսանքը հաւաքում է Ազրիանոսի տան շուրջը. Նրանք զգուշաւոր են, հեռու ծայրայիշութիւններից, ցուցամոլութիւնից, հեռու քաղաքական կեանքից:

Սիւնեաց նախարարութիւնն էլ թուլացաւ, ասուցինք որ Վասակը Հայաստանի երես չահսաւ. Նրա զատակները մնացին երկար ժամանակ ստուերի մէջ. զգուշաճանս հօր որդիներն էին, կասկածելի թէ հայերի և թէ իրանցիների աշքին: Սիւնեաց իշխանի հետ իր հօսանքըն էլ վարկաբեկ եղաւ: Կամսարական և Ամատունի տները նոյնակէս հարուածներ կրեցին: Ուրեմն ամենէն նշանաւոր նախարարական տըները ասպարէզից քաշուեցին, նոր մարզիկ է, որ առաջ պիտի գային՝ իշխանութեան համար վստանելի և Իրանի հետ զործակցութեան աըշքամզիք: Աքսորական նախարարները՝ թուզ 37 — Նախ Վրկան Քըշուեցին՝ Հկապուած ոտքերով և կապուած ձեռքերով» յետոյ Խորասանի Նիւշապուէ քաղաքում պահուեցին: Սկիզբը նրանք ենթակայ էին խիստ բէժիմի, ամեն կատ գուրսի աշխարհի հետ կարուած էր. ապա մեղմ վերաբերմունքի արժանացան, կապանքներից ազատեցին և թոյլ

տուին ազատ շրջագայելու 460 թ. նրանց ուղարկեցին Հրեւ քաղաքը, Իրանի արեւելքում՝ մտան բանակի մէջ, թոշակ նշանակեցին նրանց: Իրօք որոշուած էր, որ նրանք պիտի վերագառնան Հայաստան, բայց Աղուանից ապստամբութիւնը մի առ ժամանակ յիտաձգեց այդ բանը: Նահատակ հայ հոգեւորականները և աքսորական նախարարները ժողովրդի աչքին հերոսներ էին իսկ նրանց ընտանիքները ընդհանուր հոգածութեան և գուրգուրանքի առարկայ:

Ճիշտ է քրիստոնէութիւնը յայտաբարուեց ազատ, քրիստոնեան չէր ենթարկուած հալածանքի, սակայն Հայաստանի շատ տեղերում ատրուշանները կանգուն մնացին, իբրեւ թէ բանակի, իրանցի պաշտօնէութեան համար, բայց առանց բռնազառութեան, խաղաղ ձեւով մազգէզական կրօնը տեղ էր գրաւում հայ նոր զեկավար շրջանակներում: Մարզպանի գլխաւոր գործը եղաւ ստեղծելու և մեծացնելուայն հոսանքը, որ պատրաստակամ էր Իրանին ծառայելու: Նրան յենարան էր հարկաւոր հայերի մէջ: Նախկին ապաստամբները և խոշոր գործօն նախարարները այզպիսի յենարան լինել չէին կարող: Սրա հետեւանքով հայութիւնը պառակառուեց: Յաճախ «երկրի տէրը», նախարարը հակուում էր Իրանին և ընդունում մազգէզական կրօնը, բայց նրա հետ կապուած «ազատները», շինականները մնում էին քրիստոնեայ: Երբեմն նախարարական ընտանիքը պառակառում էր, բաժանուում կրօնի, մշակոյթի, քաղաքական զիմաշրջման հիմքով: Սրա հետեւանքով բոլոր նախարարութիւնների մէջ ստեղծուեցին մեծ ու փոքր պայշարի ճակաաններ: Վարզանանց շրջանում ստեղծուած հոսանքները շարունակում են գոյութիւն պահել և յետոյ: Այն ժամանակ Վասակին հակուում հոգեւորականները շատ հաւանական է, որ եղած լինէին՝ արդէն գոյութիւն ունեցող ասորական և տասորամիա հոսանքը: Սրանք է, որ յենարանն են լինում Աղքիսանոսեան առհմի երկու կաթողիկոսներին, ճակատամարտից յետոյ:

Ռազմի գաշտում հայերը պարտուեցին. բայց իրանցիք իրենց նպատակին չհասան, ծրագիրները չիրազործուեցին. եկեղեցին կանգուն էր, թէպէտ անգլուխ. նախարարական ամբողջ կառոյցը պահուեց, թէպէտ նրա լաւագոյն աները մեկուսացան և հեռացան ասպարէզից: ոմանք էլ աքսորուեցին: Եթէ եկեղեցին և նախարարութիւնը սրպէս ընկերային ուրոյն հաստատութիւններ պահուեցին, առ պա նրանց անձնակազմի մէջ մեծ փոփոխութիւններ մուծեց: Այժմ չէր յարգուում տանուաէրութեան, գործակալութեան ժառանգականութեան սկզբունքը: Տանուաէրութեան և գործակալութեան հառնելու համար անհրաժեշտ էր որևէ ծառայութիւն մատուցած լինել իշխանութեան, ընդունիլ զրագաշտականութիւնը, յարմարուիլ մարդ-

պահնի պահանջներին, երեւալ Իրանի շահին նույիքուած մարդ: Այսպիսի գէմքեր էին, որ աստիճանաբար տուած եկան և հաւաքուեցին մարզպանի շուրջը: Կաշառքը, պաշտօնները, պատիւները խոչը գեր սկսեցին կատարել հանրային կեանքում: Առաքինութիւնները վերացն և կասկածելի վարքուբարքի տէր մարդիկ, արկածախնդիրները սկսեցին հանրային պաշտօնների կանչուիլ: Նրանցից շատերը տեսել էին Վարդանանց պատերազմը, մասնակցել էին յետագայ ինքնապաշտպանութեան և այժմ սոսկումով են յիշում անցած գէպքերը և մերժում են ամեն սազմի շարժում: Ոմանք էլ աւելի բարձր առաքիւնութիւնների տէր էին, բայց հարկազրուած էին յարմարումի և զործակցութեան ուղին բռնել: Նրանք հակառակ էին ամեն շարժման, ամեն ապստամբութեան:

Մեր Ղ. Փարապեցին նկարագրում է այսպիսի «անտօնմիկ» մարդկանց տուած զալը և վերելք ունննալը: Նրանք «վեսակարք, անպիտանք, վատք և ոչ քաջք» մարդիկ էին, որ տանուտէրութիւնները, տոհմապետութիւնը, հանրային պաշտօնները ցցել էին իրենց ձեռքը, ոչ թէ յօդուա հանրութեան ծառայեցնելու, այլ անձնական շահեր հետապնդելու համար: Եւ սրա հետեւանքով «Եւ եր այնուհետեւ տեսանել յածխարհիս Հայոց զլաւուրիւն հեռացեալ, զիմաստութիւնն կորուսեալ, զբաջուրիւն հեռացեալ եւ մեռեալ, զերիստնեուրիւն բազուցեալ»: Հայոց բանակը, որ միշտ փայլել էր իր արիութեամբ, այժմ վատահամբաւ էր: Նրա զլուխը կանգնած էին ոչ տոհմիկ, ոչ ոտզմունակ մարդիկ: Նրա զինական ոգին ընկած էր: Այնպէս որ Պերոզը կարող էր ասել նրա մասին: «Այր անօթիան եւ գունդ յետին, որ զամ մի յիմ իշխանուրիւնն ե՝ Սուրենց ե: Բայց բան զասորի հայն է այր յետին եւ անպիտան»\*): Փարապեցին զգայուն սրաով սրան աւելացնում է: «Եւ եր լուրն այն արժանի լալոյ եւ ողբալոյ: Բայց Հայտատանում չէր մեռել 451 թ. սերունդը: Նրանք զործի կենարոնում չէին: պահուած էին և քաշուած յետին շարքերը: Բայց կալին: և այստեղ ու այնտեղ պահում էին մեծ ուսուցիչների աւանդութիւնները և Աւարայրի ճակատամարտի յիշովութիւնները: Պէտք էր միայն նպաստաւոր պայմաններ հրն հոգեկան ուժերի արծարծման:

457 թ. Յաղկերտ Բ.ին յաջորդում է իր որդին՝ Պերոզը: Նա նոյնքան համոզուած զրագաշտական էր, որքան իր հայրը և նոյնքան հականայ, որքան իր նախորդներից շատանը: Բայց նա զահ էր բարձրացել ներքին քաղաքացիական կոփւներից յետոյ, զահի վերայ ամուրչէր զգում: այստեղից էլ նրա հայկական զիրքորշումը, պէտք էր

\*.) Ղ. Փարապեցի. հջ 111:

Վախել իրանի ներքին քաղաքականութիւնը, հաշտուել հպատակ ազգային-կրօնական միասների հետ, յենուել նրանց վերայ։ Հալածանքը ստեղծեց ապաստամբութիւն։ Ախալուեցին Յազկերտն ու Միջը ներսէնը. սխալ էր նրանց գործելակերպը։ Նոյն նպատակին կարելի էր գիմել ուրիշ մեթոդներով։ Եւ անա Պերողի նոր գիրքորոշումը։ Նա էր, որ աքսորուած նախարարների բէժիմը մեզմացրեց, ապա բանակի մէջ ընդունեց նրանց։ Նա էր, որ քրիստոնէութեան գէմ պայքարը գաղարեցրեց, թէ կայսրութեան մէջ, թէ Հայաստանում. առկայն նա առաջ քաշեց իրանի շահերին հաւատարիմ մարգկանց, տանուտէրութիւններ յանձնեց իրեն համար գործողներին, կապեց ոմանց իրեն հետ խնամքութեամբ. գրամով, պատիւներով։ Եւ ուրանց միջոցով է, որ կառավարում էր երկիրը և որանց վերայ էր յենուում։

Այսպիսի պայմաններում է, ընդհանուր վհատութեան և ոգեկան անկման այս գրութեան մէջ է որ տեղի է ունենում Աղուանից աշխարհում նոր ապաստամբութիւն։ Նրա գլուխը կանգնած էր Վաչէ իշխաննը, նա էլ ռուրացովներից» էր, տիսել էր աղուանական կորիները, ճաշակել էր հալածանք։ Իրանի ներքին անգործութեան խախառումն և գահակալական կոփեները առիթ եղան նրա ապստամբութեան։ Պերողը յորդորեց նրան զէնքը վար զնել, հաշտուել իրեն հետ, ապա միայն իր պահանջներն առաջազրել։ Նա որոշել էր Հայաստան ուղարկել աքսորուած հայ նախարարներին. զա պիտի լինէր նրա քաղաքականութեան փոփոխութեան նշան հայերի վերաբերմամբ։ Բայց աղուանից ապստամբութիւնը արգելվ հանդիսացաւ։ Անյարմար և վաշնգաւոր էր այդպիսի մէկ պահուն՝ աքսորուած նախարարներին վերագարձնել Հայաստան։

Աղուանների հետ սկսած բանակցութիւնները հնաեւանք չունեցան. աղուանները յիշեցնուում էին իրանի վարիչներին. «Այնչափ սիրոյ եւ վաստակների համար, — (որ արեցին հայերը ձեր հանդեպ) փոխանակ կեանք ընորհելու երանց արեւը խաւարեցրիֆ։ Լաւ կը լինի ինձ համար, առում է, երանց՝ չարչարաները յանձն առնել, քան քէ քիսնենութիւնը քողնելը»\*։ Կրկնուում էր հին պատմութիւնը. նոյն կոփել իրանի գէմ, նոյն անվաստահութիւնը նրա խոստումների հանգէստ։ Բայց այս անգամ Աղուանից ապաստամբութիւնը միծ ծաւալ չընդունեց. և նոր ազգեցութիւն չմողեց Այսրկովկասի ազգերի ու ցեղերի վերայ։ Միայն ցոյց տուեց, որ իրանական իշխանութեան հետ այդ մողավուրգները հաշտ չէին. բայց միծ եղաւ նրա բարոյական ազգեցութիւ-

\* ) Եղիշե. Էջ 254:

նը հայութեան վերաց: Պիերոզը դիջումներ արեց ազուաններին: տուեց լ քօնական ազատութիւն և տեղական հին կարգ ու սարքը պահեց: Հայերը ուշի ուշով հետեւում էին գէպքերի ընթացքին: ազուանների յ ողթանակը նրանց մէջ ընդհանուր ցնծութիւն առաջ բերեց: կորացած մէջքերը շտկուեցին: մսայլ գէպքերին ժպիտ երեւաց: Դիւտ զաթողիկոսը մէկ ուղերձ գրեց Վաչէին՝ զովելով նրա քաջութիւնն ու յ զթանակը, ձեռք բերած ազատութիւնները: Միայն այս ապստամբութիւնից յետոյ է, որ աքսորուած հայ նախարարները վերադարձան Հայաստան՝ 12 տարի օտար երկիրներում ատպատկելուց յետոյ: Հոգեւորականութիւնն ու նախարարութեան մէկ հոսանքը նրանց միծը ընդունելութիւն արեցին: Նրանց վերադարձը համարուեց քրիստոնէութեան արդարացումը: Երկրի մէջ նոր ոգեւորութիւն սահեղծուեց: Հին՝ ազըստամբական և ըմբռուստ ոգին նորից ներչնչումներ ունեցաւ: Թմբած և յուսահատ հոգիները արթնացան: Այլեւս վախ չունէին իրանցուց, իսկ արհամարում էին գործակցող հոսանքին: Ազգային և զիմազբական ճակատը վերակառուցւում էր: Սրանք միծապէս կենսունակ զարձան Դիւտ կաթողիկոսի օրով, որ յաջորդեց Մովսէս Մանազկերացուն: Նրա հոգեւոր իշխանութեան գլուխ զալն արդէն ցուցանիշ է արամագրութեանց ընդհանուր փոփոխութեան: Այլևս Աղրիանոսեան տան հովիւները անբաւարար էին բարձրացող ոգեկան ուժերին ընդառաջ գնալու: Նոր կաթողիկոսի ընտրութեան մասին արքունիք չյայտնացին Դիւտը ներկայացուցիչներից մէկն էր յունական հոսանքի: Ինքն իր մասին ասում է: «զդպրութիւն գիտութեան մերը եւ զիմաս բանաւոր ուսմանց յաշխարհին Հոռոմոց ուսեալ եմ»: Նա յունական զըպները գնացել էր այն խմբի հետ, որ Սահակի աքսորից յետոյ մեկնեցաւ Բիւզանզիա: Մեծ պարաւութիւնից յետոյ նա գէպքերի կենտրոնում չէր, սակայն եղած պիտի լինէր ազգային հոսանքի պարապլուներից մէկը: Դիւտի չուրջն են հաւաքւում բոլորը, ովքեր գործակցողների գէմ էին: Վերջինիս զիմաց ստորանաբար ստեղծում էր մէկ հոսանք: Նրանց մէջ չէին աքսորից վերադարձները. սրանք ծերացած էին ու յոզնած. նրանք անցած փառաւոր գործի կենզանի վկաներն էին, խորհրդանիշը. մէկ նոր սերունդ է, որ պիտի կանգնէր գործի գլուխը: Նրանց է, որ հովանաւորում է հելենական ազգայնամբար կաթողիկոսը: Ինչպէս երեւում է նրա կաթողիկոսական զահ բարձրանալուց անմիջապէս յետոյ հայ նախարարների յունամիտ թեւրի և յոյների մէջ սկսուել է գաղտնի բանակցութիւն՝ նրանցից օգնութիւն ստանալու: Կայսր էր Լեւոնը՝ Մարգիանոսից յետոյ՝ 457-474. ուրեմն առաջին ապստամբութիւնից հաղիւ տաս ասրի յետոյ: Հայոց նախարարութեան մէկ թեւը նորից ակնկատութիւններ ունէր

Բիւզանդիայից։ Հայ նախարարները Գիւտի հետ միասին. «Ժայռվեալի լիթեին առ սուրբ բանայապետին Հայոց Գիւտայ. . . ի խնդիր լինել օգնականութեան եւ ապսամբել։ Առաքեին գաղտ եւ պատզամաւորս մի անգամ եւ երկիցս առ բազաւորն յունաց Լեռոն, որոյ բեկետել յանձն առեալ կամեր օգնել՝ յերկարեւ ժամն եւ խափանեին խորհեալին»\*). այս ձեւով հին ուղիներով է, որ գնում է հայ նոր սերունդը՝ առանց յոյների օգնութեան՝ զժուար էր գործել. այդ ուղին փորձեց նախորդ սերունդը և յուսախար հղաւ։ Եւ եթէ նորն էլ գնում է նոյն ճանաւ պարհով՝ ապա այդ պիտի մեկնարանել ոչ թէ այն իմաստով, որ նա դաս չի առել անցեալ փորձերից. այլ այն իմաստով, որ Բիւզանդիան որոշակի և միծ խոստումներ էր առել հայերին։ Նրա շահը՝ Վահանան ջում էր, որ երբէք հայերը իրենից չկարուին, միշտ իրենց հայեացքը գարձնեն Բիւզանդիա, փրկութիւնը այնակից սպասեն։ Թէ յօյները որոշակի խոստումներ տուել են՝ անկատկած է. միայն թէ Շյերկար եր ժամն եւ խափանեին խորհեալին։ Այս նոր՝ երիտասարդ սերունդի մարդիկ, որոնց հոգանաւորում էր կաթողիկոսը՝ զուրս էին եկել Մամիկոնեան անից. Վահանան էր՝ Հմայեակի որդին, որ ճշշտ է մեկուսացած էր, բայց հաշտ չէր երկրի այդ ժամանակի վարչութեան և հայ գործակցողների հետ։ Նրա հետ էին Արշարունեաց՝ Կամսարական, Վահեունի և Պալունի նախարարութեան նոր սերունդը։ Հաւկառակորդների գործակցողների գլուխը կանգնած էր Գաամիշոյ Խորխոսունին, որ եղել էր Վասակի գործակիցը. անսել էր ըմբռասութեան ծանր հատեւանքները և այժմ գէմ լինելով ամեն չարժման՝ իրանի հետ գործակցելու ջերմ կողմնակից էր։ «Հրապարակի վերայ նոյն իին կուսակցութիւններն են, իին երկիֆեղի մածնողութիւնը — ասում է Ն. Ադոնցը»\*): Բնական է. որ այս երկու հոսանքների մէջ նորէն վերըսկըսէր պայքարը։ Գաամիշոյ Խորխոսունին՝ լաւատեղակ էր կատարուող խմորումներին, համարում էր այն արկածախնդրութիւն, ուստի զեկուցում է իրանի արքունիքին Հայաստանում աեղի ունեցող ոգեկան նոր ուժերի բարձրացման մասին։ Բայ Դ. Փարապեցու՝ նա իրանի գործակալն է՝ որի միակ ճիգն ուղուած է օտարի կամքը կատարել և նրանց «օրէնքը» երկրում գործադրել։ Նա ամբաստանում է Գիւտին «Եւ իին ընդ կայսեր խօսի եւ պատուական ընծայելք հայտակե նմա եւ մեծամեծացն, որ ի դրան նորա են»։ Գիւտաը և նրա հովանեն վայելող խումբը գառնում էր վատնգաւոր իրանի համար. նա հրաւի-

\*) Դ. Փարապեցի. Էջ 112-913։

\*\*) Ն. Ադոնց. Քաղաքական հոսանքներ Հին Հայաստանում. «Հայրենիք» 1927 Փետրուար։

բում է Տիգրոն՝ լուսաբանելու իր վարքագիծը։ Նա համարձակօրէն պատասխանում է և պաշտպանում այն միաքը՝ որ բարեկամ չէ հայ գործակցողներին։ Նրանց ահասկէաը իրենը չէ։ յայների հետ կապեր ունի՝ բայց մշակութային է։ ունի այնտեղ բազում ընկերներ։ եկեղեցուն անհրաժեշտ շատ բաներ այնտեղից է ստանում։ ապա փորձում է ներշնչել, որ թէ ինքը և թէ հայութիւնը հաւատարիմ են իրանին։ «զինազանգութիւն ծառայութեան՝ օրենք իսկ մեր պատուերին հատուցանել տերանց, զդիպոլոն եւ զարմանաւորս»\*): Գիւտին հոգեւոր իշխանութեան գլւխին պահելը վատանգաւոր համարեց իրանի վարիչների համար։ հաւանական է, որ նրանք ուղղում էին բաւարարել հայոց նախարարութեան այն թեւին, որ գործակցում էր իրենց հետ և որոնց համար Գիւտին ներկայութիւնը անցանկալի էր։ Ուստի արքունիքը որոշում է «կաց, ուր որ եւ կամիս, բայց ի գործոյ կարողիկասութեանդ հեռի ես եւ չե եռ»։ Կաթողիկոսը քաշում է, մեկուսանում վանանդ և այնանդ էլ մեանում է։ Նրա հրաժարեցումն իրանամիտ նախարարութեան յազմանակն էր։ Բայց վերջինը չէր։ Գիւտին անկումից յետոյ իրանամիտ նախարարները ուղղում են ազատագրուել նաև Վահանից, որ Սպէրի ոսկեհանքների կառավարիչ էր նշանակուած։ Իրանի և Հայաստանի տեղական վարչութիւնը ուղեց հաշութեան եզր գտնել ըմբռու նախարարական տների հետ և նրանց էլ կապել իր գործին։ Այդ մտայնութեան հետեւանքն է, որ արքունիքը Գիւտին կաթողիկոսութեան զէմ սկիզբը արգելվ չյարուցեց։ Իրենք է, որ կանչեցին Վահանին պաշտօնի։ Սակայն հայ իրանամիտ հոսանքը կենարոնական իշխանութեան այս գիւտքորշման զէմ էր։ Վերջինս էլ ընդուած գնալով և բաւարարելով նրան՝ գործերից հեռացրեց Գիւտին։ Բայց Հայաստանում սրանով չբաւարարուեցին։ պէտք էր մեկուսացնել ու կասկածելի գարձնել նաև Վահանին։ «Ճային գիտել մեծամեծաց դրան։ այլ եր ինչ որ եւ բագաւորին, քէ ոչ է հնար սմա առանց ապրաւակութեան կալ ի հայ... ով ի նոցան ոչ խռովեցոյց զԱրեաց աշխարհ եւ ոչ արար մեծամեծ վնասս եւ մահուն».. »\*\*): Վահանը զգում էր, որ շուրջը կազմուում է գաւազրութիւն, որին զիւրութեամբ զո՞ս պիտի գնար ինքը, ինչպէս զո՞ն էր գնացել Գիւտին։ նա որոշում է անձամբ գնալ Տիգրոն և արգարանալ այնտեղ։ Դ. Փարպեցին զրում է այդ մասին շատ կարծ՝ «Երբեալ ի դռւոն, տկարանայր ի հալաւն»։ Այսինքն ընդունեց իրանական կրօնը։ Վահանի ուրացումը մէկ փայլուն օրինակ է այն կացութեան, որի մէջ գտնւում էր Հայաստանը։

\*). Ղ. Փարպեցի. էջ 114։

\*\*). Ղ. Փարպեցի. էջ 116։

Միայն ուրացումով է, որ կարելի էր պաշտօնի վերայ մնալ, կասկածից և հալածանքից ազատուել, պատուի և դիբքի արժանանալ: Արքունիքում վահանին մեղագրում են յունամիտ լինելու, ապստամբութեան միտում ունենալու մէջ: Վահանը հերքում է այս բոլորը և կարողանում է վատահութիւն ներշնչել իրանի զեկալորութեան: Նա պահում է իր պաշտօնը, վահանի ուրացութիւնը մէկ միջոց էր միայն հետապնդումներից ազատ լինելու, բայց այսքանի հետ էլ իր խզճի ձայնը և ինքնասիրութիւնը չհաշտուեց: Մինչ այդ արտաքին զեպքերը նոր գասաւորում էին ստանում և նպաստաւոր կացութիւն ըստեղծում հայութեան համար: Իրանի արեւելիան սահմանների վերայ նոր վաշկառուներ էին երեւացել և բռնել քրւչանների՝ տեղը՝ հեփթագները: Սրանք էլ, քուշանների նման պարբերաբար յարձակում էին իրանի վրայ: Պերզի ժամանակ էլ սրանց արշաւը սկսուեց: արշայից արքան անկարող գտնուեց իր երկիրը պաշտպաններու: Անյաշնողութիւնը՝ արտաքին ճակատի վերայ՝ ապստամբութեան մղեց հըպատակ, հալածական Այսրկովկասի ազգերին: Այս անգամ ըմբռասութիւնն սկսուեց Վրաստանում: Հայ գնդերը իրանցիների հետ միասին կռում էին Հեփթագների գէմ: Բանակատեղիում իրանական հոսանքի մարզիկ առաջնութիւն էին վայելում, իսկ ազգայնական հոսանքին պատկանողները՝ որքոն և արի ու իրենց գործը կատարող՝ ուշադրութեան չէին արժանանում: Պատերազմից յետոյ հայկական բանակները հաւաքուեցին Շերակում հանգստի, նրանց հետ էր և իրանական մէկ զօրագունդ: Այստեղ է, Շերակում, որ հայ բանակի զեկավարների մէջ ծագում է ապստամբութեան միտքը: Դրզիչ պատըրուակը Վրաստանի ապստամբութիւնն էր վրաց Վախթանգ իշխանի առաջնորդութեամբ: Նա սպանեց Վազգէն բգէշխին և զուրս արհց երկրից իրանցիներին: Այս շարժումը արձագանդ գտաւ նաև Հայաստանում, ինչպէս մի քանի տարի առաջ առաջ ազուանականը: Բայց մինչ վերջինս միայն ընդհանուր ոգեկան վերելքին նպաստեց, վրաց շարժումը առաջ բերեց զինուած ապստամբութիւն: «Պէտք է խոստվանիլ ասում է ն. Ադոնցը, որ Վարդանանց կռուից յետոյ պարսիկներն ամեն զիջում արին հայոց, Արքունի հրամանով Ասրումիզի մարզպանը յայտարարել էր կրօնական ազատութիւն... Եերումն էր Ենորհուում բոլոր փախրասականներին, բայի ձերբակալուած անձերից, որոնց մեծ մասը ազատ բոլուեցան»\*): Այս վերաբերումը տեսեց մինչեւ 80ական թուերի սկիզբը: Արդ, «այս ներողամիտ քաղաքականութիւնից յետոյց սպասելի էր, որ հայութիւնը միայն հաւատարմութեան զգացում տածի իւ-

\*.) Ն. Ադոնց. Քաղաքական հոսանքներ Հին Հայաստանում. «Հայրենիք» 1927 Փետրուար:

բանի հանդէպ: Բայց այդպէս չեղաւ: Խնդիրն այն է, որ Պերողի մեղմ և «Հաւածող» քաղաքականութիւնը ոչ պակաս վասնգաւոր էր հայութեան կրօնա-քաղաքական կառոյցի համար: Եթէ հաստատութիւնը չէր վերացւում, արմատախիլ չէր արւում, ապա նու պահւում էր այնպիսի ստորագաս և նուռասահցուցիչ վիճակի մէջ, որ ի վերջոյ առաջնորդում էր զէպի բարոյական քայլքայում և անկումն նախարարական հին կարգը չէր յարցւում, խրախուսւում էր ուրացութիւնը, եկեղեցին չէր հալածւում, բայց եկեղեցականը արհամարւում էր, խրախուսւում էին անոր մարդիկ, «անտոնմիկները»: Եւ այս բոլորի հետեւանքով պարձեալ է յաշխարհին հայոց եւ կորուսեալ վաստակի, միտք, քաջուրիւն. տիմակուրիւն եւ արդարութիւն»: Արանից տուժում էր զեկավարութեան մէկ թեւը՝ ազգայնական հոսանքը, որ զրկուած էր բարձր զիրքից, պաշտօններից, տանուտէրութիւնից, զործակառութիւններից: Նրանց առաջ փակուած էր յառաջդիմելու ուղիները, երբ «վատթարները» այսինքն հակառակ հոսանքը բանել էր վերելքի ուղին: Այս մարդիկն է, որ գեգոն էին և յարմար առիթի էին սպասում ըմբոսանալու: Եկեղեցու լաւագոյն ներկայացուցիչները՝ Գիւտը և Կրանից յիտոյ Յովհանն Մանդոկունին սրանց հետ էին: Այս հոսանքը ուժեղացաւ 70ական թուի վերջերից եւ վրաց ապստամբութիւնը զրդիչ ուժ եղաւ: Միանանաւը ուժերով՝ եղած կարգը տառապալելու: Մրանք ուժեղ էին իրենց ոգուվ, զաղափարներով, մինչ յարմարուողները և զործակցողները աւելի կազմակերպուած էին: Այս ըմբոսաները զեկավար չունեին: Յոլորի հայեացքը գառնում է վահանին, որ զործի կենտրոնում չէր, հեռու էր նոյնիսկ քաղաքական կենտրոններից: Հայ նախարարութիւնը նրան է, որ որոշում է առաջ քաշել և ապստամբութեան վլուխը կանգնեցնել: Սակայն այս զիւրին բան չէր: Այստեղ էլ կատարւում է նոյն պայքարը, ինչ վարդանի ժամանակ:

Վահանը գմուարանում է հայ նախարարների գլուխն անցնել, որովհետեւ շարժման յաջողութեան շի հաւատում: Այն ուժերը, որոնք իրը թէ պիտի օգնեն հայերին՝ անվասանելի են: «զկեւեաց ուժն եւ սամբակութիւնն էաջ զիտեմ եւ զշառումոց զրուլութիւնն եւ խաբերիւնն եւ ձեր ծանուցեալ է փորձիւ իմ թէ որպես հարանց մերոց ուխտեցին երդմաքը եւ ստեցին: Կւ վասն վրաց արեալի եւ նոնացդ զորսակե՛ վիրք առանձին թերեւ ինչ աշխարհ են եւ այրուծիով սակաւաւոք. բայց վասն հոնաց ո՞վ զիտաց, հաւանին զալ թէ ոչ որք չեն ի միջի եւ շերեւին: Բայց հան զամենայն եւս առաւել յանձնանց երկերուք, վասնիզի մարդիկ սուտք եք եւ անվստահի»\*): Մամիկոնեան առն գնահա-

\*.) Ա. Փարպեցի. էջ 119:

տութիւնն է այս թէ միջազգային աննպաստ կացութեան, թէ Հայաստանի գործող ուժերի մասին։ Այժմ երկրորդ ապստամբութեան սէմին զգասաւթեան եւ անվասանութեան ձայնը վահաննն է բարձրացնում . . .

Այս որակումներին համաձայն են նրա կողմնակից նախարարները, սովորյան և այնպէս ստեղծուած կացութիւնը տանել չեն կարող. «զլոյս մեր ոչ ի Հռոմո եղեալ է եւ ոչ ի Հոնս. բայց նախ յոլործութիւնն Աստուծոյ... եւ ապա ի մահ անձանց մերոց. քանզի լաւ համարեամբ մի ժամ մեռանել, քան թէ զամենայի օր զեկեղեցւոյ եւ գրիստոնեուրեան զարհամարանս տեսանել եւ զբակումնեան\*): Նախարարները համոզում են Վահանին անցնել շարժման գլուխը և հեղինակութիւն և զեկավարութիւն տալ նրան և նկատում ն. Աղոնցը՝ թէ վերինի «Տրամախօսութիւնն ուրիշ նպատակ չունի պատմագրի գրչի տակ երէ ոչ լեղզել Մամիկոնեան իշխանի լեղափոխական խառնուածքը»:

Այս բանակցութիւնը հանգում է համաձայնութեան. ստեղծուում է ժամանակուոր կապավարութիւն. Վահանը յայտարարում է ապօռատամբ նախարարների, եւ նրանց բանակի սպարապետ, իսկ Սահակ Բագրատունին մարզպան։ Հայտասանի երկու մեծ նախարարական տները գործակցում են իրար հետ։ Ասացինք որ միջազգային կացութիւնը նպաստաւոր չէր հայերի համար. արտաքին ոչ մէկ գործոն ուժ գտանելի չէր. իսկ ներսը՝ հայ նախարարութիւնը հինգերորդ դարի 80-ական թուերին նոյնքան պառակտուած էր, որքան նոյն դարի կէսերին։ Հակառակորդները թւով տեսլի շատ էին, սակայն Վահանի կողմակիցները ունեին նպատակ և ճիգ՝ իրականացնելու այն Քիւզանդիան մեծ յոյսեր չէր ներշնչում, ինչպէս եւ երեսուն տարի առաջ։ Բայց չնայած այդ բոլոր աննպաստ պայմաններին՝ հայերը ըստ կըսեցին ապստամբութիւնը. այս մէկ նշան է հօգեկան այն կացութեան, այն մթնոլորտի որ ստեղծել էր իրանի տիրապետութիւնը Հայաստանում։ Սկսում է մէկ երկարատեւ և յամառ կոր երկու ուժերի մէջ։ Սկիզբ է առնում Շիրակում, ուր հայ ապստամբները փորձում են գերի վերցնել Հայաստանի իշխանութեան զեկավարներին՝ մարզպանին՝ հազարապետին և իրանի բանակի հրամանատարներին։ Բայց այս ծրագիրը չէ իրագործում և կոփէ դառնում է տեւական ու երկարածգում է երեք չարս տարի։ Այս ժամանակամիջոցին՝ հայերն ու իրանցիք մի քանի անգամ հանդիպեցին իրար, և այդ ուղամական հանդիպումը միշտ գրեթէ վերջացաւ հայերի յաղթանակով։

Առաջին հանդիպումը տեղի ունեցաւ Մասիսի սարոսում Ակոսի

\*.) Պ. Փարպեցի. Եջ 119:

գիւղի մօտ Ասրվշնոսապ մարզպանը, որ փախել էր Հայաստանից Ա. ուղրապատականում բանակ կազմելով անցաւ Արաքսը և զիմեց Դույնը՝ մարզպանութեան մայրաքաղաքը գրաւելու։ Մինչ այդ Վահանը Շիրակից անցել էր Արաքսաւեան գաշտ և գրաւել Դույնը։ Երկու ուժեւ բի հանգիպամը Ակոսի մօտ՝ վերջացաւ հայերի յաղթանակով։ Հայերը թւով անհամեմատ քիչ էին։ Իրանական բանակում կային հայ նախարարներ՝ իրենց զօրքերով։ Կոռուի մէջ՝ Գարչոյլ Խորխանունին անցաւ Իրանի կողմը։ Բայց չնայած սրան՝ մեացած 300 հոգին Վահակ Մամբկոնեանի զլիաւորութեամբ պարտութեան են մատնում Իրանի բանակին՝ մարզպանը սպանում է, իրանցիները լքում են Հայաստանը, իրկրի տէրը մնում են Վահան Մամբկոնեանը և Սահակ Բազրատունին։ Յազնան Մանգակունին մեծահանդէս մաղթանք է կատարում Դույնի մէջ։ Երգում են «Դարձոյց զուգ իմ յուրախութիւն» սաղմոսը։ Այս յաղթանակը բարձրացրեց հայերի տրտմազրութիւնը։ բայց բոլորն էլ զիաէին որ սրանով իրանցիները միայն մէկ ճակատամարտ կարցրին, բայց ոչ պատերազմ։ Կոփւը նոր է, որ սկսում էր։ Երկու կողմերն էլ պատրաստում են 482 թ. գարնան մեծ զործոզութիւններ սկսելու։ Վահանը և Սահակ Բազրատունին Հայաստանի նախարարներին կոչ են անում իրենց միանալու... Վահանը սուրհանդակներ է ուզարկում ցիերեւելի եւ ականաւոր ազգն Արծունեաց եւ յազգը գաւառուն Անձեւացոց եւ Մոկաց» եւ շատ ուրիշներին։ — հարաւի նախարարներին։ Նա կոչ է անում բոլորին։ «Եկայք խնդրել զիրէծ եկեղեցւոյ թենամանաց որով թենամացաւ ի բազում ժամանակա եւ ամաց յարհամարող ուրացողացն։ Եւ որ ոք խսրիիք զմարմնոյ երկիւղ եւ ծառայել ցանկայք մոլորութեանն բարբանչմանցն՝ բնակեցէք ի խաւարի, չեղեալք արժանիք հայել յարգարութեան արեգակն Քրիսոս, այլ ինձ հոգովագիտ բողոքոյս հատուցի վարձաւ արգար վարձահատուցն Քրիսոս։\*) Այս կոչը հարաւի նախարարների մէջ արձագանք չէ գտնում։ Մի քանի սեպուհներ միայն լսում են Վահանի կոչը և գնում միանալու նրան՝ հակառակ նախարարների արգելքին։ Սրանք էլ ոկեսն զինեալք եւ կիսեն անպատճառք էին։ Հարաւի նախարարների այս զիրքորչումը պատահական չէր, մենք տեսանք նրանց և չորրորդ գարում և Վարզանի ժամանակ։ Վահանի օրով նրանք այսպէս ասած չէզոք զիրք են բանուու։ Շատերն էլ անցան Իրանի կողմը։ Սրա հետեւանքով պատահամբաւթիւնը չտառաւ իր մէջ ամբողջ հայութիւնը, ուս չգարձաւ ազգային, ընդհանրական։ Նրա ծանրութիւնը ընկաւ միայն Միջնաշխարհի վերայ։ Այս բոլորը ազգեց Վահանի զործելակերպի, ուզմավագարութեան վերայ։ Եւ եթէ նկատի ունենանք, որ Վահամբանին էլ նրան մեծ օժանդակութիւն չմատուցեց, հօներից էլ ոչ մէկ յոյն չկար՝ ազգա կը տեսնենք որ 482 թ., երբ Իրանը մեծ պատ-

\*) Պ. Փարպեցի. էջ 127:

բաստութեան և շարժման մէջ էր զնում իր ուժերը՝ Վահանի կացութիւնը բնաւ նախանձելի չէր։ Նա շրջապատված էր մի քանի հաւատարիմ մարդկանցով, որոնք կարող էին միայն մի քանի հարիւր մարդ հանել ուղղմի գաշտ։

482թ. գարնան իրանական մէկ բանակ հասաւ Հեր և Զարեւանդ գաւառները. Վահանը որոշեց ընդառաջնել նրանց և թոյլ չտալ որ իրանցիները մասնեն Միջնաշխարհը։ Սպարապեաի հետ էր և կաթողիկոսը։ Երկու ուժերի հանգիպումը անզի ունեցաւ Արտազի Ներսէնապատավազ գիւղի մօտ, Աւարայրի մօտերքում, ուր երեսունեւմէկ տարի առաջ տեղի էր ունեցել Վարդանանց ճակատամարտը։ Ճայկական ուժերը շատ քիչ էին իրանցիների հետ համեմատած, բայց աարան միծ յաղթանակ։ Աւարայրի պարտութեան վրէժը լուծուեց Ներսէնապատի կոուից յետոյ շատերը՝ որ մինչ այդ երեսուն զիրք էին բռնիլ եկան և միացան Վահանին, բայց նրա ուժերը միշտ էլ մնում էին սակաւաթիւն իրանի գէմ միծ ճակատամարտներ տալու։ Ուստի մէկ յաջող կոուից յետոյ՝ նու յետ էր քաշում իր խմբերին՝ հանգստանալու։ և նոր ուժեր հաւաքելու։ Մինչ հայ բանակը հանգստաեան էր կանչուած Ծագկոան գաւառում՝ վրացի Վախթանգը մարզիկ և ուղարկում և հայերից օդնութիւն հայցում իրանի միծ բանակի գէմ, որ հասել էր վըրտկան ապստամբութիւնը ճնշելու։ Վահանը միծ վստահութիւն չունէր Վախթանգի վերոյ, բայց որպէս գաշնակից Հայոց բանակի միծ մասով և իր հաւատարիմ գործակիցներով հասնում է վրացիներին օգնութեան։ Կոիւը անզի է ունենում ճարմանայում, կուր գետի ափին։ Բայց նա չգտաւ հոնական ուժերին, որոնք իրը թէ պիսի գային օգնելու. վրացիներն էլ թւով քիչ էին և անգատրաստ կոուելու։ Հայերը մենակ պիտի կոուէին վրացիների համար։ Մինչ այդ իրանցիները միծ պատրաստութեամբ առաջ էին եկել ճակատելու։ Հայոց բանակը մատւ կոուի մէջ, բայց ցորց չտուեց այն սազմունակ օգին, ինչ որ նախորդ կոիւների մէջ։ Զօրավարները լաւ կոուեցին, անցան կուր գետը և հարուածեցին իրանական բանակին, բայց կոուի կէսին վրացիները նահանջեցին Վահանին և հայերին թողնելով մինակ։ «Եր անպիտան վրացիների» և Վախթանգի փախուսաը կորստաբեր եղաւ հայերի համար։ Այս կուռմ սպանուեցին Հայոց մարզպան Սահակ Բագրատունին, Վասակ Մամիկոնեանը, որոնք մինչ այդ շատ միծ զիր էին կատարել գէպքերի ընթացքին։ Այս կուրից յետոյ, Վահանը նահնջեց իր քայրայուած ուժերով և ամբացաւ անասիկ Տայքում։ Երարա կենարոնը Մկնարին գիւղն էր. նրա գիւմաց հաստատեցին իր բանակուն ուժերը։ Մինրան գորավարը՝ իր սպայակայտը տեղաւորեց Դու գիւղի մէջ։ Երկու իրարու գէմ կանգնած և թշնամի ուժերի մէջ կոիւներ անզի չունեցան։ Մինրանը փօխան յարձակուելու սկսեց բա-

նակցիլ վահանի հետ Նա լւա զիտէր որ վահանը ուժ էր, որ բուզակ Հայոց համակրութիւնը նրա կողմն է, որ նա միայն մէկ ճակատամարտ կորցրել է, այն էլ ոչ իր թուլութեան, այլ վրաց զաւազրութեան պատճառով: Նա ստաջարկում էր վահանին անձնատուր լինել և յօյսը գնել արքայից արքայի ողորմածութեան վերայ. «Մի կորնչիր, եւ յարքայից յարքայի ի ծառայութենե մի ելաներ եւ զայխարիս Հայոց մի տար ի վատնումն. ի հնազանդուրին եկի քագաւորին... եւ ես ալաշեմ զրագաւորն եւ հաւեցուցանեմ ընդ եեզ եւ ինչ որ արձան է տալ եեզ՝ զանամ զի տայ»\*):

Իրանի բանագիտացներին Վահան Մամիկոնեանը պատասխանում է շատ երկարօրէն: Նրա այս պատասխանը յիշուած է Ղ. Փարպեցու պատմութեան մէջ: Հները զիտէին ճառեր յօրինել և գնել իրենց հերոսների բերանը. անշուշտ այզպիսի գեղեցիկ կազմուած ճառ է վահանինը, որ Փարպեցու կառուցուածն է, սակայն նա հարազատօրէն մեկնաբանում է ժամանակի արամազդրութիւնները, ոգին և շարժումների պատճառները: Վահանի ճառը մէկ խիստ քննազատութիւն է իրանի՝ հայերի հանդէպ բանած քաղաքանիանութեան: Թագաւորը, ըստ նրա հաւասար ու արգար աչքով պիտի նայէ «յամենայն մարդ»: Եթէ նա ուզիզ աչքով և լսողութեամբ չի նայիլ և լսել իր ծառաներին, եթէ նա երկիրը պիտի կառավարէ միայն «այլոյ աշօյ եւ այլոյ ականչօյ» ապա նա միայն կորստեան պատճառ կը զառնայ իր պետութեան: Իշխանաւորը վատթար խորհրդականներ չպրափ ընտրէ, իւրաքանչեւրին իր արժանի պատիւը և գիրքը պիտի տայ, այլապէս նա ոյլաւ ծառայի եւր դուլարաւ կարե լինել» Հայոց աշխարհը շատ մեծ է և հարուստ. «Եւ արդ ցոյց ինձ այր մի յայսպիսի աշխարհի, որ քեւ առաւելաւ բազաւորութեամբ արժանաւորապէս հասեալ է ի տանուտերութիւն»: Տանուտէրութիւն կարգը իրանը խանդգարել է և առաջ է քաշել «այր որեար աւազակ եւ անպիտան, հացկատակ եւ վատանիմիկ», որ կը խորեն թագաւորին, արքունիքին կը ծագրեն և կրտկն ու ատրուշանը կ'անպատառւեն: Ընդհակառակը՝ ինչ որ լաւ է, քաջութիւնն և միտք և զիտութիւն՝ «որով աշխարհ ըինի եւ մեզի լինի» արհամարուած է: «Անպիտան եւ վատանիմիկ մարդկան պատրութիւնն ի մեջ անցեալ յարգի եւ դուռ առ հանաչողս ունիք ձեզ»: Լաւագոյնները և քաջերը հայածական են, «ի վատ տոնմե եւ յանպիտան ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ եք»: Այս խիստ որակումները վերաբերում են Հայոց նախարարների այն մեծ հատուածին, որ յարմարուել է տիրոզի րէժիմին, գործակցում է նրա հետ և իր սասրազառ պիճա-

\*.) Ղ. Գարուեցի եջ 130:

կի հետ հաշտուել է և պահանջներ չունի: Իրանի քաղաքականութիւնը եղել է՝ վարդանանց պատերազմից յեսոյ առանց ազմուկի, լուսթեան և խաղաղութեան մէջ վիրացնել իրանահայաստանի կիսանկախ դրութիւնը: Դրա համար նա հաղարապետ նշանակել է իրանցի մէկ բարձր պաշտօնեայ, խախտել է տանուտէրութեան ժառանգականութեան սկզբունքը բարձրացնելով իշխանութեան միայն իրեն շահերին նուիրուած մարդկանց, եկեղեցու մէջ՝ յենուել է և առաջ է քաշել առորամիտ մարդկանց. Նայ զօրքի սազմունակութեան մեծ հարուած է հասցրել, ստեղծել է նախարարութեան մէջ մէկ մեծ հստանք, որ այ լւս գիմադրական կորով չօւնէր: Այս բոլորը սպասնում էին գիմազուրկ անելու հայութիւնը: Եւ այս բոլորի գէմ է, որ յոզոքում և ապստամբում են հայ նախարարների մէկ մասը՝ ազգայնական հոսանքը: Նրանք անջատազական միտում չեն ունեցել, ինչպէս նախորդ սերունզը՝ Վահանը այս բանի վիրայ շեշտում է ումեր բնիկ տեարք եկ եւ նարցի մերոց եւ նախնեաց, եւ մեկ ծառայութիւն առնեմք եւ նպատակ լինիմք: Բայց այս հպատակութիւնը կարելի է միայն այն ժամանակ և այն պայմանով, որ ափրոզը յարգէ Հայաստանում գոյութիւն ունեցող կարգը: Եթէ ուզում է արքայից արքան ամեղ նուեածել, ապա առաջին պայմանն է «զերիսոննեուրիւն օնորն աշխարհիս Հայոց»: Քրիստոնէութիւնը կար. նա յայտարարուած էր ապատ կրօն. սակայն այդ միայն ձեւ էր զրադաշտականութիւնը լայնորեն տարածում էր հայ գեկավարութեան մէջ. նա զարձել էր յառաջդիմելու, պաշտօններ ըստանալու, բարձր գիրքեր գրաւելու լաւագոյն միջոցը, նրա միջոցով ցյեսինս առ լաւսն ունիք եւ զլաւսն լես տանիք: Երկրորդ պայմանը յարգել առնոււտէրական իրաւունքները, չփոխել հին կարգը, չմիջամտել նախարարութեան ներքին կազմակերպութեան մէջ: «Ի վաս տնիմք եւ յանպիտան ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ եք», «Պատ տոհմերը» նրանք են, որոնք վերջին երեսուն տարուայ մէջ անյայտութիւնից բարձրացել են, հասել մեծ պաշտօնների, և իրենց յառաջցումով պարտական են Իրանի իշխանութեան: Յարձարուում են և գործակցում, որ մեան միայն իրենց պաշտօնի մէջ և պահեն տանուտէրութիւնները: Աւրեմն Վահանն էլ պատասխ է այն իմբնարկութիւնների, բնկերային այն կառուցի, որի նամար պայքարեց նախորդ սերունզը՝ եկեղեցական եւ բազմական ինքնավարութեան. որ Աւարայրի նակատամարտից լեսոյ բայբայում եր:

Այս բանակցութիւնները հետեւանք չունեցան, «բայնեսեւ Միհրան զօրավարը Իրան կանչօւեց և յարաբերութիւնները կողմերի մէջ ընդհատուեցին: Վերսկս Վահանն էլ պատասխ է այն իմբնարկութիւնների: Աւրեմն Վահանն էլ պատասխ մէջ ընդհատուեց, թէ Շիրակում և Այրարատեան զաշտում: Վահանը միշտ

խուսափում էր մեծ ճակատամարտներից՝ իր ուժերը քիչ էին, երբեմբն էլ ցրուած։ Մէկ յաջող կոիւ սառւարացնում էր նրա բանակը, մէկ անյաջող ընդհարում՝ լքում էր ստեղծում շատերի մէջ, և նրանք թողնում էին, հեռանում էին, թէև սպարապետը երբեմն մնում էր մի քանի տասնեակ մարդկանցով։ Վահանը չկարողացաւ իր հետ միացընել նոյնիսկ հիւսիսային Հայաստանը։ Սիւնիքը, Արցախը, Գուգարգը նրա հետ չէին։ Այրարատում իրանցիները աւելի հաստատուն էին նոտած։ Նա Շիրակում, Տայքում է, որ յաճախակի կոիւներ էր մզում, Գուինում և էջմիանում երեւաց մի քանի անգամ։

483թ. Հայաստան է ուղարկուում Զահր-Միհր-Հազարաւուխար։ Նա Պերզին խոստացաւ ողջ կամ մեռած Վահանին ձեռք ձգել, բայց անյաջող, նա պարտուում է մի քանի կոիւների մէջ, իրանի այդ պարտը առավարին փոխարինում է Շապուհ զօրավարը, որ նոյնպէս մեծ յաջողութիւն չէ ունենում։ Բայց չնայած պարտութիւններին, որ իրանցիները կրում էին Հայաստանում։ Վահանի զրութիւնը փայլուն չէր։ Նախ ամբողջ Հայաստանը իրանի ձեռքին էր, նրա վարչութեան տակ։ Վահանին մնում էր շատ քիչ շրջանակի, այն էլ այնքան, որքան իր փոքրիկ բանակով այսուեղ էր։ Նա չկարողացաւ ստեղծել կանոնաւոր գործող վարչութիւն, կենարոնական իշխանութիւն՝ վարիչ մարմնով։ Մահաւանդ Սահակ Բագրատունում մահից յետոյ երկրի քաղաքացիական վարչութիւնը զլուխ չունէր։ Ինքը Վահանը լաւ գիտէր, որ այս ձեւով կոիւները երկար շարունակել չէր կարելի։ այսպիսի կոիւների մէջ իրանական բանակին պարտութեան մատնել անկարելի էր։ Եւ որ գլխաւորն է, անկարելի էր եղած ուժերով իրանին հարկադրել հոշտուելու և իր կամքը պարտազրելու նրան։ Վահանի կացութիւնը 483թ. վերջերին շատ ծանր էր։ Բայց նրան փրկեց մէկ անակնիալ, որ ճակատագրական զեր խազաց հայերի համար։ Հեփթաղների գէմ մզած կոիւներում Պերզը սպանուեց։ Շապուհ զօրավարը վերադառն Տրգրոսն։ Հայաստանը մնաց անտէր։ Վահանը իշաւ Տայքի լեռներից և գրաւեց Գուենը։ Ամբողջ հիւսիսային Հայաստան ենթարկուեց նրան։ Այժմ բոլորն զգում էին, որ արմատական փոփոխութիւն է լինելու Հայաստանի հարցի նկատմամբ։ Շատերն եկան նրան միանալու։ Սպարապետի կողմնակիցների թիւը մեծացաւ։ Նա Հայաստանի գինուորական և քաղաքացիական իշխանութեան գլուխն էր կանգնած և պատրաստուում էր նոր գէպքերի համար։

Վահանի կոիւները երկար տեւեցին։ աւելի քան երեք տարի։ Այդ կոիւներում մշակուեց ուազմի նոր ձեւ՝ պարտիզանական ձեւը։ Վարդանը պարտուեց մէկ ճակատամարտում։ Վահանը յաղթեց բազմաթիւ տեւական փոքրիկ լնդհարումների մէջ։ Վահանը լաւ հասկացաւ, որ իր ուժերը՝ թոյլ և փոքրաթիւ անպէտք են մեծ ճակա-

տաժարատների համար։ Ռազմի նոր ձեւը մեծ առաւելութիւններ ունէր։ Կոռի կը մանէր երբ ուզէր և ուր որ յարմար էր։ Կոռողների քչութեան հետեւանքով՝ զիւրութեամբ կը նահանջէին, և կը յարձակւէին։ Խումբը եղրեմն կը բաժանուէր աւելի ժանր մասերի՝ իրանական գօրքը հարկադրուած էր ինքն էլ բաժանուել և հետապնդումներ կատարել։ Նրանց գէմ հայերը զիւրութեամբ կը կոռի էին։ Պարտիզանուկան կաիւներ մզող հայ խմբերը երբեմն յարձակուամ էին թշնամուզինանցների, պարենաւորման կէտերի վերայ, շփոթութեան մէջ էին ձգում յետնապատճներին։ ջարզում էին և անտեսանելիորէն հեռանում, իրենց գործելակերպով նրանք յոգնեցնում էին թշնամուն, ջատում մասնասում նրան ուժերը։ Իրանցիները իրենց նախազգուած պաշմական ծրագիրները գործադրել չէին կարողանում, որ մշակուած էր ճակատամարտների համար։ Այս բանը յուսահատեցնում էր նրանց։ Հայ խմբերը միաժամանակ երեւում էին զանգան տեղերում։ շփոթութեան էին մատնում հակառակորդին։ Խուսափում էին բաց գաշտի մէջ ճակատելուց, բայց միշտ ծուզակն էին զրցում նրանց։ Հայաստանի լեռնագրութեւնն էլ յարմար էր այդպիսի կոփեների համար։ Թագնուում էին լեռներում, կիրճերում, անյատակ ձորերի մէջ, որ նըրանց լաւ ծանօթ էր, այն ինչ թշնամին այդ ծանօթութիւնը չունէր։ Վահանի կոփեները շատ են յիշեցնում նախորդ գարավերջի մեր Ֆիւայիների կոփեները։ Նոյն փոքրաթիւ խմբերը՝ բայց նուիրուած և զիտակից, նոյն կոռւելու պարտիզանական ձեւը, նոյն առաւելութիւնը երկրի հետ լաւապէս ծանօթ լինելու։ Բայց ամենէն կարեւորն այն էր, որ հայ ժողովուրդը վահանի հետ էր։ Նա զինուած չէր, ուղղմի տեսակէտից մեծ ծառայութիւն չէր մատուցանում վահանին, սակայն իր ամերող հսկուած, համակրանքով սպարապետի և նրա կոռողների հետ էր։ Երբեմն նախարարները գէմ էին նրան, հալածում էին, շինականն ու խոնարհ ազատանին նրա հետ էին, նրանց գէնք, պարենաւորում էին մատակարարում, վտանգի պահին ապաստան տալիս և սուրհանգակներ՝ նրանց առաջնորդելու ժողովուրդը օգնում էր նըրան։ կազմակերպելով վտանգուածների փախուատը, բանտարկուածներին ազատելով։ Առանց ժողովրդական այսքան լաւագոյն գէմքերը գործակցում էին սպարապետի հետ։ Նա տրամադրել էր նրան իր վասքերը, որ երբեմն ծառայում էին որպէս թաքստացներ, իր նիւթական միջոցները և մասնաւոր իր բարոյական նեղինակութիւնը։ Եկեղեցին մզում էր ժողովրդին և ազտանին օգնելու ապստամբներին։

Այս ուժերով և այսպիսի պայմանների մէջ է, որ վահանը կոփե

շարունակում է երեք տարուց տևելիք: Բայց նրան փրկում է Պերողի  
 մահը: Իրանի մէջ նիրքին քաղաքականութիւնը հիմնվին փոփոխու-  
 թեան է ենթարկում: Այս փոփոխութեան գլուխը անցնում են այն  
 մարդիկ, որոնք գործել էին Հայաստանում, Շապուհը, Հազարաւուխ-  
 տը... Նրանք խստօքէն քննադատում են Պերողի կրօնական ու աղ-  
 դային քաղաքականութիւնը. «զոր ինչ եւ կամեր՝ առենք եւ բռնաւոր  
 կամաւորութեամբ գործեր զինչ եւ կամեր»: Նա առաջնորդեց երկիրը  
 ով կործանումն եւ գրկումնն: Իրանի աւագանին ընտրում է Վազարշին  
 ուրպէս զայր բաղր եւ աշխարհաւեն... քաղցրաբանութեամբ եւ սիրով  
 ածել եւ հաւան զազգս, որ բնդդեմ եւ ապսամբ, նանաչի զիւրախան-  
 չիւր ով յարեաց եւ յանարեաց ըստ իւրում արժանաւորութեան...»\*):  
 Վազարշը լսելով աւագանիին և Հայաստանին ծանօթ լաւագէս մարդ-  
 կանց կարծիքը սրոշում է հայերի համ համաձայնութեան եղբ գտնել:  
 Պէտք էր հաշուեցարդի ենթարկել Պերողի ստեղծած նիրքին ճա-  
 կատները, որոնցից ամենէն կարեւորը հայկականն էր: Նա Հայաս-  
 տան ուղարկեց Նիխոր Վշնասագատատ իշխանին և պատուիրեց. «Երբ  
 ի հայր... եւ ըստ կամացն Վահանայ եւ նորուն ընկերակցացն նուան-  
 եալ զուեարն եւ յԱրեաց ի ծառայութիւն ած»: Նիխորը կանգ առնելով  
 Հայաստանի սահմաններին պատուիրակների միջոցով յայտնում է Վա-  
 հանին իր նպատակների մասին: Վահանը «ժողովիւր առ ինքն զամե-  
 նայն հաւատարիմ ուխտապահայն զունդ, զնախարար եւ զազաս եւ  
 զամենայն այրուձիոյ»: Աւրեմ հայոց ազատ զան է, որ սրոշում է  
 հաշուութեան հարցը: Նրանք երկար խորհրդակցութիւնից յնտոյ մը-  
 շակում են հաշուութեան այն կէտերը, որի ընդունելով միայն հայ-  
 երանեկան յարաբերութիւնը կարող էր նոր հիմքի վերայ զրուիր:  
 «Երիս բան ասեմ ձեզ... զայս երիս խնդիրս տալ մեզ գրավ եւ կնելով  
 բազալորին...»: Այս երեք կէտերը ընդունելով միայն քանի ձերոյ լր-  
 սեմք ուպէս եւ նախնիքն մեր լուանի: Վահանի այդ կէտերը՝ ոչ թէ  
 իրենն են, այլ «սոցա ամենացուն՝ աւագի և կրտսիրաց»: Մի տեսակ  
 «աշխարհաժողովն» է, որ նորից գործի է կանչուած լուծելու Իրանի  
 համ պատերազմի և հաշուուելու հարցը:

Առաջին կէտը. որ հայ ազատանին առաջարկում է այս կարեւոր  
 եւ պիտանի՝ երեք զնայրենի եւ զբնիկ օրենս մեր ի մեզ բոլոր եւ զիայ  
 այր զոյ մի մոզ ոչ առնել եւ ումել յաղազս մոզութեան զան եւ պատիւ  
 չայք եւ զիւրակարանն յուսխարհեն Հայոց ի բաց տանիք եւ զեկելեցւոյ  
 թշնաման յաղտեղի եւ յանայիտան նարդկանէ, որ զայմմ լիներ, յայսմ  
 նետ մեզ չսամ տեսանել եւ քիստնեայ մարդկան եւ բանահայից զկարգ

\*) Պ. Փարպեցի. էջ 157-158:

Եւ զպածօնն քրիստոնուրեան նամարձակուրեամբ եւ աներկիւղ տաք պատճել, ուր եւ կամին»...»

Հայոց պահանջների մէջ ամենէն կարեւորը այս տոաջին կէտն է: Հայերը խնդրում են «Հայրենի և բնիկ» օրինքների պահպանումը: Քրիստոնէութեան վերահաստատումը Հայաստանում: Այդ երկիրը պիտի լինի քրիստոնէութեան համար. նա միակ և օրինական կրօնն է: Կրակարանները Հայաստանում գոյութիւն չպիտի ունենան: Եկեղեցին և նրա սպասաւորները հալածանքի չպիտի ենթարկուին: «Մոգութիւնը» գահի և պատճի չպիտի արժանանայ: Այս պահանջը նոր բան չէր, նա՝ նախորդ սերունդների ծրագրի մէջ էլ կար, սակայն իրանի յաղթանակը խախտեց եղած կացութիւնը. հայոց կրօնական, ինքնավարութիւնը մնձ հարուած ստացաւ: Այժմ հայերը պահանջում են վերահաստատումն հին գրութեան՝ Հայաստանը՝ քրիստոնէութեան համար: Կրօնական այս ինքնավարութիւնը կրօնի ազատութիւն չէ, այլ յաղթանակը ազգային կրօնի— հայ քրիստոնէութեան գաղափարի:

Երկրորդ կէտը վերաբերում է Հայոց նախարարական հին իրաւունքների անազ որտ պահպանումին: «Զմարդ ոչ իշխանաբար նանաչե, այլ իրաւաբար զիտել զլաւն եւ զվատքարն ընտրել զպիտանին եւ զանպիտանն, իմանալ զտնիմիկն եւ զանտիմիկն, ունել առ լաւն եւ ըզպատուականս, զքաջն եւ զօդտակարն, արհամարել եւ առ ոչինչ համարել զվան եւ զանպիտանն, սիրել զվատակառորսն եւ ատել զանվաստակն, ունել ի մօս զիմաստուն եւ խորհուրդս առնել, զանմիտն ոչ մօսեցուցանել, այլիւ ի նրապարակ հայածել»:

Հոսուայոմ հայ աւագանին պահանջում է նախարարական հին կարգի, ժառանգութեան, գործակալութեան, հարկանուաքման և միւս աւտական իրաւունքների և արտօնութիւնների վերահաստատումն, որ խախտուած էր Յազկերաբի օրով և որ գոյութիւն ունէր նրա մնձ հալածանքներից առաջ: «Պարսկաստանը համաձայնել էր նաևաչել եւ ընտրել տնիմիկը, լաւը, բաջը, վաստակաւորը եւ արհամարել անտօնմիկը, վատք եւ անպիտանը: «Տանուեկեների» եւ զործակաների ընտրութիւնը պիտի կատարուէր «իրաւաբար» եւ ոչ «իշխանաբար»\*) «օրէնքը» պիտի լուիցի և ոչ արքայից արքայի կամայականութիւնը:

Հայոց տառաջարկութեան երրորդ կէտը պահանջում էր. «Որ տէրն է արեաց եւ աշխարհի բազաւոր, կամիսի, զի ինքն տեսցէ իւրովք աշօֆ եւ ինքն լուիցէ իւրովք ականջօֆ եւ ինքն զիտացէ եւ ինքն խօսեցի իւրովք բերանով եւ մի այլոյ աշօֆ տեսցէ եւ այլոյ ականջօֆ լուիցի եւ սոլլովք հանապազ զիտացէ զմարդ լաւ եւ զանլաւ եւ այլոց բերանով խօսեցի:

\*) Յ. Մանադեան. Թէուալիզմը էջ 291-292:

զպեսոն։ Յաղագս որոյ շինի ուղիղ հայեցուածն եւ ոչ արդար լառզուրինն, այլ լոլով սուս խոփին հանաչին եւ հրաւանն ընդունային եւ բընաւ այլ ընկ այլոյ լինի իմաստն ամենայն...»\*). Հայ աւագանին այս կէտք համարում է կարեւոր եւ նրա վերայ է յենում «աւշաւրինի կարգը», չինի այս՝ «ոչ կարէ կալ աւշաւրի եւ ի նմա բնակեալ՝ անշարժ եւ հաստատուն»։ Իրանի քաղաքականութիւնը եղել է՝ հայ նախարարութեան ստորացումն։ այդ արտայայտուել է նաև նրանց երկրորդական և աւելի ստորագաս զատարաններին ենթարկելով։ Սրա հետեւանքով իրանի խոնարհ պաշտօնեանները աւելի մեծ իշխանութիւն էին վայելում հայ մեծ նախարարութիւնների վերաբերմամբ և հիմունկով իրենց հաւատարիմ մարդկանց ցուցմունքների վերայ անարդարաց վճիռներ էին կայացնում։ Հայ նախարարութիւնը պահանջում է իր զիրքին, ծագման՝ յարմար գատարաններում դատուիլը։ Որպէս ազատ և քաղաքական ուժի տէր դաս՝ նա ուզում է դատուիլ միայն արքայական գատարանում։ ինչպէս իրանի բարձր ազնուականութիւնը։

Հայ նախարարների քաղաքական և իրաւական տէրը արքայից արքան է՝ նա էլ պիտի դատի, արդարացնի ու մեղադրի։ Ստորին և միջանկեալ պաշտօնեանների գատարին նա չի ենթարկուելու։ Այդ պահանջը հետապնդում է նախարարութեան զասային արտօնութիւնների վերահաստատման, որ վերացուած էր վերջին երեսուն տարիների մէջ։ Սրանով նախարարութիւնը անջատում, մեկուսացնում է իրեն միւս զասերից։ Իրանը ճիգ է արել թէ նոզեւորականին թէ նախարարին ընկերային զիրքը ստորացնել, եթէ ոչ հասցընել անազատներից զամին, գոնէ ենթարկել նրանց Հայաստանում եղող իրանի իշխանութեան գատարանին։ Այս փոփոխութեան դէմ է, որ ըմբոստանում է նախարարութիւնը։

Իրանի պատուիրակը համաձայնում է այս երեք կէտերի, առաջարկների հետ և Նուարակ գիւղում ուր տեղի է ունենում Վահանին և Նիխորի տեսակցութիւնը՝ երկու կողմերի մէջ ստորագրուում է համաձայնութիւնը։ 484 թ. համաձայնութիւնը՝ Հայաստանում նորից վերահաստատում է Իրանի իշխանութիւնը, «զամֆ կամաւ եւ լսեմ բանից ձերց» ասում է Վահանը։ Մէկ ուրիշ տեղում դ. Փարպեցին Վահանին և իր ընկերների, հայ զեկավար շրջանի քաղաքական տրամադրութիւնները արտայայտում է շատ պարզ ու որոշ։ Վաղարշի առաջ խօսած իր ճառի մէջ՝ Վահանին ասում է. «Մեր ամենեցուն այդ բամֆ են եւ այդ խնդիր երեւ ընորհեալ հասանեք զիսնդիրդ զայդ մեզ եւ ի ծառայութենէ ձերմէ զմեզ ի բաց չկամիք հանել՝ որպէս որկնի բա-

\*) Պ. Փարպեցի. էջ 160-161:

գաւորաց, գրով եւ կնիվ զայդ մեզ նասատուն արարէք՝ եւ ի մենջ որպէս ի ծուռայ ուերոյ գործ խնդրեցէք եւ հատակութիւն»\*): Հայերը աւելի միծ նպատակ՝ իրանից անջատուիլը չեն հետապնդել, ինչպէս և չէին հետապնդում 451 թուի սերունդը։ Եւ չեն հետապնդել ոչ թէ նրա համար, որ անկախ և ինքնազլուի լինելու տեհնչից զուրկ են եղել, այլ որովհետեւ թոյլ են եղել, անկարող թօթափելու իշխողի լուծը։ Գիմել են հարեւան Բիւլանդիային՝ առանց միծ յոյսեր կապելու նրա հետ։ Այսակզից էլ նրա քաղաքական հոււղագոյն ծրագիրը՝ օտարի իշխանութեան առկ Հայոց ինքնավարութեան պահպանումն։ Բայց այս ինքնավարութիւնը զասային էր՝ նայ նախարարութեան քաղաքական և տնտեսական, ինչպէս և կրօնական իրաւունքների և արտօնութիւնների պաշտպանութիւնն էր։ Բայց պաշտպանելով իրենց շահերը, արտօնութիւնները՝ նախարարութիւնը զրանով իսկ պաշտպանում էր հայութեան զարգացման անհրաժեշտ այն ուժերը, առանց որի նա գոյութիւն ունենալ չէր կարող։ Հայ վարիչ ուժը նախարարութիւնն էր ու կազմակերպուած եկեղեցին, նրանք էլ յենարանն էին հայ մշակոյթի, լիզուի և մատուրականութեան, անհրաժեշտ զէպքում նրանք գէնքով էլ պաշտպանում էին այս բոլորը։ Ծինականն ու ումիկը՝ կոիւների մէջ միայն օժանդակ էին և երբեմն շատ կարեւար օժանդակ։ Բայց զէպքերի մէջ նրանք չէ որ իմաստ էին զնում և որոշ ծրագիր հետապնդում։ Եւ Նուարասկի զաշինքի մէջ նրանց ոչ մէկ ցանկութիւնը չէ արտայայտուած։ Նուարասկի համաձայնութիւնը հետապնդում էր հայ նախարարութեան և եկեղեցու արտօնութիւնների և իրաւունքների վերահաստատման։ Եւ յաջուռում է ոյն ինչ որ չարեց Վարդանը՝ կատարեց Վահանին՝ երեսուն տարի յետոյ։ Մէկ ճակատամարտը զուռ բացաւ Հայոց նախարարական կոսոյցի քայքայման, երեք տարուայ պարտիզանական կոիւների մէջ ձեռք բերուեց ամօւր հիմքեր հայ նախարարութեան կայունացման և ամրացման։ Իրանը հոկայ զիջում կատարեց, հաշտուեց հայութեան կրօնաքաղաքական միաւոր լինելու հետ։ Հայկական Ֆեոդալիզմի կայւնացման եւ յարաեւման համար 484 թ. դաշինքը, կարելի է, անսարակոյս համարել մի եռ դարագլուխի սկիզբը, որ տեւել է այնուհետև գրեթե անընդհատ մինչեւ արքական շիրապետութիւնը»\*):

Նուարասկի զաշինքը օրինականացնում է այն սկզբունքը, որ հայերը արտայայտեցին և բանաձեւեցին Արտաշատի ժողովում և Վարդան Մամիկոնիանի ճառի մէջ Տիգրոնի արքունիքում՝ բաղականա-

\*). Ա. Փարավեցի. էջ 174։

\*\*). Յանանդեան Ֆեոդալիզմը. էջ 293։

պիս իրանցի, բայց կրօնապես հայ: Հայ նախարարութեան այս պաշանջը և նրանց թուլութիւնն է և նրանց ուժը: Թուլութիւնն էր, որովհետեւ նա անտարակոյս իր մտքում ունէր առաւելագոյն ծրագիր՝ քաղաքական անկախութեան երազը, որ սակայն անկարող էր իրականացնել իր սեփական միջոցներով. իր ուժն էր, որովհետեւ այդ պահանջով՝ հայութիւնը երեւան է գալիս ինքնաճանաչ, իր շահերն ու արտօնութիւնները իրանականին հակագրող և հայ մշակոյթի ուղիները հարթող ազգ-կրօնական մէկ միութիւն: Հայկական այս տես սակէար յաղթեց իրանականին, որ բանաձեւում էր որպէս՝ ամեն պետութիւն մէկ կրօն սկզբունքը: Երկու տեսակէտի, քաղաքական դաւանանքի այս մրցումից ստեղծուեց նուարսակի գաշինքը: Հայերը կարող էին գոհ լինել իրանի ծաւալուն կայսրութեան մէջ՝ ձանաչւում էին իրաւական միութիւն՝ իրենց սոզգ-կրօնական և գասային՝ արտօնութիւններով, մի բան, որ նոյն կայսրութեան մէջ ոչ մէկին, ոչ քրիստոնեայ համայնքի, ոչ էլ ազգային միաւորի՝ շնորհուած չէր: Հայերը ձեռք բերեցին այդ իրենց կոռով, պայքարով:

Թէ նախարարների պայքարը՝ իմաստը հին կարգի վերահսուատաւումն է եղել՝ երեւում է նուարսակի գաշինքից յիսոյ ստեղծուած կացութիւնից՝ Վահանն ինքը ստանում է իր առնմական՝ Մամիկոնեանների կալուածները «Բազմեցուցանեին զիա ի զանու Տերութեանն Մամիկոնեից՝ սուեալ զիա ըստ օրենի նախնեաց իւրոց զապարապետութիւն Հայոց աշխարհին: Նուրինեին եւ այլոց ուխտապան նախարարացն Հայոց... իւրաքանչիւր ումեկ ի մամուն՝ որ զամենեսին ինչ պէտք եր պատօն ըստ անձին արժանաւորութեան»: Վահանը Վաղարշից իւրում է Կամսարական նախարարական առնմի իրաւունքների վերահսուատաւումը: Արծրունիների հարցի նկատմամբ Վաղարշը պատասխանում է. «Իսկ յաղազս Տերութեանն Արծրունոյն՝ բոլ վայր մի, զի գիտացեն մարդիկն, թէ որի տնիմեն են, սպաս ինչ արժանաւորապէս ցուցանել առ մեզ եւ վաստակս ինչ յօգուտ արեաց աշխարհիս վաստակել հայէսցուք ապա եւ մեք յարժանն»\*):

Իրանի զեկավարները համոզուեցին նաև, որ Հայաստանում եկեղեցին քայքայել, ոչնչացնել անկարելի է: Նա շուրջ երկու գարի անցեալ ունէր Խորը կերպով միութուել էր հայութեան հոգեմատաւոր և ընկերային կեանքի մէջ, դարձել էր մեծ ուժ. նա ազգային միութեան գործոն էր և նրա կառոյցի մէջ մեծ զեր խաղացող: Իրանի հարուածները մեծ մասամբ նրան էր ուղղուած. բայց նա գուրս եկաւ յաղթանակող: Այնուհետեւ Տիգրոնի զեկավարութիւնը ջանում է ոչ թէ

\*) Պ. Փարուիցի. էջ 175:

քայլքայիլ Հայոց եկեղեցին, այլ բաժանել այն Բիւզանդոկանից։ Հայոց եկեղեցու ազգայնացման և մեկուսացման մեծապէս նպաստից իշրանի հայկական քաջաքականութիւնը ձիշտ է մեր եկեղեցու ընթացքը չորրորդ դարից սկսած գնում էր այդ ուղղութեամբ, բայց իշրանցիները իրենց շահների տեսակէտից արագացրին այդ վեցերորդ դարում ու բաժանեցին տիեզերական եկեղեցուց։ Հայոց եկեղեցին այլեւ նրանց համար վտանգաւոր չէր. նա չէր հանդիսանում Բիւզանդական ազգեցութեանց գործիք եկեղեցու այս ազգայնացման և մեկուսացմանը պակաս չնպաստեցին նաև յոյները իրենց եկեղեցական քաջաքականութեամբ։

Նուարսակի գաշինքից յետոյ Հայաստանի մարզպան է նշանակւում Անդեկան անունով իրանական իշխանուր. նա վսկելացի մասդիր եւ իմաստահայեաց «մարդ էր» նա Հայաստանում երկար չի մնում. ուշ սումնափուլմ է տեղական պայմանները, վերահասու է յինում՝ թէ ինչ չափով Նուարսակի գաշինքը հայերին բռւարելի է որ չափով՝ Հայաստանի զեկավարութիւնը կապուած է իրանին։ Այս քննական պայմանից յետոյ նա վերապանում է Տիգրոն և Վաղարշին ներկայացնում իր զեկոյցը՝ որի մէջ առաւմ էր. «Օսար մարզպան, որ երբայ յաշխարն Հայոց. աշխարհն մեծ է, բայս եւկուս եւ երիս նազիւ կարէ նանաչել նախ զիրս աշխարհին, զիւրեց զգուարեն, ապա զմարդիկ աշխարհին՝ զլաւսն եւ զլաքրացն, զալիքրաւսն եւ զյիտանիսն եւ փարելով բան անգիտութեան խառն ի խուռն՝ ոգւոց շատ ծանր լինի; Խոկ նա զի բնիկ ի յաշխարհնեն է, զամենեսեան ի յականէ նանաչէ. եւ զլաւսն առ լաւս ունի եւ զանպիտանս առ յետինս... Մարզպանն պարսիկ որ երբայ աշխարհն կնաւ երբայ եւ որդովէ. դրամբ եւ սիրելովէ, ծառայի ի աղախնեօք. եւ այնէ ամենենեան քէ զերեաց տեառն զոռնիկուսեն չէ սակաւ ծախսն եւ քէ զաշխարհին ուտեն՝ շատ վտանգ նասնէ զաշխարհին մարդկան. Խոկ նա քէ լինի՝ զիւր տանն նամբար ուտէ, եւ այն ամենայն յարեւնի գանձ նամարի եւ արեւնի իրաց օգուտ լինի. եւ յառն Վահանայ ի լաւութիւն նայելով եւ յաջողակութիւն, ի բազում ժամուց խորհելով ի միտս իմ եւ լաւ նամարելով աշխարհին իրաց եւ արեւնի համարձակեցայ ասել. Խորհել զարժանն եւ առնել՝ դուք զիւտէ եղբարք»:<sup>\*</sup>)

Իրանի արքունիքը՝ աւագանին և արքայից արքան համաձայնում են այս մտքին և մարզպանութիւնը յանձնում են վահանին. Այս նշան էր թէ ինչ մեծ վստահութիւն էր ատօնում նրա հանգէպ թէ վաղարշը, թէ այն մարզիկ, որոնք կոիւների ժամանակ հանդիպումներ էին ունեցել նրա հետ. Վահանը պարտիզանական կոիւների մէջ երեւան բերեց և յանգնութիւն, խիզախութիւն, ինչ որ անհրաժեշտ է մէկ զեկավարի՝ զօրավարի և տոկունութիւն, կամք. Շատ յաճախ

<sup>\*)</sup> Պ. Փարպեցի. էջ 177-178:

Նա գտնուում էր յուսահատ պայմանների մէջ, զրեթէ մինակ՝ մէկ փոքրիկ խումբ հաւատարիմների հետ, բայց շարունակում էր իր պայտքարը և նա հասցրեց այդ կոփւը յաջողութեան, իրանական կայսրութեան մէջ զէպքերը դասաւորուցին յօգուա հայ կռուողների և Վահանիք Բայց այդ երկարատեւ կոփւների մէջ յաճախակի շփումների ժամանակ երանի ներկայացուցիչների հետ՝ նրանց ներշնչում էր այն միտքն, թէ ոչ իւքը, ոչ իր հետեւզները, ոչ էլ հայութիւնը նրանց թշնամիները չեն, հայը երանի բարեկամն է, միտքն թէ յարգուին հաւաքական հայութեան իրաւունքները։ Այս վատահութիւնը նաներշնչեց թէ բանակի գրավարներին, թէ նիստորին, որի հետ երկարատեւ խորհրդակցութիւններ ունեցաւ և թէ վաղարշին, որի առաջ պարզաբանեց թէ հայութեան բազանքները և թէ իրանի շահերին նուիրուած լինելը։ Այսպիսի մթնոլորտում է, որ յդանում է՝ Հայաստանի ամբողջական վարչութիւնը յանձնել վահանին։ Նա արդէն Մամիկոնիանների տանուտէրն էր, Հայոց բանակի սպարապետ։ 485 թ. վաղարշի հրովարտակով Հայաստանի քաղաքական ամրող իշխանութիւնը՝ մարզպանութիւնը յանձնուում է նրան։ Ուրիշն մէկ անձի մէջ կենտրոնանուում են զինուորական և քաղաքացիական իշխանութիւնը։ Պետական վերին իշխանութեան ներկայացուցիչը մեծ և հարուստ Հայաստանում մէկ հայ էր։ Այս վերապարձ էր 451 թ. առաջ եղած կացութեան երբ հայ և իրանական շահերը հաշտ էին, կոփւներ չկային և երբ երկրի վարիչը՝ վասակ Սիւնին էր։ Ել աւելի, վասակ Սիւնին միայն մարզպան էր։ Վահան Մամիկոնները և մարզպան էր և սպարապետ։ Այս յաղթանակն էր ոչ միայն վահանիք, այլև Մամիկոնիան տոնմի. և յաղթանակը և վարձատրութիւնը։ Վերջին երեսուն տարին նրանք է, որ ամենախիստ հալածանքի ենթարկուեցին, զոհեր տուեցին։ Այժմ նրանց միջավայրից է, որ նորէն մէկը շարժման գրւուխ է անցնում, նպատակը հետապնդում և նախորդ սերունդների կիսատ թողած գործը յաղթանակով վերջացնում։ Վահանը ուազմի հանձարի հետ միացըրել էր զիւանագէտի, պետական գործչի մեծ կարողութիւն։ Երկուսն էլ գործազրում է հայութեան քաղաքական և կրօնական՝ այսինքն՝ ազգային ինքնավարութիւնը պահելու համար։ Այս յաղթանակն էր ազգային հոսանքի, որ քաղաքական տեսակէտից հաւատարիմ էր իրանին, միայն ուզում էր մնալ հայ և աեղ ու զիրք զրաւել հայ կեանքի մէջ։ Հայոց պատմութեան մէկ շրջանը վերջաւ նոււմ էր։ Հայութիւնը մանելու էր վեցերորդ գար՝ նորէն ոչ թէ ամբողջացած, այլ բաժնուած երկու պետութեանց մէջ։ Վեցերորդ գարում նոյն կրօնական և քաղաքական շարժումները կը շարունակուին, բայց անզամ հայութեան պայքարը ուզում է լինելու Բիւզանդի զեմոյնիսկ իրանիք օժանդակութեամբ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

12

### Ա. ԳԼՈՒԽ

ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ

5

### Բ. ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ ԶՈՐՌՈՐԴ ԴԱՐՈՒՄ

27

### Գ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԵԼՔ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԵԶՔ

48

### Դ. ԳԼՈՒԽ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՑ  
ՊԱՏԵՐԱԶՄԸ

94

### Ե. ԳԼՈՒԽ

ԱԿԱՐԱՅՐԻՑ ՅԵՏՈՅ ԵՒ ՎԱՀԱՆԻ ԱՊՈՏԱՄՈՒԹԻՒՆԸ

133

## — ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ —

1. ՀՈՅ ՊՈՎՈՅՈՒՄՆ ՄՏԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ.  
Փարիզ, 1927, սպառած.
2. ՊՈՏՄՈԿԱՆ ԽԵԴԻԲՆԵՐ. 1937, ՊԵՐՄԻ.
3. Ե. ԱԴԱՅՅԼ ԱՐԳԵԱ ՊՈՏՄՈԲԱՆ.  
1943, ՊԵՐՄԻ, սպառած.
4. ՀՈՅՈՍԱՆԻ ՊՈՏՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՌԱՅՐԸ.  
Ա., մոս., ՊԵՐՄԻ, 1946, սպառած.



## ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1. ԵՐԵՎ ԵՐԱՅԱՀԱՅՈՒՄԱՆ.
2. ՀՈՅՈՍԱՆԻ ՊՈՏՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՌԱՅՐԸ. Բ., մոս.
3. ՄԵՐՉՈՒԹՅ ԱՐԵԿԵԼՔԻ ՊՈՏՄՈՒԹԻՒՆՔ.  
Ա., մոսն, Հնագոյն շրջանից մինչեւ Հեղինիզմ:

9(47-925)  
9-67

ԳԻՆԸ 4 Լ. Ա.

Հանգի

K. KUZALIAN  
B. P. 1428  
Beyrouth-Liban







A  
II  
33102

(2n)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033102